901(495)
Մ-76

ԻՐՎԱԳԾԵՐ ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

Ե. Ա. ՄԻՐՋԱԽԱՆՅԱՆ



1971

901(495)
Մ - 76

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ե. Ա. ՄԻՐՋԱԽԱՆՅԱՆ

ՈՒՐՎԱԳԾԵՐ ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

(ուսումնա-օժանդակ ձեռնարկ)

9/96

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1971

6—6—2
46—71

ЕВГЕНИЯ АРИСТАКЕСОВНА
МИРЗАХАНЯН

ОЧЕРКИ ПО ИСТОРИОГРАФИИ ДРЕВНЕГО РИМА

(На армянском языке)

Издательство Ереванского университета
Ереван—1971

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա ուսումնական ձեռնարկը մի փորձ է մարքս-լենինյան մեթոդոլոգիայի դիրքերից շարադրելու հին Հռոմի պատմագրությունը։

Անտիկ մշակույթն իր ծաղկման հասավ Հռոմում։ Սկսած մ. թ. ա. 3-րդ դարից Հռոմը գրավեց Միջերկրածովյան ավազանի երկրները և դարձավ Հին աշխարհի ամենախոշոր և հզոր տերությունը։ Քաղաքական և տնտեսական մեծ տեղաշարժերի հետևանքով հռոմեական հանրապետությունը իր մեջ ներծծեց հինարևելյան ժողովուրդների և հատկապես հույն ժողովրդի բազմահարուստ մշակույթը, ստեղծագործորեն յուրացրեց այն և բարձրացրեց նոր աստիճանի։ Ինչպես գաղափարախոսության բոլոր ձևերը, այնպես էլ պատմագրությունը Հռոմում իր վրա կրեց հունական պատմագրության ազդեցությունը։

Սույն ձեռնարկը գրված է հայկական բուհերի ուսանողության համար, ուստի անհրաժեշտ ենք համարել ցույց տալ, թե հռոմեական պատմիչների երկերում ինչպես են արտացոլվել Հայաստանի և հայ ժողովրդի պատմության զանազան դրվագները։ Ելնելով դրանից, աշխատության մեջ հռոմեական պատմիչներից, գլխավորապես Սալլյուստիոսից, Տակիտոսից, Ավետոնիոսից և Ամիանոս Մարկելինոսից բերել ենք վկայություններ հայերի և Հայաստանի մասին։

Ձեռնարկը բաղկացած է երկու բաժնից։ Առաջին բաժինը ընդգրկում է համառոտ տեսություն հռոմեական պատմիչների մասին, երկրորդում վերլուծված է Հռոմի պատմության

պատմագիտական գրականությունը մարքս-լենինյան պատմահայեցողության հիման վրա։

Ձեռնարկում հավակնություն չենք ունեցել սպառիչ պատասխան տալ Հռոմի պատմագրությանը վերաբերող բոլոր հարցերին։ Այդ ուղղությամբ սա մայրենի լեզվով գրված առաջին փորձն է, և հեղինակը շնորհակալությամբ կընդունի մասնագետների քննադատական դիտողությունները։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀՌՈՄՈՒՄ

Անտիկ հասարակությունն իր բարձրագույն զարգացմանը հասավ Հռոմում։ Այստեղ սարկաստիրական հարաբերությունները փարթամորեն ծաղկեցին թե՛ սոցիալ-տնտեսական և թե՛ քաղաքական ու մշակութային կյանքի բնագավառներում։

Գրավելով Միջերկրածովյան ավազանի բոլոր երկրները, ինչպես նաև հետագայում՝ Մերձավոր Արևելքը, Հռոմը վերածվում է իր ժամանակի ամենախոշոր և հզոր տերության։ «Ինչպես որ ծովը իր մեջ է ընդունում գետերը, այնպես էլ Հռոմի պետությունն իր մեջ է ներծծել պատմությունը այն բոլոր ժողովուրդների, որոնք նախկինում բնակվում էին Միջերկրածովյան ավազանում», պատկերավոր կերպով ասում է գերմանական նշանավոր պատմաբան Թարթոլդ Նիբուրը։

Հռոմի մշակույթը ծնունդ է առել և զարգացել է թե Ապենինյան թերակղզու նվաճված ժողովուրդների և թե հատկապես՝ հույն ժողովրդի մշակույթի հիման վրա։ Հունական մշակույթը իր խոր արմատները գցեց հռոմեական հասարակության մեջ և իր կնիքը դրեց նրա պատմության վրա։

ԱՎԱԳ ՏԱՐԵԳՐՈՂՆԵՐ

Հունաստանի նման Հռոմում ևս պատմությունը խարբսխվել է պատմագրույցների և պատմական ավանդությունների հիման վրա, որոնք հիմք են ծառայել պատմական աշխատությունների համար։ Հռոմեական պատմական ավանդության հիմքում ընկած է հռոմեական քրմերի՝ պոնտիֆեքսների տարեգրությունները. դրանք յուրատեսակ օրացույցներ էին, որտեղ նշվում էին dies fasti, այսինքն՝ այն օրերը, երբ կարելի էր ժողովներ գումարել, դատ, քաղաքացիական գոր-

ծեր վարել, և dies nefasti, այսինքն՝ այն օրերը, երբ կրոնական նկատառումներով արգելվում էր այդ գործերը վարել[1]։ Բացի պոնտիֆիքսների գրառումներից՝ հռոմեական պատմագրության հիմքում դրված էին և կոնսուլական ֆաստերը, այսինքն՝ հռոմեական հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձանց անվանացուցակները։ Հանրապետության դարաշրջանում տարիները հաշվում էին կոնսուլների անուններով։ Այդ անվանացուցակները կոչվում էին կոնսուլական ֆաստեր։ Դրանք միացվում էին օրացույցին և կազմում էին տոմարի հիմքը։ Օրացույցին միահյուսված կոնսուլական ֆաստերը կազմել են ոչ միայն հռոմեական տոմարի, այլև հռոմեական տարեգրության հիմքը, որովհետև այդ ֆաստերում քրմապետը՝ մեծ պոնտիֆեքսը, վաղ հանրապետության դարաշրջանում սկսել էր նշել կարևոր դեպքերը՝ արևի և լուսնի խավարումները, պատերազմները, հացի գների բարձրացումը և այլն։ Ըստ տարիների կատարվող գրառումները Հռոմում կոչվում էին աննալներ (annales), այսինքն՝ տարեգրություններ։

Հռոմեական պատմագրության հիմքում ընկած այս տարեգրությունները նշանավոր իրադարձությունների մասին չոր ու ցամաք և կցկտուր տեղեկություններ են։ Այստեղ խոսք անգամ լինել չի կարող որևէ քննադատական վերաբերմունքի և կամ՝ վերլուծության ու ընդհանրացման որևէ փորձի մասին։ Միայն սկսած 3-րդ դարից (մ. թ. ա.), Պունիկյան պատերազմների դարաշրջանից՝ երևան են գալիս պատմական դեպքերի ինքնուրույն շարադրողներ։ Ուստի կարելի է ասել, որ բառիս բուն իմաստով պատմագրությունը Հռոմում սկիզբ է առել միայն Պունիկյան պատերազմների դարաշրջանում, այսինքն՝ 3-րդ դարի երկրորդ կեսից։ Կարթագենի հզոր ռազմածովային պետության դեմ Հռոմի մղած պատերազմները և նրա հաղթանակը ցնցող ազդեցություն գործեցին հռոմեացիների և հին աշխարհի այլ ժողովուրդների վրա։ Պունիկյան պատերազմներում Հռոմի հաղթանակը շրջադարձային կետ հանդիսացավ Հռոմի պատմության մեջ։ Պահանջ առաջացավ

[1] Տե՛ս Ն. Ս. Մաշկին, Հին Հռոմի պատմություն, Երևան, 1951, էջ 13—14։

պատմել այդ պատերազմի մասին, հաշիվ տալու, թե ինչպե՞ս պատահեց, որ երիտասարդ հռոմեական հանրապետությունը, գերազանցորեն ագրարային մի երկիր, որ դեռևս դուրս չէր եկել Իտալիայի սահմաններից, կարողացավ պարտության մատնել Միջերկրածովյան ավազանում գերիշխող հզոր Կարթագենին։ Այդ պահանջն իր հերթին հետաքրքրություն առաջացրեց դեպի հռոմայեցիների հեռավոր անցյալը։ Պահանջ զգացվեց Պունիկյան պատերազմների հերոսապատումը Հռոմի անցյալի հետ կապելու, անցյալ, որի մասին ոչ ոք չէր գրել։

Միաժամանակ պետք է նշել, որ Պունիկյան պատերազմների դարաշրջանին զուգադիպեց հռոմեացիների առաջին լայն ծանոթությունը հելլենիստական կուլտուրայի հետ, որը չէր կարող չազդել հռոմեացիների գրական լեզվի մշակման և պատմագրական հաշակի առաջացման վրա։

Ինչպես արդեն նշեցինք հռոմեացիների մոտ պատմական ստեղծագործության առաջին ձևը եղել է տարեգրությունը։ Տարեգրողներին սովորաբար բաժանում են երկու խմբի՝ ավագ և կրտսեր։

ԳՆԵՈՍ ՆԵՎԻՈՍ (274—206 թթ. մ. թ. ա.)—Ավագ տարեգրողներից առաջինը համարվում է Կամպանիայի բնիկ, բանաստեղծ Գնեոս Նեվիոսը։ Նա ուշագրավ դեմք է եղել Հռոմում։ Հասարակ ծագման տեր այդ բանաստեղծը խիզախեց դուրս գալ Հռոմում հռչակված Սցիպիոն Մեսելլոսների անվանի ընտանիքի դեմ. դա չլսված համարձակություն էր։ Նա բանտ նետվեց, և ազատվեց միայն ժողովրդական տրիբունների միջամտության շնորհիվ։ Նա առաջինը հռոմեական պատմության նյութերի հիման վրա հորինեց ինքնատիպ ողբերգություններ՝ դրամատիկական ներկայացումների համար։ Դրանցից մեկը նվիրված էր Հռոմի առասպելական երկվորյակներ Հռոմուլոսին և Հռեմոսին։

Գնեոս Նեվիոսը մասնակցել է Պունիկյան առաջին պատերազմին և վերադառնալով՝ գրել է այդ պատերազմի մասին էպիկական չափածո պոեմ՝ լատիներեն լեզվով։ Աշխատությունն անվանել է bellum poenicum։ Հետագայում այդ աշխատությունը բաժանվեց յոթ գրքի, որոնցից առաջին երկու գրքում տրվում է Հռոմի հնագույն պատմության համա-

ռոտ շարադրանքը սկսելով Էնեասի և Դիդոնայի սիրո պատմության առասպելից։ Աշխատությունը ավելի շուտ դյուցազներգություն է։ Հռոմի և Կարթագենի միջև պատերազմը Նեվիոսը նկարագրում է Հոմերոսի նմանողությամբ։ Պոեմից պահպանվել են միայն առանձին հատվածներ։

Նեվիոսը վախճանվել է վտարանդիության մեջ, մենության և հալածանքի պայմաններում։

ԷՆՆԻՈՍ ՔՎԻՆՏՈՍ *(239—169).*—Ծնվել է Իտալիայի հարավում՝ Կալաբրիայում։ Նրա բազմաթիվ երկերից նշանավոր է «Տարեգրությունը», հերոսական պոեմը, որը նա գրել է Հոմերոսի ազդեցությամբ լատիներեն հեքսամետրով։ Պոեմը ընդգրկում է Հռոմի պատմությունը սկսած առասպելական Էնեասից մինչև հեղինակի ապրած ժամանակաշրջանը և տոգորված է հայրենասիրական ոգով։ Էննիոսի աշխատությունից պահպանվել են միայն առանձին բեկորներ ուշ ժամանակի հեղինակների երկերում։

Սակայն բանաստեղծական պատմագրության այս յուրատեսակ ժանրը անբավարար էր. իսկական պատմությունը պետք է շարադրվեր արձակ ձևով և ունենար պատմական դեպքերի ու երևույթների նկատմամբ ավելի ուշիմ և դպատ մոտեցում։ Այդ խնդիրը կատարեց Քվինտոս Ֆաբիոս Պիկտորը *(մ. թ. ա. 3-րդ դարի վերջը)*։

ՊԻԿՏՈՐ ՖԱԲԻՈՍ (մ. թ. ա. 3-րդ դ. վերջը).—Պիկտորն ապրել է Պունիկյան երկրորդ պատերազմի ժամանակաշրջանում։ Եղել է կոնսուլ, պոնտիֆեքս։ Հավանաբար 201 թվականից հետո հրապարակել է հռոմեական անցյալին նվիրված առաջին արձակ երկը հունարեն լեզվով։ Աշխատությունը կոչվում է «Տարեգրություն», որովհետև նրա մեջ, ինչպես ընդունված է տարեգրողների մոտ, դեպքերը շարադրված են ըստ տարիների։ Նրա հիմնական թեման առաջին և երկրորդ Պունիկյան պատերազմների պատմությունն է։ Սակայն իր «Տարեգրության մեջ որպես նախաբան նա համառոտ ավել է Հռոմի հնագույն պատմությունը՝ սկսած Էնեասից և Հռոմի հիմնադրությից։ Դեպքերը նա շարադրում է սեղմ, և ապա անդրադառնալով իրեն ժամանակակից իրադարձություններին, սկսում է մանրամասնորեն շարադրել Պունիկյան երկու պատերազմների պատմությունը, աշխատությունն ավարտելով Պունիկյան երկրորդ պատերազմի պատմությամբ։

Ֆաբիոս Պիկտորը իր աշխատության շարադրման համար օգտվել է բազմազան աղբյուրներից։ Նա քաջ ծանոթ էր հունական աղբյուրներին, պատշաճ տեղ է հատկացրել նաև լատինական աղբյուրներին։ Այսպես՝ ֆաստերից նա քաղել է կոնսուլների կառավարման տարեթվերը և ըստ այնմ շարադրել դեպքերը։ Օգտվել է պոնտիֆեքսների ֆաստերից, որոնց դիվանը մատչելի էր իրեն, որպես պոնտիֆեքսի։ Ֆաբիոս Պիկտորը քաջ ծանոթ էր նաև բանավոր ավանդություններին, (ավանդությունը Կորիոլանի մասին, սաբինացիների դեմ Հռոմուլոսի պայքարի մասին, Տարքվինիոսի և Սերվիոս Տուլիոսի մասին, Տարքվինիոս Գոռոզի կողմից Սվեսսա Պոմեցիա քաղաքի նվաճման մասին և այլն)։

Իր ժամանակակից դեպքերին Ֆաբիոսը քաջատեղյակ էր որպես հասարակական գործիչ. Կաննեի մոտ կրած պարտությունից հետո սենատի կողմից նա ուղարկված էր Դելֆիս, որպես դեսպանության դեկավար։

Հռոմի հնագույն անցյալին վերաբերող ավանդության այդ հնագույն վարկածը համեմատաբար անաղարտ վիճակում պահպանվել է Պոլիբիոսի աշխատության մեջ, ավելի լիակատար և կապակցված ձևով՝ Դիոդորոս Սիցիլիացու «Համաշխարհային պատմության» ութերորդ գրքում, որը կոչվում է «Պատմական գրադարան»։ Պիկտորի հաղորդած և Դիոդորոս Սիցիլիացու աշխատության մեջ պահպանված հնագույն ավանդությունը գնահատելի է գլխավորապես այն պատճառով, որ հետագայում, հունական պատմագրության ազդեցությամբ, հռոմեական հնագույն ավանդությունը ենթարկվել է մշակման՝ օրինակ, Տիտոս Լիվիոսի, Դիոնիսիոս Հալիկառնասցու և ուրիշների աշխատություններում։ Հռոմեական պատմիչների ձգտումը՝ հարստացնելու հռոմեական ազգային ավանդությունը և այն շարադրելու հունական պատմագրության նմուշներով, բխում էր մի հիմնական տենդենցից՝ ստեղծելու հռոմեական ժողովրդի համար հարուստ և պատվավոր անցյալ։

Ուշագրավ է, որ Պիկտորի տարեգրությունը գրված էր հու-

նարին լեզվով։ Դա բացատրվում է նրանով, որ հռոմեացիների գրական արձակը այդ դարաշրջանում դեռևս մշակված չէր։ Բացի դրանից, հունարենը դարձել էր միջազգային լեզու և Պիկտորը ցանկացել է, որ իր «Տարեգրությունը» բոլորը կարդային։

Ֆաբիոս Պիկտորի օրինակով շատ հռոմեական պատմիչներ կազմել են տարեգրային բնույթի աշխատություններ, նույնպես հունարեն լեզվով։ Սակայն դրանցից չնչին հատվածներ են պահպանվել։

ՄԱՐԿՈՍ ՊՈՐՑԻՈՍ ԿԱՏՈՆ ԱՎԱԳ *(234—149).*—Առաջին պատմիչ—տարեգրողն է, որ Հռոմի պատմությունը գրել է լատիներեն։ Կատոն Ավագը ծնվել է Տուսկուլում քաղաքում, մասնակցել է Պունիկյան երկրորդ պատերազմին, ինչպես նաև այն պատերազմներին, որ Հռոմը վարում էր Արևելքում։ Նա հարուստ հողատեր էր, սենատոր, անցել է մագիստրատուրաների բոլոր աստիճաններով, սկսած քվեստորից մինչև ցենզորը։ Կատոնը հայտնի էր իր խիստ բարքերով, պահպանողական քաղաքական հայացքներով։ Լինելով խոշոր հողատեր, նա պատկանում էր այն նոբիլներին, որոնք անցել էին սարուկների աշխատանքի վրա հիմնված գյուղատնտեսության նոր ձևերին։ Նա արտահայտել է Հռոմի ագրարային-սարկատիրական շրջանների նվաճողական-զավթողական քաղաքական հայացքները։ Այդ կապակցությամբ Կատոնը Պունիկյան երրորդ պատերազմի նախօրյակին հակադրվեց Սցիպիոն Էմիլիանոսի խմբավորմանը, պահանջելով Կարթագենի կործանումը, որը Հռոմի հզոր առևտրական մրցակիցը էր։

Կատոնի գլխավոր աշխատությունը կոչվում է «Origines»—«Ծագումներ», որը գրել է իր կյանքի վերջին շրջանում՝ 167—149 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում։ Աշխատությունը բաղկացած է 7 գրքից։ Առաջին 3 գրքերը համապատասխանում են վերնագրին. առաջին գիրքն ընդգրկում է Հռոմի նախաակրբնական պատմությունը՝ թագավորական դարաշրջանում։ 2-րդ և 3-րդ գրքերում՝ իտալյան մյուս քաղաքների և ժողովուրդների (ցեղերի) ծագումը, որոնց հետ ընդհարվել են հռոմեացիները հանրապետության դարաշրջանում։ 4-րդ և 5-րդ գրքերում նկարագրված են Պունիկյան առաջին և երկրորդ պատերազմները, իսկ 6-րդ և 7-րդ գրքերում՝ հետագա իրադարձությունները ընդհուպ մինչև Կատոնի կյանքի վերջին օրերը (149 թ. մ. թ. ա.)։ Ըստ երևույթին Կատոնը գրել է հունական աղբյուրների հիման վրա, քանի որ բացի էտրուսկներից՝ իտալյան մնացած ցեղերի մասին տեղեկություններ կարելի էր քաղել միայն հունական աղբյուրներից։ Թեև Կատոնը շատ է օգտվել հունական աղբյուրներից և համեմատություններ է անցկացրել հունական կերպարների և հռոմեական գործիչների միջև, բայց նրա ամենաբնորոշ կիծը՝ հռոմեական անցյալի գովաբանումը, ջերմ հայրենասիրությունն է, որով տոգորված են նրա աշխատությունը և ելույթները սենատում։

Հետաքրքիր է, որ առաջին անգամ Կատոնն է ընդգծել, թե պատմությունը պետք է շարադրել սիստեմավորված, կապակցված ձևով։ Անտիկ շատ պատմիչների նման Կատոնն էլ ընդգծում է, որ պատմությունը կրթական և դաստիարակչական լավագույն միջոց է։ Նրա այդ աշխատությունից պահպանվել են միայն չնչին հատվածներ։

Կատոնի երկերից լրիվ պահպանվել է «Գյուղատնտեսության մասին» երկը „De agri cultura“ որը մեծ նշանակություն ունի Հռոմի ագրարային պատմության ուսումնասիրության համար։ Այն պարունակում է խիստ արժեքավոր տեղեկություններ 2-րդ դարի (մ. թ. ա.) Իտալիայի սարկատիրական անտեսության, կենցաղի մասին։ Հեղինակի կարծիքով գյուղատնտեսությամբ զբաղվելը իսկական հռոմեացու արժանավոր գործն է։ Նա խորհուրդներ է տալիս, թե ինչպես կարելի է հողի վրա աշխատող սարուկներին ավելի ռացիոնալ կերպով շահագործել։ Այս աշխատությունը պարունակում է նաև բժշկական և խոհարարական խորհուրդներ և նույնիսկ զանազան մոգական ֆորմուլներ (անեծքի, նզովքի բանաձևեր)։

Կատոնի ազդեցությամբ լատիներեն լեզվով են շարադրում իրենց տարեգրությունները նրա կրտսեր ժամանակակիցները՝ Լուցիոս Հեմինան, Լուցիոս Կալպուռնիոս Պիզոնը, Կասիուս Ֆաննիուսը և ուրիշներ։ Ավագ տարեգրողները մասամբ հիմնվում էին սկզբնաղբյուրների վրա։ Իրենց ժամա-

նակաշրջանի դեպքերը շարադրելիս նրանք բավականին արժանահավատ տեղեկություններ են հաղորդել, բայց հնագույն անցյալը շարադրելիս նյութերը քաղում էին ավանդություններից, բանավոր պատմազրույցներից և հունական հեղինակների երկերից։

Ավագ տարեգրողները ծագում էին արիստոկրատական վերնախավից, ուստի և կուրորեն վստահում էին բանավոր պատմազրույցներին, որտեղ մեծարվում էին արիստոկրատական տոհմերը։ Նրանք անշեղորեն անց էին կացնում հռոմեական տեսակետը։ Հռոմեացի պատմիչները հենց սկզբից գերագնահատում էին անվանի տոհմական ավագանու հաջողությունները, շրջանցում նրանց անհաջողությունները։ Պունիկյան պատերազմներում տարած փայլուն հաղթանակների լույսի տակ պոետները, ավագ տարեգրողները և հետագա պատմիչները հետադարձ հայացք նետեցին հռոմեական հնագույն անցյալի իրադարձությունների վրա և փառքի լուսապսակով գարդարեցին այն։

Կատոնը եզրափակեց ավագ տարեգրողների սերունդը։

ԿՐՏՍԵՐ ՏԱՐԵԳՐՈՂՆԵՐ

Կրտսեր տարեգրողների ժամանակ Հռոմ թափանցեց հունական ճարտասանությունը. տարեգրությունը հետզհետե բաժին ընկավ հռետորներին, որոնք ստացել էին հունական կրթություն։ Նախկին չոր, հակիրճ ուրվագծերի փոխարեն սկսեցին երևան գալ մանրամասն պատմվածքներ, որոնց հեղինակները ձգտում էին գրավիչ մանրամասնություններով հարստացնել պատմական շարադրանքները։ Կանգ չառնելով դեպքերը կեղծելու առաջ, նրանք հին տարեգրությունը փոփոխում էին և հեռավոր անցյալ էին փոխադրում քաղաքական և սոցիալական այն շարժառիթները, որ հատուկ էին իրենց ապրած դարաշրջանին, այսինքն՝ մ. թ. ա. 2-րդ դարի վերջին և 1-ին դարին։ Նրանք բերում էին իրենց հորինած ճառերը, ավանդության մեջ պահպանված տեղերը լրացնում էին իրենց երևակայությամբ։ Իրենց սեփական հայացքները նրանք վե-

րագրում էին առասպելական և կիսառասպելական գործիչներին։ Օրինակ՝ կրտսեր տարեգրողներից մեկի գրվածքում Սերվիոս Տուլլիոսը մի ճառ է արտասանում, որը հիշեցնում է Դրակքոսների ծրագիրը։

Կրտսեր տարեգրողների աշխատությունները չեն պահպանվել։ Նրանց բովանդակությունը մեզ հայտնի է ավելի ուշ գրողների կողմից դրանց մասին արված հիշատակություններից։ Կրտսեր տարեգրողներից նշանավորներն են երեքը։ Առաջինը՝ **Կլավդիոս Քվադրիգարիոսն** է, որն ապրել է 1-ին դարի առաջին կեսին (մ. թ. ա.)։ Նրա ծավալուն աշխատությունը կոչվում է «Հռոմեական պատմություն», բաղկացած 22 գրքից, ընդգրկում է՝ սկսած գալլերի արշավանքից, որը նկարագրել է խիստ համառոտ և շատ մանրամասն շարադրել է իրեն մոտ ժամանակների պատմությունը, հասցնելով այն, հավանաբար, մինչև Սուլլայի մահը։ Տիտոս Լիվիոսը Քադրիգարիոսին հիշատակում է իր աղբյուրների մեջ։

Կրտսեր տարեգրողներից երկրորդը **Վալերիոս Անտիասն** է (Անցիատը), Սուլլայի ժամանակակիցը, որը իր ընդարձակ «Տարեգրության» մեջ մանրամասնորեն մշակել է ամբողջ հռոմեական պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև Սուլլայի դարաշրջանը։ Աշխատությունը գրված է կողմնակալ ոգով. մասնավորապես մեծարել է Վալերիոսների տոհմը, որին պատկանում էր հեղինակը։ Վալերիոս Անտիասը (Անցիատը) ծառայել է որպես աղբյուր Տիտոս Լիվիոսի, Դիոնիսիոս Հալիկառնասցու և Պլուտարքոսի համար։ Տիտոս Լիվիոսի դիտողություններից երևում է, որ Վալերիոս Անտիասը (Անցիատը) կանգ չէր առնում ազատ վերամշակման ենթարկելու նույնիսկ այնպիսի իրադարձություններ, որոնց մասին արդեն գոյություն ունեին ժամանակակիցների գրական աղբյուրներ։

Երրորդ կրտսեր տարեգրողն է **Լիցինիոս Մակրոսը**. ապրել է 1-ին դ. (մ. թ. ա.), գրել է «Տարեգրություններ», որի առանձնահատկությունն այն է, որ այդ աշխատության մեջ քաղվածքներ են բերված հռոմեական արխիվում եղած վավերագրերից։ Լիցինիոս Մակրոսը ևս ծառայել է որպես աղբյուր Լիվիոսի համար։

Այսպես, ուրեմն, վերոհիշյալ երեք կրտսեր տարեգրող-ները էլ աղբյուր են ծառայել հետագա պատմիչների համար: Ճիշտ է, նրանք շարունակեցին նորամուծությունը, գրում էին բացառապես լատիներենով, բայց շատ պրիմիտիվ լեզվով: Մանավանդ չյուրացրին կատոնի սկզբունքը՝ պատմական նյութերը կապելու և սիստեմավորելու մասին: Փաստերը շարադրում էին անկապ, առանց ներքին պայմանավորվածության:

Ամփոփելով մեր խոսքը հռոմեական տարեգրողների մասին, պետք է ասել, որ ավագ տարեգրողները դրական դեր խաղացին հռոմեական պատմագրության մեջ. նրանք գրի առան և մեծ մասամբ սիստեմավորեցին Հռոմի անցյալին վերաբերող առասպելախառն տվյալները: Մեր տեղեկությունները Հռոմի հնագույն պատմության մասին հիմնված են մասամբ տարեգրություններում տեղ գտած ավանդության վրա, որի ճիշտ գնահատումից էլ կախված է պատմականն առասպելականից սահմանազատելը:

Հռոմեական ավանդությունը իր արտացոլումը գտել է նաև հույն պատմաբանների երկերում: Սկսած Պյութոսյան պատերազմից՝ երբ Հռոմը շփման մեջ մտավ հունական աշխարհի հետ, հռոմեական ավանդությունը մուտք գործեց հունական գրականության մեջ և գրեթե մինչև հանրապետության վերջը մեծ մասամբ մշակվում էր հույների կողմից: Հունական նմանօրինակ գրականության մեծանուն ներկայացուցիչը Պոլիբիոսն է:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐ

ՈՒՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐ

ՊՈԼԻԲԻՈՍ.—Պոլիբիոսի մասին խոսվել է սույն աշխատության 1-ին մասում, որը նվիրված է Հունաստանի պատմագրությանը: Բայց քանի որ Պոլիբիոսի «Ընդհանուր պատմությունը» կարևոր աղբյուր է նաև Հռոմի ավելի քան հարյուրամյա պատմության համար՝ (266—146 թթ.), ուստի

հարկ ենք համարում անելու մի քանի լրացումներ: Այդ առթիվ պետք է ասել, որ Հռոմը սկսած հելլենիստական ժամանակաշրջանից, սերտ հարաբերության մեջ է մտնում Հունաստանի և հելլենիստական Արևելքի հետ: Հռոմի սոցիալ-տնտեսական կառուցվածքի շատ կողմեր կարող են հասկանալի դառնալ միայն հելլենիզմի սոցիալ-տնտեսական ուսումնասիրությամբ: Հելլենիզմի ազդեցությունը Հռոմի վրա նշանակալի է հռոմեական հասարակության կենցաղի և մշակույթի բնագավառներում:

Հելլենիզմի դարաշրջանի ամենանշանավոր պատմական աշխատությունը Պոլիբիոսի «Ընդհանուր պատմությունն» է, որը ըստ Բ. Նիզեի բնորոշման «դարաշրջան է կազմել պատմագրության մեջ»:

Պոլիբիոսը ծնվել է Արկադիայի Մեգալոպոլիս քաղաքում 201 թ. (մ. թ. ա.) և ապրել է մինչև 120 թ. (մ. թ. ա.): Արիստոկրատական նշանավոր ընտանիքից էր՝ Աքայական Միության սարատեգի որդի և ինքն էլ հետագայում դարձավ Աքայական Միության ականավոր քաղաքական և ռազմական գործիչ: 168 թ. անբարեհոսության համար բազմաթիվ աքայացիների հետ պատանդ է ուղարկվում Հռոմ: Հռոմում ապրել է 16 տարի, շփվել է արիստոկրատական միջավայրում և որպես Սցիպիոն Էմիլիանոսի (Կարթագենը նվաճողի) ուսուցիչ՝ ներգրավվել է Սցիպիոն Աֆրիկացու խմբակի մեջ, կրելով վերջինիս քաղաքական և փիլիսոփայական ազդեցությունը: Նա քաջ ծանոթ էր Հռոմի ներքին կյանքին և արտաքին քաղաքականության էությանը: Իր ստվար աշխատության 6-րդ գիրքը վերաբերում է Հռոմի պետական կարգին: Եվ եթե Պոլիբիոսի «Պատմությունը» լրիվ պահպանվեր, մենք կիմանայինք Հռոմի ողջ պատմությունը՝ սկսած Պունիկյան Առաջին պատերազմից մինչև Կարթագենի կործանումը (241 թ.—146 թ. մ. թ. ա.) այնպես հանգամանորեն և մանրամասն, ինչպես մենք գիտենք Պելոպոնեսյան պատերազմի պատմությունը շնորհիվ Թուկիդիդեսի: Դժբախտաբար, մենք քաջ ծանոթ ենք միայն Առաջին Պունիկյան պատերազմի պատմությանը: Երկրորդինը՝ մինչև Կաննեի ճակատամարտը՝ 216 թ. (մ. թ. ա.), որով-

հետև այդ ժամանակաշրջանի վերաբերյալ Պոլիբիոսի աշխատությունը պահպանվել է լրիվ։

Նրա «Պատմության» կորած բաժինների պահպանված բեկորները պարզություն և հստակություն են մտցնում Հռոմի պատմության վերաբերյալ մեր գիտելիքների մեջ։

Հասկանալի է այն բարձր գնահատականը, որ պատկերավոր ձևով տվել է Պոլիբիոսին Հռոմի պատմության նշանավոր մասնագետ Թեոդոր Մոմզենը. նա Պոլիբիոսին նմանեցնում էր այդ ժամանակվա պատմագրության արևի, ուր որ ծագում էր այդ «արևը», այնտեղ բարձրանում էր ամպերի վարագույրը և ամեն ինչ ներկայանում էր պարզ, հստակ և հասկանալի։ Իսկ որտեղ մայր էր մտնում «արևը», այնտեղ սկսվում էր նոր, է՛լ ավելի թանձր խավար։

Հետագա պատմիչները, հատկապես Տիտոս Լիվիոսը, պահպանել են նրա աշխատության կորած բեկորները։ Սակայն իրենց պատմահայեցողությամբ, հետազոտելու մեթոդով և մտահորիզոնով այդ երկու պատմաբանները՝ Լիվիոսը և Պոլիբիոսը, խիստ տարբերվում են միմյանցից։ Իր ժամանակի առումով լայն մտահորիզոնի տեր, պատմական քննադատության դիրքերից երևույթները լուսաբանող Պոլիբիոսը, որը կիջում է միայն Թուկիդիդեսին և Տակիտոսին, անհամեմատ բարձր է ոչ միայն Տիտոս Լիվիոսից, այլև իր ժամանակի մնացած պատմաբաններից։

Ապրելով խոշորագույն դեպքերի ժամանակաշրջանում, Պոլիբիոսն իր առաջ խնդիր դրեց՝ շարադրելու այդ դեպքերը և բացատրելու, թե ե՞րբ, ինչպե՞ս և ինչո՞ւ 53 տարվա ընթացքում բնակելի երկրի՝ Օյկումենայի, համարյա բոլոր հայտնի մասերն ընկան Հռոմեացիների տիրապետության տակ։ Ներկա լինելով Կարթագենի կործանմանը, Պոլիբիոսը դառնությամբ գալիս է այն եզրակացության, որ փոքրիկ ու թուլացած Հունաստանը պետք է ընդունի Հռոմի հովանավորությունը։ Նա դառնում է միջնորդ իր հայրենակիցների և Հռոմի միջև՝ կանխելով Հունաստանի կործանումը։ Դրա համար երախտապարտ հույները նրա արձանն են կանգնեցնում Պելոպոնեսի շատ քաղաքներում։

Պոլիբիոսի «Ընդհանուր պատմության» թեման Հռոմի համաշխարհային տերություն դառնալն է։ Դա բեկման մոմենտ էր, խոշոր շրջադարձ համաշխարհային պատմության մեջ։ Պոլիբիոսը խնդիր է դնում իր առջև՝ ուսումնասիրել և շարադրել ըստ իր բնորոշման՝ մարդկային պատմության այդ «հոյակապ» շրջադարձը։

Իր տրամադրության տակ ունենալով հարուստ աղբյուրներ, նա աշխատում է Թուկիդիդեսի նման քննադատաբար վերաբերվել սկզբնաղբյուրներին։ Լինելով ակտիվ քաղաքական և հասարակական գործիչ, անձամբ մասնակցելով իր ապրած եռուն ժամանակաշրջանի շատ անցքերի, Պոլիբիոսը շրջագայել է հին աշխարհի շատ վայրերը՝ ձեռք բերելով հարուստ փորձ և գիտելիքներ։ Իր «Ընդհանուր պատմության» մեջ նա աշխատում է երևան բերել երևույթների միջև պատճառակցական կապ և պայմանավորվածություն։ Չնայած անտիկ մտածողներից շատերի նման նա էլ հակատագրին որոշ տեղ է տալիս, հաճախ հակասելով իրեն, սակայն մեծ մասամբ պատմությունը դիտում է որպես պատճառակցական շղթայով պայմանավորված պրոցես։ 6-րդ գրքում նա շարադրում է իր ուսմունքը կառավարման եղանակների մասին։ Կառավարման եղանակները փոխվում են, մեկը տեղի է տալիս մյուսին և նորից վերադառնում հինին՝ ըստ որոշ շրջապտույտի, ըստ «բնության որոշ կարգի»[2]։ Այդ փոփոխությունները կատարվում են բնականորեն և անհրաժեշտորեն[3]։ Հիմնավորելու համար իր դրույթը, թե այդ փոփոխությունները կատարվում են ըստ բնության օրենքի, Պոլիբիոսը բերում է հետևյալ օրինակը՝ «ինչպես երկաթի համար ժանգը, իսկ ծառի համար որդերը կազմում են նրանց հետ ներաճած խոց, որից նրանք ոչնչանում են, թեպետ, արտաքուստ չեն ենթարկված փչացման, այնպես էլ յուրաքանչյուր պետական կարգին ի բնե հատուկ է և նրան ուղեկցում է այս կամ այն այլասերում»[4]։ «Գոյություն ունեցող ամեն բան ենթակա է փոփոխության և փչացման։

[2] **Полибий**, Всеобщая история, т. II, перевод Ф. Мищенко, VI, §§ 9, 10, М., 1895.

[3] *Տե՛ս նույն տեղում, 6, 10, 2։*

[4] *Նույն տեղում, 6, 10։*

Դա բնական անհրաժեշտություն է և կառավարման ամեն տեսակ, ամեն ձև փչանում է երկյակ եղանակով՝ կամ արտաքին և կամ բնածին խոցից»[5]։ Այս առնչությամբ Պոլիբիոսին կարելի է համարել այսպես կոչված «Հասարակության օրգանական զարգացման» տեսության առաջին ներկայացուցիչներից մեկը։

Հետապնդելով գործնական նպատակ՝ պատմությունը, ըստ Պոլիբիոսի, պետք է ուսուցանի մարդկանց, առավելապես քաղաքական գործիչներին, թե ինչպես պետք է նրանք վարվեն նման պայմաններում։ Ուստի, Պոլիբիոսի կարծիքով, պատմությունը պետք է լինի «պրագմատիկ», այսինքն՝ գործնական, պետք է լինի «հիատորիե պրագմատիկե», ինչպես որ իր գրած պատմությունն է, որը պետք է օգնի մարդկանց անցյալի փորձի հիման վրա կանխատեսել ապագան։

Պոլիբիոսն էլ Թուկիդիդեսի նման սխալ գաղափար ուներ պատմական երևույթների օրինաչափության մասին, չհասկանալով հասարակական զարգացման օրենքները, նա դեպքերի բացատրությունը տալիս է հիմնվելով գլխավորապես կամ բնության կարգի և կամ հոգեբանական ֆակտորների վրա։ Այդ կապակցությամբ Պոլիբիոսը մեծ տեղ է հատկացնում անհատի դերին պատմության մեջ։ Քաղաքական դեպքերի ընթացքը, ըստ նրա, որոշում են խոշոր գործիչները՝ Սցիպիոն Աֆրիկացին, Հաննիբալը, Ֆլամինիոսը և ուրիշներ, որոնց նա մեծ տեղ է հատկացնում իր աշխատության մեջ[6]։ Այդ կապակցությամբ հետաքրքրություն է ներկայացնում 10-րդ գրքում Պոլիբիոսի բնութագրությունը, որ նա տվել է Պուբլիոս Կոռնելիոս Սցիպիոնին։ Խոսելով նրա հնարագիտության և հասատատակամության մասին և ռազմական պլանի իրագործման մեջ մեծ հաջողությունների մասին, Պոլիբիոսը քննադատորեն է վերաբերվում այդ առթիվ Պուբլիոս Կոռնելիոս Սցիպիոնի հաջողությունների շուրջը տարածված սխալ մեկնաբանություններին[7]։ Երևան բերելով երևույթներին զգաստ աչքերով նայելու ունակություն, Պոլիբիոսը հերքում է անտիկ

[5] Նույն տեղում, հ. 2-րդ, 6-րդ, 3, 1—2։

[6] Տե՛ս նույն տեղում, 6, 1, 2—3։

[7] Նույն տեղում, 10, 3—8։

պատմիչների մեջ տարածված այն թյուր կարծիքը, թե իբր Պուբլիոսը հակառակորդի բախտավոր զավակն է, և նրա բոլոր հաջողությունները բացատրվում են գերբնական ուժերի միջամտությամբ։ Նա գտնում է, որ Պուբլիոս Կոռնելիոս Սցիպիոնն իր ժամանակի ամենանշանավոր մարդն է, օժտված խորաթափանց մտքով, որը գործում էր սենատական արիստոկրատիայի նախագծած ուղիով։ «Այն մարդիկ, որոնք բնական սահմանափակվածության, թե տգիտության և կամ, վերջապես, թերհամառության հետևանքով ի վիճակի չեն ըմբռնելու որևէ իրադարձության մեջ բոլոր պատահականությունները, պատճառները և կապակցությունները, ասոված ծներին և ճակատագրին են վերագրում այն ամենը, ինչ ձեռք է բերված խորաթափանցությամբ, հաշվով և շրջահայեցողությամբ։

Ահա թե ինչ էի ես հարկ համարում ասել իմ ընթերցողներին, որպեսզի նրանք չընկնեն Պուբլիոսի մասին շրջող սխալ դատողությունների ազդեցության տակ և չմոռանան նրա առավել արժանավոր և ամենահիանալի հատկությունները· դա իմ ըմբռնմամբ նրա հնարագիտությունն էր և հաստատակամությունը աշխատանքում»[8]։

Պոլիբիոսի դատողությունները, պատմահայեցողության վերաբերյալ նրա դրույթները մեծ տեղ են գրավում հատկապես նրա աշխատության 6-րդ գրքում, որը խիստ արժեքավոր նյութեր է պարունակում։ Վեցերորդ գրքի առաջաբանում Պոլիբիոսն ասում է. «...Ես գիտեմ, կգտնվեն ընթերցողներ, որոնք տարակուսանքով կհարցնեն, թե ինչու ենք մենք խախտել կապակցված և անընդմեջ շարադրանքը և տեղափոխել ենք այստեղ մեր դատողությունները հռոմեացիների պետության մասին։ Սակայն հենց սկզբից այդ դատողությունը մենք համարել ենք մեր ողջ երկասիրության անհրաժեշտ մասերից մեկը, մի բան, որ կարծում ենք, պարզաբանված է մեր կողմից պատմության շատ տեղերում, հատկապես սկզբում և նախաբանում։ Այդպես մենք նշել ենք, որ մեր գրքից ընթերցողները կքաղեն նրանից լավագույն և ամենաօգտակար դասեր միայն այն ժամանակ, երբ կիմանան և կհասկանան, թե

[8] **Полибий**, Всеобщая история, т. II, VI, 3—5.

ինչպե՛ս և պետական հաստատությունների ինչպիսի՛ ուժով հռոմեացիները ոչ լրիվ քան հիսուներեք տարվա ընթացքում նվաճեցին համարյա ամբողջ բնակեցված երկրամասը՝ Օյկումենան, և այն ենթարկեցին իրենց միահեծան տիրապետությանը. նախկինում չէ՞ որ նման բան չէր եղել[9]։

Հռոմեական պետության գովերգմանն է վերաբերում նաև նույն գրքում տեղ գտած հետևյալ դատողությունը. «Չէ՞ որ մենք համոզված ենք, որ առանձին մարդու կատարելությունը հաստատվում է միայն նրա կարողությամբ պահպանելու հավասարակշռությունը և հոգու ազնվությունը ճակատագրի ամենակործան փոփոխությունների ժամանակ։ Ճիշտ այդպես էլ պետք է գնահատել նաև պետությունները։ Ահա թե ինչու մենք նկարագրեցինք հռոմեացիների դրության մեջ տեղի ունեցած արագ և վճռական փոփոխությունը, որպիսին չէր ապրել և ոչ մի ժամանակակից ժողովուրդ»[10]։

6-րդ գրքում Պոլիբիոսը շարադրում է նաև իր ուսմունքը պետության մասին։ Այստեղ զգացվում է Արիստոտելի «Պոլիտիկա» աշխատության և մանավանդ՝ stoիկների ուսմունքի ազդեցությունը, որին նա ծանոթացավ Հռոմում, Սցիպիոնների խմբակում։ Հիշեցնելով, թե կառավարման որ ձևն է առաջացել սկզբում, ո՛րն է նրան հաջորդել և ինչպե՛ս են նրանք մեկը մյուսին փոխարինում, Պոլիբիոսը շարունակում է. «Այդ պատճառով էլ, եթե միայն ընթերցողը կարողանում է ըմբռնել կապը սկզբի և վերջի միջև, նա ինքն էլ կարող է նախագուշակել, թե ի՞նչ է լինելու հետո, դա ըստ իս՝ պարզ է։ Այսպես, ահա, երբ պետությունը հաղթահարել է բազմաթիվ ծանր փորձություններ և ապա հասել է անվիճելի գերապանցության և գերիշխանության, նրա մեջ հաստատվում է կայուն բարեկեցություն և դրա հետ մեկտեղ մանավոր կյանքը դառնում է ավելի ճոխ ու փարթամ և քաղաքացիները, ընկնելով պաշտոնների և այլ տենչանքների հետևից, սկսում են անցնել ճշմարտության սահմանը... Ժամանակի ընթացքում..., առաջ է գալիս անկում, որը ծագում է քաղաքացիների իշխանասիրությունից և համեստ վիճակի նկատմամբ ունեցած արհամարհանքից. դրան ավելանում է նաև ամբարտավանությունը և շռայլությունը»։ Այդ ժամանակ զայրացած ժողովուրդը, ամեն բանում ունկնդրելով կրքերի ձայնին՝ հրաժարվում է հնազանդվելու իշխանավորներին, նույնիսկ չի ճանաչում նրանց իրավահավասար իր հետ և բոլոր գործերը ցանկանում է լուծել ինքը։ Դրանից հետո պետությունը զարդարում է իրեն ազատ ժողովրդական կառավարության ազնվագույն անունով, իսկ իրականում նա դառնում է վատթարագույնը պետություններից՝ Օխլոկրատիա (ամբոխավարություն—Ե. Մ.)»[11]։

Հավատարիմ մնալով իր հակաժողովրդական քաղաքական հայացքներին՝ Պոլիբիոսն էլ stoիկների նման անտեսում է հասարակության սոցիալ-դասակարգային հակասությունները, որոնք հանգեցնում են հեղաշրջումների, և ծանրության կենտրոնը, stoիկների նման, փոխադրում է քաղաքացիների արատավոր բարքերի իշխանասիրության, ընչաքաղցության, շռայլության և ամբարտավանության վրա, կրքերի զերակշռության վրա, չափավոր և ժուժկալ կանոնները խախտելու վրա։ Stoիկների ազդեցությամբ էր, որ նա արտահայտեց պետական միևնույն ձևերի կրկնողության և շրջապտույտներով ընթացող զարգացման (ցիկլիզմի) մասին հիպոթեզը։ Սկզբում միապետություն է եղել, ապա՝ տիրանիա, հետո՝ արիստոկրատական օլիգարխիա և ապա՝ դեմոկրատիա։ Դեմոկրատիան նորից փոխարինվում է միապետությամբ և ցիկլը նորից կրկնվում է։

Պոլիբիոսի այս տեսությունը հետադիմական ուսմունք է և հակասում է հասարակական պրոգրեսիվ զարգացման վերընթաց շարժմանը։

Իր քաղաքական հայացքներով Պոլիբիոսը դեմոկրատիայի հակառակորդն էր, արիստոկրատիայի պահպանողական քաղաքականության կողմնակից։ Նա թշնամաբար էր վերաբերվում էտոլիական Միությունը, որ կառուցված էր դեմոկրատական հիմունքներով և իդեալականացնում էր Աքայական միությունը, որը էտոլիականի համեմատությամբ ավելի արիստոկրա-

[9] Նույն տեղում, I, 1—2—3։

[10] Նույն տեղում, 6, 6, 7։

[11] **Полибий**, Всеобщая история, т. II, глава VI, § 57.

տական էր։ Հետագայում Պոլիբիոսի արիստոկրատական հայացքը վերջնականապես ձևավորվեց Հռոմում։ Կաշկանդված լինելով իր դասակարգի՝ հունա-հռոմեական արիստոկրատիայի գաղափարական շրջանակներում, նա իդեալական է համարում հռոմեական ռեպուբլիկական պետությունը, որտեղ, ըստ նրա՝ ներդաշնակորեն միահյուսվել են պետական կառուցվածքի տարբեր ձևերը՝ թե՛ միապետական, թե՛ արիստոկրատական և թե՛ դեմոկրատական տարրերը։ Այստեղ ակներև է Արիստոտելի ազդեցությունը՝ «խառը» պետական կարգը լավագույն իշխանության համարելու վերաբերյալ»[12]։ Նա չի տեսնում հռոմեական հասարակության ամբողջ կողմերը՝ սոցիալ-դասակարգային հակասությունները, թշնամաբար է վերաբերվում Հունաստանում երրորդ և երկրորդ դարերում ծագած դեմոկրատական շարժումներին, արտահայտում է հունական ունևոր խավերի ձգտումները, որոնք ցանկանում էին հնազանդվել Հռոմին և նրա ուժի միջոցով զսպել սարուկներին և ազատ չքավորներին։ Պոլիբիոսը գովաբանում էր հռոմեական արտաքին նվաճողական քաղաքականությունը։

Այնուամենայնիվ, թափանցելով պատմական պրոցեսի մեջ Պոլիբիոսը կարողացավ հանգել այն եզրակացության, որ պատմական դեպքերը ունեն փոխադարձ պատճառակցական կապ։ Իհարկե, նա էլ Թուկիդիդեսի նման չկարողացավ և չէր էլ կարող հասկանալ պատմական պրոցեսի ռեալ շարժիչ ուժերը և գտնել նրանց օրինաչափությունը։

Պոլիբիոսի մյուս առավելությունն այն է, որ նա աշխատում է պահպանել ժամանակագրությունը, ժամանակի հաշվումը կատարում էր օլիմպիադաներով։ Իր մի շարք առավելությունների, ինքնատիպ ընդհանրացումների և հատկապես քննական վերլուծության ձգտման համար դեռևս հենում Պոլիբիոսին համարում էին երկրորդ Թուկիդիդես։

ԴԱՅՈՍ ՀՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ *(100—44 թ. մ. թ. ա.).*—Երկրորդ դարի վերջերից (մ. թ. ա.) Հռոմում երևան է գալիս մեմուարային գրականությունը, որի մեջ պատմական մեծ արժեք են ներկայացնում Հուլիոս Կեսարի «Նոթեր գալլական պատերազմի մասին» 7 գրքով և «Նոթեր քաղաքացիական պատերազմի մասին» 3 գրքով։ Այս վերջին գիրքն ավարտված չէ, քանի որ այստեղ խոսվում է միայն 49 և 48 թվականների քաղաքացիական պատերազմի մասին։ Ըստ հին հեղինակների վկայության՝ «Քաղաքացիական պատերազմն» ավարտել է Կեսարի նախկին լեգատ և նրա մերձավոր բարեկամ Ավլոս Հիրտիոսը, շարադրելով «Ալեքսանդրյան պատերազմը» երկը։ Կեսարի մահից հետո Հիրտիոսը միացրել է նրա վերոհիշյալ երկու աշխատությունները, իսկ նրանց միջև ընկած 51 և 50 թվականների իրադարձությունները լրացրել է 8-րդ գրքով, որը վերաբերում է «Նոթեր դալլական պատերազմի մասին» աշխատությանը։ Բացի այդ, մեզ անհայտ մի հեղինակ, որ հավանաբար մասնակցել է Կեսարի արշավանքներին, նկարագրել է Աֆրիկյան պատերազմը և Իսպանական պատերազմը։ Թերևս այս երկերի հեղինակ կարելի է համարել Հիրտիոսին[13], թեպետ այդ հարցը դեռևս մնում է չլուծված։

Հուլիոս Կեսարն ապրել է և գործել Հռոմեական հանրապետության քաղաքական կյանքի բուռն հորձանուտում։

Դա քաղաքացիական կռիվների ժամանակաշրջանն էր, որը տևեց ավելի քան 100 տարի և ավարտվեց հանրապետության անկումով և ռազմական դիկտատուրայի հաստատումով։ Պրովինցիաների գիշատիչ թալանը, արևելյան խոշոր պատերազմներից ձեռք բերված հարստությունները և բազմահազար ստուրկները՝ չդերազանցված եկամուտներ ստեղծեցին հռոմեական արիստոկրատիայի վերնախավի համար,

[12] Տե՛ս նույն տեղում, 11—12։

[13] Ավլոս Հիրտիոսը գրել է «Գալլական պատերազմի» 8-րդ գիրքը և հավանաբար՝ նաև «Քաղաքացիական պատերազմի» եղրափակիչ մասը՝ «Ալեքսանդրյան պատերազմը։ Հիրտիոսը՝ Կեսարի զինակիցը և նրա արշավանքների մասնակիցը», ըստ Ցիցերոնի վկայության եղել է կրթված մարդ, օժտված գրական և հռետորական ձիրքով։ Կեսարի մահից հետո աշակերտել է Ցիցերոնին՝ ուսանելով ճարտասանական արվեստը։ Ալեքսանդրյան պատերազմի մասին նրա երկը արժանացել է Ցիցերոնի բարձր գնահատականին։ Ուշագրավ է, որ Հիրտիոսը անձամբ մասնակցել է Ալեքսանդրյան պատերազմին և այն նկարագրել է ականատեսի և մասնակցի աչքերով։ Հիրտիոսը 43 թ. (մ. թ. ա.) եղել է կոնսուլ։ Սպանվել է Մուտինայի ճակատամարտում, նույն՝ 43 թ. Անտոնիոսի դեմ մղած կռվում։

իսկ մյուս բևեռում աննախընթաց չափերի հասցրին մանր և միջակ տնտեսությունների քայքայումը: Սարուկների միջոցով մշակվող հողային վիթխարի կալվածքները՝ լատիֆունդիաները, հետզհետե կլանում էին մանր և միջակ ազատ տրնտեսությունները, դուրս շպրտում նրանց տերերին հայրենական օջախներից և հողակաորներից, վերածելով լյումպեն-պրոլետարների: Քաղցի ուրվականը ավելի հաճախակի էր շրջում Հռոմի և իտալյան գյուղերի վրայով, սրելով տնտեսական և սոցիալական ճգնաժամը: Հնացել, իր դարն արդեն ապրել էր նաև պետական ապարատը. հռոմեական վիթխարի պետությունը գլխավորում էր Հռոմ քաղաքը՝ իր ոչ-ճկուն մագիստրատուրաներով և ագահ, ընչաքաղց արիստոկրատիայով՝ նոբիլներով: Ժողովրդական հուզումները, սարուկների ապստամբությունները և պրովինցիաների հուժկու ազատագրական շարժումները խարխլում էին հռոմեական հանրապետության հիմքերը: Անհրաժեշտ էր դուրս գալ սոցիալ տնտեսական այս փակուղուց՝ փրկելու համար սարկատիրական կարգը: Այդպիսի միջոցառումներ հանդիսացան Գրակքոսների և Սատուռնինոսի դեմոկրատական բարեփոխումները, որոնք, սակայն, ողբերգական վախճան ունեցան. նրանք ապացուցեցին, որ առանց ռազմական ուժի անհնար է դուրս գալ սոցիալ-քաղաքական ճգնաժամից: Ռեֆորմները քաղաքացիական կռիվների հզոր ազդանշան ծառայեցին:

Զինված ուժերի վրա հենվելով՝ Գայոս Մարիոսը, Սուլլան, Պոմպեոսը և ապա Հուլիոս Կեսարն ու Օկտավիանոսը հաղթական ավարտին հասցրին հանրապետության վրա կատարած գրոհը՝ հանուն սարկատիրական կարգի ժամանակավոր կայունացման: Ռազմատարկատիրական դիկտատուրան՝ պրինցիպատը, միակ ելքն էր սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամից դուրս գալու համար: «Պրինցիպատի նյութական հիմքը զորքն էր... իսկ նրա բարոյական հենարանը այն ընդհանուր համոզմունքն էր, թե՝ եթե ոչ այս կամ այն կայսրը, ապա ռազմական գերիշխանության վրա հիմնված այդ կայսրությունը անխուսափելի անհրաժեշտություն էր»[14]:

[14] **К. Маркс** и **Ф. Энгельс**, Собр. Соч., т. XV, Ф. Энгельс, Бруно

Քաղաքացիական կռիվների դարաշրջանում զորքի դերը բացառիկ նշանակություն է ստանում: Գայոս Մարիոսի ռազմական ռեֆորմի հետևանքով (104—103 թթ. մ. թ. ա.) բանակը իր շարքերն ընդունեց «պրոլետարներին»՝ ցենս չունեցող քաղաքացիներին, որոնք ոչ միայն ստանում էին պետական համեստ ռոճիկ, հանդերձանք և սպառազինություն, այլև զորավարներից՝ առատ նվերներ և հողաբաժիններ: Դրանով հետզհետե քաղաքացիական աշխարհազորը փոխարինվեց մշտական բանակով: Նախկին աշխարհազորում կռվող զինվորները դառնում էին պրոֆեսիոնալ զինվորներ: Նրանք ձգտում էին նոր արշավանքներ կատարելու ,որ հարուստ ավար, նվերներ, հարստություն էին խոստանում: Ռեֆորմի հետևանքով փոխվում են նաև զորավարների ու զինվորների հարաբերությունները: Զինվորները հավատարմորեն ծառայում էին իրենց զորավարներին, որոնք առաջնորդում էին նրանց հաղթական արշավանքների և ձեռք բերած հարուստ ավարից բաժին հանում զինվորներին: Զինվորները պատրաստ էին զենքը ձեռքներին կռվելու ոչ միայն արտաքին թշնամիների դեմ, այլև իրենց զորավարների քաղաքական պահանջները իրականացնելու: Ահա այսքան մեծ նշանակություն ուներ զորքը քաղաքացիական կռիվների դարաշրջանում. բավական է բերել Մարիոսի, Պոմպեոսի, Սուլլայի և մանավանդ Կեսարի և Օկտավիանոսի օրինակները, համոզվելու համար, որ զինված ուժերը լիովին տիրապետում էին դրությանը և անհրաժեշտ նյութական հիմքը դարձան կազմավորվող ռազմական դիկտատուրայի՝ պրինցիպատի համար:

Պլուտարքոսը իր «Զուգակշիռքում» մեծարում է Կեսարին՝ առանձնապես ընդգծելով զինվորների դեպի Հուլիոս Կեսարը տածած արտակարգ սերն ու նվիրվածությունը. «Նրա զինվորներն այնպիսի սեր ու համակրանք էին տածում դեպի Կեսարը, որ նույնիսկ այն մարդիկ ,որոնք ուրիշ պատերազմնե-

Бауэр и первоначальное христианство, Издание второе М., 1961, стр. 310—311.

բում ոչնչով աչքի չէին ընկել, անհաղթահարելի արիությամբ գնում էին ամեն տեսակ վտանգի դեմ հանդիման, հանուն կեսարի փառքի»[15]։

Հռոմեական պատմության բեկման ահա այսպիսի բարդ հոլվանուտում է ապրել և գործել Հուլիոս Կեսարը։ Ծնվել է 102 թ. (մ. թ· ա.), ստացել է հունական փայլուն կրթություն Հռոդոս կղզում, հարատասանության հռչակավոր ուսուցիչ Ա-պոլոնիոս Մոլոնի մոտ։ Վաղ հասակում աչքի է ընկել ռազմական ընդունակություններով ասիական բանակներում ծառայելու ընթացքում՝ երևան բերելով քաջություն և նախաձեռնություն։ Հռոդոս կատարած ճանապարհորդության ժամանակ Կեսարը էգեյան ծովի Ֆարմակուսա կղզում գերի է ընկնում ծովահենների ձեռքը և գերության մեջ մնում 40 օր։

Այնուհետև, դեռևս ոչ մի պաշտոն չունենալով, նա փայլուն մեղադրական ճառով հանդես եկավ Կոռնելիոս Դոլաբելլայի դեմ՝ պրովինցիաներում կատարած նրա շորթումների առթիվ, և իր խոսքի հմայքի և տրամաբանական ուժի շնորհիվ վաստակեց հռոմեական լայն հասարակայնության հիացմունքը։ Սկսած այդ պահից Կեսարը խիզախորեն նետվեց քաղաքական պայքարի ասպարեզ՝ ցուցաբերելով մեծ ճկունություն, նուրբ դիվանագիտություն և անխոնջ բոլոր միջոցներով քաղաքական կարիերա ստեղծելու արտակարգ ունակություն։ Նա գործի դրեց բոլոր հնարքները (կաշառքը, դեմագոգիան) կոնսուլության հասնելու համար։ Մինչ այդ 65 թ. ընտրվելով էդիլ՝ նա շքեղ խաղերով, հոյակապ կառույցներով և դեմագոգիկ կերպով Մարիոսի արձանների վերականգնումով, հետագայում նաև օպտիմատների դեմ մղած դեմագոգիկ հարձակումներով իր կողմն է գրավում պլեբսին։ 63 թ. նա ընտրվում է պրետոր, անլեգալ կերպով օժանդակում է սենատի դեմ ուղղված Կատիլինայի դավադրական գործունեությանը։ Բայց երբ հարցը վերաբերում էր օպտիմատների դեմ ուղղված ժողովրդական մասսաների բացահայտ ելույթներին, Կեսարը միշտ անցնում էր իր սոցիալական շերտի՝ օպտիմատների կողմը, դեն նետելով «դեմակը»։ Իր դասակարգի հետ համե-

[15] **Плутарх**, Сравнительные жизнеописания, т. 2, М., 1963, Цезарь, § XVI.

րաշխ լինելու նրա գիծը ցայտուն կերպով հանդես եկավ 45 թ. (մ. թ. ա.), երբ անցնելով միահեծան իշխանության գլուխ, նա ցույց տվեց սարկաստիրական դիկտատորի իր իսկական դեմքը։

Հունա-հռոմեական գրողները մեծ մասամբ գրական գործունեության են նվիրվում քաղաքական-պետական գործունեությունից հեռանալուց հետո (Թուկիդիդես, Պլուտարքոս, Սալլյուստիոս, Տակիտոս, Սվետոնիոս, Ամմիանոս Մարկելինոս և ուրիշներ)։ Կեսարը, սակայն, իր անմահ «Նոթերը» գրել է ռազմա-քաղաքական գործունեությանը հարակից։ Իր կոնսուլության տարում՝ 59 թ. (մ. թ. ա.), Կեսարը առաջին անգամ սկսեց հրապարակել յուրատեսակ լրագիր՝ Acta populi Romani, *որը պարունակում էր սենատում և ուրիշ պետական հիմնարկներում եղած բանավեճերը և սենատական որոշումները։*

Ժողովրդական տրիբուն Պուբլիոս Վատինիոսի օրենքով Կեսարը հինգ տարի ժամանակով ստացավ իր ցանկացած Այսրալպյան Գալլիան և Իլլիրիան 3 լեգիոնով։ Հետագայում սենատը Կեսարին հանձնեց նաև Անդրալպյան Գալլիան մեկ լեգիոնով, նպատակ ունենալով կասեցնել տրեվերների ոտնձգությունը ցեղերի առաջխաղացումը, որոնք շարունակ սպառնում էին հռոմայեցիներին։ 9 տարվա ընթացքում Կեսարը հաջողությամբ գրավեց ամբողջ Գալլիան և պատերազմ մղեց գերմանական այն ցեղերի դեմ, որոնք անցել էին Հենոսը և մտադիր էին հաստատվելու Գալլիայում։ Շնորհիվ հռոմեական լավ մարզված զորքերին, ռազմական բարձր տեխնիկայի և իր՝ Կեսարի հիանալի զորավարական տաղանդին ու դիվանագիտությանը, նա առաջինը հռոմեական զորավարներից անցավ Հենոսը և 18 օր մնաց նրա աջ ափին, ծանր պարտություն մատնելով գերմանացիներին։ Այնուհետև նա նմանապես առաջինը անցավ Բրիտանիա և թեպետ մի շարք դժվարությունների և անհաջողությունների հանդիպեց, բայց այնուամենայնիվ 54 թ. (մ. թ. ա.) մեծ զորքով մտավ կղզու խորքը, որի մասին նախկինում հռոմայեցիները շատ աղոտ պատկերացում ունեին։ Գալլիայի նվաճումը, վիթխարի հարստությունների թալանը, մեծաքանակ ռազմագերիննե-

րը և ապա բրիտանական արշավանքը՝ այդ ամենը փառքի լուսապսակով զարդարեց Կեսարին, իսկ նրա տրամադրության տակ եղած մեծաքանակ զինված ուժերը նրան դարձրին խիստ վտանգավոր ախոյան Պոմպեոսի և սենատի համար։ Այնուամենայնիվ, ցնծությունն այնքան մեծ էր, որ սենատը 15-օրյա մաղթանքով մեծարեց Կեսարին։ Այդ առթիվ հետաքրքիր է մեծանուն հռոմեական հռետոր Ցիցերոնի ճառը, որ նա արտասանել է 56 թ. (մ. թ. ա.) սենատի նիստում։ Հակառակ նրան, որ Ցիցերոնը Կեսարին էր համարում 58 թ. իր արտաքսման գլխավոր հանցավորը, նա ինքը առաջարկեց սենատին մեծարել Կեսարին 15-օրյա մաղթանքով և իր ճառում, նվիրված սենատական պրովինցիաներին, պնդում էր, որպեսզի երկու Գալլիաները և Իլլիրիկը տրվեն Կեսարին։ Իրեն հատուկ հռետորական հնարքով Ցիցերոնը բացականչում է. «Կարո՞ղ եմ արդյոք թշնամի լինել նրան, որի նամակները, համբավը նրա մասին և սուրհանդակները ամեն օր ապշեցնում են իմ լսելիքը մինչև այժմ չլսված ցեղերի, ժողովուրդների և վայրերի անուններով։ Ես առչորվում եմ, հա՛յր սենատորներ, հավատացեք... չափազանց մեծ սիրուց դեպի հայրենիքը, և այդ վազուզվա և հավերժական սերը դեպի հայրենիքը, հաշտեցնում է և վերստին մերձեցնում է ինձ Կեսարին և վերականգնում է մեր բարի հարաբերությունները նրա հետ... վերջերս ձեզ զեկուցել են նրա բանակի ոռճիկի մասին. ես ո՛չ միայն չառարկեցի դրան, այլև պնդում էի ամեն կերպ, որպեսզի դուք այն հաստատեք։ Գալլերի դեմ պատերազմը իրականում վարել է միայն իմպերատոր Գ. Կեսարը, իսկ նախկինում մենք միայն պաշտպանվում էինք նրանցից։ Միշտ էլ մեր զորավարները նախընտրում էին ետ մղել ժողովուրդներին և ոչ թե՛ բախվել նրանց։ Նույնիսկ նշանավոր Մարիոսը բավարարվեց Իտալիայի վրա նեռվող վիթխարի գալլական հրոսակախմբերին պարտության մատնելով միայն, բայց ինքը չէր թափանցում նրանց քաղաքները»[16]։

Ցիցերոնի ճառից մենք կռահում ենք, թե որքան մեծ նշանակություն ունեին գալլական հաղթական պատերազմները և Գալլիայի նվաճումը Հռոմի համար։

Դեռևս 51 թ. (մ. թ. ա.) Կեսարը անհրաժեշտ էր գտնում նոթեր հրապարակել պատերազմի մասին։ Նույնիսկ գալլական արշավանքի ընթացքում ձիու վրա նստած Կեսարը ուրվագծում էր իր «Նոթերը», գրի առնում տպավորությունները, կատարում անհրաժեշտ նշումներ։

«Նոթերը» կարևոր աղբյուր են հին գալլական երկրի ու բնակիչների, ինչպես նաև գերմանական ժողովրդի հնագույն պատմության համար։ Հարուստ փաստական նյութերի հիման վրա Կեսարը ցույց է տալիս, որ հին գերմաններն իրենց պատմության արշալույսին ապրել են տոհմական անդասակարգ կարգերով։ Կեսարի այս աշխատությունը անհերքելիորեն ժխտում է գերմանիստների անհեթեթ պնդումն այն մասին, թե գերմանական ժողովուրդն ի սկզբանե անտի ունեցել է մասնավոր սեփականություն, հակադիր դասակարգեր, պետություն, որպես բարձր ռասայի ժողովուրդ։

Իր «Նոթերի» 12-րդ գլխում Կեսարը տալիս է Բրիտանիայի ազգագրական ակնարկ. կանգ է առնում կենտրոնական մասում բնակվող ցեղերի վրա, որոնք ըստ ավանդության իրենց համարում էին կղզու բնիկներ, իսկ ծովափնյա ցեղերին՝ կողոպուտի նպատակով Բելգիայից եկածներ։ Առաջին անգամ այդ արշավանքի հետևանքով հռոմեացիները որոշ դաղափար կազմեցին Բրիտանիայի մասին։

Գալլական պատերազմը կարևոր նախադրյալներ ստեղծեց հետագա քաղաքացիական պատերազմների համար։ Կեսարի տրամադրության տակ կուտակվել էին վիթխարի նյութական միջոցներ և գտնվում էին 13 կադրային լեգեոններ իրենց առաջնակարգ ռազմական տեխնիկայով։ Ռազմական դիկտատուրայի մյուս հավակնորդը՝ Պոմպեոսը, որը մինչ այդ Արևելքում հռչակվել էր ռազմական փառքով, իր տրամադրության տակ ուներ սենատական լեգեոնները։ Նրա սոցիալ-քաղաքական հենարանը սենատորական դասի ամենապահպանողական ներկայացուցիչները՝ ծայրահեղ օպտիմատ-

[16] **Марк Туллий Цицерон**, Речи в двух томах, т. 2, М., 1962, О консульских провинциях, §§ 22—23, 28.

ներն էին որոնք հրահրեցին Պոմպեոսի և Կեսարի միջև քաղաքացիական պատերազմը։

Հռոմի պատմության բեկման շրջանում պայթած քաղաքացիական կռիվը խոշոր շրջադարձային իրադարձություն էր, որը հետագայում իր արտացոլումը գտավ Կեսարի «Նոթեր քաղաքացիական պատերազմի մասին» մենագրության մեջ։

Իր համար ծանր պայմաններում նա սկսեց քաղաքացիական պատերազմը ոչ միայն Պոմպեոսի, այլև հանրապետական կուսակցության դեմ։ Ծանր էր պայքարը Աֆրիկայում, Իլլիրիայում, Դիրհաքիումում, Ալեքսանդրիայում։ Այնուամենայնիվ, շնորհիվ իր զորավարական մեծ տաղանդին, հիանալի ռազմական ուժերին և նորը դիվանագիտությանը Կեսարը այս պատերազմում էլ հաղթող հանդիսացավ։

Իր «Նոթերում» Կեսարը միտումնավոր ոգով է շարադրել իր և Պոմպեոսի միջև ծագած պատերազմը, արդարացրել է իրեն և պատերազմի ողջ հանցանքը դնել Պոմպեոսի վրա։ Նրա աշխատությունը շարունակողները ևս անաչառ չեն եղել. նրանց խնդիրն է եղել որքան կարելի է վառ գույներով նկարագրել Կեսարի սխրանքները և դրանով իսկ Կեսարի մասին ստեղծել հասարակական լայն կարծիք։ Ահա թե ինչու անհրաժեշտ է հարկ եղած քննադատությամբ վերաբերվել նրա հաղորդած տեղեկություններին։

Հուլիոս Կեսարի հռչակավոր գալլական արշավանքները և դրանց հաջորդած քաղաքացիական կռիվները կայծակի նման մի պահ լուսավորեցին հանրապետության վերջին շրջանի հռոմեական մթագնած երկնակամարը, բայց չավետացին պայծառ լուսաբաց, այլ իրենց հետևից թողեցին ավերածությունների և բնաջնջումների ծանր մղձավանջ։ Սակայն նրա պատմական անմահ՝ երկերը՝ «Նոթերը», որպես անշեջ հուր դարերի խորքից հասել են մեզ, պայծառ լույս սփռելով հանրապետության վերջին դրվագի պատմության վրա։

Նրա կենդանի, անբռնազբոսիկ շարադրանքը, պարզ, ներքաշող ոճը բարձր են գնահատվել իր ժամանակակիցների կողմից։ Հռոմեական հռչակավոր հռետոր Ցիցերոնը, չնայած քաղաքական կյանքում Կեսարի նկատմամբ ունեցած թշնամանքին՝ բարձր գնահատական է տվել «Նոթերին»։ «Նրա

կողմից գրված «Նոթերը» արժանի են բարձրագույն գովասանքի,— գրում է Ցիցերոնը,— այնտեղ կա բացարձակ ճշմարտություն և գեղեցկություն, զերծ փքուն հռետորական ոճից։ Նա ցանկանում էր միայն նախապատրաստել այն ամենը, ինչ պետք է նրանց, ովքեր ցանկանում են գրել պատմություն։ Եվ ապրիկ նրանից հետո արդեն չեն համարձակվի գրիչ վերցնելու ձեռքը»[17]։

Կեսարի մերձավոր զինակից Հիրտիուսը նույնպես մեծ հիացմունքով է խոսում «Նոթերի» մասին։ «Գալլական պատերազմի» ութերորդ գրքի ներածականում նա գրում է. «Նոթերը» այնպիսի միահամուռ խրախուսանքի արժանացան, որ թվում է, ո՛չ այնքան նյութ են տալիս պատմաբաններին, որքան որ նյութ են խլում պատմաբաններից։ Մենք ավելի քան որևէ մեկը, հիացած ենք «Նոթերով». բոլորը գիտեն, թե որքան լավ և հշմարիտ է գրված, իսկ մենք գիտենք, թե Կեսարը ինչքան հեշտությամբ և արագ գրեց այդ գործը»[18]։

Հուլիոս Կեսարը գրել է նաև այլ աշխատություններ, որ մեզ չեն հասել։ Նա հարապատ մնալով իր ժամանակի կրթության պահանջներին, վաղ հասակից հետևել է հռետորական արվեստին, հետագայում դառնալով անվանի հարատասան։ Նրա հռետորական փայլուն ձիրքի մասին գովեստով են խոսում անտիկ հռետորները, ինչպես նաև Վեսպասիանոսի ժամանակ հարատասանության ուսուցիչ Մարկոս Ֆաբիոս Քվինտիլիանոսը. սրա դիպուկ արտահայտությամբ՝ Կեսարը իր հառերն արտասանել է նույնպիսի եռանդով, կրքով, ինչպես որ պատերազմներ է մղել։

ՄԱՐԿՈՍ ՏՈՒԼԻՈՍ ՑԻՑԵՐՈՆ (106—43).— *Մ. թ. ա. I դարի Հռոմի պատմության վրա լույս են սփռում նաև պետական գործիչների նամակները, որոնք թե իրենց բնույթով և թե նշանակությամբ մոտ են մեմուարային գրականությանը։ Այդ տեսակետից որպես պատմական աղբյուր խոշոր նշանակություն ունեն Ցիցերոնի 60-ական և 40-ական թվականների նամակները։ Ցիցերոնը հանդես է եկել նաև հառերով, որոնք*

[17] Цицерон, Брут, 75, 262.

[18] Записки Юлия Цезаря, М., 1962, Галльская война, Гирций, VIII, введение, § 5—6.

Հարուստ տեղեկություններ են հաղորդում 1-ին դարի (մ. թ. ա.) Հռոմի սոցիալ-քաղաքական կյանքի իրադարձությունների մասին։ Թեպետ նա զուտ պատմական աշխատություն չի գրել, բայց նրա ողջ քաղաքական գործունեությունը կապված է եղել իր ապրած փոթորկոտ ժամանակաշրջանի հետ, և նրա ինքնատիպ ստեղծագործությունները՝ ճառերը, փիլիսոփայական աշխատությունները և նամակները արտացոլել են իր ապրած դարաշրջանը՝ 1-ին դարը (մ. թ. ա.), ուստի ունեն կարևոր պատմական նշանակություն։

Ցիցերոնը ծնվել է 106 թ. (մ. թ. ա.) Հռոմի մոտ գտնվող Արպինի հայրական փոքր կալվածքում, հեծյալի ընտանիքում, ի տարբերություն իր ժամանակի երիտասարդների՝ հակում չի ունեցել դեպի ռազմական գործը։ Նա շարունակ ձգտել է ապացուցել, որ ինքը «նոր մարդ» է՝ homo novis, և կապերը խզել է Տուլլիոսների պատրիկական տոհմից։ Նա իր ողջ կյանքում պահպանել է ջերմ համակրանքը դեպի արպինացի Մարիոսը, որը նույնպես «նոր մարդ» էր և որի ռազմական սխրանքները Աֆրիկայում և Գալլիայում ոգեշնչել են Ցիցերոնին դեռևս մանկությունից։ Նա իր եղբոր՝ Քվինտոսի հետ մեծացել է Հռոմում, որտեղ ճարտասանություն է ուսանել հռչակավոր հռետոր Ապոլլոնիոս Մոլոնից։ Միաժամանակ սովորել է քաղաքացիական իրավունքը և ուսումնասիրել փիլիսոփայական զանազան դպրոցների ուսմունքները։ Ցիցերոնը արտասանության արվեստը սովորել է նշանավոր դերասան Ռոսցիոսից։ Օրինական կարգով անցել է մագիստրատուրաները, 75 թ. եղել է քվեստոր, 69 թ.—էդիլ, 66 թ.—պրետոր և 63 թ.—կոնսուլ։

Ցիցերոնը քաղաքական ասպարեզ իջավ 80-ական թվականներին, երբ մոլեգնում էր քաղաքացիական կռիվը մարիոսականների և սուլլայականների միջև Հռոմ քաղաքի ներսում։ Առաջին ելույթը նրա արտասանած փայլուն ճառն էր 80 թվականին, ի պաշտպանություն Սեքստոս Ռոսցիոսի՝ ամենակարող սուլլայականների «անհիմն մեղադրանքից» և ապա՝ ավելի ուշ, նրա հռչակավոր ճառը, ուղղված Սիցիլիա-

յի պրոկոնսուլ Վեռեսի դեմ[19], որը 70 թ. (մ. թ. ա.) թալանել էր Սիցիլիան՝ առաջացնելով բուռն զայրույթ և բազմաթիվ բողոքներ պրովինցիայի բնակչության կողմից։ Այդ ճառերում Ցիցերոնը երևան է բերում իր դեմոկրատական հայացքները։ Սակայն սուլլայական ռեժիմի դեմ ուղղված Ցիցերոնի խիստ դուսպ ելույթն անգամ առաջացրեց օպտիմատների դժգոհությունը, և Ցիցերոնը հարկադրված էր երկու տարով հեռանալ Հռոմից՝ Հունաստանում իր կրթությունն ավարտելու պատրվակով։ Նա եղավ Աթենքում, լսեց փիլիսոփա էկլեկտիկ Անտիոքոս Ասկալոնացու դասախոսությունները, Հռոդոսում այցելեց իր ուսուցչին՝ հռետոր Մոլոնին և Սուլլայի մահից հետո վերադարձավ Հռոմ։

70-ական թվականները նշանավորվեցին նրանով, որ քաղաքացիական կռիվների ալիքը դուրս գալով Իտալիայի սահմաններից, ծավալվում է մինչև Իսպանիա, որտեղ տաղանդավոր զորավար Քվինտոս Սերտորիոսը մարիոսականների փախուստի մատնված զորամասերի և բնիկների գլուխ անցած՝ ահավոր պատերազմական գործողություններ էր սկսել Հռոմի դեմ (80—72 թթ.)։ Բուն Իտալիայում բազմահազար սորուկները հռչակավոր Սպարտակի առաջնորդությամբ դուրս էին եկել Հռոմի դեմ ահեղ գոտեմարտի[20] (74—71 թթ.), իսկ Արևելքում նույն 74 թ. սկսվել էր երրորդ Միհրդատյան պատերազմը, որը տևեց մինչև 63 թ.։

Այս ծանր ժամանակաշրջանում՝ 70-ական թվականներին, Ցիցերոնը վերադարձավ Հունաստանից և ապրեց իր վերելքը հասարակական-քաղաքական ասպարեզում։ 66 թ. որպես պրետոր, նա Հառով հանդես եկավ՝ պաշտպանելով Պոմպեոսի թեկնածությունը Արևելքում ամենալայն լիազորություններով վարելու համար Միհրդատյան պատերազմը։ Այնուհետև, 63 թ. Ցիցերոնը դրեց իր թեկնածությունը կոնսուլության համար և թեպետ homo novus էր, հեծյալների դասից, «նոր մարդ», բայց ընտրվեց կոնսուլ՝ շնորհիվ սենատական կու-

[19] Плутарх, Сравнительные жизнеописания, том 3, М., 1964, Цицерон, I—VIII.

[20] Аппиан, Гражданские войны, Л., 1935, I, § 116—120, стр. 78—81.

սակցության օժանդակության, որը նրան աջակցեց, ամեն կերպ խանգարելու համար կոնսուլության մյուս թեկնածուի՝ Կատիլինայի ընտրությունը։ Դա բեկման կետ եղավ նրա կյանքում. նա անցավ օպտիմատների կուսակցության կողմը։ Սակայն ի բնե զուրկ լինելով հաստատակամությունից, նա մշտապես տատանվում էր այս կամ այն կուսակցության միջև և երբեք չկարողացավ զեկավար դիրք ունենալ հասարակական կյանքում։ Նա աշխատում էր սիրաշահել պլեբսին, որին շատ էր պարտական քաղաքական կյանքում իր ձեռք բերած հաջողությունների համար։

Ցիցերոնի երկակի քաղաքականության մասին են վկայում Պլուտարքոսի հետևյալ տողերը. «Այնուամենայնիվ, իր կոնսուլական պաշտոնի համար նա պարտական էր արիստոկրատիայի կողմնակիցներին ոչ պակաս, քան ժողովրդին։ Երկու կողմերն էլ նրան օժանդակեցին՝ ի սեր պետության բարօրության»[21]։ Սակայն հետագայում, սկսած 63 թվականից (մ. թ. ա.) ժողովրդական մասսաների հուզումների աղդեցության տակ Ցիցերոնը զգալիորեն թեքվեց դեպի աջ, հանդես գալով «դասերի համերաշխության» լոզունգով։ Նա կարողացավ իր շուրջը համախմբել Իտալիայի բոլոր ստրկատիրական խավերին։ Իր ողջ քաղաքական գործունեության ընթացքում նա բացասական վերաբերմունք է ունեցել ժողովրդական տրիբունների նկատմամբ։

Իր այդ վերաբերմունքը ավելի ցայտուն կերպով Ցիցերոնը արտահայտել է Ավլոս Կլուենցիոսի օգտին արտասանած ճառում։

Իր ճառում Ցիցերոնը նշում է այն վնասակար ազդեցությունը, որ ժողովրդական տրիբուն Կվինկցիոսը գործում էր մասսաների վրա, ժողովելով նրանց հավաքի և գրգռելով սենատորների դեմ։ «Այդ ժամանակ Կվինկցիոսը իրեն այնպես էր պահում, որ այդ բոլորի մասին հնարավոր չէր պատմել ոչ ժողովրդական հավաքում և ոչ էլ դատարանում։ Նա ինքն էլ ոչ ոքի թույլ չէր տալիս խոսելու, և գրգռելով ամբոխին՝ ոչ ոքի չէր թողնում մի բառ անգամ ասելու... Դուք գիտեք նրա ամբարտավանությունը, գիտեք նրա անհանդուրժողականությունը, որպես արիբունի։ Ինչպիսի՞ ատելությամբ էր նա շնչում, անմա՞հ ատամածներ։ Որպիսի՞ գոռոզամտություն, ինչպիսի՞ մեծամտություն, որպիսի՞ «անսովոր և անտանելի ամբարտավանություն»[22]։

Իրեն հատուկ հռետորական հնարքներով Ցիցերոնն արտահայտում է ստրկատիրական վերնախավի բուռն ատելությունը և անհանդուրժողականությունը դեպի ժողովուրդը և դեպի նրա շահերի արտահայտիչը՝ ժողովրդական տրիբունը։

Ցիցերոնի իրական ծառայությունը նրա գրական գործունեությունն է։ Նա ստացել է խոր և բազմակողմանի կրթություն և քաջ գիտակ էր հունական գրականությանը։ Նրա ճառերը, նամակները և փիլիսոփայական աշխատությունները խոշոր ազդեցություն են գործել իր ժամանակակիցների վրա։ Հռոմեական գրական արձակը պարտական է նրան իր զարգացմամբ և ինքնուրույնությամբ։ Ցիցերոնը գրել է նաև իր կոնսուլության պատմությունը և մի քանի փորձեր է կատարել պատմագրության բնագավառում։ Նրա նամակները և ճառերը բացառիկ նշանակություն ունեն որպես պատմական աղբյուր։ Նրա հարուստ նամականին բազմակողմանի տեղեկություններ է տալիս հռոմեական հանրապետության քաղաքական, սոցիալական և կենցաղային պատմության վերաբերյալ։ Ցիցերոնի նամակագրությունն ընդգրկում է մոտ 25 տարվա ժամանակաշրջան 68-ից (ըստ Նիզեի՝ 63 թվականից) մինչև 43 թվականը (մ. թ. ա.)։ Պահպանվել են այն անձանց նամակները, որոնց հետ նամակագրություն ուներ Ցիցերոնը։ Մեզ հասել են նամակների չորս ժողովածուներ.—ա) նամակներ՝ ուղղված իր մերձավոր ընկերոջը՝ Ատտիկին, բ) նամակներ՝ մերձավորներին, գ) իր եղբորը՝ Քվինտոսին ուղղված նամակները և դ) նամակագրությունը Բրուտոսի հետ[23]։

Իր ճառերում, նամակներում Ցիցերոնը մի քանի տեղեկություններ է հաղորդում Հայաստանի մասին։ Այսպես, իր մեր-

[21] **Плутарх,** Сравнительные жизнеописания, т. 3, М., 1964, Цицерон, X.

[22] **Марк Туллий Цицерон,** Речи в защиту Павла Клуэнция, XXXIX, стр. 108, I. М., 1962.

[23] *Տե՛ս* Письма Марка Туллия Цицерона, I. годы 68—51, М., Л., 1949.

ձավոր ընկերոջ՝ Տիտոս Պոմպոնիոս Ատտիկոսին ուղարկած նամակներից մեկում Ցիցերոնը ի միջի այլոց կցկտուր տեղեկություններ է հաղորդում Հայաստանի Տիգրան Մեծ թագավորի մասին։ Նա գրում է իր ընկերոջը։ «Եվ այսպես, դու ասում ես, որ Կլոդիոսն ուղարկվել է Տիգրանի մոտ»[24]։ Խոսքը վերաբերում է եռապետերի կողմից Պուբլիոս Կլոդիոսին հայոց արքայի մոտ ուղարկելուն՝ ողջունելու համար Տիգրանին Գորդիենայի և Ծոփքի վրա թագավորելու կապակցությամբ։

Արևելքում Գնեոս Պոմպեոսին անսահմանափակ իշխանություն տալու առթիվ գրած ճառում, Ցիցերոնն ընդգծում է, որ երկու հզոր արքաներ՝ Միհրդատը և Տիգրանը խիստ ծանր և վտանգավոր պատերազմի դուրս եկան մեր դաշնակիցների և հարկատու ժողովուրդների դեմ... «մտածեցին, որ նրանց համար պատեհ առիթ է ներկայացել Ասիան գրավելու»[25]։ Հրահրելով պատերազմը Միհրդատի և Տիգրանի դեմ, Ցիցերոնը իրեն հատուկ խոսքի մեծ ուժով և համոզելու ձիրքով ասում է. «Ամբողջ Ասիային սպառնում է երկու արքաների ներխուժումը»։ Արդարացնելով հռոմեական ստրկատիրական վերնախավի զավթողական քաղաքականությունն Արևելքում, նա շարունակում է. «Ասիան այնքան հարուստ է և այնքան բերքառատ, որ իր արգավանդ հողերով, իր պտուղների բազմազանությամբ, արոտավայրերի ընդարձակությամբ և արտահանվող առարկաների առատությամբ անչափ գերազանցում է բոլոր մնացած երկրներին»[26]։

Այնուհետև, խոսելով հռոմեացիների կողմից Պոնտոսի և Կապադովկիայի քաղաքների գրավման մասին, պատմում է Միհրդատի փախուստը Հայաստան՝ Տիգրանի մոտ և այն մասին, որ Տիգրանը ոչ միայն ապաստան տվեց իր փեսային՝ Միհրդատին, ո՛չ միայն հրաժարվեց նրան հռոմեացիների ձեռքը հանձնելուց, այլև «բարձրացրեց նրա հուսաբեկ ոգին, վերականգնեց նրա եռանդն ու արիությունը և վերակենդանացրեց նրա վաղեմի հույսերը»[27]։

[24] **Марк Туллий Цицерон**, Письма к Аттику, XXX, 2, М.-Л., 1949.
[25] **Марк Туллий Цицерон**, Речи в двух томах, I, 12. М., 1962.
[26] Նույն տեղում, VI, § 14։
[27] Նույն տեղում, IX, § 23։

Հռոմեական վերնախավի գաղափարախոսը ստիպված է խոստովանել, որ Տիգրանը ոչ միայն ուժեղ տերության միապետ էր, այլև մեծ էր իր բարոյական ներգործությամբ Պոնտոսի հզոր արքա Միհրդատի նկատմամբ։ Նա ցույց է տալիս, թե ինչպիսի մեծ սպառնալիք էին Հռոմի համար Միհրդատը և Տիգրանը և ինչպես Գնեոս Պոմպեոսն իր արշավանքով «կասեցրեց Տիգրանի առաջխաղացումը, որը իր հրոսակներով սպառնում էր Ասիային»[28]։

Ցիցերոնի նամակները մեզ հնարավորություն են տալիս որոշ դեպքեր ճիշտ թվագրելու։ Պետք է նկատի ունենալ, որ Ցիցերոնի նամակները, ինչպես և ամեն տեսակի նամակագրություն, պարունակում են շատ սուբյեկտիվ տարրեր, անձնական տպավորություններ, հուզող հարցեր, որոնց վերաբերյալ նա ունեցել է իր անհատական կարծիքը, պայմանավորված իր առօրյա պատկանելիությամբ։ Ցիցերոնը քաղաքական իրադարձությունների մասին խոսելիս խիստ զերագնահատել է իր դերը, հաճախ փոխել է իր քաղաքական կողմնորոշումը։ Ուստի, անհրաժեշտ է մեծ վերապահությամբ օգտվել նրա նամակներից։

Հռոմեական հանրապետության պատմության ուսումնասիրության համար հարուստ նյութ են մատակարարում քաղաքական գործիչների ժողովրդական ժողովում, սենատում և կամ պատարքնության ժամանակ արտասանած ճառերը։ Թեպետ այդ ճառերը հրապարակվում էին, որպեսզի դրանց ազդեցությունը տեսական դարձվի, բայց մեծ մասամբ չեն պահպանվել։ Մակայն Ցիցերոնի ճառերը պահպանվել են և կարևոր աղբյուր են ոչ միայն Ցիցերոնի դարաշրջանի պատմության ուսումնասիրության համար, այլև հռոմեական պետական, քրեական և բաղաքացիական իրավունքի պատմության։

Ցիցերոնի ճառերի պատմական մեկնություններ է տվել Տիբերիոս կայսեր ժամանակ (14 թ.—37 թ. մ. թ.) խոշոր մատենագիր Քվինտոս Ասկոնիոս Պեդիանը։ Յավոք այդ մեկնություններից առանձին բեկորներ են միայն պահպանվել, այն էլ հինգ ճառերի վերաբերյալ։

[28] Նույն տեղում, XV, § 45։

Ցիցերոնը գրել է նաև փիլիսոփայական աշխատություններ, որ կարևոր աղբյուր են մշակույթի պատմության ուսումնասիրության համար։ Այս աշխատություններում խիստ կերպով զգացվում է հունական փիլիսոփայության ազդեցությունը։ Ընդունված է ասել, որ փիլիսոփայական ոգին խորթ է եղել հռոմեացիներին. նրանք պրակտիկ մոտեցում ունեին բնական և սոցիալ-քաղաքական հարցերին։ Թերևս այդ պատճառով Ցիցերոնն իր առջև համեստ խնդիր է դրել՝ ծանոթացնել հռոմեացիներին հունական փիլիսոփայական մտքի նվաճումներին։

Ցիցերոնը իր «Իմաստասիրություններ»-ում պարզ և հրատակ լեզվով շոշափել է կրոնին, իրավունքին, բարոյախոսությանը և քաղաքականությանը վերաբերող բազմազան հարցեր։ Այդ ճանապարհով նա պրոպագանդում էր հռոմեական ստրկատիրական հասարակության տիրող վերնախավի գաղափարախոսությունը։ Չլինելով մասնագիտությամբ փիլիսոփա, Ցիցերոնը թույլ է տվել սխալներ փիլիսոփայական սիստեմների շարադրման մեջ։

Այնուամենայնիվ, Ցիցերոնը խոշոր ծառայություն է մատուցել անտիկ մշակույթի պատմությանը, որովհետև նա առաջինն էր, որ ծանոթացրեց հռոմեական տիրող լայն հասարակայնությանը հունական փիլիսոփայական մտքի նվաճումներին։ Եվ նոր դարում արևմտաեվրոպական մտածողները նախապես Ցիցերոնի միջոցով էին ծանոթանում հունական փիլիսոփայությանը։

ԳԱՅՈՍ ՍԱԼԼՅՈՒՍՏԻՈՍ ԿՐԻՍՊՈՍ *(86—35 թթ. մ. թ. ա.).* — Հանրապետության դարաշրջանի վերջում հռոմեական պատմագրության ամենաուշագրավ, թերևս ամենաարժեքավոր գրվագը պատմական մենագրություններն են։ Այդ ուղղության նշանավոր պատմաբանը Գայոս Սալլյուստիոս Կրիսպոսն է *(86—35 թթ. մ. թ. ա.)*։ Նա ապրել և գործել է հռոմեական հանրապետության անկման փոթորկոտ ժամանակաշրջանում, ականատես է եղել, թե ինչպես քաղաքացիական կռիվների բոցերում ծնվում էր պրինցիպատը՝ հռոմեական ստրկատերերի ռազմական դիկտատուրան։ Սալլյուստիոսը նեռվեց այդ պայքարի հորձանուտը, դառնալով Հուլիոս Կեսարի հավատարիմ գինակիցներից մեկը։

Սալլյուստիոսը ծնվել է սաբինական Ամիտեռն քաղաքում։ Անտիկ մտածողներից շատերի նման՝ Սալլյուստիոսն էլ եռանդուն մասնակցություն է ունեցել քաղաքական կյանքին։ 52 թվականին ընտրվել է ժողովրդական տրիբուն և մի առանձին կրքոտությամբ հանդես եկել սենատորական օլիգարխիայի դեմ։ Սալլյուստիոսն արտահայտում էր հռոմեական հասարակության սոցիալական այն խավի շահերը, որը միջանկյալ օղակն էր կազմում պլուտոկրատական վերնախավի և ապազգակարգայնացված ստորին շերտերի միջև։ Գործելով կենսական կուսակցության դիրքերից, նա բացահայտ պայքարի դուրս եկավ արիստոկրատիայի ականավոր պարագլուխների՝ Պոմպեոսի, Միլոնի, Ցիցերոնի դեմ և 50 թ. *(մ. թ. ա.)* երևի ի հատուցումն իր հակասենատական գործունեության նա հանվեց սենատորների ցուցակից, բայց 49 թ. *(մ. թ. ա.)* Կեսարը նրան նորից մացրեց սենատ։ Այնուհետև մինչև 46 թ. *(մ. թ. ա.)* Սալլյուստիոսը շարունակեց իր պայքարը սենատորական արիստոկրատիայի դեմ նաև քաղաքացիական կռիվների տարիներին, հետևողականորեն կանգնելով կեսարական կուսակցության դիրքերում։ Նա նույնիսկ մեկնում է Կեսարի ճամբարը և մասնակցում նրա արշավանքներին։ 46 թ. Թափիսոսում *(Աֆրիկա)* արյունահեղ ճակատամարտում Կեսարի հաղթանակից հետո Սալլյուստիոսը Կեսարի կողմից նշանակվեց Նումիդիայի պրոկոնսուլ։ Այստեղ պրովինցիայի բնակչությանը կեղեքելով, Սալլյուստիոսը վիթխարի հարստություն դիզեց, որը հնարավորություն ավեց նրան Հռոմում ձեռք բերել հոյակապ այգիներ *(horti Sallustiani)* և կառուցել շքեղազարդ առանձնատուն *(վիլլա)*։

Սալլյուստիոսի տունը կառուցված էր Կվիրինալի այն մասում, որը կոչվում էր «Բարձր Կածան» *(Alta semita)* և համարվում էր Հռոմի ամենաառողջարար մասը։ Այդ տունը և պուրակը մեծ համբավ էին վայելում և հետագայում դարձել էին Օգոստոսի և մյուս կայսրների բնակավայրը։ Ամառային ամիսները Սալլյուստիոսն անց էր կացնում Տիբուրում *(ներկայիս Տիվոլի)*, որտեղ նա գնել էր Կեսարի նախկին վիլլան։

Կեսարի մահից հետո Սալլյուստիոսը հրաժարվեց քաղաքական գործունեությունից, քաշվեց իր առանձնատունը և

նվիրվեց պատմագրական աշխատանքներին։ Սակայն նույնիսկ հեռանալով քաղաքական ասպարեզից, նա շարունակում էր իր պայքարը պատմական երկերով և հրապարակախոսությամբ, այդ կապակցությամբ նա խիստ բարձր էր գնահատում պատմաբանի առջև դրված քաղաքական-հասարակական խնդիրը։ Ահա թե ինչու Սալլյուստիոսի կերպարը որպես հանրապետության վերջին դարաշրջանի քաղաքական գործչի և որպես շնորհալի պատմաբանի մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Իր ողջ գիտակցական կյանքով և գրական գործունեությամբ նա արտացոլել է իր դարաշրջանի կուսակցությունների քաղաքական և գաղափարական պայքարը։ Սալլյուստիոսի վաղ երկերը Կեսարին գրած նամակներն են, որոնց մեջ հեղինակն արծարծում է Հռոմի սոցիալ-քաղաքական կարգը պահպանողական դեմոկրատիզմի ոգով բարեփոխելու գաղափարը։

Նա պատմական էքսկուրս է կատարում դեպի վաղ հանրապետության դարաշրջանը, առանձին ջերմությամբ կանգ է առնում պլեբեյների և պատրիկների պայքարի վրա, որի հետևանքով մեծանում են ժողովրդի իրավունքները։ Այդ ժամանակաշրջանը հեղինակն անվանում է «Ոսկե դար», երբ հաստատվում է մի որոշ հավասարակշռություն ժողովրդի և սենատի միջև, երբ ժողովուրդը ևնթարկվում է սենատին, ինչպես մարմինը հոգուն և կատարում է նրա որոշումները։ Հանրապետությունը ղեկավարում է սենատը։ Այդ դարաշրջանում ժողովրդի պատուությունն ու իրավունքները չեն ոտնահարված, իսկ անվանի մարդիկ ո՛չ թե ձգտում են ավելացնել իրենց հարստությունը և անձնատուր լինել հաճույքների ու գիտե կյանքի, այլ ձգտում են փայլել իրենց առաքինի գործերով ու նվիրվածությամբ։ Այս «Ոսկե դարը» տևել է մինչև 3-րդ դարի վերջը և 2-րդ դարի իրադարձությունները, որոնք կյանքի կոչեցին Գրակքոսների ռեֆորմները[29]։

Նամակներում արտացոլած քաղաքական այս իդեալը տեղ է գտել նաև Սալլյուստիոսի հետագա աշխատություններում՝ «Կատիլինայի դավադրության» մեջ և «Յուգուրթական պա-

[29] Տե՛ս Вестник древней истории, 1950, § 1—2, Приложение, письма к Цезарю, § 11 5.

տերազմում». դա Սալլյուստիոսի credo-ն է՝ պահպանողական դեմոկրատիզմի գաղափարը։ Նրա գովերգած ժամանակաշրջանում՝ 3-րդ դարի վերջը և 2-րդ դարի սկիզբը, Հռոմը դեռևս դուրս չէր եկել Իտալիայի սահմաններից և ձեռք չէր բերել համաշխարհային տիրապետություն, դեռևս չէր վերածվել համաշխարհային տերության։

Սակայն իրեն ժամանակակից հռոմեական հասարակությունը Սալլյուստիոսը խիստ մռայլ գույներով է նկարագրում։ Կեսարին ուղղած իր 5-րդ և 10-րդ նամակներում նա խոսում է սենատի և ժողովրդի նյութական և բարոյական անկման մասին։ Ժողովուրդը ներկայացված է որպես ծուլության և կարիքի մեջ տառապող ամբոխ, որը վաճառքի է հանել իր ազատությունն ու հայրենիքը, իսպառ կորցրել է կառավարելու ընդունակությունը[30]։

Արիստոկրատիան ըստ Սալլյուստիոսի՝ ներկայացված է մռայլ գույներով. նա ընչաքաղց է, այլասերված. արհամարհելով աշխատանքը, ռազմական գործը, զբաղվում է անվայել ինտրիգներով։ Սենատը նրա ձեռքում դարձել է խաղալիք, իսկ նա ոչ մի սահման չի ճանաչում իր սանձարձակ կամայականություններում։

Ինչպես հետագա աշխատությունների, այնպես էլ նամակների լեյտմոտիվը արիստոկրատիայի անբարոյականությունն է և կառավարելու անճարակությունը։ Ելնելով կեսարական կուսակցության դիրքերից՝ Սալլյուստիոսը իր մեղադրական խոսքն ավարտում է ասելով, որ նոբիլիտետը իր կործանարար վարքագծով իշխանության գլուխ կանգնեցրեց Պոմպեոսին և նրա արբանյակներին, որոնք զավթելով վարչական, դատական, հարկային գերագույն իշխանությունը, այն ծառայեցնում են իրենց սոր կամայականություններին։

Ըստ Սալլյուստիոսի, Կեսարի ծառայությունը կայանում է նրանում, որ նա կազմալուծեց և մերկացրեց Պոմպեոսի կուսակցությունը։ Սակայն Սալլյուստիոսը հասկանում է, որ պայքարը դեռևս շարունակվելու է, որ նոբիլիտետը դեռ չի ջախջախվել, և նա զգուշացնում է Կեսարին այդ մասին։

[30] Տե՛ս ВДИ, 1950, № 1, «Письма к Цезарю о государственных делах», II, § 5.

Իր «Պատմություններում», ինչպես նաև «Կատիլինայի դավադրությունը» և «Յուգուրթական պատերազմը» երկերում Սալլյուստիոսը նույն բնութագրությունն է տալիս սենատին և նոբիլիտետին։

Հինգ գրքից բաղկացած «Պատմություններ»-ը Սալլյուստիոսի ամենածավալուն գործն է, որը լրիվ չի պահպանվել։ «Պատմություններ»-ը ընդգրկում է 78 թվականից մինչև 67 թվականն ընկած ժամանակաշրջանը։ Տարբեր հեղինակների երկերում զետեղված «Պատմությունների» ֆրագմենտները հետագայում հավաքվել են։ Վատիկանի ձեռագրերից մեկում գտնվել է այդ աշխատության ավելի ամբողջական և նշանակալի հատվածներ։ Այդ ամբողջ նյութերը կարգի են բերվել, հատվածները բաշխվել են ըստ գրքերի և վերականգնվել է շարադրության ընդհանուր բովանդակությունը։ Այստեղ շարադրված են այն դեպքերը, որ տեղի են ունեցել Սուլլայից մինչև Պոմպեոսի կողմից ծովահեններին ջախջախելը և ապա՝ Միհրդատի դեմ արշավելը, այսինքն մինչև Կատիլինայի դավադրությունը։ Ուստի, «Պատմություններ» աշխատությունը յուրատեսակ կապող օղակ է Սալլյուստիոսի երկու մենագրությունների համար և հանդիսանում է հանրապետության վերջին դարի իրադարձությունների ուրվագիծը։ Այդ աշխատությունը աղբյուր է ծառայել Պլուտարքոսի, Դիոն Կասիոսի, Ապպիանոսի և ուրիշ պատմագիրների համար։ «Պատմություններում», ինչպես և «Յուգուրթական պատերազմում», Սալլյուստիոսը իր հերոսների արտասանած ճառերի ձևով արտահայտում է իր սեփական հայացքները և համոզմունքները։ Դրանք յուրատեսակ միջոց են մերկացնելու համար արիստոկրատիայի արատները։ Այդպիսի մերկացնող բնույթի ճառ է «Պատմություններում» բերված Ֆիլիպի ճառը՝ որն ուղղված է Լեպիդոսի դեմ։ Այստեղ բացահայտ մեղադրանք է ուղղված սենատի հասցեին, որ նա հանրապետությանը սպառնացող չարիքները կանխելու փոխարեն, ինքն է հրահրում երկպառակությունները պետության ներսում։ Պետությունը զենք է դարձել «չարանենգ» և «վատաբարո» մարդկանց ձեռքում։ Դրա հետևանքով սենատորները իշխանությունը տալիս են հայրենիքի թշնամիների ձեռքը։ Այսպես, օրինակ, Լեպիդոսին շնորհվել է պրոկոնսուլի իշխանություն, և նա պետության դեմ կատարած բոլոր հանցագործությունների համար... «պարգևատրված է պրովինցիայով»[31]։

Սալլյուստիոսը մեղադրում է սենատորներին, որոնք հայրենիքի թշնամիների դեմ անհաշտ պայքարի փոխարեն, պրոցված են դատարկ վիճաբանություններով։ «Մինչև ե՞րբ պատ, հա՛յր սենատորներ, ձեր դանդաղաշարժությամբ հանրապետությանը կվնասնեք անօգնական, պայքարելով միայն խոսքերով»[32] բացականչում է Ֆիլիպը իր ճառում, արտահայտելով Սալլյուստիոսի պայքարը սենատի վախկոտության և եսասիրության վերաբերյալ։

«Պատմություններում» երևան է գալիս Սալլյուստիոսի վերաբերմունքը ժողովրդի դերի նկատմամբ։ Ինչպես «Յուգուրթական պատերազմում», այստեղ ևս նա իր կարծիքը ժողովրդի մասին արտահայտում է ճառի միջոցով։ «Պատմություններում» ժողովրդական տրիբուն Լիցինիոս Մակրոսի և «Յուգուրթական պատերազմում» Մեմմիայի ճառերում արտահայտվում է Սալլյուստիոսի տեսակետը ժողովրդի դերի մասին։ Ժողովրդական տրիբուն Լիցինիոս Մակրոսը ժողովրդին կոչ է անում պայքարելու հանուն իր իրավունքների վերականգնմանը պետության մեջ։ Լիցինիոսի ճառի միջոցով Սալլյուստիոսը «Պատմություններում» գալիս է այն եզրակացության, որ պետությունը կառավարելու ընդունակ է միայն ժողովուրդը, և որ նա պետք է պայքարի՝ վերականգնելու համար իր իրավունքներն ու ազատությունը։ Ժողովուրդը չպետք է ենթարկվի նոբիլիտետի կողմից տրված դեմագոգիկ ոգորմություններին և պետք է զգուշանա նրանց խորամանկություններից[33]։

Սակայն պետք է վերապահությամբ ընդունել Սալլյուստիոսի դեմոկրատիզմը, որը նրա աշխարհայացքում սահմա-

[31] ВДИ, 1950, № 1, Фрагменты «Историй», Гая Саллюстия Криспа, книга I, § 77.

[32] Фрагменты «Историй» Гая Саллюстия Криспа, книга I, 77, ВДИ, 1950, № 1.

[33] Տե՛ս Фрагменты «Историй» Гая Саллюстия Криспа, книга III, § 48, 19—20; ВДИ, 1950, № 1.

նափակ և պայմանական հասկացություն է։ «Ժողովուրդը» սերկատիրական դասակարգի գաղափարախոսի համար ազատ բնակչության համեմատաբար նեղ և արտոնյալ խավն է, սոցիալական այն միջնախավը պլուտոկրատիայի և պրոլետարացված շերտերի միջև, որից սերվել է հենց ինքը՝ Սալլյուստիոսը։ Դա հռոմեական ազատ բնակչության այն բարեկեցիկ շերտն էր, որը կազմում էր միջին օղակը նոբիլիտետի ու հարուստների և vulgus-ի (ստորին խավերի) միջև։

Ինչո՞վ բացատրել Սալլյուստիոսի այդ վերաբերմունքը գեպի ժողովրդի սուվերեն դերն ու նշանակությունը։ Այդ փոփոխությունը բացատրվում է նրանով, որ հիմա, ըստ Սալլյուստիոսի, «ժողովուրդը» կարող է դառնալ այն միակ ռեալ ուժը, որը ի վիճակի է հակադրվելու նոբիլիտետին և զբաղվելու հանրապետության գործերով։

«Պատմություններ» աշխատությունից մեզ հասած քաղվածքներից առանձին հետաքրքրություն է ներկայացնում 3-րդ գրքի 7-րդ գլուխը, որտեղ Սալլյուստիոսը խոսում է Սպարտակի ապստամբության մասին։ «Գլադիատորների առաջնորդ Սպարտակը մեկն էր 74-ից, որոնք փախչելով գլադիատորական դպրոցից, սկսեցին ծանր պատերազմ հռոմեական ժողովրդի դեմ»...։ «Ինքն օժտված էր մարմնական և հոգեկան մեծ ուժով»։ «...Եթե լինի ուժեղ դիմադրություն, ապա ավելի լավ է զոհվել սրից, քան քաղցից»[34]։ Այստեղ շարադրանքը վնասված է, երբեմն անկապ։ Այնուամենայնիվ, Սալլյուստիոսը նշում է Սպարտակի հուժկու ապստամբության հետևանքով հռոմեական բանակում տիրող տագնապալի վիճակը, երբ յուրաքանչյուր զինվոր կռվից առաջ աշխատում էր մտածել իր ամենաթանկագին էակի մասին։ Հեղինակը ցույց է տալիս նաև ապստամբների բանակում Սպարտակի և Կրյուքսոսի միջև տեղ գտած տարաձայնությունները։ Ընդհանրապես շարադրանքը խիստ վնասված է, բայց զգացվում է, որ հեղինակը բարեխղճությամբ նկարագրում է ապստամբության ընթացքը և մարտական գործողությունները։

Հայագիտության համար ուրույն հետաքրքրություն է

[34] **Саллюстий Гай Крисп**, Фрагменты «Историй», ВДИ, 1950, *գիրք 3, գլուխ 7-րդ։*

ներկայացնում «Պատմությունների» 4-րդ գրքի չորրորդ գլուխը, որտեղ շարադրված է Լուկուլլոսի արշավանքը Հայաստան և Տիգրանակերտի գրավումը։ Մայրաքաղաքի պաշարման և գրավման մասին խոսում է կցկտուր. շատ տեղերում այդ լակոնիկ խոսքն էլ աղավաղված է։ Բայց նույնիսկ այդ խիստ կցկտուր շարադրանքն էլ ակնհայտ տենդեցիոզ է։ 4-րդ գլխի 61-րդ հատվածից մինչև 67-ը հեղինակը նկարագրում է Տիգրան Մեծի ծանր սպառազինված զորքը. «Հեծյալները երկաթյա զրահով էին կռվի դուրս եկել,—ասում է նա,—նույնիսկ ձիերին հագցրել էին նույնպիսի զրահ, կտավի վրա հագցրել էին երկաթյա թիթեղներ, ինչպես ձկան թեփուկ»։ Միտումնավոր կերպով ընդգծելով այդպիսի հիանալի սպառազինված բանակի պարտությունը Տիգրանակերտի մատույցներում, Սալլյուստիոսը նպատակ ունի է՛լ ավելի մեծացնելու Լուկուլլոսի ռազմական փառքը։ Նույն գրքում նա դիտավորյալ նսեմացնում է հայ ռազմիկներին. «Այդ մեծ պարտության մեջ ռազմիկների մեծ մասը ոչնչացվեց իր զենքից կամ շրջապատող յուրայինների զենքից, մնացածները ջարդ էին կրում աննասունի նման»[35]։

Նույն 4-րդ գրքի 68-րդ հատվածում, կեղծելով պատմական իրողությունը, Սալլյուստիոսը Տիգրան Մեծին ներկայացնում է որպես «հոգով անհանգիստ և անվստահ մարդու», որպես դանդաղկոտ և ոչ-ճկուն թագավորի (հատված 15-րդ)[36], որը հանդիսացել է Միհրդատ Եվպատորի կամակատարը։ Մինչդեռ անտիկ այլ աղբյուրներ Տիգրան Մեծի մասին տալիս են միանգամայն հակառակ բնութագրություն։ Այսպես, Պլուտարքոսը իր «Զուգակշիռքի» երկրորդ հատորի «Լուկուլլոս» հատվածում բարձր գնահատական է տալիս Տիգրան Մեծին, հայկական մշակույթին և նրա արքունիքին, որը Տիգրան Մեծի օրոք ներկայացնում էր հելլենիստական կուլտուրայի փայլուն կենտրոններից մեկը[37]։

[35] **Саллюстий Гай Крисп**, Фрагменты «Историй» ВДИ, 1950, № 1, книга IV, глава IV, § 67.

[36] *Նույն տեղում, գիրք IV, գլուխ IV, 68, 15։*

[37] *Տե՛ս* **Плутарх**, Сравнительные жизнеописания, т. II, Лукулл, § XXIX, М., 1963.

Ցիցերոնը, չնայած արտաքին քաղաքականության հարցերում իր մեծապետական հռոմեական մոտեցմանը հակառակ, որ արդարացնում էր հռոմեական սարկատիրական վերնախավի նվաճողական արևելյան քաղաքականությունը, այնուամենայնիվ, Գնեոս Պոմպեոսին Արևելք ուղարկելու օգտին իր արտասանած ճառում ընդգծում է «երկու հզոր արքաների՝ Միհրդատի և Տիգրանի խիստ ծանր և վտանգավոր պատերազմը» Հռոմի դեմ, նկատում, որ «նրանց համար պատեհ ատիթ էր սաեղծվել գրավելու Ասիան»[38]։ Այնուհետև պատմելով Միհրդատի փախուստի մասին Հայաստան՝ Տիգրանի մոտ և այն մասին, որ Տիգրանը ոչ միայն ապաստան տվեց իր փեսային՝ Միհրդատին, ոչ միայն հրաժարվեց նրան հռոմեացիներին հանձնելու առանց հաշվի առնելու վերջիններիս սպառնալի պահանջները, այլ նույնիսկ բարձրացրեց նրա հուսաբեկ ոգին, վերականգնեց նրա եռանդն ու արիությունը և վերակենդանացրեց նրա վաղեմի հույսերը»[39]։

Հռոմեական վերնախավի գաղափարախոսը ստիպված է խոստովանել, որ Տիգրանը ոչ միայն հզոր էր, որպես հելլենիստական տիպի ուժեղ տերության միապետ, այլև ազդեցիկ էր իր բարոյական ներգործությամբ Միհրդատ Եվպատորի նման շնորհալի զորավարի վրա։

Սալլյուստիոսի, Պլուտարքոսի ու Ցիցերոնի վկայությունների ամենապարզ համեմատությունն անգամ ցույց է տալիս, թե առաջինը որքան տենդենցիոզ է բնութագրել Տիգրան Մեծին։

Սալլյուստիոսի գրական երկերից լրիվ պահպանվել են «Կատիլինայի դավադրությունը» և «Յուգուրթական պատերազմը» երկերը։

«Կատիլինայի դավադրությունը» մենագրության առաջաբանում Սալլյուստիոսը բացատրում է աշխատության նպատակը։ Թեպետ նա փորձում է համոզել, որ գրել է անաչառ և չի ազավաղել պատմական իրողությունը, սակայն ինչ խոսք, նախկին մոլի կեսարականը չէր կարող անաչառ լինել. նա շարունակում է միևնույն դիրքերից դիտել պատմական իրա-

[38] **Марк Туллий Цицерон,** Речи в двух томах I, М., 1962, V, 12.
[39] Նույն տեղում, IX, § 23։

դարձությունները և հռոմեական պետության բոլոր դժբախտությունները բխեցնել սենատորական արիստոկրատիայի այլասերվածությունից, վերջինիս կառավարելու անճարակությունից։ Այս կապակցությամբ նա խոստովանում է, որ շատ երիտասարդ հասակում գալով Հռոմ, ինքը նույնպես նետվել է վիթխարի քաղաքի այլանդակ բարքերի հորձանուտը։ Սալլյուստիոսը գրում է. «Վաղ երիտասարդական տարիքում ես, ինչպես և իմ տարիքի շատ պատանիներ, ձգտում էինք պետական գործունեության։ Բայց շատ բան այդ ասպարեզում անբարեհաջող եղավ ինձ համար։ Եվ իրոք, փոխանակ խղճմտանքի, փոխանակ անշահասիրության և արիության ամենուրեք իշխում էին լպիրշությունը, կաշառքը և ընչաքաղցությունը։ Թեպետ իմ հոգին, որը դեռևս չէր այլասերվել արատավոր սովորություններից, զզվանքով էր վերաբերվում նրանց, բայց մատաղ հասակս թույլ գտնվեց, և ես չկարողացա դիմադրել այդքան արատների ու այլասերվեցի՝ մղված փառասիրությունից, և թեպետ ես չէի համակրում մյուսների արատավոր բարքերը, այնուամենայնիվ, փառասիրությունը, տանջում էր ինձ, ինչպես և մյուսներին, միևնույն նախանձով դեպի օտար փառքը»[40]։

Սալլյուստիոսի այս խոստովանությունը խիստ անկեղծ է հնչում, այն հոգեբանորեն ճիշտ է և համոզիչ։ Այդ ցույց է տալիս, թե ինչպես սարկատիրական վերնախավի այլասերված միջավայրում կուլ էին գնում նույն սոցիալական խավի երիտասարդները, փշրվում էին նրանց վառ երազանքները՝ պարնվելով գերիշխող դասակարգի կենցաղային գիշատիչ օրենքներին։

Ներածության շարունակության մեջ Սալլյուստիոսը արդեն շեղվում է ուղղամտության և անաչառության իր դիրքերից, և գրում.

«Իսկ երբ իմ հոգին շատ վտանգներից և փորձանքներից հետո հանգստացավ և ես որոշեցի անցկացնել մնացած կյանքս պետական գործունեությունից հեռու, ես դիտավորություն չունեի իմ հրաշալի հանգիստը վատնել անհոգ ունայն անգործությամբ, բայց և չէի կամենում շարունակել իմ կյանքը ամ-

[40] **Саллюстий,** Заговор Катилины, М., 1916, III §. 3.

բողոքին նվիրվելով երկրագործությանը և որսորդությանը, զբաղմունքներ, որ մատչելի են նաև սարուկներին։ Այսպիսով, վերադառնալով այն դիտավորություններին և ձեռնարկումներին, որոնցից ինձ կարել էր ճակատագրական փառասիրությունը, ես որոշեցի առանձին ուրվագծերում նկարագրել հռոմեական ժողովրդի գործերը, որչափով այդ գործերը ինձ թվացել են արժանահիշատակ, որոշեցի այդ կատարել մանավանդ նրա համար, որովհետև հիմա իմ հոգին ազատ է առանձին քաղաքական կուսակցությունների ակնկալություններից և երկյուղից»[41]։

Սալլյուստիոսի խոստովանության այս վերջին մասը անկեղծ չէ, այն չի համապատասխանում իրականությանը։ Սալլյուստիոսը հռոմեական պատմության մասին իր բոլոր գործերը գրել է որպես քաղաքագետ, որպես կեսարական կուսակցության կողմնակից և ոչ թե որպես քաղաքական պայքարից հեռու կանգնած անաչառ պատմաբան։ Ողջ մենագրությունը՝ «Կատիլինայի դավադրությունը», ներծծված է բուռն ատելությամբ դեպի սենատորական օլիգարխիան, ըստ որում խիստ ընդգծված է Կեսարի դերն ու նշանակությունը հռոմեական պատմության համար։

Կատիլինայի դավադրության տարիներին հռոմեական հրիտասարդության մի զգալի մասը ներգրավվեց այդ պայքարի մեջ։ Եվ թեպետ Սալլյուստիոսը հեռու մնաց կատիլինականների շարժումից, բայց հետագայում նա էլ ընդգրկվեց քաղաքացիական պայքարում, արտահայտելով հռոմեական հասարակության այն միջնախավի շահերը, որը միջնակյալ օղակ էր կազմում պլուտոկրատական վերնախավի և ապադասակարգայնացված պլեբեյական շերտերի միջև։

«Կատիլինայի դավադրության» մեջ Սալլյուստիոսը անուղղակի կերպով նպատակ է դրել իր առջև՝ հերքել Կեսարի մասնակցությունը Կատիլինայի դավադրությանը[42]։ Աշխատության 51-րդ գլուխը պարունակում է Կեսարի ճառը, որի նպատակն է մեղմել Կատիլինայի համախոհների վիճակը։

[41] Նույն տեղում, IV, § 2, 3։

[42] Տե՛ս Саллюстий Гай Крисп, Заговор Катилины М., 1916, глава 49.

Որոշ հետաքրքրություն են ներկայացնում 53-րդ և 54-րդ գլուխները, որտեղ Սալլյուստիոսը զուգահեռաբար բնութագրում է Կեսարին և Կատոն Կրտսերին, որպես իր ժամանակաշրջանի ամենանշանավոր մարդկանց։ «Եվ ահա իմ հիշողության մեջ երևան են գալիս տարբեր բնավորությամբ երկու մարդ, երկուսն էլ մեծ արիությամբ օժտված՝ Մարկոս Կատոնը և Գայոս Կեսարը... Նրանք համարյա նման էին իրենց անվանի ծագումով, տարիքով, ճարտասանական ունակություններով, ոգու մեծությամբ և փառքով։ Սակայն նրանց փառքը տարբեր բնույթի է։ Կեսարին մեծ էին համարում իր բարեգործության և առատաձեռնության համար, Կատոնին՝ անբասիր կյանքի համար։ Առաջինը հռչակվեց իր մեղմությամբ և ողորմածությամբ, վերջինս՝ խստաբարո ոգով։

Կեսարը փառքի հասավ, նվիրելով, օգնելով, ներելով։ Կատոնը՝ ոչ մի բանում չշեղվելով իր համոզմունքներից։ Կեսարը դժբախտների համար ապաստարան էր, Կատոնը՝ վատերի համար արհավիրք։ Մեկին գովում էին մատչելիության համար, մյուսին՝ հաստատակամ և հետևողական լինելու։

...Կեսարը երազում էր մեծ փառք, զորք, ահավոր պատերազմ, որտեղ կարող էր իր արիությունը երևան բերել։ Կատոնին, ընդհակառակն, հրապուրում էին ինքնազսպությունը, բարոյական գեղեցկությունը և ամենից ավելի խոհեմությունը... Նա գերադասում էր լինել լավ և ոչ թե թվալ լավ։ Այդ պատճառով ինչքան պակաս էր նա փառք որոնում, այնքան ավելի էր փառքը նրան հետևում»[43]։

Այս զուգահեռ բնութագրության մեջ Սալլյուստիոսը երևան է բերում մարի խորությունն, հոգեբանական վերլուծության կարողություն և գրական ճաշակ։ Բայց ծայրահեղ սուբյեկտիվ դիրքերից ելնելով, նա խիստ գեղազարդում է վերոհիշյալ երկու գործիչների կերպարները, մանավանդ Հ. Կեսարի կերպարը, ներկայացնելով նրան որպես խիստ ներողամիտ, անհիշաչար գործիչ, որպես «դժբախտների համար ապաստարան»։ Մեղանչելով պատմական իրականության դեմ, Սալլյուստիոսը շրջանցում է Կեսարի վիթխարի ավերածություն-

[43] Саллюстий Гай Крисп, Заговор Катилины, 1916, 54, 2, 3, 4, 5, 6.

ները և բնաջնջումները գալլական և քաղաքացիական պատերազմներում, որտեղ նա ոչնչացրեց ամբողջ ցեղեր։

Սակայն միանգամայն փոխվում է պատկերը, երբ Սալլյուստիոսը՝ պատմական դիմանկարի այդ մեծ վարպետը, սկսում է բնութագրել Կատիլինային։ Սալլյուստիոսն էլ Ցիցերոնի նման ճիգ է թափում Կատիլինային ներկայացնելու որպես պետական չարագործ, որը իշխանության հասնելու համար միջոցների մեջ ոչ մի խորություն չի դնում։ «Լուցիոս Կատիլինան ծագում էր անվանի տոհմից,—ասում է Սալլյուստիոսը,—նա աչքի էր ընկնում հոգեկան և մարմնական մեծ ուժով, բայց նրա միտքը արատավոր էր և այլասերված։ Սկզբած պատանեկության տարիներից, նա սիրահար էր պատակտիչ պատերազմների, սպանությունների, թալանի, քաղաքացիական երկպառակությունների։ Դրանց բովով անցավ նրա երիտասարդությունը և ավարտվեց նրա դաստիարակությունը։ Նրա սանձարձակ ոգին միշտ էլ ձգտում էր անհավանական, անհասանելի բաների...»[44]։ Սալլյուստիոսը կարողանում է Կատիլինայի բացասական կերպարը ներկայացնել հասարակության մեջ տիրապետող փչացած բարքերի ֆոնի վրա, «որտեղ իշխում էին կործանարար երկու չարիքներ՝ փարթամ կյանքի տենչանքն ու ընչաքաղցությունը»[45]։ Սալլյուստիոսը նշում է, որ հռոմեական այլասերված հասարակական կարգն է ստեղծել Կատիլինային։ Հեղինակը տարերայնորեն ըմբռնում է, որ հասարակությունն է ստեղծում պատմական գործիչներին։ Սակայն ճիշտ կողմնորոշվելով անհատի և նրա ծնող սոցիալ-քաղաքական միջավայրի փոխհարաբերության հարցում, Սալլյուստիոսը Կատիլինայի վերաբերյալ խիստ միակողմանի է մոտենում, անտեսելով, որ Կատիլինայի շարժմանը հարեցին գյուղի և քաղաքի քայքայված հոծ մասսաները, որոնք խմբվելով Կատիլինայի շուրջը, դեմոկրատական ոգի հաղորդեցին նրա ապստամբությանը։

Սալլյուստիոսի նման լուրջ պատմաբանի բերանում տարօրինակ է հնչում Կատիլինայի դավադրության գլխավոր շարժառիթի մասին նրա մեկնաբանումը։ Դավադրության գլխավոր շարժառիթը ըստ Սալլյուստիոսի՝ գեղեցկուհի Ավրելիա Օրեստիլլայի հանդեպ Կատիլինայի տածած կիրքն էր։

Պատմական իրադարձությունները դեհերիկ կերպով պարզելու այդ փորձը, իհարկե, վայել չէ Սալլյուստիոսին, որը իր պատմափիլիսոփայական և հոգեբանական խոր վերլուծություններով երբեմն հիացմունք է պատճառում ընթերցողին։ Ի՞նչ են ասում իրական փաստերը։

Կատիլինայի դավադրությունը (64—62 թթ.) նախապատրաստվել է հռոմեական հանրապետության սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի պայմաններում։ Նոր էր մարել Սպարտակի ապստամբության հրդեհը, նոր էր «խաղաղեցվել» Արևելքը՝ Տիգրան-Միհրդատյան վտանգավոր պատերազմից, երբ բուն Իտալիայում կատարվեց Կատիլինայի դավադրությունը։ 63 թվականը Հռոմում աչքի էր ընկնում բազաքական փոթորկոտ կյանքի մեծ լարվածությամբ։ Հանուն իշխանության մղված իրենց պատակտիչ պայքարում հռոմեական վերնախավի ներկայացուցիչները հաճախ ձգտում էին իրենց կողմը գրավել քայքայվող պլեբսին։ Հռոմի ներքին քաղաքականության հրատապ հարցերից մեկը այդ ժամանակաշրջանում պարտքերի վերացման պրոբլեմն էր, որը մեծ սրության հասավ 60-ական թվականներին։ Եվ ահա Կատիլինան՝ ազնվական նոբիլ, նախկին սուլլայական, 63 թվականին հանդես եկավ որպես չքավորների պաշտպան։ Առաջադրելով իր թեկնածությունը 62 թվականի կոնսուլության համար, որպես նշանաբան, նա առաջ քաշեց պարտքերի վերացումը, tabulae novae։ Այս առթիվ Ցիցերոնը բերում է Կատիլինայի խոսքերը, որ նա ասել է նախընտրական օրերին. «Միայն նա՛ կարող է լինել դժբախտների իսկական բարեկամը, ով ինքն է դժբախտ։ Չպետք է հավատալ բարեկեցիկ մարդկանց խոստումներին։ Չքավորների առաջնորդը և դրոշակակիրը պետք է լինի նա, ով ինքն անվախ է և աղքատ»[46]։

Կատիլինայի շարժումը նախ և առաջ լայնորեն տարածվեց հռոմաղուրկ գյուղացիների մեջ և ապա մեծ արձագանք գտավ նաև անանկացած նոբիլների շրջանում, որոնք պարտքի տակ էին ընկել։ Նրանք հույս ունեին, հենվելով Կատիլինայի վրա, ոչ միայն պարտքերից ազատվելու, այլև բարձր պաշտոններ

[44] Նույն տեղում, 5, 2, 3, 6։

[45] Նույն տեղում, 5, 8, 9։

[46] Марк Туллий Цицерон, Речи, I, 1962, XXV, 50.

ատանալու։ Կատիլինան կողմնակիցներ ուներ ոչ միայն Հռոմում, այլև մունիցիպալներում։ Նրան հաջողվեց իր կողմը գրավել Սուլլայի սննդակացած վետերաններին, որոնք թեպետ հողատացել էին Սուլլայից, բայց չէին կարողացել այն մշակել։ Այսպիսով, Կատիլինայի շարժումը դուրս գալով «դավադրության» շրջանակներից, վերածվում է հակապետական ապըստամբության, որի քաղաքական ծրագիրը թեպետ պարզ և ոչ ոշակի չէր, բայց հանգում էր կոնսուլական իշխանության բռնագրավման և սենատի իրավունքների սահմանափակման։ Այս նպատակով հայտնի կատիլինական ցենտուրիոն Մանլիոսը էտրուրիայում կազմեց զինված ջոկատներ, որոնց մեջ ներհոսում էին գյուղի քայքայված աշխատավորները։ Այս զորամասերը անհրաժեշտության դեպքում էտրուրիայից պետք է շարժվեին Հռոմի վրա, գրավեին քաղաքը, դատապատան տեսներին բոլոր հակառակորդների և ամենից առաջ՝ Ցիցերոնի հետ։

Կատիլինայի փորձը՝ զինված ապստամբության միջոցով իշխանությունը բռնագրավելու, ձախողվեց։ Չնայած իր շեշտված դեմոկրատական երանգավորմանը և լայն մասսայական բնույթին, կատիլինականների շարժումը տարբերվում էր Հռոմեական դեմոկրատիայի նախկին ելույթներից, երբ պայքար էր մղվում այս կամ այն ռեֆորմի օրինագծի համար։ Մինչդեռ կատիլինականների մոտ առաջին պլանում դրված էր իշխանության բռնագրավման հարցը, որը չէր հրապուրում Հռոմեական պլեբսին։

Պետք է նշել, որ հանրապետության տրադիցիաները դեռևս կենսունակ էին, և Կատիլինայի փորձը՝ զինված ապստամբության միջոցով միահեծան իշխանություն հաստատելու, անհաջողության դատապարտվեց։

Ուշագրավ է, որ Սալլյուստիոսը չնայած Կատիլինային տված իր խիստ բացասական բնութագրությանը, բարձր է գնահատել կատիլինականների հերոսական պայքարը, որը տեղի ունեցավ 62 թվականին էտրուրիայում, Պիստորիա քաղաքի մատույցներում։ Սալլյուստիոսը նշում է, որ Կատիլինան և կատիլինականները մինչև վերջին շունչը խիզախորեն մարտնչեցին սենատական կադրային զինված ուժերի դեմ և

«ոչ մեկը գերի չընկավ՝ այն ատոմանի բոլորն էլ չէին խնայում իրենց կյանքը, ինչպես և թշնամիների կյանքը[47]։ ...Կատիլինային գտան յուրայիններից հեռու, թշնամիների դիակների մեջ։ Նա դեռևս շնչում էր, և նրա դեմքը պահպանել էր իր աննկուն հոգեկան ուժի նույն արտահայտությունը, ինչ որ ուներ կենդանության ժամանակ»[48]։

Չնայած բուռն հակակրանքին դեպի Ցիցերոնը, Սալլյուստիոսը իր քաղաքական և բարոյախոսական հայացքներով շատ հար ու նման է Ցիցերոնին։ Նրանք երկուսն էլ Կատիլինային համարում են Հռոմեական հանրապետության թշնամի, երկուսն էլ գերագնահատում էին հին Հռոմեական անցյալը։

«Կատիլինայի դավադրությունից» շատ չանցած Սալլյուստիոսը գրում է իր մյուս երկը՝ «Յուգուրթական պատերազմ»-ը, որը բովանդակում է Հռոմի պատմության ավելի վաղ դարաշրջանը՝ 2-րդ դարի վերջը և 1-ին դարի սկիզբը։ Այս երկում էլ աչքի է զարնում հեղինակի բուռն ատելությունը դեպի սենատորական օլիգարխիան. միևնույն մռայլ գույներով ցույց է տրված բարքերի անկումը Հռոմում, երբ պետական իշխանությունը գտնվում էր քչերի ձեռքում և միջոց էր ծառայում իրենց հարստացման և հզորացման համար։ Իշխանության պլուս կանգնած մարդկանց բարոյական անկումը մեծամեծ չարիքների պատճառ է դառնում։ Նումիդիայի ճարպիկ ու հանգուն թագավոր Յուգուրթան օգտվելով սենատորական արիստոկրատիայի կաշառակերությունից և ծախու զորավարների ընչաքաղցությունից, խիստ ծանր կացության մեջ է գցում Հռոմեական հանրապետությանը։ Նա սիրանում է Հռոմեական Աֆրիկա պրովինցիայի սահմանամերձ հողերին, ծաղրուծանակի ենթարկում սենատորների կողմից կաշառքի միջոցով իրենց պարտազանցությունը կոծկելու հնարքները։ Սալլյուստիոսը դառնությամբ արձանագրում է, որ Յուգուրթան Հռոմից հեռանալիս հեգնանքով բացականչել է. «Ո՜վ վաճառված քաղաք, դու կդադարես գոյություն ունենալուց, հենց որ մի հարմար գնորդ ճարվի»[49]։ Բռնկվեց պատերազմ Հռոմի և

[47] **Саллюстий**, Заговор Катилины, М., 1916, 61, 2, 3, 4, 5, 6.

[48] Նույն տեղում։

[49] **Саллюстий Гай Крисп**, Югуртинская война, М., 1916, XXXV, 10.

Յուգուրթայի միջև, որը տևեց 111 թվականից մինչև 104 թվականը (մ. թ. ա.), և միայն խստաբարո և անկաշառ զորավար Քվինտոս Մետելլոսի կարուկ միջոցառումների շնորհիվ հնարավոր եղավ վերականգնելու կազմալուծված բանակում կարգապահությունը և բարձրացնելու հռոմեական զենքի հեղինակությունը Աֆրիկա պրովինցիայում։ Նրա գործը հաջողությամբ ավարտեց Գայոս Մարիոսը, որը նոր մարդ էր (homo novus), ծագումով հեծյալ։ Ձուննենալով արիստոկրատական բարձր ծագում և փայլուն կրթություն, նա վաղ հասակից ծառայել էր բանակում և աչքի ընկել իր արտակարգ քաջությամբ։ Յուգուրթական պատերազմի ժամանակ Մարիոսը ուղարկվեց Աֆրիկա, որպես Քվինտոս Մետելլոսի լեգատը։ Այստեղ Մարիոսի ռազմավարական ձիրքերը փայլուն կերպով դրսևորվեցին։ Նա մեծ հեղինակություն էր վայելում զինվորների մեջ, քանի որ իր մտավոր կերտվածքով և պարզ ապրելակերպով ավելի մոտ էր նրանց։ Ի վերջո, հակառակ օպտիմատների և Մետելլոսի կամքին, ժողովրդական ժողովի որոշմամբ Մարիոսին հանձնարարվեց շարունակել պատերազմը Յուգուրթայի դեմ։ Գայոս Մարիոսը իր հետ Նումիդիա բերեց զգալի համալրումներ և առաջին իսկ արշավանքի ժամանակ՝ 106 թվականին, հաստատուն եղանակով և մեթոդապես վարելով պատերազմական գործողությունները, կարողացավ թշնամուն համարյա դուրս մղել իր իսկ երկրից։ Այնուհետև երկու արյունահեղ ճակատամարտերում ջարդելով Յուգուրթային և նրա աներոջը՝ Բոկքոսին, Մարիոսը կարողացավ հաղթականորեն ավարտել Յուգուրթական պատերազմը 104 թվականին։ Հունվարի 1-ին Գայոս Մարիոսը տոնեց իր արիումֆը։ Հաղթական երթում անցնում էր շղթայակապ Յուգուրթան արքայական զգեստով։ Տրիումֆից քիչ անց Յուգուրթան մահապատժի ենթարկվեց։

Իր այս աշխատության համար Սալլյուստիոսը օգտվել է մի շարք հեղինակների երկերից, որոնց անունները նա հիշատակում է, այն է՝ պատմաբան Լուցիոս Սիզեննան, ինչպես նաև պատմական նոթերի հեղինակներ Էմիլիոս Սկավրոսը, Ռուտիլիոս Ռուֆոսը և Սուլլան։ Կարևոր նշանակություն ունի Նումիդիայի աշխարհագրական և ազգագրական ակնարկը, որ

տալիս է Սալլյուստիոսը։ Նա քաջատեղյակ էր բնա-աշխարհագրական և ազգագրական վիճակին, որպես այդ երկրի նախկին փոխարքա։ Իսկ Նումիդիան ընդհանրապես անծանոթ էր հռոմեացիներին։ Անկասկած, անծանոթ աշխարհի և նրա բնակիչների մասին ակնարկը զգալի նվաճում էր հին հռոմեական գիտության համար, ճիշտ այնպիսի, ինչպիսի նվաճում էր Գալլիայի և Գերմանիայի մասին Հուլիոս Կեսարի «Նոթերը»։ Տակիտոսի «Գերմանիա» մենագրությունը և Բրիտանիայի մասին Տակիտոսի «Ագրիկոլայի կենսագրությունը» աշխատություններ։

Իր «Յուգուրթական պատերազմի» 17-րդ հատվածում Սալլյուստիոսը տալիս է Աֆրիկայի համառոտ աշխարհագրական նկարագրությունը և ծանոթացնում է այն ցեղերին, որոնց հետ հռոմայեցիները կռվել են կամ բարեկամական հարաբերություններ են ունեցել։ Այդ աշխարհագրական ակնարկից մենք տեղեկանում ենք, որ Սալլյուստիոսի ժամանակակից աշխարհագիրներն Աֆրիկան համարել են աշխարհի մեկ երրորդ մասը և նրա բնիկներին՝ մուրուն և երկարակյաց։ Լավ է, որ Սալլյուստիոսը մատնանշում է իր հիմնական աղբյուրը. «Ես համառոտակի կշարադրեմ իմ տեղեկությունները, որ քաղել եմ «Պունիկյան գրքերից», որ վերագրում են Գիեմպսալ թագավորին[50], և որոնց բովանդակությանն համընկնում է այդ երկրի բնիկների պատմածները։ Այդ տեղեկությունների արժանահավատության պատասխանատվությունը ես դնում եմ իմ աղբյուրների վրա»[51]։ Այս փոքրիկ հատվածում նկատելի են Սալլյուստիոսի քննադատական մոտեցման տարրերը։ Ապա նա կարևոր տեղեկություններ է հաղորդում հյուսիսային Աֆրիկայի հնագույն բնակիչների՝ գետուլների և լիբիացիների կենցաղի, զբաղմունքի և թափառաշրջիկ կյանքի մասին, ներկայացնելով նրանց կիսավայրենի վիճակում. քնում էին այնտեղ, որտեղ գիշերը վրա էր հասնում։

Սալլյուստիոսի պատմահայեցողությունը այս երկում ավելի որոշակիորեն է երևան գալիս։ Աշխատության սկզբում

[50] Նումիդիայի Յուբա թագավորի հայրը։

[51] **Саллюстий**, Югуртинская война, М., 1916, 17, § 7.

հեղինակը պատմա-փիլիսոփայական խորհրդածություն է կատարում, արծարծելով պատմության շարժիչ ուժի գաղափարը։ Ի տարբերություն անտիկ մատածողների, նա բացատում է ճակատագրի դերը մարդկանց կյանքում և գերբնական ուժի նշանակությունը մարդկային սերնդի համար։ Խորամուխ լինելով հասարակական կյանքի երևույթների մեջ, նա գալիս է այն համոզման, որ «իրոք... մահկանացուների կյանքի իսկական առաջնորդը և տերը մարդկային ոգին է։ Եթե մարդ առաքինության ուղիով է ընթանում դեպի փառք, նա դառնում է չափազանց ուժեղ, հզոր և փառապանծ. նա կարիք չունի ճակատագրի օգնությանը, որը չի կարող տալ կամ վերցնել ոչ ոքից նրա ազնվությունը, բարի մղումը և ուրիշ լավ հատկանիշները»[52]։ Սալլյուստիոսի պատմահայեցողությունը իդեալիստական է։

Սալլյուստիոսը երևույթները և մարդկային կյանքը դիտում է իրենց շարժման, փոփոխման մեջ. «Մարդուն շնորհված բոլոր բարիքները ունեն ինչպես սկիզբ, այնպես էլ վախճան, և այն ամենը ինչ ծնվում է, մեռնում է և այն ամենը, ինչ որ աճում է, ծերանում է։ Միայն ոգին է անխորտակ և հավերժական։ Լինելով մարդկային սերնդի հշմարիտ ղեկավարը, նա ուղղություն է տալիս ամեն ինչի և օժտված է ամեն ինչով, բայց ինքը ոչ ոքի ենթակա չի»[53]։

Սալլյուստիոսը մարդկային բոլոր գործերից ամենաօգտակարն է համարում Հռոմեական հանրապետության սքանչելագործությունների մասին գրված պատմությունը։ Նա ընդգծում է պատմության խոշոր բարոյախոսական նշանակությունը հետագա սերունդների համար։ Օրինակ է բերում Քվինտոս Մաքսիմուսին, Պուբլիոս Սցիպիոնին և մի շարք հռոմեական «պանծալի մարդկանց», որոնց սխրանքները անշեջ բոց են վառում հետագա մարդկանց կրծքում և նրանց մղում նույնանման հերոսական գործերի։

Սալլյուստիոսի քաղաքական իդեալը անցյալն է։ Անցյալի արժանահիշատակ գործերի հիման վրա և առաքինի մարդկանց օրինակով պետք է բարեփոխել կյանքը։ Լինելով իր ստոյիալական միջնադարի դաղափարախոսը, նա դեմ է ամեն տեսակի բռնության, բռնի ճանապարհով գոյություն ունեցող սոցիալ-քաղաքական կարգը բարելավելուն։ Այդ մասին նա հետևյալ խորհրդածություններն է անում «Յուգուրթական պատերազմում». «Եվ իրոք, եթե նույնիսկ հնարավոր է բռնության միջոցով կառավարել հայրենիքը և հպատակներին, եթե նույնիսկ հնարավոր է այդ ճանապարհով ուղղել առանձին թերությունները, այնուամենայնիվ, դա սխալ ճանապարհ է և վտանգավոր գլխավորապես այն պատճառով, որ դեպքերի բերմամբ տեղի ունեցած բոլոր բռնի փոփոխություններ կանխագուշակում են սպանություններ, աքսոր և թշնամանքի այլ արատահայտություններ»[54]։

Սալլյուստիոսն իր փիլիսոփայական հայացքներով հարում էր ստոիկներին։ Այդ ուսմունքը Աթենքի քաղաքական անկման դարաշրջանի փիլիսոփայությունն էր և համապատասխանում էր իր մայրամուտն ապրող Հռոմեական հանրապետության արիստոկրատիայի անկումային տրամադրությանը։ Անտարբերություն, պասսիվություն, կույր հնազանդություն՝ ահա ստոիկյան փիլիսոփայության բնորոշ հատկանիշը[55]։ Մարդ երջանիկ է այն ժամանակ, երբ երջանկության կարիքը չի զգում, չի տրանջում իր կյանքից։ Ոչ մի ձգտում է վերափոխել տիրող կարգը, այլ ձգտում է ինքն իրեն ուղղել, փոխել, վարժեցնել առաքինության, համբերության, բավարարվել եղածով՝ գոհ լինելով իր վիճակից։ Այստեղից էլ ծագում է «ստոիկյան համբերություն» դարձվածքը։

Անտիկ շատ գրողների նման Սալլյուստիոսն էլ մեծ տեղ է տալիս իր նկարագրած պատմական գործիչների հոգեբանական վերլուծությանը։ Նրան հաջողվում է մեծ վարպետությամբ վառ ու կենդանի ներկայացնել Յուգուրթային, նրա հո-

[52] Նույն տեղում, էջ 1, 3։

[53] Саллюстий, Югуртинская война, М., 1916, 2, 3, 4.

[54] Նույն տեղում, 3, 2, 3։

[55] Ստոիկյան փիլիսոփայական դպրոցի հիմնադիրն է Զենոնը (4-րդ դարի վերջը մ. թ. ա.), որը ծնվել է Կիպրոս կղզու Կիտիոնում (մոտ 336—264 թթ. մ. թ. ա.)։ Զենոնն իր փիլիսոփայական ուսմունքը շարադրում էր Աթենքում՝ այսպես կոչված գունավոր պորտիկում, որը զարդարված էր Պոլիգնոտի նկարներով և կոչվում էր «ստոա պոյկիլե», այստեղից էլ՝ ստոիկ անունը։ Նրանց մեջ կային շատ անվանի և զարգացած մարդիկ, ինչպես օրինակ՝ հույն պատմաբան Պոսիդոնիոսը, Հռոմում՝ փիլիսոփա Սենեկան, Էպիկտետը, կայսր Մարկոս Ավրելիոսը և ուրիշներ։

բեղբորը՝ Միթիպսային, Մեսելլոսին և ուրիշ պատմական անձերի։ Սալլյուստիոսը կարողանում է հաջող վերլուծել նրանց հոգեբանական շարժառիթները և հանգել ճիշտ եզրակացությունների։ Նկարագրելով Միթիպսայի՝ Նումիդիայի ծերացած թագավորի, հոգեկան տանջանքները և մտավախությունը իր կյանքի որդու՝ Յուգուրթայի կողմից թագավորական գահը բռնազավթելու վերաբերյալ, նա ասում է. «Ներան վախեցնում էր մահկանացուներին հատուկ իշխանության ծարավը և նրանց հոգեկան կիրքը բավարարելու անկաշկանդ ձգտումը»[56]։

Սալլյուստիոսը կարողանում է պատմական գործիչներին բնութագրելիս թափանցել նրանց գործունեության քաղաքական շարժառիթների մեջ։ Այսպես, օրինակ, խոսելով Գայոս Մարիոսի և Քվինտոս Մեսելլոսի արժանիքների մասին, Սալլյուստիոսը խորիմաստ կերպով ավելացնում է. «Ընդհանրապես, մեկի և մյուսի գնահատման գործում կուսակցական հաշիվներն ունեին ավելի մեծ նշանակություն, քան նրանցից յուրաքանչյուրի դրական կամ բացասական կողմերը»[57]։ Սալլյուստիոսը պատմական անցյալը համարում է ստեղծագործական ոգու արգասիք, իսկ այդ ոգին արտացոլվում է առանձին մարդկանց անձնավորություններում։ Հենց այդ մարդիկ էլ գրավում են նրա ուշադրությունը. նա խնդիր է դնում երևան հանել գործիչների հոգեկան մղումները, կրքերն ու հույզերը, տալ նրանց ապրած հասարակական միջավայրի բնույթը, նրա գնահատականը։ Այդպիսին է Սալլյուստիոսի պատմափիլիսոփայական խնդիրը։

Չնայած իր դասակարգային սահմանափակվածությանը և կողմնակալությանը, Սալլյուստիոսը բարեխիղճ պատմաբան է։ Նա հիմնվել է հավաստի աղբյուրների վրա, լայնորեն օգտագործել մեմուարային գրականությունը և աղբյուրների նկատմամբ ցուցաբերել ուշիմ վերաբերմունք։ Իսկ նրա հոգեբանական վերլուծությունները որոշ հետաքրքրություն են ներկայացնում, որպես իր ապրած ժամանակաշրջանի տիրող վերնախավի փիլիսոփայական հայացքների արտահայտություն։

[56] Саллюстий, Югуртинская война, М., 1916, 6, 3.
[57] Նույն տեղում, 73, 5։

ՏԻՏՈՍ ԼԻՎԻՈՍ (58. թ. մ. թ. ա.—17 թ. մ. թ.).—*Սկսած Պյուռհոսյան պատերազմից, երբ Հռոմը շփման մեջ մտավ հունական աշխարհի հետ, հռոմեական ավանդությունը իր կարևորագույն դրվագներով մշակման էր ենթարկվում հատկապես բացառապես հույների կողմից՝ ընդհուպ մինչև հանրապետության վերջը։ Բավական է բերել Պոլիբիոսի և նրա գործի շարունակողների՝ Պոսիդոնիոսի և Ստրաբոնի օրինակները, համոզվելու համար, որ մինչև երրորդ դարը (մ. թ. ա.) հույն պատմագիրները վճռական դեր էին խաղում հռոմեական պատմագրության մեջ։*

Միայն մ. թ. ա. I դարից հռոմեական պատմագրությունը ինակոխեց իր երկրի պատմության ինքնուրույն մշակման ուղին։ Այդ ժամանակ հանդես եկավ Տիտոս Լիվիոսը իր ծավալուն աշխատությամբ, որը ընդգրկում էր Հռոմի ողջ պատմությունը՝ սկսած քաղաքի հիմնադրումից մինչև հեղինակի ապրած ժամանակաշրջանը։

Տիտոս Լիվիոսը ծնվել է Հյուսիսային Իտալիայի Պատավ (Պադուա) քաղաքում, Լիվիոսների հայտնի ընտանիքում, որը ավել է նշանավոր մարդիկ հռոմեական հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում։ Լիվիոսը սատարել է փայլուն հռետորական կրթությունը։ Ուսումնասիրել է Դեմոսթենեսի և Ցիցերոնի ճարտասանական արվեստը, ատորիկյան փիլիսոփայությունը։ Ի տարբերություն անտիկ պատմագիրների, նա չի մասնակցել քաղաքական կյանքին և իր ամբողջ ուժն ու եռանդն ի սպաս է դրել պատմագրական աշխատանքին։ Ապրելով Օգոստոսի կայսրության ժամանակաշրջանում, Տիտոս Լիվիոսը վայելել է Օգոստոսի համակրանքն ու հովանավորությունը, որի առաջադրանքով էլ գրեց իր ծավալուն աշխատությունը, 142 գրքից բաղկացած «Հռոմեական ժողովրդի պատմությունը»։ Նա իր գրքի վրա աշխատել է մոտ 21 տարի, ըստ որում, գլուխ առ գլուխ գրելու ընթացքում ընթերցել է Օգոստոսին իր գրածը։ Այդ ժամանակաշրջանի գլխավոր խնդիրն էր հանրագումարի բերել հանրապետության փորձը և այն օգտագործել նոր պայմաններում։ Տի-

տոս Լիվիոսը նպատակ էր դրել շարադրել Հռոմի հանրապետության պատմությունը և ընդգրկել Կայսրության սկիզբը։ Լիվիոսի վերաբերմունքը դեպի հանրապետության պատմությունը բխում էր Օգոստոսի վարած ներքին քաղաքականությունից։ Օգոստոսը քաղաքական որոշ նկատառումներով նախաձեռնել էր վերածնելու հին հռոմեական մշակույթը, բարքերն ու սովորույթները, ինչպես օրինակ, գրականության մեջ՝ էնեասի պատմազրույցը, Հռոմի հիմնադրման մասին էպիկական առասպելը, պատմության բնագավառում՝ հանրապետության տրադիցիաները և անցած սերունդների սքանչելագործությունները։ Կայսրը ցանկանում էր անցյալի փառավոր գործերը հակադրելով ներկային՝ բարձրացնել հռոմեացիների մեջ հայրենասիրության զգացումը։ Միաժամանակ ձգտում էր առաջացել ստեղծելու հունականին չզիջող գրական անմահ երկեր։ Այդպիսին պիտի լիներ Տիտոս Լիվիոսի «Հռոմեական ժողովրդի պատմությունը», որը սակայն, թե՛ աղբյուրներից օգտվելու իր եղանակով և թե՛ ուսումնասիրության մեթոդով խիստ զիջում էր հունական պատմագրության ականավոր ներկայացուցիչներին՝ Թուկիդիդեսին և Պոլիբիոսին։ Լիվիոսի աշխատությունը հետագայում բաժանվեց դեկադների, որոնցից յուրաքանչյուրը կազմված էր 10 գրքից (մեծ գլուխներից, ինչպես ներկայումս ընդունված է անվանել անտիկ աշխատությունների «գրքերը»)։ Լիվիոսի «Պատմության» 142 գրքերից պահպանվել են միայն 35-ը, այն է՝ 1—10-րդ գրքերը՝ I դեկադը (մինչև 293 թ. մ. թ. ա.) և 21-ից—45-րդ գրքերը (218 թվականից մինչև 167 թվականը մ. թ. ա.)։ Մյուս գրքերի բովանդակությունը վերականգնելու համար պատմաբանները ստիպված էին դիմելու առանձին մասերի համառոտ շարադրանքին՝ էպիտոմին, որ կազմված է հավանաբար մ. թ. 4-րդ դարում, ինչպես նաև հետագա բանաքաղներին՝ Ֆլորին, Եվտրոպիոսին և Օրոզիոսին։

Տիտոս Լիվիոսը մինչև իր աշխատության շարադրանքին անցնելը շատ ժամանակ է նվիրել աղբյուրներին, մեծ մասամբ նախորդ հունա-հռոմեական աղբյուրների ուսումնասիրությանը։ Լավագույն պատմական նյութերը նա քաղել է հունական պատմիչներից, օրինակ, Պոլիբիոսից։ Իսկ հնագույն

դարաշրջանի պատմությունը շարադրելիս նա օգտվել է հռոմեական հեղինակներից, և նրա աշխատության այդ մասերի պատմական արժեքը թույլ է։

Աղբյուրներից օգտվելիս Տիտոս Լիվիոսը հաճախ չի կարողացել հաղթահարել դրանց մեջ եղած հակասությունները, տեղ է տվել առասպելներին և երկարաշունչ ճառերին։ Այսպես օրինակ, հինգերորդ գրքի 50-րդ հատվածում Լիվիոսը պատմում է, թե գալլական աղետից հետո հռոմեացիները պատրաստվում էին թողնել Հռոմի ավերակները և տեղափոխվել Վեյք[58], և ապա, 51-ից—54-րդ հատվածներում ներառյալ բերում է դիկտատոր Կամիլլիոսի արտասանած հայրենասիրական ճառը, որի միջոցով իբրև թե դա կարողանում է ետ պահել ժողովրդին իր մտադրությունից։

Ճառերը, հրաշքների մասին խորհրդանշական պատմվածքները մեծ տեղ են գրավում Տիտոս Լիվիոսի աշխատության մեջ, թուլացնելով նրա գիտական արժեքը։ Մի որևէ առասպելի գեղեցկությանը երբեմն նա զոհաբերում է պատմական ճշմարտությունը։ Հաղիվ թե նա վստահած լիներ իր հաղորդած բոլոր տեղեկություններին, սակայն դրանք գրավում էին նրան, որպես արվեստագետի։

Տիտոս Լիվիոսի պատմահայեցողությունը երևան է գալիս հենց նրա աշխատության ներածականում։

«Հռոմեական ժողովրդի պատմության» գրքի առաջաբանում Լիվիոսն ասում է, որ ինքը նման չէ այն գրողներին, որոնք աշխատել են ոճի գեղեցկությամբ թարմացնել դեպքերի հնությունը։ Նա խոստանում է գրել մշակված ոճով, սեղմ և պարզ։ «Ես կհաղորդեմ պատմական դեպքերն այնպես,—գրում է նա,—ինչպես պահպանվել են դրանք։ Չեմ հերքելու այդ

---

58 Կելտական (գալլական) ցեղերը 390 թ. (մ. թ. ա.) կտրեցինանցան Ապենինները և ներխուժեցին Միջին Իտալիա, գրավեցին Էտրուրիան և ապա արշավեցին Հռոմայեցիների դեմ։ Տիբերի վտակ Ալիա գետակի մոտ հռոմայեցիները ծանր պարտություն կրեցին և գալլերը ներխուժեցին Հռոմ, կողոպուտի մատնեցին քաղաքը։ Հետագայում գալլերը հեռացան Հռոմից, բայց հռոմեացիների մոտ երկար ժամանակ գալլական աղետը՝ «Ալիայի օրը», հիշատակվում էր որպես մեծ աղետի խորհրդանշան։

դեպքերը և չեմ երաշխավորում դրանց արժանահավատությունը»[59]։

Այս քաղվածքից պարզ երևում է, որ մենք գործ ունենք ոչ թե հետաքրքրողի հետ, որը փորձում է բաղդատել տարբեր աղբյուրները և քննական մեթոդով հասնել ճշմարտության, այլ մի հեղինակի, որը բավարարվել է ավանդությունը ներհյուսել հետագա հեղինակների բանաստեղծական ղեղումներին։

Ներածականում Լիվիոսը բացորոշ կերպով ցույց է տալիս իր նպատակը՝ փառաբանել հռոմեական ժողովրդի արիությունն ու վեհությունը, ցույց տալ, թե ի՛նչ միջոցներով նրանք հասան չգերազանցված հզորության։ Այդ մասին Լիվիոսն ասում է. «Եթե որևէ ժողովրդին իրավունք է տրված արբագործելու իր ծագումը և իրեն սերելու աստվածներից, ապա իհարկե, ըստ արդարության, այդ իրավունքը պետք է պատկանի հռոմեական ժողովրդին։ Նրա ռազմական փառքն այնպիսին է, որ ուրիշ ժողովուրդներ ընդունելով նրա տիրապետությունը, չեն կարող չհամաձայնել նրա հետ, երբ ինքը պնդում է, թե իր նախնին եղել է Մարս աստվածը»[60]։

Այնուհետև, զարգացնելով իր միտքը, Տիտոս Լիվիոսը ցույց է տալիս իր աշխատության բարոյախոսական նպատակը, նրա համար կարևոր չէ դեպքերի վերաբերյալ ընթերցողների տեսակետները. «Ինչ վերաբերում է դեպքերին, թող ամեն մեկն ունենա իր կարծիքը դրանց վերաբերյալ։ Բայց թող ընթերցողն ուշադրություն դարձնի մեր նախնիների կյանքի բարոյական կողմի վրա, այն բանի վրա, թե ինչպիսի կյանք էին նրանք վարում, ինչպիսի կանոնների էին հետևում։ Թող ըմբռնի նա, թե ինչպիսի միջոցներով նրանք ստեղծել են մեր վեհությունը, թե՛ խաղաղության և թե՛ պատերազմի ժամանակ և դրել են մեր հայրենիքի հզորության հիմքը։ Թո՛ղ ընթերցողը ուշադիր հետևի, թե ինչպես սակավ առ սակավ բարոյականությունը սկսում է թուլանալ, թե ինչպե՛ս առաքինի բարքերը գնում են դեպի անկում, ապա իսպառ վերանում։

[59] **Ливий Тит,** История народа римского (Сочинения Тита Ливия Падуанского) пер. А. Клеванова, М., 1876, Введение, 25.

[60] Նույն տեղում։

Մեր ժամանակներում գիտակցելով հանդերձ մեր փչացած բարքերի ողջ խորությունը, ի վիճակի չենք այլևս ոչ արատները տանել և ոչ էլ ունենալ չարիքը բուժելու անհրաժեշտ միջոցներ[61]։

Եվ ապա հետևում են հեղինակի մտորումները պատմության դերի և նշանակության մասին։ «Անցյալ իրադարձությունների բարոյական օգուտն ու արդյունավետությունը կայանում է հենց նրանում, որ մենք գործնականում կարողանում ենք քաղել մեզ համար օգտակար կյանքի դասեր։ Այստեղ մենք ունենք և նմանողության օրինակներ և տեսնելով վատը՝ սովորում ենք խուսափել նրանից»[62]։

Ինչպես տեսանք, Լիվիոսը շարադրել է իր ծավալուն աշխատությունը բարոյախոսական նպատակով։ Փառավոր անցյալը համեմատելով տխուր ներկայի հետ, Լիվիոսն այնուամենայնիվ, մնում է լավատես, կենսահաստատ։ Ի տարբերություն Սալլյուստիոսի նա համոզված է, որ պատմության դասերը զուր չեն անցնի, կարդալով իր գիրքը մարդիկ հարկ եղած հետևությունները կանեն ներկայի և ապագայի վերաբերյալ։ Ըստ Տիտոս Լիվիոսի պատմությունը կարող է նպաստել բարքերի բարելավմանը. դրանով իսկ որոշվում են պատմության ուսումնասիրության ուսուցողական նպատակները։ Լիվիոսը ավելի շատ ուշադրություն է դարձրել ուսանելի և դրավիչ դեպքերի վրա, քան պատմական երևույթների։ Նա հաճախ կորցնում է պատմական հեռանկարը, երևան բերելով իրադարձությունները վերլուծելու անկարողություն։ Նրա աշխատության մեջ հաճախ հերոսները կարվում են իրենց ծնող պայմաններից, չեն համապատասխանում իրենց ապրած միջավայրին, դարաշրջանին։ Օրինակ, պլեբեյների և պատրիկների պայքարը ներկայացված է այնպես, կարծես հեղինակը շարադրում է 2-րդ դարի քաղաքացիական կռիվներ Գրակքոս եղբայրների պայքարի ժամանակաշրջանում։ Սակայն մենք իրավունք չունենք մեղանից մոտավորապես երկու հազար տարի առաջ ապրած անտիկ պատմիչներից պահանջելու դի-

[61] Տե՛ս նույն տեղում, գլ. XVI։

[62] Նույն տեղում։

հետազոտական այն մեթոդները, որ հատուկ են մեր դարի մատերիալիստ պատմաբաններին։

Տիտոս Լիվիոսը իր քաղաքական հայացքներով չափավոր հանրապետական է։ Թեպետ նա իր աշխատության մեջ գովաբանել է Հռոմեական հանրապետության առասպելական հերոսներին, որոնք իրենց կյանքը զոհաբերել են հանուն հայրենիքի, և բարձր է գնահատել վերջին հանրապետականներին՝ Բրուտոսին և Կասիոսին, բայց վայելելով Օգոստոսի հովանավորությունը և նյութական շահումները, Տիտոս Լիվիոսը իոնարհվեց նրա հզորության առջև, աշխատելով լինել «անկուսակցական»։ Ահա թե ինչու Օգոստոսը նրան հեգնանքով անվանում էր «Պոմպեական»։ Լիվիոսը հրաժարվեց իր նախկին հանրապետական սկզբունքներից և հանդես եկավ որպես «համաժողովրդական» ձգտումների ջատագով։

Օգոստոսի ստեղծած ռեժիմին համակերպվելը, չափավոր և զգույշ հանրապետական հայացքները, պատմելու հանդարատոնը, փայլուն հռետորական ոճը շատ էին համապատասխանում իր ժամանակակիցների ճաշակին։ Տիտոս Լիվիոսը մեծ ժողովրդականություն ձեռք բերեց։ Նրա գիրքը կարդում էին, հիանում, չէին համարձակվում լատիներեն լեզվով նորից գրել հանրապետության պատմությունը։ Նույնիսկ Տակիտոսի նման խոշոր պատմաբանն անգամ խոստովանում է, որ նախանձում է Լիվիոսին, որին բաժին է ընկել գրելու «հին հռոմեական ժողովրդի երջանկության և դժբախտության մասին»[63], լավագույն դարաշրջանի պատմությունը, իսկ իրեն բաժին է ընկել բռնության ծանր, մղձավանջային ժամանակաշրջանի պատմությունը։

ՎԵԼԼԵՅՈՍ ՊԱՏԵՐԿՈՒԼՈՍ (մոտ մ. թ. ա. 19 թ.—մոտ. 31 թ. մ. թ.).—Պրինցիպատի առաջին տասնամյակների պատմական աշխատությունները կարելի է բաժանել երկու տարամերժ խմբի։ Առաջին խմբին պատկանում էին օպոզիցիոն պատմաբանների գրվածքները։ Այս երկերում ելք էր որոնում սենատորական արիստոկրատիայի անզոր ցասումը նոր քաղաքական ռեժիմի՝ պրինցիպատի դեմ։ Քաղաքական ազդե-

[63] Летопись Кая Корнелия Тацита, перевод А. Кронеберга, М., 1958, ч.I, § 1.

ցությունը կորցրած սենատորական արիստոկրատիայի պատմաբանները չէին կարող բացահայտորեն ելնել գոյություն ունեցող քաղաքական կարգի դեմ։ Մնում էր միայն գովաբանել անցյալը, արդարացնել արիստոկրատական հանրապետության վերջին հերոսներին, երանելի անցյալի բարքերն ու սովորությունները։ Այդպիսի պատմաբաններից էր Տիտոս Լիվիոսը, բայց նա շատ զգույշ էր ու հավասարակշռված։ Շատերն ավելի հեռու էին գնում իրենց աշխատություններում և բացորոշ արտահայտում էին իրենց օպոզիցիոն քաղաքական հայացքները։ Սրանց աշխատությունները մեզ չեն հասել և նրանց մասին կարելի է գաղափար կազմել ավելի ուշ շրջանի մատենագիրների երկերից։

Երկրորդ խմբին պատկանում են կայսրներին մոտ կանգնած անձնավորությունների գրվածքները։ Դրանցից համեմատաբար լավ է պահպանվել Վելլեյոս Պատերկուլոսի «Հռոմեական պատմություն»-ը, որը գրվել է Տիբերիոս կայսեր ժամանակ երկու գրքով։ Առաջին գրքի մեծ մասը կորել է։ Աշխատությունը կոչվում է „Historiae Romanae libri duo“.

Վելլեյոս Պատերկուլոսը ծնվել է Կապուա քաղաքում (Կամպանիայում) մոտավորապես 19 թ. (մ. թ. ա.)։ Իր իսկ վկայությամբ երկար տարիներ եղել է զինվորական ծառայության մեջ, մասնավորապես Տիբերիոսի հրամանատարության ներքո։ Իբրև զինվորական ջոկատի պետ՝ Պատերկուլոսը մասնակցել է Տիբերիոսի ղեկավարությամբ գերմանական և պաննոնական արշավանքներին։ 6 թվականին (մ. թ.) վերադառնում է Հռոմ, որպես քվեստորի թեկնածու, իսկ 15 թ. (մ. թ.) հասնում է պրետորի աստիճանի։ Նա միշտ վայելել է Տիբերիոսի հատուկ համակրանքը։ Իր ազատ ժամանակը Վելլեյոս Պետերկուլոսը նվիրել է գրական աշխատանքին։ Նրա մասին ուրիշ տեղեկություններ չեն պահպանվել։

Վելլեյոսի «Պատմությունը» համառոտ ներածություն է քան ժամանակագրության, որի մեջ հեղինակը հաղորդել է միայն ամենակարևոր իրադարձությունները։ Նկատի առնելով, որ Վելլեյոս Պատերկուլոսի աշխատությունը, շատ հարցերում տարբերվում է Լիվիոսի հաղորդած վկայություննե-

րից,—յուրահատուկ հետաքրքրություն է ներկայացնում» Գրված է հապճեպորեն, որի մասին ինքն էլ խոստովանում է։

Աշխատության առաջին գրքում խիստ համառոտ հեղինակը շարադրում է Հռոմի պատմությունը մինչև Կարթագենի և Կորնթոսի կործանումը։ Երկրորդ գիրքն ավարտում է Տիբերիոս կայսեր կառավարման բնութագրումով։ Վելլեյոս Պատերկուլոսը կարողացել է հակիրճ ձևով ժամանակագրական հաջորդականությամբ տալ Հռոմի ողջ պատմության ամենակարևոր իրադարձությունները։ Ավելի ուշ ժամանակաշրջանին վերաբերող դեպքերը շարադրել է համեմատաբար ավելի մանրամասնորեն։ Իր «Պատմության» մեջ հեղինակը մեծ տեղ է հատկացրել առանձին գործիչների բնավորության ու բարքերի նկարագրությանը։ Առանձնահատուկ տեղ է հատկացրել Տիբերիոսին, մեծ գովեստներ շռայլելով կայսրին, որով նպատակ ունի հաճոյանալ նրան։ Սակայն միաժամանակ պետք է նշել, որ նրա կողմից դրվատված Տիբերիոս կայսեր մի քանի արժանիքները մոտ են ճշմարտության։ Ճիշտ են բնութագրված Տիբերիոսի վարչական և ռազմական գործերը, պրովինցիաներում նրա հմուտ միջոցառումները՝ վարչական և դատաստանական գործերը կանոնավորելու ուղղությամբ, արտաքին քաղաքականության մեջ՝ նրա հեռատես խաղաղասիրությունը ի հակադրություն Գերմանիկոսի ռազմատենչ տենդենցների։ Այսպես, օրինակ, խոսելով Տիբերիոսի ռազմական ձիրքերի մասին, Պատերկուլոսը ասում է. «Նա իր կողմն էր գրավել խերուսկներին։ Արշավելով Գերմանիա Տիբերիոսը խաղաղեցրել էր Հռենոսի աջ հովտում ապրող գերմանացիներին, թափանցելով մինչև Ֆրիզների և խավկների երկիրը։ Այլևս չէր մնացել Գերմանիայում ոչ մի ցեղ, որը նվաճված չլիներ Տիբերիոսի կողմից»[64]—արձանագրում է Պատերկուլոսը, որն անձամբ մասնակցել էր այդ արշավանքին։ Գործին քաջատեղյակ մարդու աչքերով դիտելով իրադարձությունները, Պատերկուլոսը հիշատակում է հռոմեական

[64] **Веллей Патеркул**, История, I, 108, տե՛ս նաև. «Древние германцы» сборник документов, М., 1937, էջ 43։

լեգեոնների պետ Քվինտիլիոս Վարոսի ձախողակ քաղաքականությունը Գերմանիայում, որի հետևանքով Տևտոբուրգյան անտառում 9 թ. (մ. թ.) «Հռոմեական լավագույն զորքը, որը իր քաջությամբ, կարգապահությամբ և ռազմական հմտությամբ գրավում էր առաջին տեղը, ծուղակն ընկավ և ոչնչացվեց»[65]։

Զգաստ ուսումնասիրողի դիրքերից մոտենալով հռոմեական ընչաքաղց փոխարքաների կողմից պրովինցիաների ահավոր կողոպտման փաստերին, Պատերկուլոսն արձանագրում է նույն Վարոսի կողմից գերմանական արշավանքից առաջ Սիրիայի բնակչությանը բարբարոսաբար թալանելու մասին։ «Նա աղքատ եկավ այդ հարուստ երկիրը,—պատմում է Պատերկուլոսը Սիրիայի փոխարքա Վարոսի մասին,—և հարբրստացած վերադարձավ արդեն աղքատ երկրից»[66]։

Վաղ պրինցիպատի պատմության համար հարկ է լինում դիմելու Վելլեյոս Պատերկուլոսի վկայություններին, որպես ժամանակակից աղբյուրի և ականատեսի։ Այնուհետև, Պատերկուլոսից օգտվելիս նկատի պիտի ունենալ նաև, որ նա շատ հարցերում Լիվիոսից տարբերվում էր իր վկայություններով և մեկնաբանություններով։ Համեմատելով միևնույն հարցերի մասին նրանց տարբեր կարծիքները, հնարավոր է դառնում հանգելու ճշմարտության մոտ եզրակացություններին։

ԿՈՐՆԵԼԻՈՍ ՏԱԿԻՏՈՍ.—Տակիտոսը անտիկ պատմագրության ամենաականավոր ներկայացուցիչն է։ Նրա հոյակապ ստեղծագործությունները նսեմացրին ոչ միայն հունա-հռոմեական նախորդ, այլև հետագա պատմագիրներին, և ինչպես գերմանական պատմաբան Նիզեն է ասում. «Նա չունեցավ արժանավոր հաջորդներ, թեպետ շարունակողներ եղան»[67]։

Տակիտոսը հանդես եկավ հռոմեական պատմության բեկման բարդ և փոթորկահույզ ժամանակաշրջանում՝ 1-ին դա-

[65] **Веллей Патеркул**, История, I, 119, Տե՛ս «Древние германцы», сборник документов, М., 1937, էջ 45—46։

[66] Նույն տեղում I, 117, «Древние германцы», Сборник документов, էջ 44.

[67] **Б. Низе**, Очерк Римской истории и источниковедения, С-ПБ, 1908, стр. 334.

րում (մ. թ.)։ Դա վաղ պրինցիպատի դարաշրջանն էր, երբ Հռոմեական Հանրապետությունն ըստ Տակիտոսի, արյունաքամ էր լինում և երկրում հաստատվում էր միապետությունը։ Թուցիկ պատմական ակնարկն անգամ թույլ է տալիս մեզ եզրակացնել, որ 1-ին դարի Հռոմեական լայնածավալ տերության սոցիալ-քաղաքական ճգնաժամը անխուսափելիորեն պիտի հանգեցներ ռազմական դիկտատուրայի, ինչպես Ֆ. Էնգելսն է նշում. «Ռազմական գերիշխանության վրա հիմնված կայսրությունը՝ պրինցիպատը, դարձել էր անխուսափելի անհրաժեշտություն»[68]։

Տակավին 1-ին դարի երկրորդ կեսից (մ. թ. ա.) ներքին սուր հակասությունները ծվատում էին սարկատիրական հասարակությանը։ Մի կողմից հիմնական անհաշտելի դասակարգային պայքարը սարկաւերների և սարուկների միջև և մյուս կողմից քաղաքացիական արյունահեղ կռիվները խիստ բացասաբար էին անդրադարձել Հռոմեական հասարակության բոլոր խավերի վրա։ Սենատական արիստոկրատիայի և հեծյալների մի մասը զոհ էր գնացել դաժան պրոսկրիպցիաներին կամ փախուստի էր դիմել։ Հեծյալների ձեռքում կենտրոնացած առևտուրը ճգնաժամ էր ապրում Միջերկրականի ջրերում մոլեգնող ծովահենների ասպատակությունների և Սեքստոս Պոմպեոսի ղեկավորած սիցիլիական նավատորմի մարտերի հետևանքով։ Խաղաղ բնակչությունը քայքայվել էր երկարատև կռիվներից, կամայական ծանր տուրքերից և վետերաններին բավարարելու նպատակով հողերի բռնագրավումից։ Քայքայված քաղաքային բնակչությունն ու լյումպեն-պրոլետարիատը գնալով սովարանում էին։ Մանր հողատերերը չէին կարող մրցել խոշոր սարկատեր-հողատերերի հետ, որոնց ընդարձակ կալվածքներում՝ լատիֆունդիաներում աշխատող բազմաթիվ սարուկների արտադրած գյուղատնտեսական մթերքները, շուկայում վաճառվում էին էժան գներով։ Չդիմանալով մրցմանը մանր հողատերերը քայքայվում էին, ի վերջո զրկվում խղճուկ հողակտորներից, գնում քաղաք պատահական

[68] **Ф. Энгельс**, Бруно Бауэр и первоначальное христианство, К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XV, издание второе, 1961, стр. 310—311.

վաստակի, բազմացնելով լյումպեն-պրոլետարիատի շարքերը։ Տեղին է այդ առթիվ հիշել Պլինիոս Ավագի խոսքերն այն մասին, թե լատիֆունդիաները կործանեցին Իտալիան։

Անհրաժեշտ է նշել, որ բուն Իտալիայում համարյա անընդմեջ բարձրանում էին ժողովրդական շարժումներ, քաղաքային պլեբսի հուզումներ՝ հացի հարատև թանկության պատճառով։ Հացի թանկությունը համարվում էր սարկատիրական Իտալիայի անբուժելի հիվանդությունը։ Այս «հիվանդության» ազնատալի հետևանքները խիստ զգալի էին պլեբսի համար։ Ցավոք, անտիկ պատմաբաններն անուշադրության են մատնել Հռոմեական պլեբսի կյանքն ու պայքարը, և մենք խիստ կցկտուր տեղեկություններ ունենք այդ մասին։ Այս տեսակետից զնահատելի են երգիծաբան Յուվենալիսի երկերը և Մարցիալիսի էպիգրամները, որոնք ազոտ լույս են սփռում Հռոմեական պլեբսի տնտեսական ծանր վիճակի վրա։

Հռոմեական հասարակության մի ստվար մասը կազմում էր գյուղի և քաղաքի պլեբսը։ Սարկատիրության պայմաններում հողային արիստոկրատիայի և պլուտոկրատիայի ուռճացման հետևանքով արագորեն քայքայվում էին աշխատավորական զանգվածները։ Գյուղում նրանք մեծ մասամբ վերածվում էին կոլոնների և կամ սեփականազրկվելով դիմում էին քաղաքները՝ պատահական վաստակ որոնելու, միանալով քաղաքային լյումպեն-պրոլետարիատին։ Այս «ամբոխը» ծվարում էր շուկաներում, փողոցների խաչմերուկներում, կամուրջների տակ, լավագույն դեպքում՝ էժանագին բազմահարկ փայտաշեն տների դեպի փողոցը ցցված առջևի մասում։ «Այս բնակարաններում Հռոմեական պրոլետարները չէին կարողանում ջնել կաթսաների ղղրդոցից, աղմուկից, կանչերից և փողոցային հայհոյանքներից,— ասում է Յուվենալիսը և ապա դառն հեգնանքով ավելացնում է. «Այստեղ անքնությունից շատ հիվանդներ մեռնում էին... միայն շատ փող ունենալով կարելի է ջնել մայրաքաղաքում»[69]։

[69] **Ювенал**, Сатиры, М.-Л., 1937, гл. 3, стр. 232, 238.

Յուվենալիսն ապրել է 60—140 թթ. մ. թ.։ Ստացել է փայլուն հռետորական կրթություն։ Նա Տրայանոսի և Ադրիանոսի ժամանակների օպոզիցիոն երգիծական գրողներից է։ Երգիծաբանը չի մասնակցել այն խանգա-

Հռոմեական պրոլետարների ամբողջ կյանքը պատվում էր «հացի» և «հանդիսների» շուրջը։ Պորտաբույծ կյանքը հաշիշի նման թմրեցնում էր նրանց դասակարգային գիտակցությունը։

Այս աղետալի վիճակում ապրում էին Հռոմեական կայսրության հարյուր հազարավոր «ազատ» քաղաքացիներ։ Հռոմեական պլեբսը, Տիբերիոսի հետևողական դասակարգային քաղաքականության շնորհիվ վերջինիս իշխանության անցնելու հենց առաջին տարին կորցրեց իր քաղաքական իրավունքների վերջին փշրանքները։ Մինչ այդ Օգոստոսը պահպանել էր պլեբսի իրավունքը՝ հավաքվելու և մագիստրատների ընտրությունները հաստատելու։ Հանրապետության կողմնակիցները հույս ունեին, որ այս ժողովներում ազատ հաստատությունների տրադիցիաները կպահպանվեն։ Սակայն Տիբերիոսը վճռական հարվածով զրկեց ժողովրդական ժողովին մագիստրատներ ընտրելու նրա վերջին իրավունքից։ Նա իր իշխանության հենց սկզբին կոմիցիաները (ժողովրդական ժողով) Մարսյան դաշտից սենատ փոխադրեց[70]։

Սակայն բռնությամբ ոչնչացնելով ժողովրդի քաղաքական վերջին իրավունքները և զրկելով նրան իր պահանջներն առաջադրելու հնարավորությունից, կայսրը հաշվի չէր առել, որ ժողովրդական մասսաների համար ստեղծված նյութական ծանր վիճակը կստիպի նրանց սենատի և կայսեր դեմ իրենց ձայները։ Հացի հարատև բանկության վան գովերգությանը, որ շռայլում էին Տակիտոսը և նրա ժամանակակից գրողները Ներվայի-Տրայանոսի «երանելի դարին»։ Յուվենալիսը ոչ մի տարբերություն չի տեսնում Տրայանոսի և Տիբերիոսի կառավարման միջև։ Իր քաղաքական երգիծաբանության մեջ Յուվենալիսը հանդես է բերում կյանքի մեծ ճանաչողություն և բարքերը նկարագրելու բացառիկ ընդունակություն։ Սուր երգիծանքի ամբողջ թույնը նա թափում է Հռոմի տիրող արիստոկրատիայի վրա, մերկացնելով նրա այլանդակ բարքերը։ Երգիծանքի համակրանքը հասարակ մարդկանց կողմն է. նա ցույց է տալիս, որ իրոք պլեբեյներն են կազմում պետության ուժն ու պատիվը։ Կայսրության շրջանի Հռոմի սոցիալական պատմության համար հատկապես հետաքրքրական է Յուվենալիսի երգիծաբանության երրորդ գիրքը, որտեղ նկարագրված է քաղաքի պրոլետարիատի կյանքը։

[70] Тацит, Летопись, М., 1858, I, 15.

պատճառով Հռոմում հաճախ հուզումներ էին առաջանում։ Տիբերիոսի կողմից խնայողության նպատակով կատարված հացի բաշխումների կրճատումը բաղցի դատապարտված պլեբսի ահեղ պոռթկում առաջացրեց 32 թ.։ Ժողովրդի բուռն ցասումը Տակիտոսի վկայությամբ «քիչ էր մնում, որ ապրատամբության վերածվեր։ Հացի թանկությունից ոտքի կանգնելով, ամբոխը մի քանի օր շարունակ հավաքվում էր թատրոնում և Տիբերիոսի դեմ թույլ էր տալիս անվայել արարքներ։ Տիբերիոսը զայրացավ սենատորների և մյուս աստիճանավորների վրա և նկատողություն արեց նրանց, որ ուժ չգործադրեցին այդպիսի վայրենի արարքների դեմ»... «Եվ սենատը հրապարակեց անտիկ խաղության հրամանագիր ժողովրդին սանձահարելու համար։ Կոնսուլներն էլ իրենց հերթին խիստ կարգադրություններ արեցին»[71]։

Նորաստեղծ կայսրության խոցելի կողմերից էր նաև սենատորական արիստոկրատիայի և կայսեր միջև ներգասակարգային հակասությունը. կայսրը հենվելով պլուտոկրատիայի և նոր, ծառայող վերնախավի վրա, աշխատում էր ամրապնդել ռազմական դիկտատուրան՝ պրինցիպատը։

Օգոստոսի ժամանակ երկարատև քաղաքացիական պատերազմներից ծայր առած ընդհանուր հոգնածությունը մի տեսակ քաղաքական անտարբերություն էր ստեղծել, իհարկե, ոչ բացարձակ իմաստով։ Հիշենք, թե որպիսի դժվարին և համառ պայքարի հետևանքով Օգոստոսին հաջողվեց դնել պրինցիպատի հիմնաքարը։ Հետագայում սենատորական դասը որոշ չափով կազդուրվեց, վերքերը բուժվեցին, և «կուսակցությունները» նորից ոտքի կանգնեցին իրենց սին հույսերով ու պահանջներով։ Հին քաղաքական տրադիցիաները դեռևս կենսունակ էին, սենատորական դասը դեռևս չէր կորցրել իր քաղաքական ազդեցությունը, որովհետև խոշոր հողատիրությունը ամուր նյութական հենարան էր իր համար։ Սենատը դարձավ օպոզիցիայի սիրտը, որտեղ կենտրոնացվել էին ամենահարուստ, ամենաանվանի և կրթված մարդիկ։

Օգոստոսի կողմից դեռ լրիվ չամրապնդված միապետու-

[71] Նույն տեղում, գիրք 6-րդ, 13։

Քյունը նրա հաջորդների օրոք անխուսափելիորեն մահու ու կենաց պայքարի պիտի բռնվեր օպոզիցիոն սենատական վերնախավի հետ։ Պայքարը պետք է լիներ դաժան, անխնա, որպեսզի իր բնում խեղդեր ներդասակարգային հակասությունը և ամբապնդեր ռազմական դիկտատուրան։ Իսկ այս անհրաժեշտ էր պայքարի մյուս ճակատում իրեն զենք՝ ուղղված դասակարգային հիմնական հակառակորդի՝ ստրուկների հոծ մասսաների և Իտալիայի ու պրովինցիաների բազմահազար աշխատավորների դեմ։

* * *

Ահա այսպիսի բարդ իրադրության պայմաններում է ապրել և գործել Կոռնելիոս Տակիտոսը։ Մուտքդ տեղեկություններ չունենք նրա ոչ ծննդավայրի և ոչ էլ ծննդյան ու մահվան տարեթվի մասին։ Ըստ ավանդության, Տակիտոսի ծննդավայրը Ումբրիայի Ինտերամնա քաղաքն է, ներկայիս Տերնի, որտեղ հետագայում՝ 1514 թ., կանգնեցվել է հռչակավոր պատմագրի արձանը։ Տակիտոսի ծննդյան թվականի մասին որոշ ակնարկներ կան իր աշխատություններում և իր մերձավոր բնկերոջ՝ Պլինիոս Կրտսերի նամակներում։ Այսպես՝ 79 թ. մ. թ. տեղի ունեցած Վեզուվի ժայթքման առթիվ Պլինիոս Կրտսերը գրում է, որ ինքը հեռվից ականատես է եղել բնության այդ ահավոր աղետին և որ նա այդ ժամանակ թևակոխել էր իր 18 տարին։ Տակիտոսին գրած իր մի այլ նամակում Պլինիոսը գրում է, որ նա համարյա հասակակից է Տակիտոսին, մի քանի տարով նրանից փոքր։ Այս ավյալներից կարելի է եզրակացնել, որ եթե Վեզուվի ժայթքման ժամանակ Պլինիոսը եղել է 18 տարեկան, ապա նա ծնվել է 61 թ. կամ 62 թ., իսկ Տակիտոսը, որը ըստ Պլինիոսի վկայության եղել է մի փոքր ավելի մեծ, պետք է ենթադրել, որ ծնվել է մոտավորապես 56 կամ 55 թվականին։ Թեպետ Տակիտոսի ընտանիքի մասին էլ որոշակի ոչինչ չի կարելի ասել, բայց մի քանի հանգամանքներ իրավունք են տալիս կռահելու, որ նա ծնվել է հեծյալի ընտանիքում։ Ստացել է հունական կրթություն։ Հա-

վանաբար ուսանել է Հռոմում նշանավոր Քվինտիլիանոսի հարտասանական դպրոցում։ Ծանոթ էր նաև հունական փիլիսոփայությանը, հարում էր ստոիկներին։

Տակիտոսը վաղ պատանեկության տարիներին երևան է բերում հարտասանության հակում. նա հաճախ Ֆորումում ունկնդրում էր Վեսպասիանոսի ժամանակվա հայտնի հռետորներ Մ. Ապրիի և Հուլիոս Սեկունդոսի ելույթները։ Իր առաջին աշխատության մեջ, որը կոչվում է «Ջրույց հռետորների մասին», Տակիտոսը ոգևորությամբ պատմում է, որ ինքը այդ երկու հռետորներին ոչ միայն ունկնդրում էր մեծ ուշադրությամբ դատարաններում և Ֆորումում, այլև նրանց տանը, և դեպի ատյանն ունեցած զարմանալի ծարավից մղված ուղեկցում էր նրանց հասարակական վայրերում, որպեսզի լիովին յուրացնի նրանց հառերը, բանավեճերը և «մեկուսացված արտասանության գաղտնիքները»։

Այս նպատակասլաց պարապմունքները և պատանու բնածին հռետորական ձիրքը, անշուշտ, ավելցին ցանկալի արդյունքը։ Պատանին շատ շուտով ձեռք է բերում շնորհալի հռետորի համբավ, աչքի ընկնելով իր հասակակիցների մեջ։ Նրա մտերիմ ընկեր Պլինիոս Կրտսերը գրում է Տակիտոսին ուղղած նամակներից մեկում. «Դեռևս վաղ պատանեկության տարիներին, երբ դու արդեն փայլում էիր հռչակով և փառքով, ես ցանկանում էի հետևել քեզ, լինել քեզ բոլորից ավելի մոտ... Կային շատ նշանավոր տաղանդներ, բայց դու ինձ թվում էիր այնպիսին, որին առավել չափով կարելի էր և պետք էր նմանվել»[72]։

Հայտնի է, որ հռետորական ձիրքն անտիկ աշխարհում կարևոր նախադրյալ էր քաղաքական կարիերայի համար։ Հռոմայեցիների մոտ հարտասանությունը ճանապարհ էր հարթում պետական պաշտոնների համար նույնիսկ կայսրության դարաշրջանում, թեպետ այդ ժամանակ վճռական դեր էր խաղում կայսեր բարեհաճ վերաբերմունքը։

Նույն բախտը վիճակվեց նաև Տակիտոսին։ Իր հռետորական տաղանդի շնորհիվ Տակիտոսը կարողացավ աչքի ընկնել

[72] Plin., Ep., VII.

քաղաքական կյանքում։ Այդ մասին նա իր «Պատմություններում» գրում է. «Ես չեմ ժխտում, որ սկզբում պատվավոր դիրքի հասա Վեսպասիանոսի ժամանակ, որ Տիտոսը բարձրացրեց այն, իսկ Դոմիցիանոսը էլ ավելի մեծացրեց իմ դիրքը»[73]։ Եվ իրոք 78 թ. (կամ 79 թ.) Տակիտոսը ընտրվում է քվեստոր, 81 թվականին՝ էդիլ (գուցե և ժողովրդական տրիբուն), 88 թվականին՝ պրետոր, 87 թվականին՝ կոնսուլ, իսկ 111—117 թթ.՝ Ասիայի պրոկոնսուլ։

Նելվայի ժամանակ դառնալով կոնսուլ և Տրայանոսի օրոք՝ Ասիայի պրոկոնսուլ, Տակիտոսը ուրախությամբ արձանագրում է, որ վերջացան արյունարբու բռնապետի՝ կայսր Դոմիցիանոսի կառավարման մղձավանջային տարիները, որ սենատը վերստին վայելում է հարգանք, ազատվելով իր անդամների կյանքի և գույքի նկատմամբ ունեցած մշտական երկյուղից։ Իր «Պատմություններում» նա ասում է, որ «Հիմա արդեն վերջապես մեր գարունը վերադարձավ։ Մենք օգտվում ենք մեր ժամանակների համար բացառիկ երջանկությունից՝ մտածելու, ինչ որ կամենում ես և ասելու, ինչ որ մտածում ես»[74]։

Այնուհետև Տակիտոսը թողնում է քաղաքական ասպարեզը՝ հանդես գալով մի քանի հաջող ճառերով և նվիրվում է գրական գործունեությանը։

Տակիտոսի գրական ստեղծագործության առաջին երկը կոչվում է «Զրույց հռետորների մասին», որտեղ Վեսպասիանոսի ժամանակաշրջանի չորս նշանավոր հռետորների՝ Մ. Ապրիոսի, Հուլիոս Սեկունդոսի, Վիպսան Մեսսալայի և Կուրիատ Մաաերնի միջև տեղի ունեցող զրույցի միջոցով հեղինակը խնդիր էր դրել պարզելու, թե ինչու համար կայսրության ժամանակաշրջանում հռետորական արվեստը անկում էր ապրում։ Տակիտոսը գալիս է այն եզրակացության, որ «մեծ պերճախոսությունը անխզելիորեն կապված է քաղաքական ազատության հետ, որ ժամանակները իսպառ փոխվել են սկսած այն պահից, երբ Օգոստոսը «խաղաղեցրեց» ճարտա-

[73] **Тацит,** Сочинения, том I, С-Пб, 1886, Истории, глава I, § I.
[74] *Նույն տեղում, գլուխ 1-ին, § 1։*

ասնությունը, ինչպես և մնացած ամեն ինչ», և նախկին հարատասանությունը՝ «ազատության սանը», անցել-գնացել է անվերադարձ, և որ հարատասանությունը արդեն չի համապատասխանում իր ժամանակի ոգուն։

Այնուհետև Տակիտոսը հանդես է գալիս երկու աշխատություններով՝ «Ագրիկոլայի կենսագրությունը» և «Գերմանիա» մենագրություններով, որոնք ավելի հասուն մտքի արգասիք են։ «Ագրիկոլայի կենսագրությունը» աշխատության մեջ Տակիտոսը նկարագրում է իր աներոջ՝ Հուլիոս Ագրիկոլայի կյանքն ու գործունեությունը, հատկապես նրա, որպես հռոմեական զորավարի սխրանքները Բրիտանիայում։ Աշխատության սկզբում և վերջում նա իր հարգալից խոսքն է ուղղում Ագրիկոլային և զայրույթ՝ Դոմիցիանոս կայսեր դեմ։ Աշխատության 44-րդ և 45-րդ գլուխներում Տակիտոսը մխիթարվում է նրանով, որ գոնե Ագրիկոլան իր անժամանակ մահվան հետևանքով չտեսավ Դոմիցիանոսի կատարած եղեռնագործությունները, նա «չտեսավ կուրիան պաշարված վիճակում և սենատով փակված սենատ։ Նա չտեսավ կոնսուլական կոչման տեր այդքան մարդկանց միանվագ կատորածը, և այդքան իվով անվանի կանանց փախուստը»[75]։ Իրեն հատուկ բուռն կրքով և սեղմ, պատկերավոր ոճով Տակիտոսը պատմում է Դոմիցիանոսի ահավոր չարագործությունները, որ նա կատարում էր «արդեն ոչ թե ընդմիջումներով և դադար տալով ու հանգստանալով, այլ առանց կանգ առնելու և ասես մեկ շընչով թեզդամահ անելով հանրապետությունը»[76]։ Ապա համեմատության մեջ դնելով Դոմիցիանոսին Ներոնի հետ, Տակիտոսը նշում է, որ «Ներոնը գոնե հեռացնում էր հայացքը. նա հրամայում էր կատարել մահապատիժներ, բայց չէր նայում դահիճին։ Դոմիցիանոսի ժամանակ ամենամեծ դժբախտությունը՝ տեսնելն էր և տեսանելի լինելը, քանի որ գրի էին առնվում մեր հառաչանքները, քանի որ բավական էր կայսեր դաժան հայացքը և դեմքի կարմրությունը, որով նա քողար-

[75] **Тацит,** Сочинения, том I, С.-Пб, 1886, Агрикола, глава 45.
[76] *Նույն տեղում, գլուխ 44։*

կում էր ամոթը, որպեսզի գունատեցնի այդքան մարդկանց գնքերը»[77]։

«Ագրիկոլայի կենսագրությունը» կրում է հռետորական երանգ և յուրատեսակ ձոն է, ուղղված իր աներոջը՝ Ագրիկոլային։ Սակայն երկի գլխավոր նշանակությունը նրա բնա-աշխարհագրական և ազգագրական տվյալներն են։ Հետաքրքիր է, որ հռոմայեցիները մինչ այդ շատ քիչ բան գիտեին Բրիտանիայի բնության և նրա բնակիչների մասին և նույնիսկ չգիտեին, թե Բրիտանիան կղզի՞ է արդյոք, թե ոչ։ Եվ միայն Տակիտոսի այս աշխատությամբ ճիշտ գաղափար կազմվեց Բրիտանիայի բնակլիմայական-աշխարհագրական պայմանների և բնակիչների մասին։

Տակիտոսի հետևյալ աշխատությունը «Գերմանիա» երկն է, զուտ ազգագրական աշխատության մի հիանալի նմուշ[78]։ Գրված է 98 թ.։ Մենագրությունը կազմված է երկու բաժնից։ Առաջին բաժնում խոսվում է Գերմանիայի տեղադրության և սահմանների մասին, երկրի հողի, ընդերքի, կլիմայի, բնակիչների, նրանց ծագման, հասարակական կարգի, կենցաղի, սովորույթների, դավանանքի և հաստատությունների մասին։ Այս երկում Տակիտոսը խոսում է գերմանացիների գյուղական համայնքի, տոհմական կարգերի քայքայման և նահապետական տարկության մասին»[79]։ Տակիտոսի փաստական նյութերը հիմք են ծառայում եզրակացնելու, որ գերմանական ժողովուրդն էլ մյուս ժողովուրդների նման իր պատմության արշալույսին ապրել է տոհմական կարգերով[80]։

Աշխատության երկրորդ բաժնում խոսվում է Գերմանիայում բնակվող ժողովուրդների, ինչպես և հարևան ժողովուրդների՝ գալլական, իլլիրիական, սլավոնական և ֆիննական ժողովուրդների ծագման մասին։ Դա կարևոր նշանակություն ուներ հռոմայեցիների համար, որոնք հաճախ ընդհարվում էին Հռենոսի և Դանուբի միջև ընկած երկրամասերում բնակվող ժողովուրդների հետ։

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները գիտական մանրազնին հետազոտման են ենթարկել գերմանացիների մինչդասակարգային հասարակությունը, այսպես կոչված ժողովուրդների մեծ գաղթի նախօրյակին։ Հին գերմանացիների պատմության հիման վրա կոնկրետ ձևով հիմնավորվում են Մարքսի, Էնգելսի, Լենինի դրույթները տոհմական համայնքի, նախնական համայնական հողային սեփականության և նրան հաջորդող հողի մասնավոր սեփականության և հասարակական դասակարգերի սաղմնավորման մասին։

1882 թ. նոյեմբերի 22-ին Ֆ. Էնգելսը գրում է Մարքսին. «Ես վերջերս գնեցի վերջապես «Գերմանական հնախոսության պատմարանների» լրիվ օրինակը», և ապա Էնգելսը հաղորդում է Մարքսին իր մի շարք դատողություններ հին գերմանացիների մասին։

1884 թ. լույս տեսավ Ֆ. Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» հռչակավոր աշխատությունը, որտեղ հեղինակը ուսումնասիրելով հին գերմանացիների պատմության սկզբնաղբյուրները, գերմանացիների պատմության օրինակով (մանավանդ հին գերմանացիներին հատկացված գլխում) լուծել է ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագման բարդ և գիտական մեծ հետաքրքրություն ներկայացնող պրոբլեմները։

Սակայն Տակիտոսը համաշխարհային հռչակ ձեռք բերեց շնորհիվ իր երկու աշխատությունների՝ «Պատմությունների» և «Տարեգրությունների»։ Վերջինս նա գրել է արդեն 60 տարեկան հասակում, իր ստեղծագործական ուժերի և մտավոր կարողությունների հասուն շրջանում։ Այս պատմական երկերում հանդես է գալիս նրա վառ տաղանդը, աղբյուրներից օգտվելու հմտությունը, լայն աշխարհայացքը, գրավոր խոսքի ճաշակը, ինչպես նաև մարդկային կրքերը վերլուծելու բացառիկ ընդունակությունը։ Դեռևս Պլինիոս Կրտսերը Տա-

[77] Նույն տեղում, գլուխ 45։

[78] Տակիտոսի «Գերմանիա» աշխատության համար «սկզբնաղբյուր է ծառայել Պլինիոս Ավագի «Գերմանական պատերազմները», որին վկայակոչում է նա իր «Տարեգրություններում» և «Պատմություններում»։

[79] Տակիտոսից մոտավորապես 150 տարի առաջ գերմանացիների տոհմական համայնքի մասին փաստական տվյալներով խոսել է Հուլիոս Կեսարը իր «Նոթեր գալլական պատերազմների մասին» աշխատության մեջ։

[80] Соч. **Корнелия Тацита,** том I, Германия, С—Пб, 1886, главы 13, 14, 15, 26.

կիտոսին գրած իր նամակներից մեկում անխախտ համոզմունք է հայտնում, որ նրա պատմական երկերը կլինեն անմահ։ Տակիտոսի ժամանակակիցի այս կանխատեսությունը իսկապես որ հետագայում հաստատվեց։

«Պատմություններն» ընդգրկում են Հռոմում 69 թ. մինչև 96 թ. տեղի ունեցած դեպքերը։ Աշխատությունը բաղկացած է 16 գրքից, որոնցից պահպանվել են առաջին 4-ը և հինգերորդ գրքի սկիզբը։ Գրված է մ. թ. 104—105 թթ. միջև։

«Տարեգրությունները» 16 գրքով ավելի ուշ, 117 թ. գրված աշխատություն է։ Ընդգրկում է վաղ պրինցիպատի սկզբնական շրջանը՝ Օգոստոսի վախճանից (14 թ. մ. թ.) մինչև 69 թ.՝ Հուլիոս Կլավդիոսների դինաստիայի վերջը։ «Տարեգրություններից» պահպանվել են առաջին 6 գրքերը, 5-րդ գիրքը հասել է ոչ լրիվ։

Այսպիսով, «Տարեգրությունները» և «Պատմությունները» կազմում են մի ամբողջություն, ընդգրկելով վաղ պրինցիպատի պատմությունը, սկսած Օգոստոսի վախճանից՝ 14 թ. (մ. թ.) մինչև 96 թ. Ներվայի գահակալության տարեթիվը։ Տակիտոսը մտադրվել էր գրելու նաև Ներվայի և Տրայանոսի դարաշրջանի պատմությունը, բայց հրաժարվելով, իր ողջ աշխատությունը նվիրեց անցյալ ժամանակաշրջանի պատմությանը։ Օգոստոսի պատմությունը Տակիտոսն, ըստ իր հայտարարության, որոշել է չշարադրել, որովհետև այն պատմել են «փայլուն տաղանդներ»։ «Հին Հռոմեական ժողովրդի բախտավորությունը և դժբախտությունը արդեն նկարագրված է անվանի պատմաբանների կողմից,—ասում է նա,—Օգոստոսի ժամանակների մասին նույնպես պատմել են շնորհալի մարդիկ, մինչև որ նրանց ստիպեց լռել արմատավորված շողոքորթությունը»[81]։ ...Տիբերիոսի, Կալիգուլայի, Կլավդիոսի և Ներոնի պատմությունը կեղծել են վախից՝ նրանց կենդանության ժամանակ, իսկ նրանց մահից հետո՝ նրանց հանդեպ ատած չմարող ատելությունից»[82]։ «Ահա թե ինչն է մղել ինձ փոքր ինչ պատմելու Օգոստոսի կառավարման վերջին շրջա-

[81] Летопись Кая Корнелия Тацита, перевод А. Кронеберга, М., 1858, ч. I, книга I, § I.

[82] Նույն տեղում։

նի մասին, ապա նաև Տիբերիոսի և մյուսների՝ առանց զայրույթի և կողմնապահության, որի համար ես չունեմ որևէ պատճառ»[83],—հայտարարում է Տակիտոսը։

Օգոստոսի մասին «փոքր ինչ պատմելու» իր մտադրությունն իրագործելիս Տակիտոսը «Տարեգրությունների» առաջին հատվածում դեմ է առնում հանրապետությունից կայսրության անցնելու կնճռոտ հարցին։

Իրեն հատուկ լակոնական ոճով նա արձանագրում է, որ երբ հանրապետությունը քաղաքացիական երկպառակությունների թուլացել էր, Օգոստոսը մնալով առանց հակառակորդի, կանգնեց տերության գլուխ, ընդունեց պրինցեպի կոչումը և սկսեց կառավարել հանրապետության բոլոր մասերը[84]։ «Պատրիկական մատծելակերպի այս վերջին հռոմայեցին[85],—ինչպես բնութագրում է Տակիտոսին Ֆ. Էնգելսը,—անհուն դառնությամբ ըմբռնում է, որ անհնարին է վերականգնել հանրապետությունը, որ, թերևս ամեն բան աշխարհում իր ժամանակն ունի և բարբերն էլ ժամանակի նման փոխվում են»[86], և, ասես, ակամայից հաշտվում է միապետության հետ, հուսահատությունից դառնում է միապետական։ Ատելով պրինցիպատը և նրան վերագրելով հասարակության չարիքների պատճառը, Տակիտոսը միաժամանակ խոստովանում է, որ խաղաղության և ընդհանուր անդորրի համար անհրաժեշտ է այդ հեղաշրջումը։ «Պատմությունների» գործող անձերից մեկի բերանով Տակիտոսն արտահայտում է իր քաղաքական համոզմունքը, թե ինքը «աստվածներից խնդրում է լավ կայսրեր, բայց հանդուրժում է նրանց, ինչպիսիք էլ որ լինեն նրանք»[87]։ Վատ կայսրերին հանդուրժելու անհրաժեշտությունը բխում է իր իսկ ստրկատիրական դասակարգի ինքնապաշտպանության բնազդից. ստրուկների և Իտալիայի ու պրովինցիաների աշխատավորական հոծ մասսաներից

[83] Նույն տեղում։

[84] Նույն տեղում։

[85] Ф. Энгельс, Бруно Бауэр и первоначальное христианство, К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XV, М., 1961, изд. II, стр. 310—311.

[86] Тацит, Летопись, ч. I, книга III, § 55.

[87] К. Тацит, Истории, С-Пб, 1886, книга IV, глава 8.

պաշտպանվելու միակ ելքը քաղաքական ուժեղ ռեժիմն էր։ Միայն ռազմական դիկտատուրան է ի վիճակի խաղաղություն հաստատել, թեպետ և այդ խաղաղությունը, սկսած Օգոստոսից, ձեռք բերվեց ազատության կորստի գնով։

Տակիտոսը անդրադառնալով պրինցիպատի և ազատության փոխհարաբերության հարցին շատ լավ ըմբռնում է, որ չպետք է փայփայել ազատությունը վերականգնելու հույսը։ Սակայն, ըստ նրա, Ներվային և Տրայանոսին հաջողվել է զուգորդել մինչև այդ իրարամերժ բաներ՝ միապետությունը և ազատությունը[88]։ Ներկայի պաշտամունքը՝ կապված փոթորկոտ անցյալը մոռանալու ցանկության հետ, լավ է արտահայտել Տակիտոսը, հակիրճ խոսքով բնորոշելով վաղ պրինցիպատի ժամանակաշրջանի արիստոկրատիայի տրամադրությունը. «նրանք գերադասում էին հաստատուն ներկան՝ անցյալից և անհաստատից»[89]։

Ընդունելով, որ հանրապետությունից կայսրության անցնելը պատմական անհրաժեշտություն էր, Տակիտոսը չկարողացավ վերլուծել այդ պատմական բեկման պատճառակցական կապը, պրինցիպատի սոցիալ-քաղաքական արմատները։ Այս առթիվ նա դատողություններ է անում քաղաքական տարբեր կարգերի մասին և հանգում է հետևյալ եզրակացության՝ «Կառավարման գործը միշտ գտնվել է կամ ժողովրդի ձեռքում, կամ արիստոկրատիայի և կամ, վերջապես, մեկ անձի ձեռքում։ Միայն տեսության մեջ է լավ, երբ միացնելով կառավարման բոլոր այս ձևերը, յուրաքանչյուրից ընտրում են լավագույն տարրերը, բայց գործնականում մենք այդ չենք հանդիպում, կամ եթե պատահում է, ապա չի կարող տեվական լինել»[90]։ Նույնպիսի .զգաստ մոտեցում է երևան բերում Տակիտոսը վերլուծելով կայսերական իշխանությունը պրինցիպատի ժամանակաշրջանում։ «Կայսրը պահպանելով հին մագիստրատուրաները, նրան թողեց իշխանության ըստ-

[88] **Կ. Тацит**, Агрикола, С-Пб, 1886, книга IV, глава 2.
[89] **Կ. Тацит**, Летопись, М., 1858, гл. I, книга I, § 2.
[90] Նույն տեղում, 4-րդ, § 33։

վերը միայն, իսկ ամբողջ փաստական ուժին տիրացավ ինքը»[91]։

«Եվ ահա,—դառնորեն եզրակացնում է նա,—մենք պետք է պայքարենք միօրինակության և ձանձրույթի դեմ, թվելով դաժան հրամաններ, անվերջ մահապատիժներ, մատնիչների կեղծ բարեկամություն, անմեղների կործանում, բարեկամների ուխտադրժություն և ընդհանրապես այնպիսի գործեր, որոնց վախճանը նույնն է»[92]։ Նա որոշակիորեն չի խոսում իր քաղաքական իդեալի մասին։ Մի քանի անուղղակի ակնարկներից կարելի է կռահել, որ իդեալական քաղաքական կարգն ըստ Տակիտոսի, եղել է անցյալում, հնագույն հանրապետության ժամանակաշրջանում, երբ իրրև թե թագավորում էին արդարությունը, առաքինությունը և հավասարությունը։

Տակիտոսը չկարողացավ թափանցել պրինցիպատի սոցիալ-քաղաքական էության մեջ և ըմբռնել, որ կայսեր և սենատի միջև չկար դասակարգային հակասություն, որ նրանց սոցիալական շահը ներդաշնակորեն միահյուսվում էր, նրանց պայքարի սլաքը հավասարապես ուղղված էր ստրուկների հոծ մասսայի և Իտալիայի ու պրովինցիաների աշխատավորության դեմ։ Ահա թե ինչու քաղաքական այս բեկումը Հռոմում կատարվեց առանց խոր, ցնցող հեղաշրջման, այլ աստիճանաբար, կոմպրոմիսի ուղիով։ Սենատն անհրաժեշտ էր կայսեր որպես հենակետ՝ հարկ եղած դեպքում պլեբսի և ստրուկների դեմ պայքարելու համար. սենատը հարմար զենք էր, որի միջոցով կարելի էր հակադեմոկրատական որոշումներ հանել առանց խախտելու հանրապետության հիմքերը։ Դրա համար կայսրը չպետք է ոտնահարի սենատի իրավունքները։ Տակիտոսը խրախուսում էր սենատին, երբ վերջինս իրեն պահում էր պատշաճ արժանապատվությամբ և, ընդհակառակը, խստորեն պարսավում, երբ նա երևան էր բերում ստրկահոգություն կայսեր նկատմամբ։ Իր այս վերաբերմունքը Տակիտոսն արտահայտում է Տիբերիոսի շրթներով, որը ամեն անգամ սենատի նիստից դուրս գալիս քստմնելից հումորով բա-

[91] Նույն տեղում, 3-րդ, § 60։
[92] Նույն տեղում, 4-րդ, § 33։

ցականչում էր. «ո՞վ մարդիկ, միշտ պատրաստ ստրկության անելու»[93]։

Տակիտոսը իր քաղաքական վարքագծով կարողացել էր հիանալիորեն հարմարվել իր ժամանակի ոգուն և նույնիսկ արյունարբու Դոմիցիանոսի կառավարման ահավոր տարիներին ոչ միայն պահպանեց իր կյանքը, այլև առաջ գնաց քաղաքական ասպարեզում։ Տակիտոսը Դոմիցիանոսի օրոք ընտրվում է պրետոր (պրետորը պատվավոր մագիստրատ էր Հռոմում՝ կոնսուլի կրտսեր պաշտոնակիցը)[94]։ Ըստ երևույթին նա հանդես է բերել քաղաքական լոյալություն, հաշտվողականություն, այլև, հավանաբար, նուրբ դիվանագիտություն, առանց որոնց Տակիտոսը Դոմիցիանոսի իշխանության դաժան տարիներին ոչ միայն չէր հասնի պետական բարձր պաշտոնների, այլև գուցե կյանքն էլ չկարողանար պահպանել։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ, ինչպես ինքն է վկայում, մարդիկ կորցրել էին խոսելու ընդունակությունը։ «Խոսելու ընդունակության հետ մենք կկորցնեինք նաև հիշելու ընդունակությունը, եթե մարդ կարողանար մոռանալ այնպես, ինչպես նա կարողանում է լռություն պահպանել...[95]։

Տակիտոսը ծագումով արիստոկրատ չէր, պատկանում էր ստրկատիրական վերնախավի մյուս շերտին՝ հեծյալներին, բայց նա ավելի հաջողությամբ, քան անտիկ պատմագիրներից որևէ մեկը, կարողացել է արտացոլել իր երկերում հռոմեական մեռնող արիստոկրատիայի աշխարհայացքը։ Ահա թե ինչու էնգելսը Տակիտոսին անվանել է «պատրիկական մտածելակերպի վերջին հռոմայեցի»։ Լինելով հին սենատորական արիստոկրատիայի լավագույն գաղափարախոսը, նա խիստ բացասաբար է արտահայտվում հռոմեական պոպուլյարների (ժողովրդական) «կուսակցության» գործիչների մասին. Գրակքոսներին և Սատուռնինոսներին նա անվանում է «պլեբսի զրգռիչներ»։ Նա ասում է, որ Գրակքոսներն իրենց որոշումներով ճանապարհ հարթեցին Գայոս Մարիոսի համար, իրենց կործանիչ օրենքներով ազատ հանրապետությունը վերածեցին բռնապետության և միլիոնների բարեկեցությունը վստահեցին մեկ մարդու կամայականությանը։

Խիստ բացասաբար է Տակիտոսի վերաբերմունքը դեպի պլեբսը, որը, ըստ նրա չի կարող հոգատար լինել պետության նկատմամբ, քանի որ նրա միակ հոգսը «ձրի հացն է և հանդեսները»։ Գյուղի և քաղաքի քայքայված ժողովրդական մասսաների՝ լյումպեն-պրոլետարների հաճախակի հուզումները լուրջ վտանգ էին ներկայացնում Հռոմի համար։ Եվ պրինցիպատի ուժեղ ռեժիմը անհրաժեշտ էր որպես մարտակ, ուղղված ժողովրդական հուզումների դեմ։ Այդ մտավախությունը պլեբսի և լյումպեն-պրոլետարիատի հաճախակի պոռթկումների նկատմամբ անտիկ պատմագրության մեջ ցայտուն կերպով արտահայտել է Տակիտոսը։ Իր երկերում նա արձանագրում է, որ ստրկատիրական վերնախավը հանրապետությունը զոհաբերից ստրկատիրական կարգը պահպանելու համար, որ ռազմական դիկտատուրայի միջոցով աշխատեց ահ ու սարսափի մեջ պահել բազմահազար ստրուկներին ու աշխատավորներին։

Ցավոք անտիկ պատմագիրները անուշադրության են մատնել հռոմեական պլեբսի կյանքն ու պայքարը և մենք խիստ կցկտուր տեղեկություններ ունենք այդ մասին։ Շատ հռոմեական պատմագիրների նման Տակիտոսն էլ Հռոմի պատմությունը շարադրելով արիստոկրատական տեսանկյունից, կայսրերին, արքունիքն ու սենատը ներկայացնում է որպես ժողովրդի պատմություն և արիստոկրատիայի ու կայսեր բոլոր արատներն ու քաղաքական այլասերվածությունը որակում որպես հռոմեական ժողովրդի բարքերի անկում։

Սակայն օժտված լինելով խորաթափանց մտքով, իրերի ու երևույթների էության մեջ խորանալու հմտությամբ, Տակիտոսը երբեմն անզգուշությամբ ևս է քաշում քողը, և իրերն ու դեպքերը հանդես են գալիս իրենց մերկ ճշմարտությամբ։ Վաղ պրինցիպատի տարիներին՝ 14—16 թթ. (մ. թ.) բռնկվեցին պանոնյան և գերմանական լեգեոնների ապստամբու-

[93] Նույն տեղում, մասն 1-ին, գիրք 3-րդ, § 65։

[94] Պրետորի գլխավոր պարտականությունն էր քաղաքում կարգ պահպանելը։ Այստեղից էլ բխում էր նրա քրեական և քաղաքացիական իրավասությունը, որը հետագայում դարձավ պրետորի հիմնական գործը։ Նրա առջևից սովորաբար գնում էին վեց լիկտոր։

[95] К. Тацит, Агрикола, С-Пб, 1886, глава 2.

թյունները, որոնց ահեղ ալիքն անցավ կայսրության վրայով, որպես գալիք մեծ աղետների ազդանշան։ «Տարեգրություններ»-ի 1-ին գրքի 16—52 հատվածները Տակիտոսը նվիրել է այդ ահավոր ապստամբության նկարագրությանը։ Նա մեծ վարպետությամբ պատկերում է լեգիոնների ցասումը և զինվորական հավաքում շարքային զինվոր Պերցենիոսի ելույթը. «Ինչո՞ւ ենք մենք սորուկների նման հնազանդվում մի քանի ցենտուրիոնի և էլ ավելի փոքրաթիվ տրիբուններին,—բուռն զայրույթով դիմում է նա զինվորներին,—բավական երկար համբերեցինք մեր փոքրոգության պատճառով։ Մենք՝ ծերերս ծառայել ենք ու մասնակցել ավելի քան 30—40 արշավանքների և համարյա բոլորս էլ խեղանդամ ենք դարձել։ Բայց, Հերկուլե՛սը վկա, վերջ չկա ծեծին ու վերքերին։ Ձմեռը՝ սառիր, ամառն՝ աշխատիր, կռվի ժամանակ՝ արյուն թափիր, խաղաղ ժամանակ՝ քաղցիր»[96]։

Ցնցող է, հուզիչ սոցիալական անարդարության պատկերը Պերցենիոսի ելույթում և Տակիտոսի հակիրճ, պատկերավոր նկարագրությամբ հանդես է գալիս իր օբյեկտիվ անողոքությամբ, հերքելով հետագա պատմաբանների տենդենցիոզ փաստարկումները ապստամբության զուտ պրոֆեսիոնալ բնույթի մասին։ Տակիտոսը լուսանկարչական ճշտությամբ երևան է բերում պաննոնյան և հռենոսյան լեգիոնների ապըստամբության բուն սոցիալական պատճառը, մեծ ծավալը, համախմբվածությունը և վտանգավոր բնույթը հռոմեական կայսրության համար[97]։

Տակիտոսը նույն ճշգրտությամբ ներկայացնում է և Գալլիայի ազատագրական շարժումը (21 թ. մ. թ.), որի պատճառը Գալլիայի բնակչության վրա դրված ծանր հարկերն էին։ «Գալլական քաղաքները,—ասում է Տակիտոսը,—ընկնելով անհատուցանելի պարտքերի տակ, սկսեցին խոռվություն բարձրացնելու... Բոլոր հավաքներում և ժողովներում նրանք սկսեցին գրգռիչ ճառեր ասել հարկերի մասին, բարձր տոկոսների ծանրության մասին, պետերի դաժանության և դո-

[96] Տե՛ս նույն տեղում, գլուխ 1-ին, § 17։

[97] Տե՛ս նույն տեղում, § 32։

ղության մասին»[98]։ Տակիտոսի վկայությունից բացահայտվում է, որ ապստամբությանը միացել էին Գալլիայի հարբուսահարված բազմաթիվ ցեղերն ու ժողովուրդները, և այն սորուկները, որոնք առանձնացված էին գլադիատորական մարտերի համար։ Դա պատահական երևույթ չէր Հռոմի համար, ինչպիսի շարժում էլ առաջանար Հռոմեական սորկատիրական հասարակության մեջ, սորուկներն անպայման կհարեին այդ շարժմանը, որպես պասիվ հենարան։

Վարպետորեն նկարագրելով Գալլական ժողովուրդների ահեղ ապստամբությունը, Տակիտոսը այնուհետև նույն պատկերավոր ոճով շարադրում է Թրակիայում, Նումիդիայում և այլ պրովինցիաներում ծագած ժողովրդա-ազատագրական շարժումները, ինչպես նաև բուն Իտալիայում մոլեգնող աշխատավորական մասսաների և սորուկների հուզումները, որոնց հետևանքով ավելի ու ավելի էին ձգվում ռազմական դիկտատուրայի սանձերը։

Խիստ արժեքավոր են Տակիտոսի «Տարեգրություններում» և «Պատմություններում» բերված փաստերը, որոնք լույս են սփռում պրինցիպատի դարաշրջանի սոցիալ-քաղաքական պատմության վրա։ Տակիտոսի ուշադրությունից չեն վրիպում նաև սորուկների ապստամբությունները։ Այսպես, «Տարեգրությունների» 4-րդ գրքում նա պատմում է 24 թ. (մ. թ.) Իտալիայում ծագած հովիվ-սորուկների ապստամբության մասին, որը գլխավորում էր պրետորիական կոհորտի նախկին զինվորներից մեկը՝ Տիտոս Կուրտիսիոսը։ Ապստամբությունն ծագեց Բրունդիսում։ Այդ մասին Տակիտոսն արձանագրում է. «Կուրտիսիոսը բացահայտ կոչեր ուղարկեց խորն անտառներում բնակվող դաժան ու վայրի սորուկներին։ Տիբերիոսն անհապաղ ռազմական ջոկատներ տրամադրեց, որոնք անակնկալ հարձակումով ճնշեցին ապստամբությունը և Կուրտիսիոսին ու գլխավոր գրգռիչներին ուղարկեցին Հռոմ, որտեղ արդեն սարսափից սկսել էին դողալ, մտածելով սորուկների ահռելի բազմության և ազատ մարդկանց պակասող թվի մասին»[99]։

[98] Տե՛ս նույն տեղում, գլուխ 3-րդ, § 400։

[99] Նույն տեղում, 4-րդ § 27։

Խիստ գնահատելի է Տակիտոսի վերոհիշյալ խոստովանությունը, որը լույս է սփռում հռոմեական հասարակության արկածախրական էության վրա։ Ինչպես շատ դեպքերում, այնպես էլ այստեղ, մենք Տակիտոսին պարտական ենք լուսանկարչական ճշտությամբ, թեպետ և սխալ մեկնաբանումով, իրական փաստերը վերարտադրելու գործում։

Տակիտոսի պատմահայեցողության համար բնորոշ է պատմության մեջ անհատի դերի գերագնահատումը։ Նա պատմական իրադարձություններում գլխավոր դերը վերագրում է անհատներին՝ կայսրերին և քաղաքական ականավոր գործիչներին, կարևոլով նրանց իրենց ծնող պայմաններից, իրենց հասարակական-սոցիալական միջավայրից։ Տակիտոսի աշխարհայացքը վերծ չէ պրովիդենցիալիզմի տարրերից։ «Տարեգրություններում» այդ մասին նա ասում է. «Ես չեմ կարող որոշել, թե մարդկային գործերն արդյո՞ք ընթանում են ճակատագրի օրենքի և անհրաժեշտության համաձայն, թե՞ մի դիպվածի են ենթարկված»[100]։

Այս դեպքումներն արդյունք են Տակիտոսի դրույթներում գիտական պատմահայեցողության բացակայության։ Նա սկզբից մինչև վերջ մնաց հոգեբան-պատմաբան։ Երևույթների մեջ պատճառակցական կապն ըստ Տակիտոսի առաջանում է բացառապես անհատների և խմբերի հոգեբանական և բարոյական շարժառիթներից։ Ըստ Տակիտոսի, հանրապետության ընկավ, որովհետև լավագույն քաղաքացիները՝ կառավարող նոբիլները կորցրին իրենց առաքինությունն ու արիությունը (virtus)։ Նրանք ընկղմվեցին ագահության եսասիրության և անառակության մեջ և բարոյական անկման այս վիճակում անկարող եղան կառավարել երկիրը։ Ուրեմն, ըստ Տակիտոսի, պատմության շարժիչ ուժը բարոյա-հոգեբանական մոմենտն է, որին նա մեծ տեղ է տվել իր պատմական երկերում։

Տակիտոսը լուրջ գիտնականին հատուկ բծախնդրությամբ է վերաբերվել դեպի իր աշխատանքը. «Տարեգրությունները» և «Պատմությունները» նա գրել է բազմապիսի աղբյուրների ուսումնասիրության և սեփական դիտողությունների հիման վրա։

Տակիտոսի փաստերը մեծ մասամբ արժանահավատ են։ Նա շատ խնամքով և զգուշությամբ է օգտվել իր բազմազան աղբյուրներից, օր. Պլինիոս Ավագի (Սեկունդոսի) «Պատմություններից», որը չի պահպանվել, պատմաբաններ Կլուվիոս Ռուֆոսի, Ֆաբիոս Ռուստիկի, աշխատություններից, որոնցից Տակիտոսը նյութեր է քաղել Ներոնի և Կլավդիոսի ժամանակաշրջանի պատմության համար։ Տակիտոսը իր ձեռքի տակ ունեցել է մեմուարային գրականության շատ նմուշներ, հավանաբար Տիբերիոսի նոթերը, Ագրիպպինայի՝ Ներոնի մոր նոթերը, Կլավդիոսի նոթերը, Կորբուլոնի մեմուարները, քաղաքական պամֆլետներ։ Տակիտոսը օգտվել է նաև ամենօրյա լրագրերից, սենատական նիստերի տեղեկատուներից։ Այնուհետև, պետք է նկատի ունենալ, որ Տակիտոսը անձամբ շըփվել է իր ժամանակի գործիչների հետ, որոնցից կարող էր շատ բան լսել, ապա և ականատես է եղել շատ դեպքերի և, վերջապես, սկսած Վեսպասիանոսի կառավարման վերջին տարիներից, հանդիսացել է իր ժամանակի հասարակական-քաղաքական գործիչներից մեկը։

Տակիտոսը մեծ մասամբ չի մատնանշում օգտագործած աղբյուրները, բայց դրա փոխարեն անորոշ եղանակով ասում է, «ոմանք պատմում են», «բոլոր գրողները համաձայն են», «ինչպես տեսնում ենք մի քանի գրողների մոտ»։ Իր հավաքած հարուստ նյութերը Տակիտոսը վերամշակել է թե ոճական և թե քաղաքական իմաստավորման տեսակետից։

Այդ առնչությամբ խիստ նշանակալի է նրա վերջին աշխատությունը՝ «Տարեգրությունները»։ Այն նեղ իմաստով տարեգրություն չէ։ պահպանելով ժամանակագրական կարգը, Տակիտոսը մեծ հմտությամբ խմբավորել է նյութերը և իր օրինակելի հակիրճ ոճով տվել մարդկային կրքերի պատկերներ, համեմել է խորհրդածություններով, կատարել է երբեմն միշտ բնդհանրացումներ, հանդես բերելով խորաթափանց մտքի մեծ ուժ ու կարողություն, լայն մտահորիզոն, դրական մեծ հաշակ և նուրբ, դրավիչ հումոր։ Հոգեբանական վերլու-

[100] Նույն տեղում, VI, § 22։

ծությունը նրա ոչ մի աշխատության մեջ չի հասել այդպիսի խորության և չի արտահայտել այդպիսի ուժեղ բարոյական պարտավանք բռնության և կամայականության նկատմամբ, ինչպես «Տարեգրություններում»։ Բավական է որպես օրինակ բերել Տիբերիոսի կողմից կայսերական իշխանությունն ստանձնելու քաոսնելի տեսարանը, որը այնքան պատկերավոր նկարագրում է Տակիտոսը։ «Վախճանվեց Օգոստոսը,— պատմում է Տակիտոսը,—Սենատը, կոնսուլները, հեծյալները խնդրում են Տիբերիոսին՝ ընդունելու պետության կառավարման ղեկը, Տիբերիոսը հրաժարվում է կեղծ համեստությամբ, պատճառաբանելով, թե «միայն ասավածային Օգոստոսի հանճարն էր ի վիճակի ընդգրկելու հռոմեական պետության այդ վիթխարի մեծությունը»[101]։ Կոնսուլները, նոբիլները, հեծյալները շարունակում էին աղաչել Տիբերիոսին՝ մրցելով իրար հետ սիրաքարշության մեջ և «ով ավելի անվանի էր իր դիրքով և հարստությամբ, առավել շատ էր հազնում դիմակը։ Աշխատելով չերևալ չափազանց ուրախ մի պրինցեպսի մահվան առթիվ և չափազանց տխուր՝ նորի գահ բարձրանալու առթիվ. նրանք խառնում էին արցունքն ու ուրախությունը, ափսոսանքն ու շողոքորթությունը»[102]։

Եվ երբ սենատորներից Ապինիոս Գալլոսը անզգուշորեն առաջարկեց Տիբերիոսին՝ ստանձնելու գոնե հանրապետության մի մասի կառավարումը, եթե ամբողջը կառավարելը վեր է իր ուժերից, Տիբերիոսը մի պահ վարանելով, գնում է պատշաճ պատասխանը. «Վայել չէ իմ համեստությանը ընտրելու կամ հրաժարվելու մի մասից, երբ ես կցանկանայի ազատվել ամբողջից»։ Ապինիոս Գալլոսը նրա դեմքի արտահայտությունից նկատելով, որ նա վիրավորվել է, շարունակեց.

— Ես հարց ավեցի ո՛չ թե նրա համար, որպեսզի տրոհվի անբաժանելին, այլ որպեսզի դու սեփական խոստովանությամբ համոզվես, որ հանրապետությունը մեկ ամբողջական մարմին է և պետք է կառավարվի մեկի կողմից»։ Եվ նա գովասանքներ ավելացրեց իր ասածին Օգոստոսի հասցեին և հիշեցրեց Տիբերիոսին նրա սեփական հաղթանակները և հիանալի գործերը։ Բայց այդ չմեղմացրեց Տիբերիոսի զայրույթը[103]։

Այս «քաղաքական կատագերգությունը» Տիբերիոսին պետք էր, որպեսզի նա ստիպի սենատին խաղաղ հանապարհով անկցիայի ենթարկելու նոր, կայսերական իշխանությունը։ Իսկ դա սկզբունքային կարևոր հարց էր, եթե նկատի ունենանք միապետության խախուտ վիճակը պրինցիպատի առաջին տասնամյակներում։ Այնուամենայնիվ, անխուսափելի անհրաժեշտություն դարձավ դաժան միջոցներով ճնշել ժամանակ առ ժամանակ իրեն զգացնել տվող սենատորական արիստոկրատիայի ընդդիմությունը։ «Տարեգրությունների» 4-րդ և 6-րդ գրքերում Տակիտոսը նկարագրում է «Մեծության վիրավորանքի» առթիվ մեծ չափերի հասած նողկալի հետապնդության պրոցեսները և մոլեգնած տեռորի հեղձուցիչ մթնոլորտում դրսևորված այլանդակ բարքերը։ Արդարացի զայրույթ են առաջացնում անվանի հռոմայեցի Տիդիոս Սաբինոսի դեմ հարուցված կեղծ մեղադրանքը, դանապան հնարքներով նրան դավադրության մեջ մեղադրելը և սենատ քարշ տալը և ապա, դավադրական գործունեության «հաստատումից» հետո մահապատժի ենթարկելը հակառակ նոր տարվա հանդիսավոր օրվան։ «Իսկ Սաբինոսը,—պատմում է Տակիտոսը,—որքան թույլ էր տալիս ծածկված ղլուխը և բռնադատիչների կողմից սեղմված կոկորդը,—բացագանչում էր. «Ահա թե ինչպես է սկսվում տարին»... Եվ բոլորը սարսափահար փախչում էին խուսափելու համար Սաբինոսի հայացքից ու խոսքերից։ Փողոցները և հրապարակները դատարկվեցին։ Ոմանք վերադառնում էին, նորից երևում, վտանգավոր համարելով նույնիսկ իրենց վախը»[104],—դառնությամբ արձանագրում է Տակիտոսը։

Ինչքա՜ն ցնցող և նողկալի էր մի այլ դատավարություն։ Հռոմեական հեծյալ Վիբուլեն Ագրիպպան դատավարության ժամանակ լսելով մատնիչների իր հասցեին ուղղված կեղծ մեղադրանքները հենց սենատում թույն է խմում։ Չնա-

[101] **Тацит**, Летопись, I, § 11, 12.
[102] Նույն տեղում, I, § 37։
[103] Նույն տեղում, I, § 12։
[104] Նույն տեղում, IV, § 70։

յած զրան լիկտորները նրան վնդան են քարշ տալիս և արդեն մեռած վիճակում մահվան օղակն են անցկացնում նրա վզից[105]։

Տիբերիոսի, Կալիգուլայի, Ներոնի, Դոմիցիանոսի ահաբեկչական վարչակարգի դաժան պատկերները Տակիտոսի հիանալի պատմական երկերում արդարացի զայրույթ են առաջացնում դեպի բռնակալությունն ու ճնշումը։ Գնահատելի են Տակիտոսի հակիրճ խոսքի մեծ ուժը, ներկայացրած ոչբերգական տեսարանների ցնցող տպավորությունը և նկարագրած ժամանակաշրջանի վառ ու կենդանի շարադրանքը։ Տակիտոսը լիովին հասնում է իր նպատակին. նա ոչ միայն հարբուղատորեն բազմազան աղբյուրների հիման վրա շարադրում է վաղ կայսրության պատմությունը, այլև բուռն ատելություն ու նողկանք է առաջացնում դեպի ճնշումն ու բռնակալությունը, դեպի ստորաքարշությունը և կեղծիքը, դեպի մարդկային իրավունքների ոտնահարումը բռնակալների կողմից։ Նրա «Տարեգրությունները» անցյալի խորքից մեզ են հասցնում հեղինակի ջերմ հումանիզմի խոսքը ընդդեմ ճնշման ու հարբսատահարման, ընդդեմ բռնության ու կեղեքման։

Տակիտոսի երկերի անդիմադրելի թովչանքը նրան դարձրել են անտիկ պատմագրության լուսատուներից մեկը, որի անշեջ ցոլքը թափանցելով միջնադարյան խավարը, դարերի խորքից հասել է մեզ, վառ պահելով անտիկ պատմագրության ջահը։

Անտիկ շատ գրողների նման Տակիտոսն էլ իր երկերում կանգ է առել հայերի և Հայաստանի վրա։

Վաղ կայսրության դարաշրջանում Հռոմի արևելյան քաղաքականության անկյունաքարը շարունակում էր մնալ Հայաստանը։ Կայսրերը, քաջ գիտակցում էին սահմանամերձ Հայաստանի ստրատեգիական նշանակությունը և նուրբ դիվանագիտությամբ աշխատում էին այդ երկիրը գցել իրենց ազդեցության ոլորտը։ Սակայն քնած չէր և Պարթևստանը, որը իր հերթին ամուր կառչել էր Հայաստանին՝ ձգտելով այն

[105] Նույն տեղում, VI, § 40։

դարձնել ամուր հենակետ Հռոմի դեմ մղած իր դարավոր պայքարում։

Տակիտոսը տուրք է տվել Հռոմի արևելյան նվաճողական քաղաքականությանը և արձագանքել է Հռոմում ստեղծված ներքողական պատմագրությանը, որը մեծարում էր Հռոմի զավթողական ձգտումները և լռության մատնում Հռոմի համար աննպաստ փաստերը։ Լինելով հիանալի պատմաբան Հռոմում տեղի ունեցող իրադարձությունների շարադրման գծով, Տակիտոսը զգալիորեն զիջում է, որպես արևելյան պրովինցիաների և Հռոմի արևելյան քաղաքականության պատմաբան։ Նրա աշխարհայացքի բնորոշ կողմերը՝ հանրապետության ժամանակաշրջանի գովաբանումը, կայսրների դաժան վարչակարգի սպանիչ քննադատությունը՝ ուղղված կայսերական իշխանության ճնշման և բռնությունների դեմ, այս բոլոր մարդասիրական գծերը խամրում են, անհետանում, երբ Տակիտոսն անդրադառնում է Արևելքի և մասնավորապես Հայաստանի իրադարձություններին։ Ավելին, զլանալով մոտիկից ուսումնասիրելու երկու հզոր պետությունների աքցանի մեջ ընկած հայ ժողովրդի հերոսական պայքարի պատմությունը, Տակիտոսը ելնելով անտիկ երկրների սարկատիրական գաղափարախոսության դիրքերից, «բարբարոսներ» է անվանում հայերին[106] և խեղաթյուրելով պատմական ճշմարտությունը, ի հաճույս Հռոմի շահախնդրությունների է հերյուրում հայերի հասցեին։ Այսպես, «Տարեգրությունների» 2-րդ գրքի 56-րդ հատվածում Տակիտոսը ստորացնելու համար հայերին հնեակյալ որակումն է տալիս մեր հինավուրց մշակույթի տեր ժողովրդին... «Դա հնուց ի վեր երկերեսանի ժողովուրդ է թե՛ իր բնավորությամբ և թե՛ իր աշխարհագրական դիրքով։ Հայաստանը,—գրում է նա,—ընդարձակ տարածության վրա սահմանակից է մեր պրովինցիաներին և տարածվում է հեռու, մինչև մարերի աշխարհը։ Այդ ժողովուրդը գտնվում է երկու հզոր պետությունների միջև և անընդհատ պատակավում է հռոմեացիների դեմ տածած ատելությունից և պարթևների նկատմամբ ունեցած նախանձից»[107]։

[106] **Тацит**, Летопись, ч. I, М., 1858, книга II, §§ 3, 4.

[107] Նույն տեղում, II, § 56։

Լուսիյան մասնակով իրերի իսկական վիճակը և մեղանչելով պատմական իրականության դեմ, Տակիտոսը իր պատմական մեկնաբանումների մեջ երևան է բերում հռոմեական միապետական գաղափարախոսության դիրքորոշում։ Սակայն Տակիտոսի այս բնութագրմանը միանգամայն հակառակ բնորոշում են ավելի հայերին և Հայաստանին անտիկ այլ պատմաբաններ. օրինակ, տաղանդավոր հույն պատմագիր և փիլիսոփա Մեստրոդորոս Սկեպսացին։ Մեստրոդորոսի մասին հիշատակում է Սարաբոնը իր «Աշխարհագրության» 13-րդ գրքում (1-ին, պար. 55) որակելով նրան որպես բազմագիտուն մարդ ու հռետոր, և Պլուտարքոսը իր «Զուգակշիռքում», Լուկուլլոսին նվիրված հատվածում։ Վերոհիշյալ և այլ մատենագրական աղբյուրների վկայությամբ Հայաստանը Տիգրան Մեծի ժամանակաշրջանում (95—56 թթ. մ. թ. ա.) դարձել էր հելլենիստական տիպի հզոր պետություն։ Նրա մայրաքաղաքները՝ Արտաշատը և Տիգրանակերտը վերածվում են Արևվելքում հելլենիստական մշակույթի կարևոր կենտրոնների։ Եվ ի թիվս մի շարք գիտնականների, որոնք հալածվել էին Հռոմից, Մեստրոդորոս Սկեպսացին էլ գալիս և հաստատվում է Հայաստանում։ Այդ մասին մենք ունենք Սարաբոնի և Պլուտարքոսի վկայությունները։ Ապրելով Հայոց Արքունիքում, 71 (մ. թ. ա.) Մեստրոդորոսը գրել է Տիգրան Բ-ի պատմությունը, որը համարվել է փայլուն և տաղանդավոր աշխատություն, բայց, ցավոք, չի պահպանվել։ Այդ միևնույն բախտին են արժանացել հելլենիստական շատ աղբյուրներ, որտեղ պատմական ճշմարտության դիրքերից արձանագրվել են Հռոմի համար աննպաստ փաստեր։ Այսպես, օրինակ, չեն պահպանվել նաև պատմական կարևոր երկերը Հերակլիդեսի, Տևկրոսի, Ապոլլոնիդեսի, Դիոփանեսի և ուրիշ շատ շատերի[108], որոնք հաճելի չէին հաղթանակած Հռոմի վերնախավին՝ փաստերի իրական շարադրման և ընդհանրացման պատճառով։ Անտիկ նման հավաստի սկզբնաղբյուրների վկայությունները հերքում են հայ ժողովրդի և նրա կուլտուրական մակարդակի մասին Տակիտոսի տենդենցիոզ բնորոշումները։

[108] Տե՛ս Հ. Մանանդյան, Տիգրան երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 8։

Այսպես օրինակ, Պլուտարքոսը իր «Զուգակշիռքում» Կրասոսին նվիրված հատվածում վկայում է, որ Արտավազդ 2-ի ժամանակ, դեռևս 1-ին դարում (մ. թ. ա.) «հաճախ կազմակերպվում էին հունական ներկայացումներ, իսկ ինքը՝ Արտավազդը գրում էր նույնիսկ ողբերգություններ, ճառեր և պատմական աշխատություններ, որոնց մի մասը պահպանվել է»[109]։ Նույն հատվածում Պլուտարքոսը վկայում է, որ Հայաստանում 1-ին դարի կեսերին (մ. թ. ա.) գոյություն է ունեցել թատրոն։ Իսկ մի ուրիշ տեղ, Լուկուլլոսի կենսագրության մեջ Պլուտարքոսը նշում է Տիգրանակերտի հարստության և գեղեցիկ շենքերի մասին և վկայում, որ «մայրաքաղաքում կային բազմաթիվ դերասաններ, որոնց Տիգրանը հրավիրել էր զանազան տեղերից՝ իր նորակառույց թատրոնի բացման համար»[110]։

Պլուտարքոսը հաղորդում է, որ «Տիգրանի արքունիքում էր ապրում նաև հույն Ամֆիկրատես Աթենացին», որը արհամարանքով մերժել էր Սելևկյանների հրավերը, ասելով, թե՝ «անոթը փոքր է դելֆինի համար» և մեկնում է Հայաստան, Տիգրան Մեծի արքունիքը[111]։ Հայաստանում նա ապրեց մինչև իր մահը, և «մեծ մարդկանց մասին» գրեց մի աշխատություն, որտեղ շարադրել է նաև Տիգրան Մեծի կենսագրությունը։

Այնուամենայնիվ, Տակիտոսը մնում է կարևոր աղբյուր հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար և նրա արձանագրած հարուստ փաստերը որոշ լույս են սփռում I դարի հայոց պատմության վրա։ Այսպես, օրինակ, Տակիտոսը պատմում է, որ Օգոստոս կայսեր օրոք նրա խորհրդի որոշմամբ Տիբերիոսը 20 թ. (մ. թ. ա.) հոր հրամանով մեծ զորքով շարժվում է Արևելք, նպատակ ունենալով զահընկեց անել հայոց արքա Արտաշես Բ-ին և գահը տալ նրա եղբորը՝ Տիգրան Գ-ին, որը Ալեքսանդրիայից տարվել էր Հռոմ որպես պատանդ։ Զուգակցելով կոպիտ ուժը հռոմեական փորձված

[109] Плутарх, Сравнительные жизнеописания, т. II, Красс, § 33.

[110] Տե՛ս ավյալ աշխատության 73 էջը։

[111] Плутарх, Сравнительные жизнеописания, т. II, Лукулл, XXIX, М., 1963.

դիվանագիտության հետ, Օգոստոսին հաջողվեց խաղաղ ճանապարհով լուծել հայկական հարցը. «Հայաստանը այդ ժամանակ գտնվելով պարթևների և հռոմեացիների միջև, անհավատարիմ էր՝ Անտոնիոսի ոճրագործության հետևանքով,— արձանագրում է Տակիտոսը, անհավատարմություն որակելով հայերի արդարացի վրեժխնդրությունից բխած ցասումը։ Բանն այն էր, որ լեգատ Անտոնիոսը բարեկամության քողի տակ Հայաստանի թագավոր Արտավազդին հրավիրում է իր մոտ և նենգորեն սպանում է։ Արտավազդի որդին՝ «Արտաշեսը իր հոր հետ կապված հիշողության պատճառով մեզ թշնամացած էր,—հաղորդում է Տակիտոսը,—նա պաշտպանեց թե՛ իր անձը և թե՛ պետությունը Արշակունիների ուժերով»[112]։

Տակիտոսի այս խոսքերից պարզ է դառնում, որ Արտաշես Բ-ն ազատվել էր հռոմեական կախումից և վերականգնել Հայաստանի քաղաքական անկախությունը։ Սակայն, ինչ խոսք, Օգոստոսը չէր կարող հանդուրժել այդ բանը, և իրեն հատուկ նենգ միջոցներով՝ ոսկով և դիվանագիտության օգնությամբ սպանել տվեց Արտաշես Բ-ին։ Քողարկելով Հռոմի խարդավանքները Արևելքում և մասնավորապես Հայաստանում, Տակիտոսը Հայաստանի իրադարձությունների առթիվ արձանագրում է. «Մերձավորների նենգությամբ կատարված Արտաշեսի սպանությունից հետո, Հայաստանին կայսեր կողմից տրվեց Տիգրանը... Ոչ Տիգրանի, ոչ նրա որդիների տիրապետությունը երկարատև չէր»[113] ավարտում է իր լակոնիկ խոսքը Տակիտոսը։

Պետք է նշել, որ Տևտոբուրգյան աղետից հետո (9 թ. մ. թ.) վաղ պրինցիպատի կայսրերը հասկացան, որ բացահայտ ռազմական գործողություններից պետք է խուսափել թե՛ Հյուսիսում և թե՛ Արևելքում։ Հռոմի պատմության բեկման այդ ժամանակաշրջանում կայսրերը ըմբռնում էին, որ ներքին հակասությունների խիստ սրումը պետության մեջ պահանջում էր ողջ ուժերի լարում՝ երկրի ներքին քաղաքականության հարցերը լուծելու համար։ Բացի երկրի ներքին տագ-

[112] Тацит, Летопись, М., 1858, книга II, § 3.

[113] Նույն տեղում։

նապալից վիճակից պետության արտաքին քաղաքականության հարցերի լուծման գործում արգելք էր հանդիսանում Հռոմեական «բանակի ոգին»։ Լատիֆունդիալ ստրկատիրական պետության զարգացման հետևանքով աստիճանաբար անհետանում քայքայվում էին մանր և միջակ հռոմեական բաղաքացիները, ապա նաև իտալիկները։ Ստրկատիրական սիստեմի հետ կապված այս տեղաշարժը բացասաբար անդրադարձավ բանակի կազմի վրա։ Հարկադրված, բանակի հնչող մեծամասնությունը հավաքագրում էին պրովինցիանների բնակիչներից, իսկ ավելի ուշ՝ նաև բարբարոսի վարձկաններից։ «Այսպիսի բանակով արդեն անկարելի էր մղել հաշոր հարձակողական պատերազմներ... Բանակի այլասերումը ստիպեց պետությանը սահմանափակվել պաշտպանությամբ, որը սկզբում դեռևս կրում էր հարձակողական բնույթ, իսկ հետո դառնում է ավելի պասսիվ, մինչև որ վերջապես հարձակումների մեջ նախաձեռնությունն անցնում է «բարբարոսներին»[114]։

Այնուամենայնիվ, 58—62 թթ. Հռոմը իր նշանավոր զորավար Կորբուլոնի միջոցով ռազմական գործողություններ ծավալեց Արևելքում՝ Հայաստանը ի վերջո հպատակեցնելու նպատակով։ Սակայն Հռոմի բոլոր ջանքերն ապարդյուն անցան. հայկական և պարթևական զորքերի հաջող ռազմական գործողությունները, պարթևների թագավոր Վաղարշ I-ի դիվանագիտական բանակցությունները Կորբուլոնի հետ և գլխավորապես՝ հայ ժողովրդի հերոսական պայքարը հանուն իր երկրի անկախության, հզոր պատվար հանդիսացան Հռոմի ոտնձգությունների դեմ։

Այս ժամանակաշրջանի բուռն իրադարձությունների և հատկապես՝ Կորբուլոնի Հայաստան կատարած արշավանքների պատմության համար խիստ կարևոր աղբյուր է Տակիտոսը։ Ներոնի արևելյան քաղաքականության և Կորբուլոնի Հայաստան կատարած արշավանքների շարադրման հիմքում Տակիտոսը դրել է Կորբուլոնի նոթերը։ Այդ նոթերի գոյության մասին վկայում են Պլինիոս Ավագը և Տակիտոսը։ Ըստ Պլի-

[114] К. Маркс и Ф. Энгельс, Собр. соч., т. XV, ч. I, стр. 362—369.

նիոսի, Կորբուլոնի հուշերը (նոթերը) ոչ թե ինքնակենսագրություն են, ինչպես են համարում ոմանք, այլ սենատին ուղղված հաշվետվություններ իր ռազմական գործողությունների մասին, որոնք միաժամանակ բովանդակում են ընդարձակ տեղագրական տեղեկություններ Արևելքում իր արշաված երկրների վերաբերյալ: Տակիտոսը այս հաշվետվություններն ընդգրկել է հինգ տարեգրական բնույթի պատմվածքների մեջ:

Չնայած այն մեծ համակրանքին, որ նա տածում էր դեպի Կորբուլոնը, Տակիտոսը որպես ուշիմ պատմաբան, կարողանում է երբեմն վեր հանել Կորբուլոնի նոթերում տեղ գտած կեղծիքը և սխալները:

50—60 թվականներին Հայաստանի համար մղված պատերազմական դեպքերը շարադրելիս Տակիտոսը օգտվել է նաև Ներոնի ժամանակաշրջանի պատմագիրներից՝ Կլուվիոս Ռուֆոսից և Պլինիոս Ավագից:

Այսպիսով, կարելի է հաստատապես նշել, որ Տակիտոսը Ներոնի արևելյան քաղաքականության պատմությունը շարադրելիս օգտվել է երեք ախբյուրներից՝ Կորբուլոնի նոթերից, Կլուվիոս Ռուֆոսի հաղորդումներից և Պլինիոս Ավագի «Պատմություններից»:

Տակիտոսը իր «Տարեգրությունների» 13-րդ գլխի 34-րդ հատվածում կանգ է առնում հայկական պատերազմի վրա. «Թեպետ Հայաստանի համար պարթևների և հռոմեացիների միջև ձգձգված պատերազմը մինչև այժմ դանդաղ էր ընթանում,—ասում է նա,—բայց այս տարվա սկզբին սուր բնույթ ընդունեց, որովհետև Վաղարշը թույլ չէր տալիս, որ իր եղբայր Տրդատը զրկվի թագավորությունից, որը ինքն էր նրան տվել, կամ թե Քշնամու ձեռքից այն ընդունի իբրև նվեր: Իսկ Կորբուլոնն էլ կարծում էր, որ հռոմեական ժողովրդի վեհությանն արժանավայել էր,՝ որ վերադարձվեն Լուկուլլոսի և Պոմպեոսի երբեմնի նվաճած երկրները: Ընդամին ուխտադրուժ հայերը իրենց մոտ հրավիրում էին թե մեկ և թե մյուս կողմի զորքերին: Իրենց երկրի տեղադրությամբ և բարքերի նմանությամբ ինչպես և բնավորությամբ հայերն ավելի մոտ էին պարթևներին. նրանք կապված էին նաև խնամիական կապերով: Բացի այդ, ազատության գաղափարից զուրկ լինելով, նրանք ավելի սիրով էին հարում դեպի այդ (պարթևների) երկրի սարկությունը»[115]: Նույն աշխատության 12-րդ գրքի 50-րդ հատվածում ևս Տակիտոսը Հայաստանն անվանում է «պատճան երկիր», իսկ հայերին՝ «սարկության սովոր ժողովուրդ»:

Մեղանչելով պատմական ճշմարտության դեմ, Տակիտոսը երկու հզոր պետությունների միջև ահեղ գոտեմարտի բռնված հայ ժողովրդին «սարկահոգի» և «ազատության անծանոթ» է որակում, իսկ հայերի վարքագիծը՝ ուխտադրուժ: Հայերը սահմանված էին խուսանավել երկու ախոյանների միջև, նրանց այդ վարքագիծը բխում էր դառն իրականությունից:

Հայերը պարտիզանական հյուծող մարտեր են մղում հռոմայեցիների դեմ, բայց Կորբուլոնին հաջողվում է շնորհիվ գերազանց ռազմական ուժերի և պատակոիչ քաղաքականության, գրավել Վոլանդ ամրոցը, որը ըստ ակադեմիկոս Հ. Մանանդյանի գտնվում էր Արտաշատ քաղաքի մոտ[116]: Տակիտոսը վկայում է, թե ինչպիսի մեծ և ընտիր բանակով էր Կորբուլոնը արշավել և պաշարել Արտաշատը. «Միջ ինից ընթանում էր երրորդ լեգիոնը, ձախ կողմից՝ վեցերորդը, կենտրոնում՝ տասներորդ լեգիոնի ընտիր մասը, զումակը գնում էր շարքերի միջով, թիկունքն ապահովում էր հեծելազորը: Նրանց հրամայված էր հարվածել հակառակորդին մոտ տարածության վրա, բայց երբեք չհետապնդել: Մայրուղուն թևերի վրա գտնվում էին օժանդակ հետևակը, նետաձիգները և մնացած հեծելազորը»[117]:

58 թ. (մ. թ.) քաղաքն անձնատուր եղավ: Բայց չնայած դրան Կորբուլոնը կրակի մատնեց և հիմնահատակ կործանեց հելլենիստական կուլտուրայի հոչակաբեր կենտրոն Արտաշատը, գայրույթ առաջացնելով հայ ժողովրդի մեջ: Ամենուրեք ուժեղացավ պարտիզանական շարժումը, որը համատարած բնույթ ստացավ լեռնային շրջաններում: Տակիտոսը արդա-

[115] Тацит, Летопись, М., 1858, книга XIII, § 34.

[116] Տե՛ս Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Ա, Երևան, 1945, էջ 335:

[117] Тацит, Летопись, книга XIII, § 40.

բացնում է Կորբուլոնի բարբարոսությունը և գտնում է, որ «հռոմայեցիները անբավարար զորք ունեին, որպեսզի կարողանային այն բաժանել կայազորի և գործող բանակի միջև և քաղաքը պահել իրենց իշխանության տակ»[118]։ Ավելին, քաղաքի կործանումը ի վերուստ աստվածների կողմից կանխորոշված համարելով, նա այդ առթիվ պատմում է հրաշքի մասին, կապված Արտաշատի հրկիզման և կործանման հետ։ «Այն ամենը, ինչ գտնվում էր դրսում, վառ լուսավորված էր արևով։ Իսկ պարսպի ներսում հանկարծակի ամեն ինչ ծածկվեց սև ամպերով և այծակնահար եղավ, կարծես զայրացած աստվածներն էին հրամայում քաղաքը մատնել կործանման։ Այդ բանի համար Ներոնին ողջունեցին, որպես իմպերատորի, սենատը որոշեց հանդիսավոր կերպով շնորհակալ լինել աստվածներին։ Կայսեր պատվին կանգնեցրին արձաններ և հաղթական կամարներ։ ... Առաջարկեցին տոնական հանդիսավոր օրերի թվին ավելացնել այն օրը, երբ ձեռք բերեցին այդ հաղթանակը»[119]։ Ահա, թե որքան մեծ էր Արտաշատի գրավման և ընդհանրապես Հայաստանի դեմ տարած հաղթանակի նշանակությունը։

«Տարեգրությունների» 14-րդ գրքում Տակիտոսը պատմում է Կորբուլոնի դեպի Տիգրանակերտ կատարած արշավանքի և քաղաքի գրավման մասին։ Այստեղ ևս նա չի մոռանում ամբաստանել հայերին։ Նա գրում է. «Կորբուլոնը չէր կորցնում զգոնությունը, որովհետև գիտեր, թե ինչքան դյուրափոխոխ է այդ ժողովուրդը. որքան որ նա վտանգի դեպքում երկչոտ է, այնքան էլ պատեհ դեպքերում՝ նենգ»[120]։ Հակասելով իր իսկ խոստմանը՝ զրելու առանց զայրույթի և կողմնապահության, Տակիտոսը Արևելքին, այդ թվում նաև Հայաստանին, վերաբերող հարցերում տուրք է տվել Հռոմի տերկատիրական վերնախավի նվաճողական ձգտումներին։ Նա խիստ գեղազարդել է այդ վերնախավի դրածո Կորբուլոնի կերպարը։ Անտեսելով նրա զավթողական նպատակները Հայաստանում, Արևվելքի ժողովուրդներին կողոպտելու և Հռոմին հպատակեց-

[118] Նույն տեղում, գիրք XIII, § 41։
[119] Նույն տեղում, գիրք XIII, § 41։
[120] Նույն տեղում, գիրք XIV, § 23։

նելու ձգտումը, Տակիտոսը «Տարեգրությունների» 13-րդ գրքում նշում է այն խանդավառ ոգևորությունը, որով սենատորները ողջունեցին Ներոնի կողմից Կորբուլոնի նշանակումը՝ Հայաստանը հպատակեցնելու։ Տակիտոսը տոգորված է մեծ համակրանքով դեպի Կորբուլոնը և նշում է, որ Կորբուլոնի նշանակումով «Կարծես թե ասպարեզ բացվեց խիզախումնեբի համար»[121]։

Տակիտոսը հիացմունքով շարադրում է, թե նա բանակում կարգապահությունը վերականգնելու համար ինչպիսի դաժան միջոցառումների էր դիմում։ Տակիտոսը գտնում է, որ Կորբուլոնը հին հռոմեական զորահրամանատարի իդեալական կերպարն է։

Սակայն ժամանակ առ ժամանակ Տակիտոսի մեջ արթնանում է բարեխիղճ պատմաբանի քննական միտքը, և նա բացահայտում է Կորբուլոնի փառասիրությունը և հաշվենկատությունը։ Այսպես, 15-րդ գրքում Տակիտոսը գրում է «Մարտերը հետաձգվեցին, որպեսզի Կորբուլոնը վտանգի չենթարկի այդքան տարիների ընթացքում իր ձեռք բերած փառքը»[122] (խոսքը Գերմանիայում իր զորահրամանատարությամբ ձեռք բերված հաջողությունների մասին է)։ Եվ ապա Տակիտոսը հիշեցնելով, որ Հայաստանը պաշտպանելու համար Կորբուլոնը պահանջել էր լրացուցիչ զորք ու հատուկ հրամանատար, և Հռոմը ուղարկել էր Կեսենիուս Պետուսին, ավելացնում է, թե Կորբուլոնը չէր շտապում Պետուսին օգնության գնալու «որպեսզի վտանգների աճման զուգընթաց աճեր իր օգնության փառքը»[123]։ Եվ ապա, անաչառության դիրքերից հնչելով, Տակիտոսը եզրակացնում է, որ Կորբուլոնի վրա էր ընկնում մեղքի և անհաջողության մի մասը, որովհետև Կորբուլոնը նրան չէր զգուշացրել վերահաս վտանգի մասին, և «Պետուսը իր բանակի հինգերորդ լեգիոնը շարունակում էր պահել հեռավոր Պոնտոսում, իսկ մնացած լեգիոնները թուլացրել էր, զինվորներին անխիղճ տրվող արձակուրդներով, մինչև որ լսեց, որ Վաղարշը շարժվել է մեծ ու կատաղի զոր-

[121] Նույն տեղում, գիրք XIII, § 8։
[122] Նույն տեղում, գիրք XVI, § 6։
[123] Նույն տեղում, գիրք XXV, § 6։

գով»[126]։ Պարտության մատնվելով Վաղարշից, Պետուսը օգնության խնդրեց Ասորիքում գտնվող Կորբուլոնից, որը, սակայն օգնությունը դիտավորյալ կերպով ուշացրեց։ Պետուսը ընկնելով պարթևական օղակի մեջ, բանակցություններ սկսեց Վաղարշ Ա-ի հետ, և Ծոփքի սահմանի մոտ՝ Հռանդեայում 62 թ. մ. թ. կնքվեց հռոմեացիների համար ամոթալի հաշտություն։ Պատմելով հայկական և պարթևական զորքերի հաջող ռազմական գործողությունների մասին Տակիտոսը խոստովանում է, որ «լուր է պատվում, թե լեգիոններին անց են կացրել լծի տակով»[125]։ Նույն տեղում նա պատմում է, որ «Պետուսը հռոմեացիների ճամբարի առջևից հոսող Արսանիա (Արածանի) գետի վրա կամուրջ գցել տվեց, պատճառաբանելով, թե այդ կամուրջը նահանջի ճանապարհ պետք է դառնա իրենց համար, բայց պարթևները որպես ապացույց իրենց տարած հաղթանակի, գրավեցին կամուրջը»[126]։ Տակիտոսն այնուհետև պատմում է հռոմեացիների մեծ շուքով կազմակերպված ռազմական արշավանքի ողբալի վախճանի մասին, Հայաստանից հռոմեական պարտված զորքի փախուստի գրաված ամրությունների, զորքի ու պաշարեղենի հանձնման մասին, հիշում Պետուսի հանդիսավոր երդումը դրոշակների առաջ, թե այսուհետև ոչ մի հռոմեացի մուտք չի գործի Հայաստան[127]։

Հետագայում Կորբուլոնը փորձեց բարձրացնել հռոմեական զորքի պատիվը. նոր, թարմ ուժերով և արտակարգ լիազորություններով 63 թ. նա շարժվեց հայ-պարթևական զորքերի դեմ և Մելիտենեի մոտ անցավ եփրատը իր լավագույն չորս լեգիոններով, սակայն ակնկալածը չիրականացավ. ավերվեցին միայն Հռոմին թշնամի հայ ազնվականներից մի քանիսի ամրոցները։ 62 թ. կնքվեց հաշտության պայմանագիր, որի համաձայն Հայաստանի գահին պիտի նստեր Արշակունիների տոհմից Տրդատը և վերջինս իր թագը պետք է ստանար Հռոմում՝ Ներոնից։ Եվ 66 թ. ըստ պայմանագրի,

[124] Նույն տեղում, XV, § 100։
[125] Նույն տեղում, XV, § 15։
[126] Նույն տեղում, XV, § 15։
[127] Նույն տեղում, XV, § 16։

Հռոմ եկավ Տրդատը իր տիկնոջ՝ թագուհու և երեխաների հետ, 3000 հայ ու պարթև հեծյալներից բաղկացած շքախմբով և հռոմեական հատուկ զորամասով։ 66 թ. Հռոմի Ֆորումում շքեղ հանդիսավորությամբ կատարվեց թագադրությունը։ Սակայն Հայաստանի նկատմամբ Հռոմի գերիշխանությունը ձևական էր. Տակիտոսի հաղորդած հարուստ փաստերը վկայում են, որ Օգոստոսի արևելյան քաղաքականությունը և այդ քաղաքականության անկյունաքար հանդիսացող հայկական հարցը Ներոնի ժամանակ նույնպես չլուծվեց։ Զախողվեց հայկական գահի վրա հռոմեական դրածոների միջոցով Հայաստանում հռոմեական ազդեցության տարածման քաղաքականությունը։

Ինչպես Տակիտոսն է վկայում, Հայաստանի համար երկու պետությունների մղած պայքարն ավարտվեց կոմպրոմիսով[128]։ Դա միաժամանակ քաղաքական հավասարակշռություն ստեղծեց Արևելքում՝ ընդհուպ մինչև Տրայանոս կայսեր արշավանքները։

ԴԱՅՈՍ ՍՎԵՏՈՆԻՈՍ ՏՐԱՆՔՎԻԼԼՈՍ.—Վաղ պրինցիպատի դարաշրջանում ռազմական դիկտատուրայի միջոցով ժամանակավորապես ճնշվեցին ստրուկների ելույթները, գյուղի և բաղաքի պլեբսի տագնապալի հուզումները, վերջացավ քաղաքացիական արյունահեղ պատերազմը։ Իտալիայի և պրովինցիաների հասարակական մտքի վրա սկսեց գերիշխել այն համոզումը, թե ուժեղ իշխանության ներքո ստեղծված խաղաղությունն ավելի լավ է, քան ազատությունը, որն իր հետ բերում է ամբոխի սանձարձակ կամայականությունները։ Հանրապետության իդեալները խամրում էին։ Տիրող ստրկատիրական վերնախավի գաղափարախոսներին այժմ հուզում է լավագույն միապետ ունենալու հարցը։ Այսպես, օրինակ, հույն նշանավոր հռետոր և փիլիսոփա Դիոն Խրիսոստոմոսն ասում է, որ լավագույն միապետը պետք է լինի Զևսի կողմից ընտրված ամենահմտասուն և ամենաարդար մարդը, որի գլխավոր հոգսը իր հպատակների բարեկեցությունն է[129]։

[128] Նույն տեղում, գիրք XVI (գաղվածքներ), § 23, 24։
[129] Դիոն Խրիսոստոմոսը (Ոսկեբերան), (մոտ 40—112 թթ.) հին հույն

Պրինցիպատի դարաշրջանի գաղափարախոսության այս հատկանիշը իր արտահայտությունն է գտնում նաև պատմագրության մեջ. երևան են գալիս կայսրերին նվիրված ներբողներ և կենսագրություններ։ Այդ գործը ստանձնում են կայսրերի հատուկ հովանավորությունը վայելող մտավորականները (օր. Պլինիոս Կրտսերը Սվետոնիոսը)։ Ներբողներում և կենսագրություններում բացակայում է պատմական դեպքերի հաջորդական շարադրանք, պատմական կուռ տեսակետ։ Կայսրերի անձնավորությունները չեն ներկայացվում պատմական իրադրության պայմաններում, պատմական պրոցեսի զարգացման որոշ շրջանակում։ Հեղինակները արհեստականորեն կենսագրական նյութերը բաժանում են ըստ հատվածների. օրինակ, գրվագներից մեկն ընդգրկում է կայսրերի հասարակական գործունեությունը, մյուսը՝ անձնական կյանքը, կայսերական արքունիքը, այլ հատվածում խոսվում է կայսեր ֆիզիկական և հոգեկան հատկանիշների մասին։ Հատվածներից յուրաքանչյուրը կարծես մեկուսացված կղզյակ լինի, մյուսներից տրոհված. ամբողջ շարադրանքը չի ներկայացնում միաձույլ ամբողջություն, կարծես, առանձին տեղեկությունների անսիստեմ կուտակում է։ Ընթերցողներին գրավելու նպատակով հեղինակներն իրենց կենսագրական տեղեկությունները համեմում են անեկդոտներով, բամբասանքներով, անվայել կուրյոզներով։

Կենսագրական գրականության այս բոլոր գծերը ցայտուն կերպով հրևան են գալիս նրա գլխավոր ներկայացուցչի՝ Գայոս Սվետոնիոս Տրանքվիլլոսի «Տասներկու կեսարների կենսագրությունները»։

Սվետոնիոսի մասին ազատ կենսագրական տվյալներ են պահպանվել։ Իր աշխատության մեջ կան ինքնակենսագրա-

Հռետոր է, ծնվել է Բյութանիայի Պրուսա քաղաքում։ Ուսանել է Հռոմում։ Սերվելով պրովինցիական վերնախավից, որը լիովին ենթարկվել էր Հռոմի տիրապետությանը, հանդիսացել է կայսերական «արդար» իշխանության ջատագովներից մեկը։ Վայելում էր Տրայանոս կայսեր հովանավորությունը և նրա օրոք մեծ հռչակ է ձեռք բերում։ Խրիսոստոմոսի ճառերը խիստ կարևոր աղբյուր են I դարի և II դարի սկզբի արևելյան պրովինցիաների պատմության համար։

կան մի քանի թռուցիկ ակնարկներ, ինչպես և Պլինիոս Կրտսերի կողմից նրան ուղղված նամակներում մի քանի տեղեկություններ։ Սվիդասի[130] բյուզանդական բառարանում մենք գտնում ենք Սվետոնիոսի աշխատությունների ցուցակը։ 1950 թվականին Աֆրիկայում հայտնաբերված մի արձանագրության մեջ հշավում են նրա պետական ծառայության մի քանի դրվագները։

Սվետոնիոսի ծննդյան և մահվան վերաբերյալ ստույգ տեղեկություններ չկան։ Հավանաբար՝ ըստ իր ակնարկների՝ ծնվել է մոտ 70-ական թվականների սկզբին և ապրել է մինչև 160 թվականները։ Պատկանում է հեծյալների դասին։ Հայրը եղել է լեգիոնի տրիբուն։ Սվետոնիոսը ծնվել և ապրել է Հռոմում, սովորել է ընդունված կարգով՝ նախ քերականի մոտ և ապա հարտասանական դպրոցում։ Ուսումն ավարտելով ընդգրկվել է Պլինիոս Կրտսերի խմբակի մեջ, որն այդ ժամանակ համարվում էր հռոմեական մշակույթի կենտրոններից մեկը։ Պլինիոսը համակրանք էր տածում դեպի երիտասարդ բանաստերը, որից ինքը 10 տարով մեծ էր, և 100 թվականին ընտրվելով կոնսուլ, իր հովանավորության տակ է առնում նրան։

Շնորհիվ Պլինիոս Կրտսերի հատուկ հովանավորության, Սվետոնիոսի առջև բացվում է գրական աշխատանքի լայն ասպարեզ։ Ադրիանոս կայսեր օրոք, որը փայլուն և բազմակողմանի կրթության տեր մարդ էր, Սվետոնիոսն ընդունվում է կայսերական գրասենյակ՝ «գիտության գործերով»։ Այդ առթիվ նրան է հանձնվում գրադարանների վերահսկողությունը։ Այնուհետև Սվետոնիոսը ստանում է «գրագրության խորհրդականի» բարձր պաշտոնը, այլ խոսքով դառնում է կայսեր անձնական քարտուղարը։ Այդ պաշտոնը հնարավորություն է տալիս նրան ազատ մուտք ունենալու կայսերական գաղտնի դիվանները և նյութեր քաղելու իր հետագա աշխա-

[130] Սվիդասն ապրել է X դարում՝ Բյուզանդիայում։ Կազմել է միջնադարյան ծավալուն բացատրական բառարան, որը բյուզանդական մշակույթի կարևոր հուշարձաններից մեկն է։ Բառարանում տրված են հատուկ անունների և անտիկ ու վաղբյուզանդական դպրության արտահայտությունները։ Բառերի բացատրությունը տրվում է հեղինակների գործերից մեջբերված բնագրային քաղվածքներով։

տությունների համար։ Հիմնվելով նախորդ պատմիչների աշխատությունների և արխիվային հարուստ նյութերի վրա այդ տարիներին նա գրեց իր «Տասներկու կեսարների կենսագրությունները», նվիրելով պրետորիական գվարդիայի պրեֆեկտ Սեպտիցիոս Կլարին, որին ծանոթ էր դեռևս Պլինիոս Կրտսերի խմբակից, իսկ վերջինիս մահվանից հետո Կլարը դարձավ իր նոր հովանավորը։ Աշխատության սկզբում նա զետեղել է մի ներբող՝ ուղղված իր նոր հովանավորին, սակայն այդ ձոնը մեզ չի հասել, որովհետև Սվետոնիոսի աշխատության սկիզբը կորել է։

122 թ. Ադրիանոս կայսեր հրամանով Սվետոնիոսը պաշտոնանկ է արվում. պատճառը կապված է արքունական մի ինչ-որ մութ ինտրիգի հետ, որը մեզ անհայտ է։ Սվետոնիոսը այդ ժամանակ 50 տարեկան էր։ Թեպետ նրա կյանքի վերջին տարիների մասին տեղեկություններ չունենք, բայց Սվիդասի թվարկված Սվետոնիոսի աշխատությունների քանակը վկայում է, որ նա վտարանքից հետո երկար է ապրել, գուցե մինչև 140—150 թթ.։ Սվիդասի թվարկված Սվետոնիոսի աշխատությունները բազմապիսի են և բազմաժանր, նրանք վերաբերում են թե՛ գրողների և, թե՛ հետերաների կենսագրություններին, Ցիցերոնի տեսությանը և մարմնական թերություններին, հռոմեական մագիստրատուրաներին և այլն։ Բայց քանի որ այդ աշխատություններն անհայտ են մեզ, ապա մենք Սվետոնիոսին համարում ենք մատենագիր, հիմք ունենալով մեզ հասած նրա միակ աշխատությունը՝ «12 կեսարների կենսագրությունները»։

Աշխատությունն ընդգրկում է կայսրերի կենսագրությունները սկսած Հուլիոս Կեսարից մինչև Դոմիցիանոս։ Հեղինակը պարզ, կենդանի լեզվով զանազան տեղեկություններ է հաղորդում կայսրերի մասին, որոնց մեջ տեղ են գտել թե՛ արժեքավոր փաստեր, թե՛ անվայել անեկդոտներ և թե՛ պալատական բամբասանքներ։ Սվետոնիոսի աշխատության հիմնական արժեքը կազմում են վավերագրական հարուստ նյութերը պրինցիպատի դարաշրջանի կայսրերի մասին։ Այդ բարձրարժեք նյութերի կողքին Սվետոնիոսը արձանագրում է պատմական լուրջ նշանակությունից զուրկ փաստեր։

Չունենալով Տակիտոսի փայլուն տաղանդը, Սվետոնիոսը հետու էր պրինցիպատի պատմության օրենքները մեկնաբանելու ձգտումից. նա իր առաջ համեստ խնդիր էր դրել՝ տալ կայսրերի գործունեության գնահատականը։ Դա ոչ թե կայսրության, այլ կայսրերի պատմություն է։ Հարազատ մնալով իր սոցիալական միջավայրին, իր ժամանակի գերիշխող մտայնությանը, Սվետոնիոսը համոզված էր, որ կայսրության բախտը ամբողջովին կախված է կայսրերի բարի և չար կամքից, ուստի նրանց կենսագրության բոլոր մանրուքները Սվետոնիոսի համար բացառիկ կարևոր հետաքրքրություն են ներկայացնում։ Նրա մոտ բացակայում են դեպքերի միջև եղած ներքին կապը, վերլուծությունն ու ընդհանրացումները։ Բացակայում է պատմական ֆոնը։ Սվետոնիոսը չի արձանագրում Հռոմում և պրովինցիաներում կատարված իրադարձություններին։ Օրինակ, Ներոնի օրոք տեղի ունեցած արևելյան ծանր պատերազմի մասին ոչ մի խոսք չի ասվում, որովհետև արևելյան բանակի գլխավոր զորահրամանատարը՝ Դոմիցիոս Կորբուլոնը ոչ մի առնչություն չուներ արքունիքի և կայսերական ընտանիքի հետ։ Սվետոնիոսը նպատակ չուներ ըստ էության շարադրել պատմական իրադարձությունները, այլ հաղորդել միայն այն մասին, թե ինչ մասնակցություն կամ վերաբերմունք է ունեցել այս կամ այն կայսրը այդ իրադարձությունների ժամանակ։

Չնայած այն հանգամանքին, որ Սվետոնիոսը կայսրերի կերպարը տալիս է պատմական իրադրությունից կտրված և հարևանցիորեն է հաղորդում նրանց ժամանակաշրջանի պատմական իրադարձությունները, հաճախ երևան չի բերում քննադատական մոտեցում և, նրա դատողությունները հաճախ զուրկ են պատմական ըմբռնումից,—այնուամենայնիվ, իլլյուստրատիվ բնույթ կրող նրա աշխատության մեջ երբեմն երևան են գալիս պատմա-քննադատական մտքի առկայծումներ։ Օրինակ, «Տասներկու կեսարների կենսագրություններում» Կալիգուլային նվիրված հատվածում հեղինակը մանրամասնորեն քննարկում է Կալիգուլայի ծննդավայրի մասին եղած հակասական տվյալները, հակադրվում է Պլինիոս Ավագի փաստարկմանը և ապա հենվելով պետական վավերագրի՝

acta populi (ժողովրդական ակտեր) վկայության վրա, հանգում է համապատասխան եզրակացության[131]։ Իհարկե, քննարկված պրոբլեմը ըստ էության լուրջ հետաքրքրություն չի ներկայացնում, իսկ այստեղ արժեքավոր է հարցի հետազոտման Սվետոնիոսի քննական մեթոդը։

Նույնպիսի քննադատական վերաբերմունք է երևան բերում հեղինակը Տիբերիոս կայսեր նվիրված հատվածում, որտեղ պատմում է Օգոստոսի կողմից Տիբերիոսին գահաժառանգ նշանակելու մասին։ Այդ առթիվ նա կանգ է առնում Օգոստոսի և նրա որդու՝ Տիբերիոսի լարված հարաբերությունների վրա, պատմում, որ Օգոստոսը հաճախ կշտամբում էր Տիբերիոսին՝ իր դաժան, մոայլ բնավորության համար, որ հաճախ Օգոստոսը ընդհատում էր իր ուրախ և անբռնազբոսիկ խոսակցությունը, հենց որ լսում էր Տիբերիոսի ոտնաձայները։ Ապա բերում է արքունիքում տարածված բամբասանքն այն մասին, թե Օգոստոսը Տիբերիոսին որդեգրելով, նպատակ ուներ ցուցադրել իր և որդեգրվածի միջև եղած մեծ տարբերությունը, որպեսզի հետագայում է՛լ ավելի մեծարեն իրեն։

Սվետոնիոսը երևան է բերում նաև երևույթներին զգաստ մոտենալու իր կարողությունը և քննական միտքը, որ երբեմն առկայծում է նրա շարադրանքում։ «Այնուամենայնիվ,— ասում է նա,— ես չեմ կարող հավատալ, որ այդպիսի զգույշ և խիստ շրջահայաց կառավարողը այդքան պատասխանատու հարցում վարվեր այդքան անմտորեն։ Ոչ, ես ենթադրում եմ, որ նա չափեց-կշռեց Տիբերիոսի բոլոր արժանիքներն ու թերությունները և գտավ, որ նրա արժանիքները ավելի ծանրակշիռ են, մանավանդ, որ նա ժողովրդի առջև երդվել էր որդեգրել Տիբերիոսին՝ ի բարօրություն պետության, և նամակներում մի քանի անգամ արտահայտվել էր նրա մասին, որպես փորձված զորավարի և հռոմեական ժողովրդի միակ նեցուկի»[132]։

Ի հաստատումն իր դրույթի Սվետոնիոսը բերում է Տիբերիոսին ուղղված Օգոստոսի ջերմ նամակները. «Ո՛ղջ լեր, իմ ամենասիրելի՛ Տիբերիոս։ Յանկանում եմ, որ դու բախտավոր

[131] **Гай Светоний Транквилл,** Жизнь двенадцати цезарей, М., 1966, Калигула, § 8.

[132] *Նույն տեղում, Տիբերիոս, XXI, § 2։*

կռվես ինձ համար։ Ողջ լեր, իմ ամենասիրելի բարեկամ։ Երդվում եմ իմ երջանկությամբ, ամենաքա՛ջ մարդ և ամենաբարեխիղճ զորավար։ Ես կարող եմ միայն գովել քո գործողությունները ամառային արշավանքում, սիրելի՛ Տիբերիոս»[133]։

Իր քաղաքական հայացքներով Սվետոնիոսը միապետական էր։ Նրա պատմա-քաղաքական կոնցեպցիան ինքնատիպ չէ. այն արտացոլում է իր ժամանակի տեսակետները կայսրերի մասին՝ Նեռնգ, չարագործ Տիբերիոսի, խեղճ Կալիգուլայի, սանձարձակ Ներոնի և Դոմիցիանոսի և ուրիշ կայսրերի մասին։ Այս ավանդական կերպարները հանդիպում են նաև Տակիտոսի և Դիոնի երկերում։ Սակայն այս հանրահայտ կերպարները Սվետոնիոսը կարողացել է վարպետորեն պատկերացնել և կայսրերին ներկայացնել վառ ու կենդանի, իրենց բնորոշ գծերով։

Հավատարիմ մնալով իր ժամանակաշրջանի տեսակետներին, Սվետոնիոսը թեպետ ժխտում էր պրինցեպսի իրավունքը իրեն «տեր» և «աստված» անվանելու, ինչպես այդ անում էին Կալիգուլան և Դոմիցիանոսը, բայց այնուամենայնիվ, ընդունում էր կայսերական իշխանության աստվածային ծագումը։ Սովորական մահկանացուները պետք է պաշտեն աստվածներից ուղարկված տիրակալին։

Ըստ Սվետոնիոսի, ժողովրդի նկատմամբ կայսրերի իդեալական վերաբերմունքի օրինակ են հանդիսանում Անտոնինոսները։ Նա ճշմարիտ է համարում Ներվային, Տրայանոսի և Ադրիանոսի վարքագիծը։ Բարեգործական ձեռնարկումներին (կերակրումներ, տեսարաններ, աղքատներին՝ հող, երեխաներին՝ նպաստ և այլն) խոշոր նյութական միջոցներ տրամադրելով հանդերձ Անտինինոսները ժողովրդին խափա՛ռ զրկել էին քաղաքական իրավունքներից։ Ձեւականորեն այդ դինաստիայի կայսրերը մատչելի էին ժողովրդին, բայց իրականում ամենայն դաժանությամբ ճնշում էին ժողովրդական հուզումները, ինչպես նաև կրոնական ուսմունքների, հատկապես հրեական մեսիանիզմի քարոզիչներին։ Այդ առնչությամբ միանդամայն արդարացնելով Անտոնինոսների հակաժողովրդա-

[133] *Նույն տեղում XXI, § 4։*

կան քաղաքականությունը, Սվետոնիոսը Հռոմից հրեաներին արտաքսելը Կլավդիոսի ծառայությունն է համարում, իսկ քրիստոնյաներին հալածելը՝ Ներոնի։

Նա խրախուսում է կայսրերի դաժան քաղաքականությունը և վայրագ միջոցառումները պրովինցիաներում ծագած ապըստամբությունների նկատմամբ։

Պրինցեպսների կողմից պրովինցիաներին ցույց տրված «հոգատարությունը» Սվետոնիոսը համարում է կայսրերի անժխտելի ծառայությունը։ Սվետոնիոսը գովաբանում է կայսրերի կողմից պրովինցիաների վերնախավին քաղաքացիության իրավունքի շնորհումը և առավել արժանավորներին սենատորների և հեծյալների դասի մեջ ընդգրկելը։ Սվետոնիոսը խիստ մակերեսորեն է մոտեցել պրովինցիաների նկատմամբ հռոմեական քաղաքականության բարդ հարցին։ Անհրաժեշտ է նշել, որ Օգոստոսի օրոք սկիզբ դրվեց պրովինցիաների նկատմամբ նոր քաղաքականության։ Լավ ըմբռնելով պրովինցիաներից հոսած վիթխարի եկամուտների կենսական նշանակությունը հռոմեական պետության էկոնոմիկայի համար, Օգոստոսը խաղաղեցված պրովինցիաներում աշխատում էր վերացնել հարկահավաքման քաոսը և չարաշահումները, ճշտորեն կազմակերպել հարկերի բաշխման գործը և ցենսի միջոցով սահմանել հարկային ճիշտ միավորներ։ Այս հին պրովինցիաներում Օգոստոսը ստեղծել էր բնիկների արտոնյալ մի խավ, որը նույնպես մասնակից է դառնում պրովինցիաների աշխատավորության թալանին։ Կայսրերը այս խավի վրա էին հենվում ապահովելու համար Հռոմի գերիշխանությունը ծայրամասերում։ Ահա թե ինչու Ֆ. Էնգելսը խոսելով պրովինցիաների վայրագ շահագործման մասին, նշում է, որ «կայսրությունը այս շահագործումը ոչ միայն չվերացրեց, այլ, ընդհակառակն, այն սիստեմի վերածեց»[134],

Սվետոնիոսը չի թափանցում հռոմեական կայսրերի կողմից պրովինցիաների վերնախավին ցույց տված «հոգատարության» սոցիալ-քաղաքական էության մեջ և այդ «հոգատարությունը» տարածում է պրովինցիաների ողջ բնակչության վրա։

Սվետոնիոսն էլ անտիկ շատ գրողների նման, իր պատմահայեցողության մեջ մեծ տեղ է տալիս գերբնական ուժերին։ Խոսելով 68—69 թվականների քաղաքացիական կռիվների մասին, նա այդ բարդ և կարևոր իրադարձությունները կապում է ինչ-որ կանխագուշակությունների և հրաշքների հետ։ Օրինակ, Վեսպասիանոսը Ալեքսանդրիայում ինչ որ հրաշքներ է տեսնում, որոնք կանխագուշակում են նրա հաղթանակը քաղաքացիական պատերազմում։ Միանգամայն անհասկանալի է մնում քաղաքացիական պատերազմում Վեսպասիանոսի վճռական դերը որպես հմուտ զորավարի և քաղաքական գործչի։ Սվետոնիոսի և Դիոն Կասիոսի համար պատմական պրոցեսը մնում է մարդկային բանականության շրջանակներից դուրս։

Իր «Տասներկու կեսարների կենսագրություններում» Սվետոնիոսն էլ անտիկ շատ գրողների նման անդրադարձել է Հայաստանին և հայերին։ Այսպես, երրորդ գլխում, որը նվիրված է Տիբերիոսին, նա պատմում է հռոմեական զորքերի առաջխաղացման մասին դեպի Արևելք։ Այդ առնչությամբ նա ասում է, որ «Տիբերիոսը վերադարձրեց հայկական թագավորությունը Տիգրանին և իր ճամբարում զորահրամանատարի տրիբունի առաջ Տիգրանի գլխին դրեց արքայական ապարոշը։ Միաժամանակ նա պարթևներից ետ վերցրեց հռոմեական արծվենիշը, որ նրանք խլել էին Մարկոս Կրասոսից[135]։

Նույն հատվածում, խոսելով Տիբերիոսի արտաքին քաղաքականության մասին, Սվետոնիոսը սխալ է մեկնաբանում Կապրե կղզում նրա վարած քաղաքականությունը։ Նա արձանագրում է, որ կայսրը մեկուսանալով Կապրեում, անուշադրության է մատնել պետական գործերը։ «Իսպանիան և Սիրիան մի քանի տարի մնացին առանց կոնսուլական լեգատների։ Հայաստանը գրավեցին պարթևները, Մյոզիան՝ դակիացիները և սարմատները, Գալլիան ամայացրեցին գեր-

---

[134] Ֆ. Էնգելս, *Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը*, Երևան, 1953, էջ 209։

[135] **Светоний**, жизнь 12-и цезарей, М., 1966, Тиберий, § 9.

մանացիները, իսկ նա ուշադրություն չէր դարձնում այդ բանի վրա ի մեծ անպատվություն և ոչ պակաս վնաս պետության»[136]: Մինչդեռ Տակիտոսը բոլորովին այլ գնահատական է տալիս Տիբերիոսի արտաքին քաղաքականությանը այդ ժամանակաշրջանում: Նա վկայում է, որ նույնիսկ իր ծերության հասակում հեռավոր Կապրե կղզում եղած ժամանակ Տիբերիոսը կարողանում է իր ձեռքում ամուր պահել վիթխարի պետության ղեկը, անարյուն լուծել հայ-պարթևական կնճռոտ հարցը, հայկական գահին նստեցնել Հռոմի թեկնածուին՝ Տրդատին, «մշտապես հետամուտ լինելով արտաքին հարաբերություններում գործի դնել խելքը և խորամանկությունը, և խուսափել վենքից»[137]:

Իր աշխատության 6-րդ գլխում, որը նվիրված է Ներոնին, Սվետոնիոսը պատմելով Ներոնի ժամանակաշրջանի ներքին և արտաքին իրադարձությունների մասին, 39-րդ հատվածում նշում է. «անփառունակ գործեր կատարվեցին Արևելքում. Հայաստանում հռոմեական լեգիոններն անցան լծի տակով»[138]: Խոսքը 62 թվին հռոմեական զորավար Պետոսի Հայաստանում կրած պարտության մասին է և ստորացուցիչ պայմաններով Հայաստանից հեռանալուն:

Նույն գլխում Սվետոնիոսը պատմում է Ներոնի կազմակերպած տեսարանների և հանդեսների մասին, այդ թվում նաև հայոց թագավոր Տրդատի հանդիսավոր ժամանումը: Հայտնի է, որ Հռոմի և պարթևների երկարատև պայքարը Հայաստանի վրա գերիշխանություն տարածելու համար ավարտվեց հայ-պարթևական համատեղ ուժերի հաղթանակով: Հայաստանի թագավոր դարձավ Տրդատը: Հռոմեական տերության մեծապետական ինքնասիրությունը բավարարելու համար, համաձայնագրում արված էր մի վերապահություն. Տրդատը թագավորական թագը պետք է ստանար Հռոմում՝ Ներոնի ձեռքից:

Սվետոնիոսը պատկերավոր կերպով նկարագրում է, թե ինչպես Հռոմը զարդարված էր՝ ընդունելու համար Հայոց թագավորին: «Պոմպեոսի թատրոնի պատերը, որտեղ պետք է կատարվեր թագադրության հանդիսավոր արարողությունը, ամբողջովին ոսկեզօծված էին: Ժամանելու էր Հայոց թագավորը, իր թագուհու և երիկնապահների հետ: Ներոնը հայոց թագավորին պրավել էր անհամար խոստումներով,— ասում է Սվետոնիոսը: Նրա գալստյան մասին հատուկ էդիկտով հայտարարված էր ժողովրդին...«Տաճարների շուրջը՝ Ֆորումում շարվեցին զինված կոհորտները: Ինքը՝ Ներոնը տրիումֆատորի զգեստով բազմել էր կոնսուլական գահին՝ Ֆորումի ոստրային տրիբունի վրա շրջապատված մարտական նշաններով և դրոշներով: Սկզբում Տրդատն ուղևորվեց նրա մոտ թեք տախտակամածով և խոնարհվեց նրա ծնկներին, իսկ նա (Ներոնը) աջ ձեռքով բարձրացրեց նրան և համբուրեց: Ապա հանեց նրա գլխից խուրը և դրեց արքայական թագը, իսկ պրետորական աստիճան ունեցող սենատորը բարձրաձայն ժողովրդի համար թարգմանում էր Ներոնի խոսքերը: Եվ, վերջապես, Ներոնը նրան տարավ թատրոն և նրա տեղերից իր աջ կողմը: Դրա համար Ներոնը հռչակվեց իմպերատոր, դափնի բերեց Կապիտոլի տաճարը և փակեց Յանուսի տաճարը ի նշան այն բանի, որ այլևս ոչ մի տեղ պատերազմ չի մղվում»[139]:

Այս ամբողջ իրադարձությունը վկայում է ոչ միայն հռոմեական նուրբ դիվանագիտության, այլև Հայաստանի բացառիկ նշանակության մասին արևելյան քաղաքականության մեջ: Այդ բանում ավելի ևս համոզվում ենք Սվետոնիոսի մի այլ վկայության հիման վրա: Ֆրիզների (գերմանական ցեղ) դեսպանության առաջնորդները գալով Հռոմ, Պոմպեոսի թատրոնում հռոմայեցիների թույլտվությամբ նստել էին օրքեսարում, որովհետև, ինչպես վկայում է Սվետոնիոսը, հռոմայեցիներին դուր էր եկել ֆրիզների պարզությունը և հասատակամությունը, այդ պատճառով էլ նրանց համար տեղեր հատկացրին ժողովրդի մեջ: Բայց հանկարծ նկատեցին, որ հայերը և պարթևները նստած են սենատորների շարքում, դուրս գալով իրենց տեղերից, նրանք ինքնակամ կերպով զրավին միևնույն տեղերը սենատորների կողքին[140]:

[136] Նույն տեղում:

[137] Тацит, Летопись, М., 1858, кн. VI, § 31, 32.

[138] Светоний, Жизнь 12-и цезарей, М., 1966, Тиберий, VI, § 39.

[139] Նույն տեղում, VI, § 13:

[140] Նույն տեղում, V, § 25:

Նույն միջադեպի մասին Տակիտոսն էլ է հիշատակում. «Ֆրիզների առաջնորդները տեսան սենատորների աթոռներին բազմած օտար զգեստներով մարդկանց և հարցերին. «Իսկ սրանք ովքե՞ր են»։ Իմանալով, որ հայերի և պարթևների դեսպաններն են և որ այդ պատվավոր տեղերը տրվում են այն ժողովուրդների դեսպաններին, որոնք առանձնապես աչքի են ընկնում քաջությամբ և հավատարմությամբ, բացականչում են. «Քաջությամբ և հավատարմությամբ ո՛չ ոք չի կարող մրցել գերմանացիների հետ», որից հետո գնում և նստում են սենատորների կողքին»[141]։

Պրինցիպատի պատմության այս կարևոր աղբյուրների վկայություններն ապացուցում են, որ Հայաստանը եղել է Հռոմի արևելյան քաղաքականության անկյունաքարը և Արևելքի հարցում հռոմեական զորքի հետ գործել է նաև նորը դիվանագիտությունը։

Սվետոնիոսի «Տասներկու կեսարների կենսագրություններ» աշխատությունը շնորհիվ իր հետաքրքրական և կենդանի շարադրանքին, հորինվածքի պարզությանը և պատկերավոր, մատչելի լեզվին մեծ ժողովրդականություն էր վայելում։ Թեպետ Սվետոնիոսը չի ունեցել խոր և ինքնուրույն պատմաքաղաքական հայացք, չի ունեցել պատմական պրոցեսի ճիշտ ըմբռնում և չի ըմբռնել դեպքերի ու իրադարձությունների միջև եղած պատճառակցական կապը, այդուհանդերձ նրա աշխատությունը Պրինցիպատի դարաշրջանի յուրատեսակ վավերագրություն է։ Աշխատությունը յուրահատուկ հետաքրքրություն է ներկայացրել ոչ միայն անտիկ աշխարհում և միջին դարերում, այլև ժամանակակից հետազոտողի համար, որպես հռոմեական մշակույթի ինքնատիպ հուշարձան։

ԱՊՊԻԱՆՈՍ (մոտ մ. թ. I դարի վերջից մինչև մ. թ. 170 թ.).—Երկրորդ դարում (մ. թ.) անտիկ պատմագրության մեջ երևան եկավ մի ծանրակշիռ աշխատություն՝ Ապպիանոսի «Հռոմեական պատմությունը»։ Բուրժուական գրականության մեջ Ապպիանոսի մասին համեմատաբար քիչ է գրվել և նրա սուվար աշխատությունը պատշաճ չափով չի գնահատվել։

[141] Тацит, Летопись, М., 1858, ч. I, XIII, § 54.

Հավատարմ դեպքում հիշատակվում է, թե Ապպիանոսն իր «Քաղաքացիական պատերազմների» համար օգտվել է առաջին մեզ անհայտ խիստ արժեքավոր աղբյուրից, ինչպես նաև նշվում է, որ Գրակքոս եղբայրների ագրարային ռեֆորմների համար Ապպիանոսի վերոհիշյալ աշխատությունը խիստ կարևոր աղբյուր է։

Պատմական գիտության մեջ առաջին անգամ Կ. Մարքսը ըստ արժանվույն գնահատեց Ապպիանոսին, բացահայտելով քաղաքացիական պատերազմների ուսումնասիրության մեջ նրա ռեալիստական մոտեցումը և Հռոմում սոցիալ-դասակարգային պայքարին որոշ տեղ հատկացնելը։ Ահա այս հատկանիշներն են պատճառ հանդիսացել ըստ Մարքսի, որ Ապպիանոսը բուրժուական պատմագրության մեջ հարկ եղած ուշադրության չի արժանացել։ 1861 թ. փետրվարի 27-ին Ֆ. Էնգելսին ուղղած նամակում Կ. Մարքսը գրել է. «...Երեկոները հանգստանալու համար կարդում էի Ապպիանոսի «Քաղաքացիական կռիվները Հռոմում» գրքի հունական բնագիրը։ Շատ արժեքավոր գիրք է։ Շլոսերն[142] ասում է, թե նա «հոգի չունի», երևի այն պատճառով, որ նա աշխատում է հետախուզելով հետամուտ լինել այդ քաղաքացիական կռիվների նյութական հիմքին»[143]... Այնուհետև, նույն նամակում նշում է, որ «Սպարտակը նրա (Ապպիանոսի—Ե. Մ.) պատկերացմամբ հանդիսանում է ամենահոյակապ երիտասարդը ամբողջ անտիկ պատմության մեջ։ Մեծ զորավար... ազնիվ բնավորություն, անտիկ պրոլետարիատի իսկական ներկայացուցիչ»[144]։

Ապպիանոսին բարձր գնահատական է տվել նաև Ֆ. Էն-

[142] Շլոսեր Ֆրիդրիխ Քրիստոֆ (1776—1861), գերմանական բուրժուական պատմաբան, «Համաշխարհային պատմություն» բազմահատոր աշխատության հեղինակ։ Եղել է գերմանական պատմագրության մեջ պրագրեսիվ ուղղության ներկայացուցիչ, Հեյդելբերգյան շկոլայի հիմնադիրը։ Իր վառ, պատկերավոր նկարագրություններով և ժողովրդական ոգով Շլոսերը ոգեշնչել է Գերմանիայի և նրանից դուրս՝ առաջադեմ մտավորականներին։

[143] К. Маркс, Ф. Энгельс, Избранные письма, Госполитиздат, 1947, стр. 121.

[144] **Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Հատընտիր նամակներ, Երևան, 1936, հ. 1, էջ 201։**

գելսը։ «Լյուդվիգ Ֆոյերբախը և գերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը» աշխատության մեջ Էնգելսը գրում է։ «Այն հին պատմաբաններից, որոնք նկարագրել են Հռոմեական հանրապետության ընդերքում տեղի ունեցած պայքարը, միայն Ապպիանոսն է մեզ պարզորեն և պարզորոշ ասում, թե ինչի համար էր այդ պայքարը մղվում՝ հողային սեփականության համար»[145]։

Ապպիանոսի ձգտումը՝ վեր հանել քաղաքացիական կռիվների նյութական հիմքը, ցույց տալ 2-րդ—1-ին դարերի (մ. թ. ա.) հռոմեական հասարակության սոցիալ-դասակարգային հարաբերությունները և դասակարգային ու ներդասակարգային պայքարը, ռեալիստական մոտեցումը դեպի հասարակական-քաղաքական իրադարձությունները,—այդ բոլորը խիստ տարբերում է Ապպիանոսին իրեն ժամանակակից պատմաբաններից և գիտական հետաքրքրություն է առաջացնում նրա նկատմամբ։

Ապպիանոսի մասին կենսագրական տեղեկությունները սակավ են։ «Հռոմեական պատմության» առաջաբանում հեղինակը խիստ հակիրճ հետևյալն է ասում իր մասին. «Թե ո՞վ էի ես, երբ գրեցի այս, շատերը գիտեն, և ես ինքս էլ արդեն նախօրոք նշել եմ այդ։ Իսկ, որպեսզի ավելի պարզ ասեմ, ես, Ապպիանոս Ալեքսանդրացիս, հասնելով բարձր դիրքի իմ հայրենիքում՝ Հռոմում դատական գործերով ելույթներ ունեցա թագավորների առաջ, մինչև որ նրանք արժանացրին ինձ գտնելու իրենց պրոկուրատորը։ Իսկ եթե որևէ մեկը ուզում է իմանալ իմ մասին և մնացած բաների մասին, ապա ես ունեմ աշխատություն նաև այդ մասին»[146]։ Սակայն այդ աշխատությունը չի պահպանվել։ Ուստի՝ հիմնվելով կցկտուր տեղեկությունների վրա, մենք կարող ենք միայն ընդհանուր գաղափար կազմել Ապպիանոսի կենսագրության մասին։

Ապպիանոսը հավանաբար ծնվել է 2-րդ դարի սկզբին

[145] Ֆ. Էնգելս, Լյուդվիգ Ֆոյերբախը և գերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը։ Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր երկու հատորով, հ. 2, Երևան, 1950, էջ 509։

[146] Аппиан, Римская история, ВДИ, М.-Л., 1950, 2, Приложение, Предисловие, 15.

(մ. թ.) Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, որը այդ ժամանակ եղել է հելլենիստական մշակույթի կենտրոններից մեկը։ Նա բարձր պաշտոններ է վարել իր ծննդավայրում։ Ալեքսանդրիայում բռնկված ժողովրդական ապստամբության ժամանակ Ապպիանոսը փախչում է Հռոմ և բնակություն հաստատում այնտեղ։ Ադրիանոս կայսեր օրոք նա ստացել է ֆիսկուսի իրավապաշտպանի պաշտոն՝ հանդես գալով դատավարություններում։ Երկարատև միջնորդություններից հետո Ապպիանոսը նշանակվում է ֆիսկուսի պրոկուրատոր Եգիպտոսում։ Հավանաբար 160 թ. (մ. թ.) նա գրել է 24 գրքից բաղկացած «Հռոմեական պատմությունը»։ Վախճանվել է մոտավորապես 2-րդ դարի 70-ական թվականներին։ Ահա այն կենսագրական տեղեկությունները, որ պահպանվել են Ապպիանոսի մասին։

Ապպիանոսը ապրել և գործել է պատմական բարդ ժամանակաշրջանում, երբ Հռոմեական կայսրությունը վերածվել էր «համաշխարհային» տերության, որի էկոնոմիկայում վճռական դեր էին խաղում պրովինցիաները։ Պրովինցիաներում ամենուրեք աճում են քաղաքներ, որպես պահեստի և առևտրի կենտրոններ։ Կայսրության եկամուտների մի զգալի մասը ստացվում էր պրովինցիաներից։ Դեռևս սկսած Օգոստոսից պրովինցիաներում ստեղծվել էր նոր, ծառայող արիստոկրատիա, որի հարստացման աղբյուրը և սոցիալական նոր աստիճանի վրա բարձրանալու միջոցը պետական և զինվորական ծառայությունն էր և անձնական մոտիկությունը կայսրին։ Այս վերնախավը, որը սերվում էր հեծյալներից, ավելի կենսունակ էր, թարմ, ճկուն և գործարար, քան հին, սենատորական արիստոկրատիան։ Նա գրավում էր վճռող դիրքեր թե երկրի էկոնոմիկայում, թե պետական ապարատում և, թե բանակում, որովհետև նա վայելում էր կայսրերի հովանավորությունը և մեծ օժանդակություն էր ստանում նրանցից։

Տեղական ծառայող արիստոկրատիան իր հերթին ամուր սոցիալական հենարան էր կայսրերի համար, պաշտպանելով նրանց իշխանությունը և միջոց էր ծառայում կայսրերի ձեռքում՝ պրովինցիաները ռացիոնալ կերպով շահագործելու։ 1927 թվականին Կիրենաիկայում հայտնաբերված Օգոստոսի

էդիկտները վկայում են այս մասին։ Այսպես, երրորդ էդիկտով Օգոստոսն առանձնացնում է բնակչության մեջ մի հատուկ արտոնյալ խավ, այն դարձնելով իրեն համար ամուր սոցիալական հենարան։ Այսպիսով, Հռոմեական հին սենատորական արիստոկրատիային փոխարինում էր Իտալիայի և պրովինցիաների նոր ծառայող արիստոկրատիան, որը ի հակադրություն հին օպոզիցիոն վերնախավի, սերտորեն կապված էր միապետական ռեժիմին։

Սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունները իրենց արտացոլումը գտան գաղափարախոսության մեջ։ Ի տարբերություն 1-ին դարի պատմիչների, երկրորդ դարի գրողները և պատմաբանները հաճախ անմիջականորեն կապված էին լինում կայսերական արքունիքին, վայելում էին կայսրերի հովանավորությունը և իրենց պատմագրական երկերում մեծարում էին կայսրերին, իդեալականացնում միապետական կարգը։ Դրանց թվին է պատկանում նաև Ապպիանոսը։

Ապպիանոսի «Հռոմեական պատմության» հիմնական գաղափարը Հռոմեական միապետության փառաբանումն է, որը իր երկարատև և փառավոր գոյությամբ գերազանցել է նախորդ տերություններին։ Պատճառը նա համարում է հռոմեացիների լրջախոհությունը և արիությունը, հատկանիշներ, որոնցով հռոմայեցիները, ըստ Ապպիանոսի, արմատապես տարբերվում էին մյուս ժողովուրդներից։ «Հռոմայեցիների տերությունը աչքի ընկավ իր մեծությամբ և բախտավորությամբ՝ շնորհիվ իրենց ողջախոհության և ժամանակի հանգամանքները հաշվի առնելու ունակության. այդ հզորությունը ձեռք բերելով, նրանք գերազանցեցին բոլորին իրենց արիությամբ, տոկունությամբ և համառությամբ, չզգևորվելով բախտավոր հանգամանքներում, քանի դեռ հաստատուն չեն ամրապնդել իրենց իշխանությունը և հոգեպես չընկճվելով դժբախտությունների ժամանակ»[147]։

Պոլիբիոսի նման Ապպիանոսն էլ գտնում է, որ Հռոմի վե-

[147] **Аппиан**, Римская история, ВДИ, М.-Л., 1950, 2, Приложение, Предисловие, 11.

հության և հզորության գաղափարն է իրեն ոգեշնչել գրել Հռոմի պատմությունը և Ապպիանոսն էլ Պոլիբիոսի նման հակատագրի բախտավոր կանխորոշում է համարում Հռոմի գերիշխանությունը Միջերկրածովյան երկրների վրա։ Այդ հանգամանքը Ապպիանոսին մղեց շարադրելու Հռոմի պատմությունը սկսած թագավորական շրջանից մինչև Տրայանոսի ժամանակաշրջանը, ըստ որում նա հարուստ նյութերը բաշխել է ոչ թե ըստ ժամանակագրության, այլ ըստ էթնիկական սկզբունքի։ Աշխատությունը կազմված է 24 գրքերից, որոնցից յուրաքանչյուրը յուրատեսակ մենագրություն է, որտեղ շարադրված է կայսրության առանձին մարզերի պատմությունը, սկսած նրանց ազատագրական պայքարից Հռոմի դեմ մինչև նրանց նվաճվելը Հռոմի կողմից։ Լրիվ պահպանվել են 7 գիրք. Հաննիբալյան պատերազմը, Իսպանական պատերազմը, Միհրդատյան պատերազմը, Սիրիական պատերազմը, Աֆրիկյան պատերազմը, (Կարթագեն և Նումիդիա), Քաղաքացիական պատերազմները՝ 5 գրքով (13-րդ գրքից մինչև 18-րդ գիրքը)։ Իսկ մյուս գրքերից մեզ հասել են միայն պատառիկներ։ Ինչ խոսք, էթնիկական սկզբունքով կատարված շարադրանքում խախտվում է պատմական իրադարձությունների շարադրման կապակցված ընթացքը, բայց Ապպիանոսի կարծիքով ավելորդ է խստորեն հետևել ժամանակագրության։ «Ժամանակագրական տարեթվերը ես ավելորդ համարեցի ամեն մի դեպքի առնչությամբ տարեթիվ նշել, իսկ ամենակարևորների վերաբերյալ ես ժամանակ առ ժամանակ կհիշատակեմ»,—ասում է նա[148]։ Միայն քաղաքացիական պատերազմների շարադրման մեջ Ապպիանոսը հրաժարվում է էթնիկական սկզբունքից։

Ինչպես ապացուցել են հետազոտողները «Քաղաքացիական պատերազմները» գրելիս Ապպիանոսն օգտագործել է մի ինչ որ բարձրորակ սկզբնաղբյուր, որը մեզ չի հասել և, որը ուշեղիշ աստղ է եղել Ապպիանոսի համար՝ «Քաղաքացիական պատերազմների» պատմությունը շարադրելիս։ Աղբյուրների հարցը ընդհանրապես սկզբունքային կարևորու-

[148] **Аппиан**, Римская история, ВДИ, 1950, 2, Приложение, Предисловие, 13.

թյուն ունի. այն մասնավորապես մեծ կարևորություն է ներկայացնում Ապպիանոսի «Հռոմեական պատմության» և հատկապես նրա կարևոր հատվածը կազմող «Քաղաքացիական պատերազմների» պատմության համար։ Պրոբլեմատիկ հարցը, որ վերաբերում է Ապպիանոսի ձեռքի տակ եղած և մեզ չհասած աղբյուրին, դեռ պատմագիտության մեջ չի լուծվել և ներկայումս գիտնականները ենթադրություններից այն կողմը չեն անցել։ Բացի այդ բարձրարժեք աղբյուրից Ապպիանոսը հավանաբար օգտվել է նաև մեմուարային գրականությունից, նամակներից, հունա-հռոմեական երկերից, օրինակ, Պոլիբիոսի և Տիտոս Լիվիոսի երկերից, տարեգրություններից, քաղաքական գործիչների կենսագրություններից։ Հեղինակը երբեմն վկայակոչում է Կեսարի նամակները, օրինակ, խոսելով Փարսալոսի նշանավոր ճակատամարտի մասին, Ապպիանոսն ասում է, թե «ոմանք գովաբանում են Պոմպեոսի տակտիկան, որպես լավագույնը՝ թշնամու կողմից շրջապատման ժամանակ, մինչդեռ Կեսարը իր նամակներում պարսավում է այն»[149]։ Հեղինակը նույն գրքում վկայակոչում է նաև Ասինիոս Պոլլիոնին՝ Կեսարի հրամանատարներից մեկին, որը մասնակցել էր Փարսալոսի ճակատամարտին և իր նոթերում տվյալներ է հաղորդում պատերազմի ելքի մասին[150]։

Անհրաժեշտ է նշել, որ իր տրամադրության տակ եղած նյութերից Ապպիանոսը քննադատորեն է օգտվել, սոսկ բանաքաղություն չի արել, այլ համառորեն խմբավորել է քաղաքացիական պատերազմների բարդ և կնճռոտ ժամանակաշրջանի նյութերը, իմաստավորել և ռեալիստորեն մեկնաբանել։ Գրելու այդ մեթոդը Ապպիանոսի արժանիքներից մեկն է։ Հետաքրքիր է և ուշագրավ Ապպիանոսի խորհրդածությունը «Քաղաքացիական պատերազմների» պատմության նյութերը խմբավորելու մասին։ Իր «Հռոմեական պատմության» առաջաբանում Ապպիանոսն ասում է. «Այդ ահավոր երկպառակությունները և այդ քաղաքացիական կռիվները, որ մղում էին հռոմայեցիները միմյանց դեմ, ես խմբավորել եմ նկատի ունենալով առանձին երկպառակությունների առաջնորդներին. դրանք են Մարիոսը և Սուլլան, Պոմպեոսը և Կեսարը, Անտոնիոսը և Օկտավիանոսը։ Վերջին երկու առաջնորդների միջև մղված պայքարի հետևանքով եգիպտոսն էլ ընկավ Հռոմի տիրապետության տակ, իսկ Հռոմեական պետությունն ընդունեց միապետական իշխանություն»[151]։

Խոսելով Ապպիանոսի արժանիքների մասին, անհրաժեշտ է նշել, որ նա ձգտում է օբյեկտիվորեն ներկայացնել գործող անձանց, նույնիսկ կարողանում էր նշել իր համակրանքը վայելող քաղաքական գործիչների դրական հատկանիշների կողքին նաև նրանց թերությունները։ Այսպես, պատմելով Պոմպեոսի տխուր վախճանի մասին Եգիպտոսում, բնութագրում է նրան հետևյալ կերպ. «Այսպիսին էր Պոմպեոսի վերջը, որը վարել էր մեծ պատերազմներ և մեծ օգուտ էր բերել հռոմեական կերիշխանությանը, որի համար և կոչվել էր «Մեծ»։ Մինչ այդ նա ոչ մի անգամ չէր պարտվել և դեռ պատանեկության հասակից անպարտելի էր և բախտավոր»[152]։ Ապա, նշելով Պոմպեոսի ռազմական մեծ ուժերը Իսպանիայում, Աֆրիկայում և Կեսարից նրա փախուստը, գրում է. «Ահա այսպիսի վիթխարի ուժեր ուներ Պոմպեոսը, իսկ ինքը հաշվի չառնելով այդ բոլորը, փախավ, կարծես հալածված մի ինչ որ ոգու կողմից»[153]։

Նույն գրքում վերլուծելով քաղաքական ճգնաժամը Հռոմում և միապետությունը համարելով միակ անհրաժեշտ ելքը, Ապպիանոսն ասում է. «Պետք է ընտրել մեկ ուժեղ և միաժամանակ ողորմած մարդու։ Մատնանշում էին Պոմպեոսին, որն իր տրամադրության տակ ուներ բավականաչափ զորք և, ինչպես թվում է, սիրում էր ժողովրդին և հարգում էր սենատին, զուսպ էր կյանքում և լրջախոհ, սիրով ունկնդրում էր

[149] Аппиан, Гражданские войны, Л., 1935, книга 2-ая, § 79.
[150] Նույն տեղում, 82։

[151] **Аппиан,** Римская история, ВДИ, 1950, 2, Приложение, Предисловие, 14.
[152] **Аппиан,** Гражданские войны, Л., 1935, глава 2, § 86.
[153] Նույն տեղում, § 87։

խնդրատուներին, կարևոր չէ, արդյո՞ք այդպիսին էր նա, թե՞ միայն թվում էր այդպիսին»: Թափանցելով իշխանասեր մարդու հոգեբանության մեջ, նրա հոգեկան ներքին մղումների մեջ, Ապպիանոսն ավելացնում է. «Պոմպեոսը խոսքով ժխտում էր այդ բոլոր ենթադրությունները, իսկ գործով՝ գաղտնի ամեն ինչ անում էր դրանց իրագործման համար և հատկապես թույլ էր տալիս անկարգություններ և անարխիա պետական կառավարման գործում»[154]: Ապպիանոսը նույն քննական մոտեցումն ունի նաև Պոմպեոսի քաղաքական հակառակորդին՝ Հուլիոս Կեսարին բնութագրելու:

Ջուգահեռաբար բնութագրելով Կեսարին և Ալեքսանդր Մակեդոնացուն, Ապպիանոսն ասում է. «Երկուսն էլ խիստ փառասեր էին, ռազմաշունչ, որոշումների իրագործման մեջ՝ արագաշարժ, վտանգներում՝ քաջարի, չէին խնայում իրենց առողջությունը և հենվում էին ոչ այնքան ստրատեգիայի վրա, որքան վճռականության և բախտի»[155]... «Կեսարը նվաճեց Հոնիական ծովը... Նա առաջինը կարեց-անցավ արևմտյան օվկիանոսը, որը մինչ այդ դեռևս ոչ ոք չէր հետախուզել և դուրս եկավ բրիտանացիների մոտ... Թշնամիների դեմ նա հաճախ առաջինն էր հարձակում գործում, երբ 30 անգամ նա արշավեց գալլերի դեմ և հպատակեցրեց մինչև 400 ցեղեր, որոնք հռոմայեցիների համար այնքան ահավոր էին թվում, որ ծերունիներին և քրմերին զինվորական ծառայությունից ազատելու օրենքում արվում էր հետևյալ վերապահությունը. «բացառությամբ գալլերի դեմ մղված պատերազմի»[156]: Գալլիայի նվաճումը խիստ բարձր է գնահատում Ապպիանոսը: Խոսելով Կեսարի սպանության մասին նա ասում է. «Արհամարհելով նախազգուշացումները և կանխագուշակություններ, Կեսարը Մարտի իդոսին դուրս եկավ տնից, գնաց սենատ, ուր և սպանվեց հակառակորդների կողմից 56 տարեկան հասակում: Նա ամենաբախտավոր մարդն էր բոլոր տեսակետներից, հանճարեղ, լայն թափի տեր»[157]:

[154] Նույն տեղում, գիրք 2-րդ, § 20:
[155] Նույն տեղում, II, § 249:
[156] Նույն տեղում, II, § 150:
[157] Ննույն տեղում, III, § 1:

Բայց հենց նույն գրքում ելնելով իրեն հատուկ վերլուծության պատսպ դիրքերից, Ապպիանոսը ցույց է տալիս Կեսարի քաղաքական գործունեության սուվերոտ կողմերը, իշխանության հասնելու համար նրա գործի դրած մեքենայություններ: «Նա դիմում էր ամեն տեսակի խորամանկության,— գրում է Ապպիանոսը,— որպեսզի մնա իշխանության գլուխը, նշանակվի կոնսուլ և պահանջում էր սենատից որոշ չափով երկարաձգել Գալլիայում և կամ նրա մի մասում իր հրամանատարության ժամկետը»[158]:

Ապպիանոսը համոզված միապետական էր: Նա հասկանում է, որ հանրապետությունն արդեն ապրել է իր դարը և միապետական կարգը անխուսափելի անհրաժեշտություն է: Այսպես, արձանագրելով վերջին հանրապետականների՝ Բրուտոսի և Կասիոսի զորքերի արյունահեղ ճակատամարտը Ֆիլիպպեում (Մակեդոնիա) Անտոնիոսի զորքերի դեմ, ընդգծում է Կասիոսի և Բրուտոսի զորքերի մեծ նվիրվածությունն ու անձնազոհությունը, և ավելացնում է բարի հումորով. «զինվորները գործում էին ո՛չ թե անձնական շարժառիթներից, այլ հանուն հանրապետության, որը գեղեցիկ խոսք է, բայց միշտ էլ անօգուտ»[159]:

Ապպիանոսը այն սակավաթիվ անտիկ պատմագիրներից է, որը պատշաճ տեղ է հատկացրել հռոմեական հասարակության սոցիալ-դասակարգային հարաբերություններին: Առանձնապես գնահատելի է Ապպիանոսի ճիշտ մոտեցումը դեպի ստրուկների ապստամբությունները: Թեպետ նա պատկանում էր ստրկատիրական վերնախավին, այնուամենայնիվ ըմբռնում էր ստրուկների պայքարի անխուսափելիությունը: Ավելին՝ թափանցելով 2-րդ դարի (մ. թ. ա.) վերջում հռոմեական հասարակության սոցիալ-դասակարգային հարաբերությունների մեջ, նա կարողանում էր վեր հանել այն կապը, որ

[158] Նույն տեղում, II, § 25:
[159] Նույն տեղում, IV, § 133:

կար Տիբերիոս Գրակքոսի ժամանակ ծագած ագրարային շարժումների և Սիցիլիայում ստրուկների առաջին ապստամբության միջև։ Ապպիանոսը պատշաճ լրջախոհ վերաբերմունք է ցույց տվել ստրուկների «սարսափելի պատերազմին» Սպարտակի առաջնորդությամբ։

Մենք շատ բան ենք պարտական Ապպիանոսին՝ անտիկ հասարակության դասակարգային պայքարի պատմության այդ նշանավոր դրվագը լուսաբանելու համար։ «Քաղաքացիական պատերազմների» 1-ին գրքի 116-րդ հատվածից մինչև 120-րդը ներառյալ Ապպիանոսը բավականին մանրամասն, փաստացի տվյալներով պատմում է Սպարտակի ապստամբության մասին, ընդգծում շարժման հսկայական ծավալն ու հուժկու թափը (§§ 116, 117)։ Այնուհետև Ապպիանոսը մեծ բարեխղճությամբ շարադրում է ապստամբության ընթացքը, աննախընթաց հաջողությունները, խոսում Սպարտակի կազմակերպչական ու ստրատեգիական ձիրքերի մասին։ Սպարտակը իր բանակի մեջ ընդունում էր բազմաթիվ փախստական ստրուկների և դաշտերից փախած ազատ հողագործներ... «Եվ որովհետև Սպարտակը հավասարապես բաժանում էր ավարը բոլորին, շուտով նրա մոտ հավաքվեց չափազանց շատ ժողովուրդ»[160]։

Ապպիանոսը վկայում է, որ «հռոմայեցիները սկզբում այդ համարում էին սոսկ ավազակային հարձակում»։ Սակայն շուտով ըմբռնեցին դրության ողջ լրջությունը։ Սկզբում ստրուկների դեմ ուղարկվեց Վարինիոս Գլաբրոսը, ապա Պուբլիոս Վալերիոսը իրենց լեգիոններով։ «Սպարտակը երկու զորավարներին էլ պարտության մատնեց և «քիչ էր մնում, որ հռոմեական զորավար Վարինիոսը գերի ընկներ գլադիատորների ձեռքը. նույնիսկ Վարինիոսի ձին խլեց ինքը՝ Սպարտակը»[161]։ Սպարտակի զորքը արդեն հաշվվում էր ըստ Ապպիանոսի՝ 120 հազար հոգի... «Այդ ժամանակ ստրուկների դեմ հռոմայեցիներն ուղարկեցին կոնսուլներին՝ երկու լեգիոններով... Սպարտակը առանձին-առանձին հարձակվելով նրանց վրա, ջարդ տվեց երկուսին էլ, կոնսուլները խուճապա-

[160] Նույն տեղում, I, § 116։
[161] Նույն տեղում, I, § 116։

հար նահանջեցին»։ «...Պիցենում կոնսուլները կրկին փորձեցին Սպարտակին հակահարված տալ. այստեղ տեղի ունեցավ երկրորդ մեծ ճակատամարտը և նորից հռոմայեցիները ջարդ կրեցին»[162]։ ...Սպարտակի հեղինակությունը խիստ մեծացել էր. նրա մոտ էին գալիս մեծաքանակ փախստականներ, բայց Սպարտակը նրանց չէր ընդունում[163]։ 118-րդ հատվածում Ապպիանոսը նշում է, թե «երրորդ տարին էր, ինչ շարունակվում էր այդ ահավոր պատերազմը, որի վրա սկզբում ծիծաղում էին և որը սկզբում արհամարհում էին, որպես գլադիատորների դեմ մղված պատերազմ։ Եվ երբ Հռոմում նոր հրամանատարների ընտրություններ նշանակվեցին, սարսափը համակել էր բոլորին և ոչ ոք չէր դնում իր թեկնածությունը, մինչև որ Լիցինիոս Կրասոսը, որն իր ծագումով և հարստությամբ աչքի էր ընկել հռոմեացիների մեջ, հրամանատարության համար դրեց իր թեկնածությունը»[164]։ Ապա Ապպիանոսը բարեխղճորեն շարադրում է Կրասոսի կիրառած խիստ միջոցառումները բանակի կարգապահության բարձրացնելու ուղղությամբ։ Նա իր 6 լեգիոններին միացրեց կոնսուլական երկու լեգիոնները ևս, բայց այնուամենայնիվ, պարտություն կրեց։ Իր շարադրանքում Ապպիանոսը երբեմն մեղանչում է անաչառության դեմ. օրինակ, պատմում է, որ Բրուտիումում պաշարված սպարտակյաններից Կրասոսն արշալույսին ոչընչացրեց 6 հազար մարդ և երեկոյան նորից 6 հազար մարդ, մինչդեռ հռոմայեցիներից ընդամենը 3 զինվոր էր սպանված և 7-ը՝ վիրավոր»[165]։ Սակայն հեղինակի մոտ նորից գերակշռում է երևույթներին զգաստ մոտենալու հակումը, որը ստիպում է նրան խոստովանելու, որ հռոմեական սենատը հարկադրված էր Պոմպեոսին նշանակել երկրորդ հրամանատար, և որ արդեն Արևելքից Բրունդիզ էր եկել ու նրան միացավ զորահրամանատար Լուկուլլոսը, Միհրդատին հաղթելուց հետո։ «Հիմա արդեն հռոմայեցիները համոզվեցին,— գրում է նա,— որ Սպարտակի դեմ մղված պատերազմը ծանր և դժվարին գործ է, և երեք հրամանատարների կադրային զորքերով

[162] Նույն տեղում, I, § 117։
[163] Նույն տեղում, § 117։
[164] Նույն տեղում, § 118։
[165] Նույն տեղում, § 119։

Սպարտակի վիթխարի զորքը աքցանի մեջ առնելով միայն հնարավոր եղավ արյունահեղ ծանր ճակատամարտում պարտության մատնելու Սպարտակին»[166]։ Հակառակ իր դասակարգային պատկանելիությանը և տածած հակակրանքին դեպի «խոովարարները», Ապպիանոսն այնուամենայնիվ, հիացմունքով է շարադրում Սպարտակի հերոսական վախճանը։ Նկարագրելով վճռական վերջին ճակատամարտը, որտեղ սորուկների վիթխարի զանգվածները մոլեգնորեն մարտի նետվեցին կատաղի հուսահատությամբ, Ապպիանոսը ցույց է տալիս, որ Սպարտակը սուրը ձեռքին փորձում էր ճեղքել-մոտենալ հենց Կրասոսին։ Նա շատ հակառակորդների կոտորեց, այդ թվում նաև երկու ցենտուրիոնի, և ինքն էլ ընկավ կռվի դաշտում։ Ապպիանոսը պատմում է, որ «Սպարտակը տեգով վիրավորվել էր ազդրից. ծնկի գալով և վահանը քոնելով իր առջև, նա ետ էր մղում հարձակվողներին, մինչև որ ընկավ իրեն շրջապատող մեծաքանակ մարտիկների հետ»[167]։

Այդպես, ահա, ռազմական ուժերի գերագույն լարումով միայն Հռոմին հաջողվեց ժամանակավորապես մարել Սպարտակի վառած ահավոր ապստամբության հրդեհը։

Մենք Ապպիանոսին ենք պարտական սորուկների ազատագրական պայքարի ամենապայծառ էջի՝ Սպարտակի ապստամբության պատմության համար, որ նա շարադրել է ռեալիստական ոգով՝ հարուստ նյութական տվյալների հիման վրա։ Գրելու նույն մեթոդը երևան է գալիս նաև հանրապետական գործիչներին գնահատելիս։ Հակառակ իր միապետական հայացքներին, Ապպիանոսն ըստ արժանավույն է գնահատում մի շարք հանրապետական գործիչների՝ նրանց անկաշառ հայրենասիրության և բարձր սկզբունքայնության համար։ Անկախ իր հակակրանքից դեպի Գրակքոսների ագրարային շարժումը, Ապպիանոսը չերմաշուռ ոճով է նկարագրում Տիբերիոս Գրակքոսի եռանդուն գործունեությունը. «Իսկ ինքը հպարտ իր կյանքի թողած օրենքով, մինչև տուն ուղեկցվեց ժողովրդի կողմից, որը նրա վրա նայում էր ոչ թե

[166] Նույն տեղում, § 119 և § 120։

[167] Նույն տեղում, I, § 120։

որպես որևէ քաղաքի բարեկարգողի, ոչ թե որպես որևէ ցեղի, այլ Իտալիայի բոլոր ժողովուրդների բարերարի»[168]։

Պատկերավոր հակիրճ ոճով հեղինակը նկարագրում է Տիբերիոս Գրակքոսի երկրորդ ընտրության նախօրյակին նրա երևալը Ֆորումում սևազգեստ, իր որդու հետ և պատահած մարդկանց խնդրելը, որպեսզի խնամակալեն իր որդուն, որովհետև իրեն մահ է սպասում թշնամիներից[169]։ Այնուհետև Ապպիանոսը պատմում է Տիբերիոսի նկատմամբ չքավոր քաղաքացիների ջերմ վերաբերմունքի մասին։ «Այդ ժամանակ չքավորներն սկսեցին շատ տխրել։ Մի կողմից նրանք մտածում էին իրենց մասին. այլևս չէին օգտվելու մյուս քաղաքացիների հետ միևնույն իրավունքներից, այլ իրենց վիճակված է լինելու բռնի կերպով ծառայագրվել հարուստների մոտ։ Նրանք մտածում էին նաև Գրակքոսի մասին, որը հիմա վախենում է իր համար և որը այնքան նեղություններ կրեց իրենց պատճառով։ Երեկոյան նրանք լաց լինելով ուղեկցեցին Գրակքոսին մինչև իր տունը և համոզում էին նրան արիաբար դիմավորել գալիք օրը։ Գրակքոսը սրտապնդվեց և դեռ գիշերը հավաքեց իր համախոհներին, տվեց նշանաբանը, եթե բանը հասնի ծեծկռտոցի»[170]։

Ապպիանոսը ոչ միայն ըստ արժանավույն գնահատում է Գրակքոսներին, այլև կարծես իր կամքից անկախ բացահայտում է նրանց մեծ ժողովրդականությունը, ցույց տալով բարենորոգումների կենսական անհրաժեշտությունը ժողովրդական ստորին խավերի համար։ Միաժամանակ, ռեալիստորեն մոտենալով Տիբերիոսի բարենորոգմանը, նա հետևյալ մեկնաբանումն է տալիս նրան. «Գրակքոսի նպատակը աղքատների համար բարօրություն ստեղծելը չէր, այլ հանձինս նրանց՝ պետության համար ռազմունակ ուժեր ունենալը»։ Եվ ընդհանրապես ժողովրդի մասին նրա կարծիքը բացասական է։ Անտոնիոսի բերանով, որը Օկտավիանոսի հետ հենց առաջին հանդիպման ժամանակ խորհուրդներ էր տալիս նրան, Ապպիանոսն ասում է. «Դու նոր ես ուսումնասիրել հռոմեական պրակտիկան և գիտես, որ ժողովուրդը տատանվող է և

[168] Նույն տեղում, գիրք 1-ին, § 13։

[169] Նույն տեղում, գիրք 1-ին, § 14։

[170] Նույն տեղում, գիրք 1-ին, § 15։

նման է ծովում շարժվող ալիքի. մեկը գալիս է, մյուսը գնում։ Այդ իմաստով էլ ժողովուրդը մերթ բարձրացնում է դեպի անհասանելի բարձունքներ, մերթ ծնկի է բերում մեր միջից այն մարդկանց, ովքեր ձգտում են շահել նրա համակրանքը»[171]։

Հակառակ իր բացասական վերաբերմունքին դեպի դեմոկրատական շարժումները և դեպի Կասիոսի ու Բրուտոսի մղած օլիգարխական պայքարը եռապետների և միահեծան իշխանության դեմ, այնուամենայնիվ, Ապպիանոսը ջերմ խոսքեր է ասում վերջին հանրապետականների հասցեին։ Բարեխղճորեն նկարագրելով Ֆիլիպպեի պատմական ճակատամարտը, հանրապետականների վիթխարի բանակի ահավոր գոտեմարտը եռապետների նույնքան վիթխարի զորքերի դեմ և ապա Կասիոսի և Բրուտոսի ծանր պարտությունն ու ինքնասպանությունը, Ապպիանոսը գրում է. «Այսպես վախճանվեցին Կասիոսը և Բրուտոսը, որոնք բոլոր հռոմայեցիների մեջ աչքի էին ընկնում իրենց առաքինությամբ, փառքով և անուրանալի քաջությամբ։ Նրանց երկուսին էլ Գայոս Կեսարը հակառակորդներից դարձրեց իրեն բարեկամ, իսկ բարեկամների մեջ հենց նրանց էր սիրում որպես զավակների, հակառակ որ նրանք պատկանում էին Պոմպեոս Մեծի կուսակցությանը։ Սենատն էլ միշտ բարյացակամ էր երկուսի նկատմամբ, նրանց համարելով հատուկ խղճահարության արժանի՝ իրենց դժբախտության պատճառով։ Ի սեր այդ երկուսի, նա բոլորին ներում շնորհեց, և երբ նրանք վտարանքի ենթարկվեցին, սենատը նրանց պրովինցիաներ տվեց, որպեսզի նրանք չլինեին աքսորյալների վիճակում»[172]։

Այնուհետև Ապպիանոսը նշում է հանրապետական զորքի մեծ նվիրվածությունը Կասիոսին և Բրուտոսին։ «Բայց ամենազարմանալին հիմնականում Գայոս Կեսարի նախկին զինվորներից բաղկացած զորքն էր, որին Կեսարի սպանողներին հալոցվեց սիրաշահել, թեև նա Կեսարի հանդեպ անօրինակ սեր էր տածում։ Զորքը սրանց հետևեց՝ Կեսարի որդու դեմ մղած արշավանքում և դրանց ավելի էր հավատարիմ, քան Անտոնիոսին՝ Կեսարի դաշնակցին և կառավարչակցին։ Զինվորներից և ոչ մեկը չլքեց Բրուտոսին կամ Կասիոսին նույնիսկ սրանց պարտության պահին, այն դեպքում երբ նրանք Բրունդիզում տակավին ռազմական գործողություններ սկսելուց առաջ լքեցին Անտոնիոսին»։ Զորքի այդ վարքագիծը Ապպիանոսը բացատրում է նրանով, որ զինվորները գործում էին ոչ թե անձնական դրդապատճառներից մղված, այլ ի սեր դեմոկրատիայի»[173]։ Ապա տուրք տալով մնոտիապաշտությանը, Ապպիանոսը ավելացնում է. «Մակայն նրանց բոլոր այդ հատկանիշներին հակադրվում է նրանց գործած մեղքը Կեսարի դեմ։ Չէ՞ որ դա մի սովորական և փոքր մեղք չէր. չէ՞ որ այն գործել էին բարեկամի նկատմամբ, գործել էին անակնկալ, պատերազմում իրենց փրկող բարերարի դեմ. դա ապերախտության արտահայտություն էր... Մեղք՝ ուղղված քրմի դեմ... տիրակալի դեմ, որին հավասարը չէր եղել... Այդ իսկ պատճառով Բրուտոսը և Կասիոսը կրեցին աստվածների զայրույթը, որը հաճախ նրանց նախանշաններ էր ցույց տալիս»[174]։

Աշխատության 4-րդ գլխի սկզբում Ապպիանոսն ասում է, որ պատմելու է, թե ինչպես պատժվեցին Կեսարի կյանքի դեմ կազմակերպված դավադրության գլխավոր դրդիչները։ Նորից դրսևորելով իր միապետական հայացքները, Ապպիանոսը Կեսարին համարում է պետության մեծ օգուտ տված քաղաքական գործիչ, իսկ նրա սպանողներին անվանել է «չարագործներ»։ Խոսելով Ֆիլիպպեի (Մակեդոնիա) պատմական արյունահեղ ճակատամարտի մասին, Ապպիանոսը շարադրում է մարտից առաջ Կասիոսի հռետորական բոլոր հնարքներով կառուցված երկար և ոգեշունչ ճառը։ Ակամայից հարց է ծագում՝ արդյոք Կասիո՞սն էլ հռետոր է եղել։ Թեպետ անհավատալի է, որ նման բարդ իրադրության պայմաններում Կասիոսը կարող էր այդպիսի երկարաշունչ փայլուն հռետորական ճառ արտասանել, բայց այդ ճառը յուրատեսակ աղբյուր է, կարևոր վկայություն՝ հանրապետության վերջում Հռոմում ստեղծված բարդ քաղաքական վիճակի մա-

[171] Նույն տեղում, I, § 11։
[172] Նույն տեղում, IV, § 133։
[173] Նույն տեղում։
[174] Նույն տեղում, § 135։

սին։ Այս ճառի միջոցով Ապպիանոսը կատարում է քաղաքական իրազարձությունների հիանալի վերլուծություն, կանգ է առնում սենատի ձախողակ քաղաքականության վրա, մեծ վայրույթով խոսում պրոսկրիպցիաների մասին. «Հռոմի Ֆորումում ցուցադրված են նախկին կոնսուլների, պրետորների, արիբունների, էդիլների և հեծյալների կորված գլուխները, և նման չարագործությունների համար դեռ նույնիսկ պարգևներ են շնորհում»—դառնությամբ արձանագրում է Ապպիանոսը։

Անհաշտության դիրքերից բերված փաստերը կարևոր վկայություններ են Կեսարի սպանությունից հետո երկրում նոր թափով ծավալված քաղաքացիական պատերազմի մասին։ Անտոնիոսի փայլուն հաղթանակը ընդդեմ հանրապետականների, Պերուզիայի ահավոր ճակատամարտը՝ ուղղված եռապետության դեմ, և վերջապես Ակցիումի ճակատամարտը կարևոր փուլեր են հանուն միապետության մղած քաղաքացիական պատերազմի։ Նկարագրելով Անտոնիոսի և Օկտավիանոսի բարդ փոխհարաբերությունները, Ապպիանոսը իրեն հատուկ դիպուկ բնորոշմամբ գրում է. «Այսպես շարունակ փոփոխվում էին նրանց հարաբերությունները, մերթ հակվելով կասկածամտության, որպես հետևանք իշխանության ձգտման, մերթ փոխադարձ վստահության՝ մղված անհրաժեշտությունից»[175]։ Ապպիանոսը խուսափում է անտիկ շատ պատմագիրներին հատուկ բարոյախոսական տենդենցից։ Նա պատմական գործիչներին բնորոշում է ռեալիստորեն, և թեպետ խիստ փաստացի նյութերով է հագեցրել իր աշխատությունը, բայց ընթերցողին ակամայից խորհել է տալիս ժամանակի ցնցող դեպքերի և պատմական անձերի մասին։ Դրանում է նաև Ապպիանոսի խոսքի և գրելու մեթոդի ուժը։

Այնուամենայնիվ, Ապպիանոսի պատմահայեցողությունը չէր կարող վերծ մնալ անտիկ գրողներին հատուկ պրովիդենցիալիզմից (հասկացություն, ըստ որի նախախնամության կամքն է պատմության շարժիչ ուժը) և հակառակ իրեն հատուկ զգաստ մոտեցմանը Ապպիանոսն էլ երբեմն փորձում է՝ պատմական դեպքերը մեկնաբանել նախախնամության կամքով, հակատագրի հայեցողությամբ։ Այսպես, օրինակ, պատմելով Սամնիտական պատերազմների և 321 թ. (մ. թ. ա.) Կավդիումի կիրճում կրած հռոմայեցիների ծանր պարտության մասին, Ապպիանոսը ավելացնում է. «Աստված կամենում էր վրեժ լուծել հռոմայեցիներից։ Աստվածները պատժեցին հռոմայեցիներին նրանց գոռոզամիտ խոսքերի համար, իսկ հետագայում նրանք պարտվեցին սամնիտներից և անցան լծի տակով»[176]։ Քաղաքացիական պատերազմների առաջին գլխում խոսելով Սուլլայի երկրորդ վերադարձի մասին Հռոմ՝ Միհրդատյան պատերազմից հետո և Հռոմում ու Իտալիայում տեղի ունեցած ահավոր կոտորածի և դաժան հաշվեհարդարի մասին, Ապպիանոսը կանգ է առնում խորհրդավոր նախանշանների և հրաշքների վրա, որոնք կանխագուշակում էին այդ սարսափելի արհավիրքները։

«Թվում էր աստվածներն իրենք կանխագուշակել էին այդ ամենը,—ասում է Ապպիանոսը,—Շատ հրաշքներ կատարվեցին. ջորին ծննդաբերեց, հղի կինն ոչ թե երեխա, այլ օձ ծնեց, աստված ուղարկեց սարսափելի երկրաշարժ, Հռոմում փուլ եկան մի քանի տաճարներ։ Այդ ամենը հռոմայեցիներն ընկալում էին ծանր տրամադրությամբ։ Կապիտոլի տաճարը, որ ... այրվեց, ըստ որում ոչ ոք չգիտեր հրդեհի պատճառը։ Այդ ամենը ընկալվում էր մասնայի կողմից, որպես նախանշան Իտալիայի և հռոմայեցիների ապագա կործանման»[177]։

Նույն անտարապարտությունը երևան է գալիս, երբ Ապպիանոսը հրաժարվելով իր նախկին զգաստ մոտեցումից հանրապետականների և եռապետների միջև Հռոմում ծավալված արյունահեղ պայքարի նկատմամբ գրում է. «Ոչ մի թշնամանք չկար Անտոնիոսի և Ցիցերոնի միջև, թվում է, թե աստվածներն էին մղում պետությանը դեպի հեղաշրջում և պատրաստում էին նախապատրաստում Ցիցերոնի համար»[178]։ Նա կամ խոսելով Փիլիպեում Կասիոսի և Բրուտոսի զորքերի ջրած խոշոր պարտության մասին և վերջին հանրապետա-

[175] Նույն տեղում, V, § 94։

[176] Аппиан, Римская история, ВДИ, 1950, 2; Приложение 2.

[177] Аппиан, Гражданские войны, Л., 1935, кн. 2, § 61.

[178] Նույն տեղում, III, § 61։

կանների ինքնատպանության մասին, Ապպիանոսը հայտարարում է, որ Կեսարին սպանելու համար Բրուտոսը և Կասիոսը ենթարկվեցին աստվածների զայրույթին, որի մասին հաճախ հրաշքներով նա զգուշացնում էր նրանց [179]: Եվ ապա թվում է այն բոլոր զարմանահրաշ խորհրդանշանները, որոնցով աստվածները նախազգուշացնում էին Բրուտոսին և Կասիոսին նրանց մոտալուտ կործանում, որպես պատիժ իրենց գործած մեծ մեղքի:

Հարազատ մնալով անտիկ պատմագիրների ոճին Ապպիանոսն էլ իր աշխատության մեջ բավականին տեղ է հատկացնում երկարաշունչ ճառերին: Դրանում իր արտահայտությունն է գտել հեղինակի հռետորական կրթությունը: Բոլոր ճակատամարտերի սկզբում և կամ վերջում զորահրամանատարները հանդես են գալիս ոգեշունչ ճառերով, որը ըստ էության արտահայտում է հեղինակի մտքերն ու դատողությունները տեղի ունեցող խոովահույզ իրադարձությունների մասին: Այդպիսին են Տիբերիոս Գրակքոսի ճառը ժողովրդական ժողովում[180], Կասիոսի երկարաշունչ ճառը, որով նա դիմեց զորքերին՝ Ֆիլիպեի ճակատամարտից առաջ[181], Օկտավիանոսի և Անտոնիոսի ճառերը Պերուզիայի ճակատամարտից հետո և այլն: Այդ բոլոր ճառերը կառուցված են հռետորական արվեստով և տալիս են պատմական իրադարձությունների բավականին հաջող վերլուծություն: Անկասկած, ճառերը միջոց են ծառայել Ապպիանոսի, ինչպես և ուրիշ անտիկ պատմագիրների համար՝ արտահայտելու իրենց դատողություններն ու մտահանգումները:

Ուշագրավ է Հուլիոս Կեսարի ճառը Փարսալոսի նշանավոր ճակատամարտից առաջ: Կեսարը ելնելով միապետական տերության զորահրամանատարի դիրքերից, հրամայում է ուշադրություն չդարձնել դաշնակիցների վրա, «Նրանց հաշվի չառնեք,— ասում է նա զինվորներին,—...քանի որ փոխուգացիները, սիրիացիները և լիդիացիները սարսուկներ են և միշտ պատրաստ են փախուստի և ստրկության... Հետևեցեք միայն թաթլիկներին, ուշադրություն չդարձնելով շների նման ձեր շուրջը վազվզող և ազմուկ հանող դաշնակիցների վրա: Ընդհանուր փախուստի մասնակցով խնայեցեք թաթլիկներին, որպես ձեր ցեղակիցների, իսկ դաշնակիցներին բնաջնջեք, որպեսզի վախ ու սարսափ տարածեք մյուսների մեջ»[182]: Այս ճառում երևան է գալիս Կեսարի և Ապպիանոսի մեծապետական վերաբերմունքը դեպի ոչ-հռոմայեցիները՝ «դաշնակիցները»:

Ի դեպ, Ապպիանոսի վկայությամբ Փարսալոսի ճակատամարտում մասնակցում էին նաև հայերը: «Հելլեններից բացի,— ասում է Ապպիանոսը,— դաշնակիցների թվում կային համարյա այն բոլոր ժողովուրդները, որոնք բնակվում են ծովափնյա վայրերում. արևելյան ուղղությամբ՝ թրակիացիներ, հելլեսպոնտոսցիներ, բյութանացիներ, փռյուգիացիներ, լիդիացիներ, հրեական ցեղը և նրանց հարևան արաբները... Կային և թագավորներ ու իշխաններ իրենց զորքերով... Զորավար Տաքսիլը բերել էր հայերին, որոնք բնակվում էին Եփրատի այս կողմում, Մեգաքատոր՝ Արտապատ թագավորի փոխարքան, որը բերել էր Եփրատի այն կողմում բնակվող հայերին»[183]:

Ապպիանոսի թերի կողմերից է երբեմն անփույթ վերաբերմունքը դեպի աղբյուրների վկայությունները, որի հետևանքով նրա աշխատության մեջ սպրդում են անճիշտ տեղեկություններ. նա երբեմն շփոթում է դեպքերի թվականները, անունները, անճշտություններ կան դեպքերի հաջորդականության և աշխարհագրական տվյալների մեջ:

Այնուամենայնիվ, Ապպիանոսի «Քաղաքացիական պատերազմները» աշխատությունը անտիկ պատմագրության միակ հուշարձանն է, որտեղ տրված է կապակցված շարադրանք սկսած Գրակքոսների շարժումից ընդհուպ մինչև Ակտիումի պատմական ճակատամարտը ներառյալ: Իր «Հռոմեական պատմության» այս դրվագում՝ «Քաղաքացիական պատերազմներում», Ապպիանոսը հանդես է գալիս որպես

[179] Նույն տեղում, IV, § 134:
[180] Նույն տեղում, I, § 11:
[181] Նույն տեղում, II, § 94, 95:
[182] Նույն տեղում, II, § 71:
[183] Նույն տեղում, II § 71:

ինքնատիպ պատմաբան, որը պատշաճ տեղ է հատկացրել քաղաքացիական պատերազմների նյութական դրդապատճառներին և դասակարգային պայքարի արտահայտություններին անտիկ աշխարհում: Պատմական իրադարձությունների իր ռեալիստական մեկնաբանումներով և գրելու մեթոդով Ապպիանոսը հանդիսանում է խիստ նշանակալի երևույթ անտիկ պատմագրության մեջ:

ԴԻՈՆ ԿԱՍԻՈՍ ԿՈԿՑԵՅԱՆՈՍ (մոտ 155—235 թ. մ. թ.)— Դիոն Կասիոսը ծնվել է Բյութանիայի Նիկեա քաղաքում: Հայրը պատկանում էր սենատորական դասին: Անհրաժեշտ է նշել, որ սկսած Ադրիանոս կայսեր ժամանակաշրջանից պրովինցիաների արիստոկրատիայի ներկայացուցիչները (ինչպես, օրինակ, Ֆլավիոս Արրիանոսը, Դիոն Կասիոսը և շատ ուրիշներ), բարձր պաշտոններ էին գրավում Հռոմում: Իտալիան արդեն վաղուց դադարել էր Հռոմեական լայնածավալ տերության մենաշնորհյալ կենտրոնը լինելուց և հռոմեական ստրկատիրական արիստոկրատիան անխուսափելիորեն պետք է մեծացներ իր սոցիալական հենարանը ընդգրկելով պրովինցիաների ստրկատիրական վերնախավին՝ համատեղ պայքարելու համար ստրուկների և գյուղի ու քաղաքի քայքայված աշխատավորական զանգվածների դեմ:

188 թ. (մ. թ.) Կոմմոդոս կայսեր օրոք Դիոն Կասիոսը ընդգրկվեց սենատի կազմի մեջ: 194 թվականին ընտրվեց պրետոր, հետագայում կոնսուլ և Աֆրիկայում՝ պրոկոնսուլ, իսկ 229 թ. Ալեքսանդր Սեվերոս կայսեր հետ միաժամանակ՝ երկրորդ անգամ կոնսուլ: 214—215 թվականներին Դիոն Կասիոսը մոտ էր կանգնած Կարակալլա կայսեր արքունիքին, երբ կայսրը գտնվում էր Բյութանիայի Նիկոմեդիա քաղաքում և պատրաստվում էր Հայաստանը գրավելու համար պատերազմի գնալ պարթևների դեմ, հպատակեցնելով ողջ Արևելքը, ինչպես այդ կատարեց Ալեքսանդր Մակեդոնացին, որին նա երազում էր նմանվել:

Այնուհետև Դիոնը հեռանում է հասարակական-քաղաքական կյանքից, մեկնում է իր ծննդավայրը և ամբողջովին նվիրվում գրական աշխատանքին: Նա գրում է իր մեծածավալ գործը՝ 80 գրքից բաղկացած «Հռոմի պատմությունը», որը

շարադրել է հունարեն և ըստ իր վկայության նյութեր է հավաքել 10 տարվա ընթացքում, իսկ մշակման վրա աշխատել է ևս 12 տարի: Ուշեմն իր այդ ստվարահատոր գիրքը 22 տարվա ժրաջան աշխատանքի արդյունք է: Աշխատությունն ընդգրկում է Հռոմի պատմության նախնական շրջանից մինչև 3-րդ դարի առաջին կեսը (մ. թ.): Դիոնի ծավալուն երկից պահպանվել են 36—60 գրքերը (մ. թ. ա. 67 թվականից մինչև մ. թ. 46 թվականը): Պահպանվել են նաև 78-րդ և 79-րդ գրքերից մեծ հատվածներ: Դիոնի աշխատության համառոտ մեջբերումներ պահպանվել են 11-րդ դարի բյուզանդական պրող Քսիֆիլինոսի աշխատության մեջ, այն է Դիոնի 36—80 գրքերը, ինչպես նաև բյուզանդական ժամանակագիր Զոնարասի «Համաշխարհային պատմության» 7—11 գրքերում, որտեղ շարադրված է Հռոմի պատմությունը սկսած առասպելական էնեասից մինչև Կորնթոսի կործանումը (Դիոնի 17—21 գրքերը):

Դիոն Կասիոսն օգտվել է բազմազան աղբյուրներից. Հռոմի հին շրջանի պատմության համար նա օգտվել է տարեգրություններից (annales), իսկ 21 դարերի պատմության համար՝ Պոլիբիոսից, Լիվիոսից, Տակիտոսից, Սվետոնիոսից և ուրիշ պատմագիրներից, ինչպես նաև Օգոստոսի, Ադրիանոսի, Սեվերոսի նոթերից: Իր ժամանակաշրջանի իրադարձությունները հավանաբար շարադրել է ինքնուրույնաբար, որպես այդ ժամանակի սոցիալ-քաղաքական կյանքի գործուն մասնակիցներից մեկը:

Իր քաղաքական հայացքներով Դիոնը միապետական է: Հետևելով հռոմեական արիստոկրատիայի տեսակետներին նա ևս գովաբանում է հին հանրապետական կարգը, բայց դրան մոտենալով իրերին և երևույթներին, միապետությունը համարում է անխուսափելի անհրաժեշտություն:

Շարադրման եղանակով Դիոն Կասիոսն աշխատել է նմանվել Թուկիդիդեսին, Պոլիբիոսին, Տակիտոսին: Նա չունի հետևողական և կուռ պատմահայեցողություն: Նրա ամբողջ «Պատմության» մեջ չկա դեպքերի ներքին պատճառակցական կապ, սոցիալական խավերի գործունեությունը բացատրող դրդապատճառներ: Նա բարեխղճորեն շարադրում է

պրինցիպատի դարաշրջանի պատմությունը, բայց նրա մեկնաբանումը մեզ համար հաճախ անընդունելի է։ Պատմական պրոցեսը նրա համար մնում է իռացիոնալ. (ոչ բանական) ըստ նրա մարդկային բանականությունն ի վիճակի չէ այն բացատրել, դեպքերը կարող են կախված լինել ճակատագրից, գերբնական ուժերից և հաճախ՝ ուժեղ անհատների կամքից։ Դիոնի «Պատմության» մեջ ռեալ իրականության բոլոր գույները գորշ են, միապաղաղ, որպեսզի ուժեղ անհատն ավելի կենդանի ու վառ գծագրվի այդ ֆոնի վրա իր կայսերական վեհությամբ։

Բնորոշ են նրա խորհրդածություններն այն մասին, թե կառավարման ո՞ր ձևը պետք է լավագույնը համարել՝ հանրապետությո՞ւնը, թե՞ միապետությունը։ Իր դատողություններն այս մասին արտացոլվել են Օգոստոսի մերձակիցների՝ Ագրիպպայի և Մեկենասի հառերում, ըստ որում նրանք հանդես են գալիս բանավեճի ձևով։ Օգոստոսը ունկնդրում է նրանց, որպեսզի ճշմարիտ որոշում կայացնի[184]։ Ագրիպպան գովաբանում է հանրապետության գերազանցությունը, հանրապետության օրոք տիրող ազատությունն ու հավասարությունը։ Մեկենասը պաշտպանում է միապետությունը, որպես լայնածավալ և բազմացեղ տերության կառավարման լավագույն ձև։ Հռոմի կայսրությունը խիստ ընդարձակվել է թե տարածությամբ և թե բնակչության թվով։ Բնակչությունն արտասովոր խայտաբղետ է և տարբեր իր ծագումով և սովորություններով։ Նրա կառավարման գործը դժվարացել է, և ավելի լավ կլինի, որպեսզի կառավարման ղեկն անցնի մեկի ձեռքը[185]։

Համբերությամբ ունկնդրելով իր խորհրդատուներին, և հայտնելով իր երախտագիտությունը նրանց բարյացակամության համար, Օգոստոսը ըստ Դիոնի նախընտրությունը տալիս է Մեկենասի խորհրդին։ Բայց, ինչպես ավելացնում է Դիոնը «ամբողջը միանգամից չէր իրականացնում, վախենալով, որ եթե արագ ձեռնամուխ լինի մարդկային կարգերի արմատական փոփոխությանը, շատ բան կարող է տապալվել։ Այդ պատճառով էլ որոշ գործեր նա անմիջապես կատարեց, մի քանիսն ավելի ուշ, մնացածը թողեց իր հաջորդներին, հուսալով, որ ժամանակն իր գործը կանի և ամեն ինչ կընդունի իր անհրաժեշտ ձևը»[186]։

Այսպես, ուրեմն, Դիոնի աշխատության մեջ պատմական դեպքերն անչափ պարզեցված են, ամեն ինչ կատարվում է ուժեղ անհատի կամքի շնորհիվ։ Սենատը, բոլոր խավերը հլու համաձայնում են նրա կամքին։ Դիոն Կասիոսը կտրվելով ռեալ իրականությունից, միանգամայն անտեսել է հանրապետության վերջում հռոմեական հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամը և հանրապետությունից անցումը միապետության՝ մեկնաբանում է Օգոստոսի խորամանկ քաղաքական խաղով։

Դիոնի համար (ինչպես և անտիկ գրողներից շատերի) հրաշքները մեծ դեր են խաղում։ Այդ բանը նկատվում է նույնիսկ իր աշխատության այն հատվածում, որ նա գրել է իր սեփական հիշողությունների հիման վրա։

Այնուամենայնիվ, հակառակ վերոհիշյալ թերություններին, Դիոն Կասիոսի աշխատությունը պրինցիպատի պատմությունը ուսումնասիրելու համար կարևոր աղբյուր է։ Նրա ծավալուն աշխատությունը՝ «Հռոմի պատմությունը» հարուստ նյութեր է պարունակում հանրապետության և մանավանդ վաղ կայսրության դարաշրջանի պատմության վերաբերյալ։

ՈՒՇ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄԻԱՆՈՍ ՄԱՐԿԵԼԻՆՈՍ (330—400 թթ.).—*Տակիտոսից հետո հռոմեական պատմագրության ամենախոշոր դեմքը Ամիանոս Մարկելինոսն է։ Նա ծնվել է Անտիոքում, հունական ազնվական ընտանիքում։ Պատանի հասակում զինվորական ծառայության է մտել։ 353 թ. նա եղել է հեծելազորի մագիստեր Ուրզիցինոսի շքախմբում սկզբում Անտիոքում և ապա Մեդիոլանում (Միլան)։ Այնուհետև, Ուրզիցինոսի հետ միասին*

[184] Дион Кассий, 5, 1—41, „Древние германцы", М., 1937. Сборник документов, 5, 1—41.

[185] *Նույն տեղում, § 15—16։*

[186] *Նույն տեղում, 52, § 40։*

Ամիանոսը մեկնում է Գալլիա՝ դիմագրավելու գերմանական ցեղերի հարձակումները։ Ապա 357 թ. գնում է Արևելք, ըստ որում երկրորդ անգամ՝ 363 թ. կայսր Հուլիանոսի հրամանատարությամբ։ Հուլիանոսի սպանությունից հետո Ամիանոսը գտնվելով հռոմեական անփառունակ նահանջող բանակի շարքերում վերադառնում է Անտիոք, հրաժարվում է զինվորական ծառայությունից, միաժամանակ ապրում է իր հայրենի Անտիոքում և ապա վերջնականապես հաստատվում է Հռոմում։ Իր պատմական մեծ աշխատությունը նա անվանել է «Գործք» (Rerum gestarum libri XXXI կամ համառոտ Res gestae)։

Ամիանոսի «Գործքը» կամ «Պատմությունը» բաղկացած է եղել 31 գրքից, որից պահպանվել են վերջին 14—31 գրքերը։ Նրա աշխատությունն ընդգրկել է Ներվայի ժամանակից սկսած Հռոմի ներքին և արտաքին իրադարձությունները՝ ընդհուպ մինչև Վալենտ կայսեր վախճանը, այսինքն՝ 96 թվականից մինչև 378 թվականն ընկած ժամանակաշրջանը։ Պահպանված գրքերը ընդգրկում են 353-ից մինչև 378 թվականն ընկած ժամանակաշրջանի իրադարձությունների պատմությունը։

Թե՛ գրելու մեթոդով, թե՛ իր ոճով և թե՛ պատմական նյութերը խմբավորելու և շարադրելու ձևով Ամիանոս Մարկելինոսը հետևել է Տակիտոսին։ Նա յուրացրել է շարադրանքի տակիտոսյան-տարեգրական եղանակը, սակայն դա կույր նմանողություն չէր. այստեղ վճռական դեր է խաղացել Ամիանոս Մարկելինոսի բազմակողմանի կրթությունը և պատմագիտական հաշակը, որը նրան օգնել է ստեղծագործորեն յուրացնելու և ըստ արժանվույն գնահատելու Տակիտոսի թողած գրական ժառանգությունը՝ նրա նման ազատ, անկաշկանդ ընկալելու պատմական իրադարձությունները, անկեղծ, պարզ ու շիտակ պատմելու իր ժամանակակից անցքերը։ Նա էլ Տակիտոսի նման խոստանում է անաչառ լինել։ Ավարտելով իր աշխատությունը Ամիանոսն ասում է. «Ես խոստացել էի իմ աշխատության մեջ ճշմարտությունը տալու և կարծում

եմ, որ ոչ մի տեղ գիտակցաբար չեմ շեղվել իմ այդ խոստումից»[137]։

Հակառակ անաչառ լինելու մասին արված իր խոստմանը Ամիանոսն էլ Տակիտոսի նման հարազատ մնաց իր սոցիալ-քաղաքական միջավայրին։ Լինելով իր դարի վերնախավի պատմագիր նա իր աշխատության մեջ մեծ մասամբ շարադրել է կայսրերի և նրանց զորավարների ռազմա-քաղաքական գործունեությունը, արքունական կյանքը, հաճախ անտեսելով բնակչության լայն խավերին։ Ելնելով տիրող ստրկատիրական գաղափարախոսության դիրքերից Ամիանոսը չի կարողանում կամ չի կամենում հասկանալ հռոմեական պլեբսի հաճախակի խռովությունների պատճառը, և գոհունակությամբ է արձանագրում Հռոմի պրեֆեկտ Լեոնտիոսի կողմից հռոմեական պլեբսի հուզումը դաժանորեն ճնշելու մասին։

Ամիանոսի «Պատմության» էջերում համեմատաբար ավելի մեծ տեղ է հատկացված պրոկոնսուլների և պրետորիայի պրեֆեկտների կողմից պրովինցիաների աշխատավորության անողոք կեղեքմանը, դրա հետևանքով պրովինցիաներում ծագած ազատագրական պայքարին։ Ամիանոսն էլ Տակիտոսի նման հաճախ լուսանկարչական ճշտությամբ արձանագրում է պրովինցիաների թալանի և հարստահարման փաստեր։ Այսպես, օրինակ, իր «Պատմության» 15-րդ գրքում Ամիանոսը պատմում է Արևելքի պրետորիայի պրեֆեկտ ընչաքաղց Մուզոնիանի և հեծելազորի հրամանատար Պրոսպերի համատեղ շորթումների և կեղեքման մասին Արևելքում։ «Դրանք երկուսն էլ գործում էին շատ համերաշխ, փոխադարձ ծառայություն մատուցելով միմյանց,—հեգնանքով արձանագրում է Ամիանոսը,—... Մինչդեռ պարսից հրամանատարները... կողոպտիչ արշավանքներ էին գործում, ավազակային հարձակումներով ասպատակում էին մեր սահմանները, հարձակվում էին Հայաստանի, ավելի հաճախ Միջագետքի վրա, իսկ հռոմեական զորահրամանատարները այդ

[137] Аммиан Марцеллин, История, выпуск II, перевод Ю. Кулаковского и А. Сонни, Киев. 1908, кн. 31, 16.

ընթացքում զբաղված էին թալանելով հնազանդ բնակիչների ունեցվածքը»[188]։

Սակայն Ամիանոսը փոխում է իր վերաբերմունքը «հնազանդ բնակիչների» նկատմամբ, երբ վերջիններս հռոմեական կեղեքիչների դեմ ոտքի են կանգնում։ Այսպես, Կոստանդիոս կայսեր կողմից Հունաստանից կանչվում և Գալլիա է ուղարկվում կայսեր հորեղբոր որդին՝ Հուլիանոսը «վտանգավոր» և «ահարկու» գալլերի դեմ։ Հեղինակը արդարացնում է Հուլիանոսի գալլերի, ինչպես նաև երկրորդ Գերմանիայի սահմանապահին՝ Հենոսի մյուս ափին բնակվող ֆրանկների և ալլամանների հետ տեսած հաշվեհարդարը։ Փոխանակ նշավակելու Հուլիանոսի կողոպտական քաղաքականությունը, Ամիանոսը պարսավում է ֆրանկներին, որոնք խաղաղ ապրում էին իրենց երկրում, նրանց որակելով որպես «անհանգիստ ժողովուրդներ». նկարագրում, թե ինչպես Հուլիանոսը անակնկալ հարձակում է գործում ֆրանկների տատուարների վրա։ «Երբեք դեռևս ոչ մի իմպերատոր չէր մտել իրենց սահմանը։ Հուլիանոսը հեշտությամբ ճնշեց, շատ ժողովուրդ կոտորեց և գերի վերցրեց։ Կենդանի մնացածները հաշտություն խնդրեցին, որը Հուլիանոսը նրանց շնորհեց նպատակահարմար գրած պայմաններով»[189]։

Իր «Պատմության» 17-րդ գրքի 1-ին մասում Ամիանոսը մեծ սառնասրտությամբ պատմում է, թե ինչպես Հուլիանոսը անցնելով Հենոսը թալանի և հրի է մատնում ալլամանների գյուղերը, վերականգնում է այնտեղ Տրայանոսի կառուցած ամրությունը և ղինադադար կնքում բարբարոսների հետ։

Նույն գրքի 2-րդ մասում պատմում է պատժիչ արշավախմբի հետևյալ դրվագի՝ ֆրանկներին պաշարելու մասին և այն մասին, որ նրանց սովի մատնելով Հուլիանոսը հարկադրում է անձնատուր լինել[190]։

Ժողովրդական հուզումները, սարսուռները և կոլոնների ահավոր ապստամբությունները, (որոնց գագաթնակետը հանդիսացավ III և IV դարերում բագաուդների հուժկու ապստամ-

[188] Նույն տեղում, 5, 13։

[189] Նույն տեղում, գիրք 20-րդ մաս 10-րդ, 1։

[190] Նույն տեղում, գիրք 17-րդ, մաս 1-ին և 2-րդ։

բությունները) և պրովինցիաներում անընդմեջ բարձրացող ապստամբական պայքարը, միահյուսվելով արտաքին թշնամիների անընդհատ հարձակումներին կործանեցին Հռոմեական կայսրությունը։ Ամիանոս Մարկելլինոսն ապրում էր Հռոմեական կայսրության անկման դարաշրջանում, երբ ներքին հակասությունները ծայրահեղորեն սրվել էին և բարբարոսները անընդհատ գրոհում էին կայսրության բոլոր սահմանների վրա։ Լինելով լրջախոհ և բազմակողմանի զարգացման տեր պատմաբան Ամիանոսը չէր կարող չտեսնել Կայսրության սոցիալ-քաղաքական ճգնաժամը։ Սակայն Հռոմեական կայսրության մայրամուտը նա բացատրում էր փոքրաթիվ մարդկանց՝ կայսրերի և բարձրաստիճան մագիստրատների արատներով, նրանց սնափառությամբ, այլասերված բարքերով և ընչաքաղցությամբ։ Ելնելով Հռոմեական մեծապետական տեսակետից Ամիանոսն էլ անտիկ շատ պատմաբանների նման գերագնահատում էր Հռոմը, նրա փառավոր անցյալը։ Հռոմը նրա համար մնում էր urbis aeterna, հավիտենական քաղաք, իսկ Հուլիանոս կայսրը՝ Հռոմեական համաշխարհային տերության գաղափարի մարմնավորումը։ Իր «Պատմության» վերջին՝ 31-րդ գրքում նա Ադրիանապոլսի ճակատամարտը համեմատում է Կաննեի ճակատամարտի հետ[191]։ Բայց ըստ էության այդ համեմատությունը սխալ էր։ Հռոմեական հանրապետությունը 3-րդ դարում (մ. թ. ա.) ապրելով վերելք՝ Կաննեից հետո իր մեջ ուժեր գտավ ոտքի կանգնելու, շարունակելու ահեղ պայքարը և հաղթանակով ավարտելու Պունիկյան երկարատև պատերազմը։ Մինչդեռ 378 թ. (մ. թ.) Ադրիանապոլսի ճակատամարտից հետո զառամյալ Հռոմեական կայսրությունը ջլատված ներքին սուր հակասություններից և արտաքին ուժգին հարվածներից անկարող եղավ այլևս ոտքի կանգնելու։

Այս կարևոր հանգամանքը անտեսել էր Ամիանոսը. նա չկարողացավ ընդհանրացնել իր ապրած ժամանակաշրջանի պատմական իրադարձությունները, չըմբռնեց վերահաս ողբերգական վախճանը և կառչած մնաց իր մոլորության մեջ՝

[191] Նույն տեղում, գիրք 31-րդ, մաս 13, 19։

շարունակելով ապրել և իրերն ու երևույթները գնահատել մեծապետական հին գաղափարների ոգով։

Ամիանոսի պատմահայեցողության համար բնորոշ է նաև անհատի դերի գերագնահատումը։ Այստեղ արտահայտվել է Տակիտոսի ազդեցությունը։ Առանձնապես նա կանգ է առնում կայսրերի գործունեության վրա և նրանց պատասխանատու է համարում հռոմեական պետության չարիքների համար։ Նա էլ՝ Տակիտոսի նման՝ պատմության շարժիչ ուժը համարում է բարոյա-հոգեբանական ազդակը։ Ճիշտ է, Ամիանոսը չունի Տակիտոսի մտքի ուժն ու խորությունը և զիջում է նրան՝ պատմական իրադարձությունները գեղարվեստական դրամատիզմի ոգով շարադրելու տեսակետից։ Բայց նա մոտենում է Տակիտոսին իր հոգեբանական վերլուծության ուժով. բնորոշ է այդ առնչությամբ Հուլիանոս կայսեր բնութագրումը Ամիանոսի «Պատմության» մեջ։

Հուլիանոսի կերպարը սկսած անտիկ աշխարհից, գրավել է և շարունակում է գրավել պատմաբանների ուշադրությունը։ Քրիստոնեական պատմագրության մեջ նրան անվանել են Ուրացող, որովհետև Հուլիանոսը նպատակ ուներ վերականգնելու հեթանոսական կրոնի գերիշխող դիրքը։ Նրա օրոք քրիստոնեական եկեղեցին զրկվեց այն արտոնություններից, որ նա ձեռք էր բերել Միլանի էդիկտով։ Հուլիանոսը հելլենիստական լայն կրթության տեր մարդ էր, իր համոզմունքով՝ նեոպլատոնական փիլիսոփա, իր ժամանակի խոշոր մտածողներից մեկը։ Նա հեղինակություն էր վայելում Հունաստանի քաղաքային բնակչության մտավորականների և հեթանոսական արիստոկրատիայի շրջանում, բայց աջակցություն չուներ ոչ զորքերում և ոչ էլ ժողովրդական մասսաների մեջ։ Հանդես գալով քրիստոնեական եկեղեցու դեմ՝ Հուլիանոսը պայքարում էր հանուն անտիկ մշակույթի, հանուն հելլենիզմի իդեալների։ Փորձելով վերածնել հեթանոսությունը, Հուլիանոսը ելնում էր այն համոզումից, որ քրիստոնեությունը անհամատեղելի է անտիկ աշխարհի բարոյական սկզբունքների։ Նա իր ոգեշնչման աղբյուրը գտնում էր հելլենիզմի կենսահաստատ բարոյական նորմաների մեջ, բանականության, ռեալ իրականության, մարդու ուժի, նրա կյանքի իրա-

վունքի մեջ։ Ժխտելով քրիստոնեական եկեղեցու քարոզած մարդու ինքնանվաստացման, ինքնասահմանափակման սկզբունքները Հուլիանոսը պայքար հայտարարեց քրիստոնեական եկեղեցու դեմ, որը ըստ նրա, բռնանալով մարդու կամքի վրա, ընդունակ էր դաստիարակելու միայն «ստրուկներ»։

Հուլիանոսը, ինչ խոսք, խորամուխ չէր եղել քրիստոնեության ծագման սոցիալ-տնտեսական արմատների մեջ և չէր կարող, անշուշտ, կռահել, թե ինչու Հռոմեական կայսրության սահմաններում տարածվող բոլոր կրոնական վարդապետություններից առանձնակի նշանակություն ստացավ քրիստոնեությունը, որը դառնալով համաշխարհային կրոն, «բարբարոսական» ժողովուրդներին հանձնեց անտիկ մշակույթի տարրերը։ Հուլիանոսը միաժամանակ չըմբռնեց, որ Կոստանդինի կողմից քրիստոնեության նկատմամբ ցուցաբերած բարեհաճ վերաբերմունքը հանդիսանում է ստոկ քաղաքական իմաստության արտահայտություն։ Նա չհասկացավ, որ արդեն 3-րդ դարից տիրող քրիստոնեական եկեղեցին արբագործում էր Հռոմեական պետության կարգերը և իր հզորինակությամբ արդարացնում կայսերական իշխանությունը։ Մյուս կողմից՝ հռոմեական պետությունն էլ սկսած Կոստանդինից հովանավորում էր և աջակցում քրիստոնեական եկեղեցուն՝ այլ դավանանքների դեմ նրա մղած պայքարում զրանելով, որ կայսրության միասնականությանը պետք է համապատասխանի նաև մի միասնական եկեղեցի։

Ամիանոս Մարկելինոսն ինքն էլ հավատարիմ էր մնացել հին հեթանոսական կրոնին և համակրանքով էր վերաբերվում Հուլիանոս կայսեր կրոնական գաղափարներին, բայց նրան խորթ էին Հուլիանոսի փիլիսոփայական հայացքները, մասնավորապես նեոպլատոնիզմը[192]։ Ամիանոսը բարձր էր դա-

192 Նեոպլատոնիզմը ըստ էության հիմնված է Պլատոնի փիլիսոփայական սկզբունքների վրա։ Հանդիսացել է անկման շրջանի անտիկ ստրկատիրական հասարակության շահագործողական վերնախավի գաղափարախոսություն։ Նեոպլատոնիզմի դրույթներին ծանոթանում ենք նրա լավագույն ներկայացուցչի Պլոտինի (204—270) աշխատությունների միջոցով, որը հին կրոնի պաշտպանության ջատագովներից էր։ Ըստ այդ ուսմունքի՝ մարդկային գիտակցությամբ չի կարելի ըմբռնել ամբողջ գոյի նախահիմքը, ո-

սում Հուլիանոսի ձգտումը հին ավանդույթները պահպանելու և վերականգնելու, բայց միաժամանակ պարսավում էր Հուլիանոսի կրոնական անհամբերատարությունը, որը հաճախ դաժանության էր հասնում։ Այսպես, իր աշխատության 22-րդ գրքի 10-րդ մասում Ամիանոսը դաժան միջոցառում է համարում Հուլիանոսի արգելքը քրիստոնյա հռետորներին և քերականներին ուսուցչական գործունեությամբ զբաղվելու[193]։ Նույն գրքում Ամիանոսը պատմում է հեթանոսների կողմից Ալեքսանդրիայի եպիսկոպոս Գևորգին և երկու այլ քրիստոնյաների, դրամահատման պետ Դրակոնտիոսին և եկեղեցու շինարարության Դիոդորիսին գազանային ինքնագատասատանի ենթարկելը (մասնատել, հոշոտել, այրել և մոխիրը ծովը նետել)[194]։ «Երբ Հուլիանոսին հաղորդեցին այդ սարսափելի չարագործության մասին, նա սկզբում ցանկացավ դաժանորեն պատժել հանցագործներին։ Բայց նրա մերձավոր խորհրդականները մեղմացրին նրա բարկությունը, և նա բավարարվեց որոշում արձակելով, որի մեջ պարսավանքի ենթարկեց չարագործներին և սպառնաց ամենախիստ պատիժների ենթարկել հետագա նման փորձերը»[195]։ Անշուշտ, նման փորձերը,

բովհետև այն գտնվում է նրա տեսադաշտից դուրս։ Այդ նախահիմքը իր ճառագայթումներով թափանցում է տարբեր ձևով մարդկանց մեջ, բնության բոլոր երևույթների մեջ։ Որքան էակը ավելի նյութական է, այնքան նա հեռու է իսկական աստվածային կեցությունից։ Բնական կեցությունը սոսկ ճառագայթումն է բարձրագույն բացարձակ կեցության։ Հոգին միացած լինելով մատերիային՝ շղթայված է երկրին։ Երկրից ազատվելու համար մարդ պետք է կատարի բարեպաշտ կյանքի գծով վարժություններ, այսինքն, միստիցիզմի գծով։ Շեղելով փիլիսոփայական միտքը օբյեկտիվ աշխարհի ուսումնասիրությունից դեպի միստիկան, նեոպլատոնիզմի հետևորդները քարոզում էին, թե գերագույն բարիքը՝ միստիկական էքստազի միջոցով մարդու անմիջական միաձուլումն է աստվածության հետ։ Նեոպլատոնիզմը մեծ ազդեցություն է գործել ֆեոդալիզմի դարաշրջանի փիլիսոփայության վրա, որոշ չափով քրիստոնեության, ֆրանսիական և անգլիական ռեակցիոն փիլիսոփայության, մուսուլմանության և հրեադավածության վրա։

193 Аммиан Марцеллин, кн. 22. ч. X, § 7:

194 Նույն տեղում, § 3—10։

195 Նույն տեղում, § 11։

հրահրվելով Հուլիանոսի Ամիանոսի կողմից դատապարտված հին կրոնական մոլեռանդությունից, բազմիցս կրկնվել են։ Այնուամենայնիվ, Հուլիանոսը մնում է Ամիանոսի «Պատմության» մեջ որպես բարոյական չգերազանցված բարձր հատկանիշների տեր կայսեր տիպար։ Երբեմն կորցնելով չափի զգացումը Ամիանոսը ներբողի է վերածում Հուլիանոսի գործունեության շարադրանքը։ Իր աշխատության 16-րդ գրքում նա ինքն էլ խոստովանում է այդ մասին. «Եվ իմ ողջ պատմածը վերծ լինելով ամեն տեսակի սուտից հիմնված է միայն ճշմարտության անխախտ հիմունքների վրա, և այն կվերածվի համարյա ներբողի»[196]։ Եվ գովաբանելով Հուլիանոսի «սխրանքները» Գալլիայում ծանր հարկերից, կամայականություններից ու հարստահարումներից ոտքի կանգնած գալլական ժողովուրդների դաժանորեն «խաղաղացնելու» մասին, Ամիանոսը մեղանչում է ճշմարտության դեմ, երբ գրում է. «Գալլիայում կատարած նրա սխրագործությունները, նրա արիությունը, նրա բախտավորությունը, գերազանցեցին հին ժամանակների շատ քաջագործություններին, և ես կաշխատեմ այդ պատճառով շարադրել այդ առանձին-առանձին, ըստ ժամանակի հաջորդականության, գործի դնելով իմ համեստ հնարավորությունները, իհարկե եթե դրանք բավական լինեն նման խնդրի համար»[197]։

16-րդ գրքի առաջին 8 հատվածների մեծ մասը հեղինակը նվիրել է Հուլիանոսին, գովաբանքներ շռայլելով նրա մատավոր բարձր կարողությունների, լրջախոհության մասին, նրա արիության և մարտունակության մասին։ «Թվում է, թե ինչ որ բախտավոր աստղ ուղեկցում էր այդ երիտասարդին, սկսած նրա ազնիվ օրրանից մինչև նրա վերջին շունչը։ Քաղաքացիական և ռազմական արագորեն ձեռք բերված հաջողություններով նա այնպես աչքի ընկավ, որ իր իմաստության համար նրան համարում էին երկրորդ Տիտոս (Վեսպասիանոսի որդին), ռազմական փառքով նա նմանվեց Տրայանոսին, ողորմած էր, ինչպես Անտոնինոսը, փիլիսոփայության մեջ

196 Նույն տեղում, XVI, § 1, 2, 3։

197 Նույն տեղում, § 1, 2, 3։

խորամուխ էր լինում, ինչպես Մարկոսը, որի գործերը և բարոյական կերպարը նա իր իդեալն էր համարում»[198]։

«Քնքուշ պատանեկության տարիներին...— շարունակում է Ամիանոսը,— դաստիարակվելով Մինևրվայի տաճարի հովանու տակ, նա ռազմի դաշտ ելավ ոչ թե մարտական վրանից, այլ Ակադեմիայի սովերախիտ ծառուղիներից և ճնշելով գերմաններին, խաղացնելով սառնաշունչ Հենոսի հոսանքը, այստեղ՝ արյուն թափեց, այնտեղ՝ արյունոտուշտ թագավորների ձեռքերը շղթայեց»[199]։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում «Պատմության» 18-րդ գրքի 4—10 մասերը, որտեղ Ամիանոսը շարադրում է Պարսից արքա Շապուհի և հռոմայեցիների միջև Հայաստանի և Միջագետքի համար մղվող ահեղ գոտեմարտի նախապատրաստական աշխատանքները։ «Արևելքի ճակատագիրը հնչեցրեց իր ահավոր փողը, ազդարարելով սարսափելի վտանգների մասին,— պատկերավոր ոճով պատմում է Ամիանոսը,— Շապուհը ուժեղացնելով իր զորքը վայրենի ժողովուրդների օժանդակ ջոկատներով, վառվելով իր թագավորության ընդարձակելու անմարդկային կրքով, պատրաստում էր զենք, զորքեր և պաշարեղեն։ Գարնան սկզբներին պետք է կատարեր իր սարսափելի ներխուժումը»[200]։

Կոստանդիոս կայսեր մահվանից հետո Հուլիանոսը գրավելով գահը 361 թ. (մ. թ.) անդադար պատրաստություններ է տեսնում պարսկական արշավանքի համար։ Այստեղ Ամիանոսը նորից ջանք է թափում արդարացնելու Հուլիանոսի արեվելյան էքսպանսիան. «նա ցանկանում էր վրեժ լուծել, որովհետև դիտեր և լսել էր, որ այդ վայրի ժողովուրդը 60 տարվա ընթացքում կեղեքում էր մեր Արևելքը ահավոր կողոպուտով և թալանով և մեր բանակները հաճախ բնաջնջվել են նրանց կողմից մինչև վերջին մարդը»[201]։ Հակառակ հեռատես մարդկանց նախազգուշացումներին՝ Հուլիանոսը մշակելով արշավանքի նախագիծը՝ պատրաստում է անհրաժեշտ պարենը, իր կողմը գրավում սարակինոսներին, որոնց ջոկատները հմուտ էին պարտիզանական մարտերում։ Ապա պոնտոնային կամուրջի վրայով իր զորքերով կարում-անցնում է Աբորգեսը և ոգեշունչ ճառով դիմում է զինվորներին, նշելով որ առաջին անգամն է, ինչ հռոմայեցիները թափանցում են Պարսից թագավորության սահմանները, որ իրենց կավի են մղում վերջերս նվաճված քաղաքների դառն վիճակը, խորտակված բանակների մարտիկների սովերները։ Նա իր ճառը ավարտում է հետևյալ խոսքով. «Մենք երդվել ենք անցյալի վերքերը բուժել և բուժել մեր պետության անվտանգությունը... Հալածանակը միշտ արդար գործի կողմն է»[202]։

Մասնակցելով պարսիկների դեմ հռոմայեցիների մղած երկու արշավանքներին՝ Ամիանոս Մարկելինոսը հանդես է գալիս որպես ռազմական գործի հմուտ գիտակ գործիչ։ 359 թ. նա մասնակցել է Ուրզիցինի հետ Ամիդ բերդաքաղաքի պաշտպանական մարտերին և ապա պարսիկների կողմից քաղաքը գրավելուց հետո հազիվ մազապուրծ է լինում և ուղևորվում է Անտիոք[203]։

Իբրև 359 թ. արշավանքի իրադարձությունների ականատես, Ամիանոս Մարկելինոսը վկայում է, որ պարսկական զորքերը գրավել և կործանել էին հարավային Հայաստանում և Ծոփքում Ամիդից բացի շատ այլ ամրություններ և սարկական ծառայության համար Պարսկաստան էին քշել հազարավոր գերիներ[204]։ Այնուհետև Ամիանոսը մասնակցում է կայսր Հուլիանոսի առաջնորդությամբ պարսիկների դեմ մղած մեծ արշավանքին, որը նա նկարագրում է խոսքի բացառիկ ուժով և վառ պատկերներով։ Նա խրախուսում է Հուլիանոսի կիրառած Ֆյուռհոսյան տակտիկան՝ մեծ հմտությամբ ձգելու բանակը լայնքով և կամ հավաքել-սեղմել այն, որպեսզի ըստ պահանջի այն թվար ավելի մեծ կամ ավելի փոքր[205]։ Մեծ ջերմությամբ և մասնագիտորեն նա նկարագրում է ռազմա-

198 Նույն տեղում, § 4։
199 Նույն տեղում, XVI, § 4։
200 Նույն տեղում, XVIII, § 1։
201 Գիրք XXII, XII, § 1։
202 Նույն տեղում, XXIII, 5-րդ մաս, § 16—23։
203 Նույն տեղում, գիրք XIII, § 8—9։
204 Նույն տեղում, XIV, 6-րդ մաս, § 1—2։
205 Նույն տեղում, գիրք XXIV, § 1, 3։

սարսաեգիական և տակտիկական բոլոր նրբությունները, որ կիրառում էր Հուլիանոսը իր մղած մարտերում։

Ամիանոսը 24-րդ գրքում արձանագրում է Հուլիանոսի թույլ տված սխալները։ Նախ չսելով ողջախոհ զորականներին, որոնք Տիգրոնի պաշարումը համարում էին անժամանակ և խիստ համարձակ քայլ, քանի որ քաղաքն ուներ բնական անառիկ դիրք, Հուլիանոսը հապճեպորեն անցավ հարձակման։ Թեպետ իր բանակի երկրորդ և գլխավոր մասով Եփրատան ի վար շարժվեց Տիգրոնի վրա, բայց չհամարձակվեց պաշարել և որոշեց նահանջել[206]։ Հուլիանոսը ըստ Ամիանոսի գործեց նաև երկրորդ սխալը. նա հրամայեց այրել բոլոր նավերը։... Այդ կատարեց, որպեսզի լքած նավատորմը չծառայեր թշնամու օգտին[207]։ Հեղինակը փորձում է արդարացնել Հուլիանոսին, թեև խոստովանում է, որ դա անմիտ քայլ էր։ Հետագայում նահանջի ժամանակ խիստ զգացվեց նավատորմի պակասը։

Այնուհետև դեպքերը զարգանում են արագ։ Ամիանոսը նկարագրում է Շապուհ Բ-ի լավ սպառազինված վիթխարի բանակի առաջխաղացումը, հռոմեական հեռևակի մեծագույն լարումով կատարած գրոհը, և կատաղի մարտում պարսիկներին ետ մղելը։ «Այդ կռվում պարսիկների կորուստները շատ մեծ էին, իսկ մերը՝ շատ քիչ»[208]։ Անհավատալի հայտարարություն հարձակման անցնող հռոմեական զորքի խիստ պակաս կորուստների մասին։ Սակայն Ամիանոսի՛ լավելի է հետևում հշմարտությունից, երբ պատմելով 3 օրվա զինադադարի, սովահար զինվորների տանջանքների և կայսեր կողմից արքայական ուտելիքը ամենաաղքատ զինվորներին տալու մեծահոգի արարքի մասին, նորից տուրք է տալիս Հուլիանոսին գովաբանելու տենչանքին։ Հռոմեական բանակի տագնապալի վիճակը և գալիք ահավոր գոտեմարտն անգամ չկարողացան շեղել Հուլիանոսին իր փիլիսոփայական մտորումներից. «Եվ, օ՛ զարմանք,—բացականչում է Ամիանոսը,—այդ լարված վիճակում անգամ նա քիչ էր քնում, վեր էր

206 Նույնը VII, § 1։
207 Նույն տեղում, § 1, 2, 3, 4։
208 Նույն տեղում, VII, § 7—8։

ելնում ըստ սովորության և Հուլիոս Կեսարի օրինակով սկսում էր գրել, խորհել ինչ որ փիլիսոփայի մեծ գաղափարների մասին»[209]։

Այնուհետև միևնույն 25-րդ գրքում Ամիանոսը մեծ վարպետությամբ նկարագրում է ախոյանների վերջին մոլեգին բախումը և հռոմայեցիների պարտությունը. «Արագորեն շրջապատելով մեզ, հակառակորդը նիզակներով և նետող ամեն տեսակի զենքերով մարտի նետվեց, իսկ մերոնք հագիվ էին դիմանում փղերի արձակած սուր հոտից և նրանց հանած ահավոր մռնչյունից»։ Ինչպես վկայում է Ամիանոսը, կայսրը շտապեց և անզգուշաբար առանց զրահի, նետվեց թշնամու դեմ կռվողների առաջին շարքերը, հակառակ նախազգուշացման, որպեսզի հեռու մնա գահավիժող զանգվածից։ Հուլիանոսը հանկարծակի հեծյալի նիզակի հարվածից ծանր վերք ստացավ։ Բերվելով վրան նա դիմեց իր մոտ կանգնածներին, ապա սաղը ջուր խնդրեց, խմեց և վախճանվեց»[210]։

Այնուհետև Ամիանոսը պատմում է հռոմայեցիների ծանր նահանջի մասին, որին ինքն էլ մասնակցել է։ Նկարագրում է Տիգրիսն անցնելը, արիաբար երկար ժամանակ սովին դիմանալը և վերադարձը հայրենիք։ Հռոմայեցիներն Հովիանոս նոր կայսեր օրոք ստիպված Շապուհի հետ ամոթալի հաշտություն են կնքում, դիջելով նրան 5 մարզ իրենց նշանավոր Մծբին և Սինգարա քաղաքներով[211]։ Այսպես, ահա, Ամիանոս Մարկելինոսը որպես զորավար, մինչև վերջը մնաց իր բարձրության վրա, բաժանելով Հուլիանոսի ձախողակ արշավանքի բոլոր դժվարությունները։ Միաժամանակ նրա «Պատմությունը» կարևոր աղբյուր հանդիսացավ այդ պատմական արշավանքի, որն սկսվել էր փայլուն հույսերով և ունեցել էր այդքան ողբերգական վախճան։

Արշավանքից վերադառնալուց հետո Ամիանոսը հրաժարվում է զինվորական ծառայությունից և նվիրվում է գրական աշխատանքին։ Նա բազմակողմանի գիտելիքների տեր պատ-

209 Նույն տեղում, § 1, 2, 3։
210 Նույն տեղում, § 2, 3։
211 Նույն տեղում, § 8։

մագիր էր, լավ գիտեր գրականությունը և փիլիսոփայությունը, և եթե դրան ավելացնենք նաև, որ իր «Պատմության» մեջ նկարագրված իրադարձություններին Ամիանոսը ժամանակակից է եղել, իսկ որոշ պատմական անցքերի անմիջական մասնակիցը, ապա մեզ համար հասկանալի կլինի «Պատմության» խոշոր նշանակությունը, որպես խիստ կարևոր աղբյուրի։ Է՛լ ավելի է մեծանում Ամիանոսի նշանակությունը որպես պատմագրի, շնորհիվ նրա անշառ շարադրանքի։ Ճիշտ է Հուլիանոսին վերաբերող դրվագներում Ամիանոսը խախտում է անաչառ լինելու մասին իր տված խոստումը, բայց դա բխում է Հուլիանոսի մասին ունեցած իր անկեղծ համոզումից։

Ամիանոսի «Պատմության» յուրահատուկ կողմերից մեկը նրա բազմաթիվ պատմա-աշխարհագրական, ազգագրական և ռազմագիտական բնույթի էքսկուրսներն են, որոնք հիշտ է, խզում են շարադրանքի ընթացքը, պատմագրական բնույթ չունեն և որոշ չափով ցրում են ընթերցողի միտքը, սակայն արժեքավոր են իրենց հաղորդած հարուստ տեղեկություններով և վկայում են Ամիանոսի բազմակողմանի կրթության մասին։

Այդ էքսկուրսները ոչ միայն հարուստ տեղեկություններ են պարունակում Արևելքի մասին, այլև լույս են սփռում Հռոմեական կողոպտիչ արևելյան քաղաքականության վրա։ Իր աշխատության 14-րդ գրքի 8-րդ մասից մինչև 14-ը ներառյալ Ամիանոսը նկարագրում է Հռոմի արևելյան պրովինցիաները. Տավրոսից արևելք ընկած Կիլիկիան Տարսոս քաղաքով բերքառատ և հարուստ մի երկիր, Իսավրիան՝ Սելևկիա քաղաքով, նույնպես հարուստ խաղողի այգիներով և հացաբույսերով, և լեռներով առանձնացված մյուս արևելյան պրովինցիաներից։ Ապա նկարագրում է Կոմագենը իր Հիերապոլիս և Սամոսատ քաղաքներով, Սիրիան՝ աշխարհահռչակ Անտիոքով, Լիբանանի լեռներին կռթնած «գեղեցիկ, չքնաղ երկիր Փյունիկիան՝ մեծ, ծաղկուն քաղաքներով, որոնցից իրենց դիրքով և հռչակով աչքի են ընկնում Տյուրոսը, Սիդոնը և Բերիտը (ներկայիս Բեյրութը), ինչպես նաև Էմիսան և Դամասկոսը, որ հիմնվել են հնում»[212]։ Ապա նկարագրում է Պաղեստինը իր հիանալի մշակված հողերով և բարեկարգ քաղաքներով, դրանցից են՝ Կեսարիան, Ասկալոնը, Գազան, Բեթսաղեմը։ Այս երկրները գրավել և հռոմեական պրովինցիայի է վերածել Պոմպեոսը։ Եվ, վերջապես կանգ է առնում վաճառաշահ Արաբիայի վրա, իր շատ ամրություններով և բերդերով և Բոստրա, Գերազ ու Փիլադելֆիա քաղաքներով։ Տրայանոս կայսրը դժվարությամբ կարողացավ պրովինցիայի վերածել այս երկիրը, բազմիցս անգամ սանձելով բնիկների կատաղի պոռթկումները, երբ նա պատերազմ էր մղում պարթևների դեմ։ 22-րդ գրքում Ամիանոսը հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում Եգիպտոսի մասին, հատկապես կանգ առնելով նրա թագն ու պսակը կազմող Ալեքսանդրիայի և նրա փարոսի ու Սերապիոս տաճարի վրա։ Նույնպիսի պատմա-աշխարհագրական և ազգագրական էքսկուրս է նա կատարում աշխատության 23-րդ գլխում՝ նկարագրելով Պարսկաստանի 18 կարևորագույն մարզերը, սկսելով Ասորեստանից և վերջացնելով Արախոսիայով ու Գեդրոսիայով։ Դրանցից առաջին տեղը գրավում է Ասորեստանը։ Ըստ որում նույն հատվածում հետաքրքիր տեղեկություն է հաղորդում մարգարիտի առաջացման մասին հնդկական և պարսից ծովախորշերում[213]։

Իր հետաքրքրական էքսկուրսներում Ամիանոսը չի բավարարվում հռոմեական արևելյան պրովինցիաների և Պարսկաստանի ու Հնդկաստանի մարզերի աշխարհագրության, պատմության, բնակիչների և նրանց տնտեսության մասին սոսկ տեղեկություններ հաղորդելով, այլև ի հայտ է բերում որոշ հարցերում որոնող, հետազոտական միտք։ Իրեն հատուկ վերլուծական եղանակով նա փորձում է բացատրել երկրաշարժը, որը իր ապրած ժամանակաշրջանում՝ 358 թ. մեծ ավերներ պատճառեց Մակեդոնիայում, Փոքր Ասիայում և Պոնտոսում և, կործանեց Բյութանիայի Նիկոմեդիա քաղաքը։ Այդ առնչությամբ նա բերում է հունական փիլիսոփաների մեկնաբանությունները և ըստ երևույթին հավանական է գտել Անաքսիմանդրի բացատրությունը[214]։

[212] Նույն տեղում, մասն 9։

[213] Նույն տեղում, 23-րդ գլուխ, մաս 5-րդ, § 9։

[214] Նույն տեղում, 17-րդ գլուխ, մաս 5-րդ, § 9։

Հակառակ իր բազմակողմանի կրթությանը Ամիանոս Մարկելինոսն էլ անտիկ շատ պատմիչների նման մեծ տեղ է տվել ճակատագրի ազդեցությանը մարդկանց կյանքի և պատմության ընթացքի վրա։ Այսպես, իր աշխատության 14-րդ գրքում մանրամասնորեն պատմում է կայսր Կոստանդիոս Գալլոսի սանձարձակ կամայականությունների և դաժան հաշվեհարդարների մասին, որոնց համար նա իր արդար հատուցումը գտավ Նեմեսիսի՝ վրեժխնդրության և արդարության դիցուհու կողմից. նա Կիլիկիայում վախճանվեց անարդ մահով։ «Օ՜, եթե միշտ այդպես լիներ»[215]—բացականչում է Ամիանոսը և ապա դատողություններ անում ճակատագրի փոփոխականության մասին. «Ճակատագիրը խաղում է մարդկանց հետ,—խորհում է նա,—մերթ բարձրացնում է նրանց մինչև երկինք, մերթ գլորում Տարտարոսի խորքերը»[216]։

Նախապաշարումներին նա մեծ տեղ է տվել նաև 22-րդ գրքում, որտեղ պատմում է Հռոմայեցիների պարսկական արշավանքի մասին։

Նկարագրելով Հուլիանոսի դժվարին արշավանքը պարսից Շապուհ Բ-ի դեմ Ամիանոս Մարկելինոսը մեծ տեղ է տալիս կանխագուշակություններին՝ բազմիցս անգամ հիշատակելով զանազան խորհրդավոր երազներ[217]։

Սակայն այս սնոտիապաշտությունը և պրովիդենցիալիզմը հատուկ է անտիկ պատմագիրների մեծ մասին և այն չի նսեմացնում Ամիանոսի նշանակությունը, որպես անտիկ աշխարհի նշանավոր պատմաբանի։

Գիտական ուրույն հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի և հայերի մասին Ամիանոս Մարկելինոսի վկայությունները։ Անտիկ շատ պատմագիրների նման Ամիանոսն էլ իր «Պատմության» էջերում բազմիցս ընդգծում է Հայաստանի խիստ կարևոր պատմա-քաղաքական և ստրատեգիական նշանակությունը, ինչպես նաև նրա բարձր մշակույթը։ Լինելով պարսկա-հռոմեական հարաբերությունների մեխը՝ Հայաստանը հանդիսացել է հռոմայեցիների և պարսիկ-

[215] Նույն տեղում, XIV, 25։

[216] Նույն տեղում, XIV, 27։

[217] Նույն տեղում, XXII, մաս 3-րդ, § 1, 2, 3։

ների համար բացառիկ կարևոր հենակետ Արևելքում գերիշխելու համար։ Այդ առթիվ Ամիանոսի «Պատմության» 20-րդ գրքում հայ-հռոմեական հարաբերություններին վերաբերող մի հետաքրքրական դրվագ կա, որը ցույց է տալիս Հայաստանի կողմնորոշման մեծ նշանակությունը կռվող կողմերի համար։ Հեղինակը պատմում է, որ Հռոմի Կոստանդիոս կայսրը նախապատրաստվելով Պարսից արքա Շապուհի դեմ անխուսափելի զինված ընդհարման՝ իր մոտ (Կեսարիա) է կանչում Հայաստանի Արշակ թագավորին, չափազանց սիրալիր ընդունում նրան և ամեն կերպ համոզում, որպեսզի նա մնա Հռոմի հավատարիմ բարեկամը։ Ինքը լսել էր, որ Պարսից արքան հաճախ փորձեր է կատարել՝ գործի դնելով խարդավանք, սպառնալիք և խորամանկություն, ստիպելու համար Արշակին, որպեսզի նա չեզոյալ հայտարարի Հռոմի հետ կընքած դաշնը և անցնի իր կողմը։ Արշակը բազմիցս երդվեց, որ ինքն ավելի շուտ իր կյանքը կտա, քան կխոսի իր մտածելակերպը։ Կոստանդիոսը առատորեն պարգևատրեց նրան և իր թիկնապահներին։ Արշակը վերադարձավ իր թագավորությունը և չհամարձակվեց այնուհետև փոխել իր խոստումները, կապված լինելով Կոստանդիոսի հետ՝ իր հանդեպ ցուցաբերած ողորմածությամբ։ Այսպես, ի միջի այլոց, նա Արշակին կնության տվեց Օլիմպիային, որը իր վախճանված եղբոր՝ Կոստանդի հարսնացուն էր[218]։

Ինչպես նշում է ակադ. Հ. Մանանդյանը, Արշակունիների թագավորության բարեկամական կամ թշնամական դիրքը դեպի կռվող կողմերը ստանում էր բացառիկ մեծ կարևորություն։ «Հայաստանը, լինելով բուֆեր պետություն, թեև փոքր էր, թուլլ Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության համեմատությամբ, սակայն զորական իր ուժերով և ռազմական դիրքերով մեծ նշանակություն ուներ պատերազմող կողմերի համար»[219]։

Այս դարաշրջանի ամենակարևոր աղբյուր՝ Ամիանոս Մարկելինոսի վկայություններից երևում է, որ 358—360

[218] Նույն տեղում, գիրք XX, § 11, 1, 2, 3, 4։

[219] Հ. Մանանդյան, Քննակ. տեսություն հայ ժողովրդի պատմության, Հատոր Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 165։

թվականներին Պարսկաստանը ևս ամեն կերպ աշխատել է իր կողմը գրավել Հայաստանը։ Շապուհ Բ-ը մի քանի անգամ փորձեր է կատարել Արշակ Բ-ին սիրաշահել, դիմելով «Խաբեության, սպառնալիքների և նենգության[220], բայց ապարդյուն»։ Եվ դա հասկանալի է։ Հայաստանը Տրդատ Մեծից սկսած կապված էր Հռոմեական կայսրության հետ և՛ քաղաքական, և՛ կրոնական կապերով։ Եվ, իհարկե, հասկանալի է, որ Սասանյան Պարսկաստանի ջանքերը Հայաստանը գրավելու իր կողմը՝ վերջ ի վերջո հանդիպելու էին անհաջողության[221]։ Ուշագրավ է նաև, որ Ամիանոսի վկայությամբ Շապուհ II-ը օգտվելով Գալլիայում տեղի ունեցող անցքերից, առաջ է շարժվում պաշարում և գրավում է Տիգրիսի ափին գտնվող Սինգարա քաղաքը, շատ ռազմագերիներ տանում և ապա մեծ դժվարությամբ գրավում է Բեզաբդեն՝ խիստ ամրացված բերդաքաղաքը Տիգրիսի ափին, որը պաշտպանում էին 3 լեգիոններ։

Հայաստանի ու Արշակունիների թագավորության համար ծանր ու աղետալի էր դաշինքի այն կետը, որով կայսրությունը հրաժարվում էր օգնել և պաշտպանել իր հավատարիմ դաշնակից Արշակ Բ-ին, եթե պարսիկները հարձակվեին նրա վրա։ «Բացի այդ,—նշում է Ամիանոսը,—նաև կորստաբեր ու անազնիվ մի հավելում արվեց, որ այս կնքված համաձայնությունից հետո այլևս օգնություն չտրվի մեր մշտական ու հավատարիմ բարեկամ Արշակին, եթե նա մեզանից խնդրելու լինի այն՝ պարսիկների դեմ կռվելու համար։ Այստեղ կրկնակի դիտավորություն կար. նախ պատժել նրան, որովհետև կայսեր հանձնարարությամբ ավերել էր Խիլիոկոմը[222], ապա հարմար առիթի սպասելու անվախ կերպով հարձակում գործել Հայաստանի վրա։ Եվ հենց դրա հետևանքով էր, որ Արշակը գերի վերցվեց և պարսիկները երկպառակությունների ու խռովությունների ժամանակ Հայաստանից խլեցին Մարաստանին սահմանակից մի ընդարձակ երկրամաս, ինչպես նաև Արտաշատ քաղաքը»[223]։

Ամիանոսը իր աշխատության այս գրվագներում զգաստ դիրքերից է վերլուծում Արևելքի կնճռոտ հարցերը և մասնավորապես՝ հայկական հարցը, որը, ստեղծված բարդ քաղաքական իրադրության մեջ մեկնաբանում է միանգամայն անաչառ։ Նույնիսկ հռոմայեցիների վեհությունն ու ազնվությունը մեծարող հռոմեական պատմաբան Ամիանոսը հաշտության պայմանագրի մեջ Հայաստանին ու Արշակ Բ-ին վերաբերող հատվածը որակում է կորստաբեր ու անազնիվ քայլ Հայաստանի և նրա թագավոր Արշակ Բ-ի նկատմամբ, Հայաստանի, որ հռոմայեցիների մշտական ու հավատարիմ բարեկամն էր[224]։

363 թվականի պարսկա-հռոմեական պայմանագիրը, որով կայսրությունը հրաժարվում էր օգնել ու պաշտպանել Արշակ Բ-ին և որով հայերը թողնվում էին իրենց բախտին՝ արտաբերող հատվածը որակում է կորստաբեր ու անազնիվ քայլ չե, Հայաստանում առաջ բերեց անօրինակ բուռն զայրույթ։

Ամիանոսը վկայում է, որ Արշակը և հայ ժողովուրդը 4 տարի դյուցազնաբար դիմադրեցին պարսիկներին։ «Ապա Շապուհը իր ձեռքը գցեց իրեն՝ Արշակ թագավորին, գործի դնելով խաբեություն և երդմնազանցություն,—շարունակում է իր շարադրանքը Ամիանոսը,—Հրավիրելով Արշակին խնջույքի պարսից արքան հրամայեց նրան դուրս բերել եաևի թաքուն դռնից, կուրացնել նրան, շղթայել արծաթյա շղթաներով, որ նրանց մոտ պատժի ժամանակ պատվավոր անձերի համար համարվում էր ունայն մի մխիթարություն, և աքսորեց Ագաբանա անունով բերդը, որտեղ նա զանազան տանջանքներից հետո ենթարկվեց մահապատժի»[225]։

Այնուհետև Ամիանոսը պատմում է հռոմեական վաշտ կայսեր խարդավանքի միջոցով խնջույքի ժամանակ Արշակի որդու՝ Պապ թագավորի եղեռնական սպանության մասին (374 թ.), որը հեղինակը որակել է «գարշելի ոճրագործու-

[220] Аммиан Марцеллин, История, книга 20, § 1, 2.
[221] Հ. Մանանդյան, նույն տեղում, էջ 166։
[222] Տե՛ս ըստ Ամիանոսի՝ Կորդուքի և Մոկքի մոտակա շրջանը, Аммиан, История, книга 23, § 3, 5.

[223] Аммиан Марцеллин, История, книга 25, § 7, 12.
[224] Տե՛ս Аммиан Марцеллин, նույն տեղում։
[225] Аммиан Марцеллин, книга 27, XII, § 1—4

թյուն»։ Հռոմեական պատմագիրը մանրամասնորեն նկարագրում է այդ զազրելի սպանությունը, որը Վաղես կայսեր կարգադրությամբ կազմակերպել էր Հայաստանում հռոմեական զորքերի հրամանատար Տերենտիոսը ի հաճույս հռոմեացոց հայ իշխանների և Պապի նկատմամբ կատաղի ատելություն տածող եկեղեցականների։ Իր «Պատմության» 30-րդ գլխում Ամիանոսը պատկերավոր կերպով շարադրում է Պապի նողկալի սպանության տեսարանը հռոմեական շքեղ հաշկերույթի դահլիճում, որը դղրդում էր լարավոր ու փողավոր գործիքների հնչյուններից ու երգերից։ «Երբ գինին տաքացրել էր գլուխները, հարձակվեցին հայոց թագավորի վրա։ Նա վեր կացավ, հանեց դաշույնը, որպեսզի պաշտպանվի, սակայն վայր ընկավ կրծքից խոցված, որպես անարգ մի գոհ։ Նա նողկալի կերպով հոշոտվեց բազում հարվածներով։ Նման ներգործությամբ դյուրահավատությունը խարդավանվեց. օտարյակաի արյունը փրփրալով թափվեց շքեղ սփռոցների վրա... և այնուհետև հաշկերույթի մասնակիցները, չափից դուրս կշտացած այդ բոլորից, սարսափահար եղան և փախան»[226]։

Պապը թագավորել էր ընդամենը 5 տարի, բայց կարողացել էր հմտորեն խուսանավելով Հռոմեական ուխտադրուժ կայսրության և Պարսից արքա Նենգ Շապուհ Բ-ի միջև, ապրիաբար պաշտպանել իր ժողովրդի ազատությունն ու անկախությունը։ Դրանով նա վաստակել էր Վաղես կայսեր թշնամանքը, որը նպատակ էր դրել՝ տիրանալ Հայաստանին և իր նպատակին հասնելու համար Պապին գործիք դարձնել։ Սակայն, ինչպես վկայում է դեպքերին ժամանակակից Ամիանոսը, «Պապը ողջամիտ ու խիզախ թագավոր էր», որ հավատարիմ մնալով իր ժողովրդի ազատության ու անկախության վսեմ գաղափարին, գլուխ չխոնարհեց արևմուտքից և արևելքից Հայաստանը ծվատող նենգ ու ուխտադրուժ հզոր պետություններին «զոհ եղավ խարդավանքներին ու սուր դավերին»[227]։

Ամիանոս Մարկելլինոսի վկայությունները Հայաստանի և հայերի մասին որպես ժամանակակցի անաչառ վկայություններ, վստահելի աղբյուր են Հայոց պատմության համար։ Ակադեմիկոս Հ. Մանանդյանը համեմատության մեջ դնելով Ամիանոսի վկայությունները Փավստոս Բուզանդի տվյալների հետ, (որը նույնպես ժամանակակից է եղել վերոհիշյալ խռովահույզ ժամանակաշրջանին) գտնում է, որ նրանց տվյալները ոչ միայն իրար չեն հակասում, այլ իրար լրացնում են։ Հիմնական տարբերությունն ըստ Մանանդյանի այն է, որ Փավստոսի մոտ պատմական անցքերը զարդարված են վիպական-բանաստեղծական մանրամասնություններով, որ չեն կարող հարկավ, պատմական լինել[228]։

Ամիանոս Մարկելլինոսի «Պատմությունը» գրված է սուտյգ տվյալների, դեպքերի ականատեսների և մասնակիցների վկայությունների հիման վրա, և ամենից առաջ հանդիսանում է հեղինակի կողմից իր ժամանակի ռազմա-քաղաքական իրադարձությունների անմիջական մասնակցության արգասիքը։ Նա օգտվել է նաև ինչ որ մեզ անծանոթ պատմական երկից, ինչպես նաև հունական տարեգրությունից, որի հեղինակը եղել է քրիստոնյա։ Ամիանոսը բարձր էր գնահատում վավերագրական տվյալները, բայց իրավացիորեն դիտում է, որ դիվանում պահվող պետական փաստաթղթերն էլ միշտ չէ, որ կարող են արժանահավատ լինել։ Աղբյուրների նկատմամբ Ամիանոսի ցուցաբերած բծախնդրությունը, գրելու մեթոդը, հաղորդած տեղեկությունների արժանահավատությունը և շարադրանքի անաչառ, պարզ ու շիտակ բնույթը նրա երկը իրավամբ դարձնում են վերջին լուսապայծառ շողը՝ վայրէջք ապրող 4-րդ դարի հռոմեական պատմական գրականության։ Ամիանոսը փայլուն կերպով եզրափակեց անտիկ պատմագրությունը։

[226] Аммиан Марцеллин, История, книга 30, I, 18—23.

[227] Նույն տեղում, § 1—23։

[228] Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 186։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՀՌՈՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Հռոմի և հատկապես Հռոմեական կայսրության պատմությունը իր բազմահարուստ դրվագներով գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Հին աշխարհի պատմության այդ ուշագրավ հատվածը իր վրա է բևեռել շատ գիտնականների, գրողների և փիլիսոփաների ուշադրությունը։ Ուստի զարմանալի չէ, որ զգալի թիվ են կազմում Հռոմի պատմությանը, նրա առանձին դարաշրջաններին նվիրված գիտական աշխատությունները։ Առանձնապես զարկ տրվեց Հռոմի, ինչպես և Հունաստանի պատմության ուսումնասիրությանը, երբ գիտական շրջանառության մեջ դրվեցին վավերագրական հուշարձանները՝ վիմագիր արձանագրությունները, պապիրուսները, ինչպես նաև հնագիտական նյութերը։

Հունաստանի և Հռոմի պատմության սիստեմատիկ ուսումնասիրությունը սկիզբ առավ Վերածնության դարաշրջանում։ Միջնադարյան սխոլաստիկայի և աստվածաբանության դեմ հեղափոխականորեն տրամադրված նորածագ բուրժուազիայի գաղափարախոսները հանդես եկան որպես կուլտուրական նոր շարժման՝ մարդու մասին գիտության (studia humana) ներկայացուցիչներ. հումանիստներ, հակադրվելով աստծու մասին գիտությանը՝ (studia divina) աստվածաբանությանը։ Կողմնորոշվելով դեպի մարդը, նրա գործունեությունը, նրա ապրումները մարդ արարածի ազատությունը, մարդու կենսահաստատ աշխարհայացքը, հումանիստները աշխատում էին մարդու գործունեությունը թե՛ անցյալում և թե՛ ներկայում մեկնաբանել բանականորեն, առանց եկեղեցու և գերբնական ուժերի միջամտության։ Աստվածաբանության դեմ մղած իրենց պայքարում հումանիստները արտահայտում էին 14-ից 16-րդ դարերում եվրոպական երկրների նորածագ բուրժուազիայի շահերը։

Մերժելով աստվածաբանությունը, հումանիստները ոգեշնչման աղբյուրը որոնում էին իրականության մեջ և ամենից առաջ անտիկ մտածողների պատմա-փիլիսոփայական և քաղաքական գաղափարներում։

Հումանիստները մեծ ավանդ մտցրին պատմագրության մեջ, նրանք կարողացան ոչնչացումից փրկել, հավաքել ու տպագրել բազմաթիվ հունական ու լատինական ձեռագրեր։ Անտիկ մատենագիրների հիմնական երկերը հայտնաբերվել և հավաքվել են գլխավորապես 14-րդ դարից մինչև 16-րդ դարը ընկած ժամանակաշրջանում։ Այդ քրտնաջան աշխատանքի արդյունքը հիմք հանդիսացավ անտիկ պատմության հետագա ուսումնասիրության համար։ ԿԱՌԼ ՍԻԳՈՆԻՈՍԻ հրատարակած արժեքավոր տարեգրությունները (Բազել 1559 թ.) պարունակում են հռոմեական կոնսուլների ցուցակները ըստ տարիների՝ յուրաքանչյուր թվականին կատարված կարևորագույն դեպքերի գրառությամբ և պատմական մեկնաբանություններով։ Սիգոնիոսի այդ ցուցակը սկիզբ դրեց Հռոմի պատմության ժամանակագրության արդի գիտական ըմբռնմանը։

Հատուկ ուշադրության է արժանի ՖԻԼԻՊ ԿԼՈՒՎԵՐԻ «Italia antiqua» աշխատությունը, որը դեռ այսօր էլ չի կորցրել իր նշանակությունը (Լեյդեն, 1624)։

Հռոմեական կայսրության պատմության առաջին ընդարձակ շարադրանքը պատկանում է ֆրանսիական գիտնական աբբա ՏԻԼԼԵՄՈՆԻՆ (1637—1698)։ Աշխատությունը կոչվում է «Հռոմեական կայսրության պատմություն» (6 հատոր) և առաջին անգամ լույս է տեսել 1690—1738 թթ.։ Աշխատությունը ընդգրկում է կայսրության պատմությունը մինչև Անաստասիոս կայսեր վախճանը (Արևելյան Հռոմեական կայսր՝ 491—518 թթ.)։ Տիլլեմոնը գրել է նաև «Քրիստոնեական եկեղեցու պատմությունը» (16 հատոր)։ Հեղինակը մեծ զարգաց-

ման տեր գիտնական էր և կատարելապես ծանոթ էր հռոմեական և հունական գրողների երկերին և նմանապես՝ եկեղեցական հայրերի աշխատություններին։ Տիլլեմոնը ելնում էր քրիստոնեական պատմահայեցողությունից և կայսրերին գնահատելիս կողմնորոշվում էր նրանց վերաբերմունքով դեպի եկեղեցին։ Նա օժտված չէր իր նկարագրած դարաշրջանի ոգու մեջ թափանցելու կարողությամբ և իրադարձությունները նկարագրում է սոսկ կաթոլիկ եկեղեցու գաղափարախոսության տեսակետից։ Այնուամենայնիվ, Տիլլեմոնի աշխատությունը զգալի ներդրում է գիտության մեջ՝ շնորհիվ աղբյուրների վրա կատարած արդյունավետ աշխատանքի. առայսօր այդ աշխատությունը հանդիսանում է որոշ փաստերի վերաբերյալ տարբեր հեղինակների վկայությունների և ավանդության տվյալների բաղդատման առաջին փորձը։ Այդ է պատճառը, որ Տիլլեմոնի աշխատությունները երկար ժամանակ պահպանել են իրենց նշանակությունը որպես տեղեկատու գրքեր։

18–ՐԴ ԴԱՐԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

18-րդ դարի առաջին տասնամյակներում հանդես եկան երկու նշանավոր գիտնականներ՝ իտալացի հռչակավոր փիլիսոփա **Ջամբատիստա Վիկոն**, *և մյուսը՝ ֆրանսիացի պատմաբան՝ Լուի Բոֆորը, որոնք կայծակի նման փայլատակելով լուսավորեցին պատմագրության հետագա զարգացման ուղին։*

ՋԱՄԲԱՏԻՍՏ ՎԻԿՈՆ *(1668—1744)* ծնվել է Նեապոլում, մանր գրավաճառի ընտանիքում։ Ստացել է իրավաբանական, փիլիսոփայական և բանասիրական կրթություն։ Եղել է Նեապոլի Համալսարանի հարատասանության ամբիոնի վարիչ։ *1725 թ.* լույս է ընծայել իր նշանավոր աշխատությունը՝ «Նոր գիտության հիմքերը՝ ժողովուրդների ընդհանուր բնույթի մասին»։ Վիկոն պատկանում է այն սակավաթիվ մտածողների թվին, որոնք հավասարապես զբաղվում են թե հեռավոր անցյալի և թե իրենց ժամանակակից պատմությամբ։ Նա քաջ ծանոթ էր հունա-հռոմեական պատմագրությանը։ «Նոր գիտություն» ասելով Վիկոն հասկանում է պատմությունը։ Նա

ձգտում էր պատմա-համեմատական մեթոդով ուսումնասիրել հին աշխարհի և միջնադարյան ժողովուրդների կրոնը, կենցաղը, բարքերը և սոցիալ-քաղաքական կարգը։ Նա փորձում է դիտել մարդկության ամբողջ պատմությունը, որպես բնական պրոցես։ Իր վրա կրելով բնական և մաթեմատիկական գիտությունների ազդեցությունը Վիկոն հանգում է այն եզրակացության, որ մարդկային պատմությունը ենթարկվում է նույն անխախտ օրենքներին, ինչպես և բնությունը։ Բոլոր մարդկային հասարակությունները անկախ ռասայից և աշխարհագրական պայմաններից անցնում են զարգացման միևնույն աստիճանները, սկսելով նախնադարյան վայրենությունից և բարբարոսությունից դեպի «հերոսների» դարաշրջանը՝ ֆեոդալիզմը և թևակոխում են «մարդկայինի դարաշրջանը», այսինքն քաղաքների, ժողովրդական հանրապետությունների և բանականության տիրապետության դարաշրջանը։ Բուրժուական պատմաբաններից շատերը Վիկոյի պատմահայեցողությունը անվանում են ցիկլային։ Բայց դա սխալ է, Վիկոյի պատմահայեցողության մեջ տեղ գտած շրջապտույտների դրույթը նման չի ցիկլայնության տեսությանը, որովհետև յուրաքանչյուր նոր շրջապտույտը, ըստ Վիկոյի սկսվում է ավելի բարձր մակարդակով, քան նախորդ շրջապտույտի համապատասխան աստիճանը։ Հետևապես, Վիկոն չի ժխտում առաջադիմությունը, սակայն այդ անընդհատ վերընթաց շարժումը նա պատկերացնում է որպես ոլորապտույտ վերելքներով և վայրէջքներով ընթացող զարգացում, որի շարժիչ ուժը մարդն է, մարդկային կոլեկտիվների ստեղծագործական աշխատանքը։

Մարդկային հասարակության զարգացման միասնականության դրույթից և զարգացման վերընթաց բնույթի մասին իր տեսությունից բացի, Վիկոն առաջ է քաշում անցյալի ուսումնասիրության մի նոր աղբյուրի՝ ազգագրության կարևորությունը։ Ըստ նրա հնագույն պատմությունը հետազոտելիս, որից մեզ չեն հասել գրավոր հուշարձաններ, պետք է ուսումնասիրել նոր ժամանակների հետամնաց ժողովուրդների կյանքն ու կենցաղը, որի հիման վրա հնարավոր կլինի վե-

բականդնել հնագույն ժամանակների մարդկային կոլեկտիվների տնտեսական-հասարակական կյանքն ու մշակույթը։ Վիկոն արծարծում է մի նոր առաջադիմական միտք այն մասին, թե գաղափարների կարգը հետևում է իրերի կարգին. պատմության մեջ նոր կրոնական գաղափարները հետևում են հասարակական-քաղաքական հեղաշրջումներին։ Որպես օրինակ նա բերում է Հռոմի պատմությունը. հենց որ Հռոմում հանրապետությունը տեղի տվեց միապետությանը, հեթանոսությունն էլ տեղի տվեց քրիստոնեությանը։ Իհարկե, Վիկոն խիստ պարզեցնում է հռոմեական հասարակության պատմական պրոցեսը և բռնազբոսիկ եզրակացություններ է անում քրիստոնեության տարածման մասին։

Գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում Վիկոյի տեսակետը պատմական գործիչների, առասպելական հերոսների մասին. նա գտնում է, որ նրանք հրաշագործներ չեն, նրանք չեն ստեղծել քաղաքակրթությունը, այլ իրենք արդյունքն են քաղաքակրթության. մշակույթն է ստեղծում այդ մեծ մարդկանց. Հոմերոսն իր մեջ արտացոլել է ժամանակի բոլոր հռոմայեցիների բնորոշ գծերը։ Հոմերոսը հավաքական անուն է. նա պոեմների անհատ-ստեղծագործողը չի, պոեմները ստեղծել են բազմաթիվ մարդիկ. Հոմերոսը անձնավորումն է այդ բազմաթիվ մարդկանց։

Վիկոյի ծառայությունն այն է, որ նա հին աշխարհի պատմության, (այդ թվում նաև Հռոմի) առջև հարթում է ստույգ գիտություն դառնալու ուղին։ Նրա դրույթները նպաստեցին հռոմեական պատմության գիտական մշակմանը։ Ն. Ա. Մաշկինի ասելով, Վիկոյի խոր մտքերը հնագույն հասարակությունների մարդկանց կյանքի պայմանների մասին և ավանդությունների վերլուծական հետազոտությունը կանխատես առաջադրեցին պատմական գիտության այն դրույթները, որոնք իրենց ձևակերպումն ստացան միայն 19-րդ դարում[1]։

Կ. Մարքսը բարձր է գնահատել Վիկոյի «Նոր գիտությունը», որտեղ նա տեսավ կռահումներ Ֆ. Վոլֆի և Բ. Նիբուրի գաղափարների[2]։

[1] Տե՛ս Ն. Ա. Մաշկին, Հին Հռոմի պատմություն, Երևան, 1951, էջ 58։

[2] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 25, 1934, стр. 393.

Հռոմեական պատմության քննական ուսումնասիրության ուղղությամբ մեծ աշխատանք կատարեց ֆրանսիական պատմաբան Լուի Բոֆորը։ 18-րդ դարի 30-ական թվականներին Բոֆորը լույս ընծայեց իր փոքրիկ, բայց նշանավոր երկը՝ «Դատողություններ Հռոմեական պատմության առաջին հինգ դարերի անարժանահավատության մասին» խորագրով (Ուտրեխտ, 1738 թ., երկրորդ հրատ. Փարիզ, 1866)։ Բոֆորն առաջին անգամ բացահայտեց Հռոմեական պատմության առաջին դարերի մասին եղած ավանդական դարձած հասկացությունների անճշտությունը։ Վաղ Հռոմեական պատմության աղբյուրների վերլուծման հետևանքով «նա հանգեց այն եզրակացության, որ Հռոմեական հնագույն պատմական ավանդությունը հիմնվել է անարժանահավատ նյութերի վրա. այն եղել է արգասիք հռոմեական տոհմերի անափառության, որոնք ձգտել են փառաբանել իրենց նախնիներին»[3]։ Բոֆորի արծարծած հարցերը աշխուժ քննարկման առարկա դարձան ողջ 19-րդ դարի ընթացքում։ Կարելի է ասել, որ Բոֆորը ճանապարհ հարթեց Նիբուրի համար, որն ըստ ամենայնի հանդիսացել է Հռոմեական պատմության աղբյուրների գիտական մշակման հիմնադիրը։ Վիկոյի և Բոֆորի գիտական կռահումները իրենց հետագա զարգացման համար 18 և 19-րդ դարերի պատմաբանների աշխատություններում։

Պատմագիտական մտքի հետագա զարգացման վրա իր ազդեցությունը գործեց նաև դասակարգային պայքարը։ 17-րդ դարի վերջում արդեն ակնհայտ էր, որ ֆեոդալական կարգերը խանգարում են հասարակության հետագա զարգացմանը։ Ծավալվում է սուր պայքար բուրժուազիայի և ֆեոդալական խավերի միջև։ Այս անհաշտ առաջադիմական պայքարում բուրժուազիայի գաղափարախոսները պատմագրության առջև խնդիր էին դնում՝ քննադատելով ֆեոդալական-կղերական մտածողների հետադիմական հայացքները՝ դրանց հակադրել բուրժուական մտածողների բանականությանը և արդարացնել ու հիմնավորել բուրժուական կարգերի բանական էությունը։ Պատմաբաններն իրենց աշխատություններում ընդգծում էին, որ նախկին ֆեոդալական կարգը և նրա համապատասխան գա-

[3] Ն. Ա. Մաշկին, Հին Հռոմի պատմություն, Երևան, 1951, էջ 58։

զափաբախոսությունը անբանական են։ Ուստի՝ հին կարգերը պետք է վերացնել և հաստատել նոր՝ բանական կարգեր և բանական գաղափարախոսություն։ Ըստ 18-րդ դարի բուրժուական գաղափարախոսների՝ պատմության շարժիչ ուժը բանականությունն է. բանականության շնորհիվ է, որ մարդկությունը վայրենությունից հասել է քաղաքակրթության աստիճանին։

Բուրժուական գաղափարախոսները գտնում էին, որ հին, անպետք կարգը փոխելու միջոցը լուսավորությունն է. մարդկանց լուսավորելով, նրանց գիտակցել տալով հին կարգերի անպետքությունը և նորի բանական էությունը, կարծում էին թե հնարավոր կլինի հին կարգերը փոխել և հաստատել նորը՝ բանականը, առաջադիմականը։ Նրանք չեն գիտակցել, որ հնի փոփոխության արմատական միջոցը սոցիալական հեղափոխությունն է։

Ֆրանսիական լուսավորիչները անտիկ աշխարհում, մասնավորապես Հռոմում, տեսնում էին քաղաքացիական արիության և քաղաքացիական առաքինությունների օրինակներ։ Ֆրանսիական լուսավորիչների մոտ մեծ հեղինակություն էին վայելում Պլուտարքոսի «Զուգակշիռքում» տեղ գտած գործիչները։ Առանձնակի հետաքրքրություն է ծագում դեպի Հռոմի հանրապետական գործիչները, քաղաքացիական պատերազմների հարուստ դրվագները։ Լույս են ընծայվում Հռոմի պատմությանը նվիրված աշխատություններ։ Պահանջ է առաջանում իմաստավորելու Հռոմի պատմությունը, սահմանելու նրա զարգացման օրինաչափությունները։

Այդ ուղղությամբ առաջին ուշագրավ փորձը կատարից Մոնտեսքյոն՝ իր «Դատողություններ Հռոմայեցիների մեծության և անկման պատճառների մասին» աշխատությամբ (1734 թ.)։

ՇԱՐԼ ԼՈՒԻ ՄՈՆՏԵՍՔՅՈՆ (1689—1755) պատկանում էր ֆրանսիական լուսավորիչների ավագ սերնդին։ Լուսավորիչները որպես իր ժամանակի հեղափոխական դասակարգի՝ բուրժուազիայի գաղափարախոսներ, պայքար էին մղում ֆեոդալիզմի դեմ, միջնադարյան ռեակցիայի և խավարամոլության դեմ՝ հանուն բուրժուա-դեմոկրատական ազատությունների։ Մոնտեսքյոն եղել է 18-րդ դարի ֆրանսիական բուրժուական հեղափոխության գաղափարական հայրերից մեկը։ Ծնվել է հին աղնվականական ընտանիքում. ստացել է իր ժամանակի համար բազմակողմանի փայլուն կրթություն։ 1716 թվականից ժառանգել է Բորդո քաղաքի պառլամենտի նախագահի պաշտոնը։ Դեռևս պատանեկության տարիներից Մոնտեսքյոն մեծ հետաքրքրություն է ցուցաբերում բնագիտության ուղղությամբ. այդ հակումը պահպանվում է նրա ողջ կյանքի ընթացքում և զգալի կնիք է դնում նրա պատմահայեցողության վրա, ըմբռնելու համար երևույթների մեջ գոյություն ունեցող օրինաչափությունները։ Մոնտեսքյոյի զարգացման գործում մեծ դեր են խաղացել ճանապարհորդությունները։ Նա երեք տարի շրջագայել է Եվրոպայի զանազան երկրներում (Անգլիա, Հոլլանդիա, Ավստրիա, Գերմանիա և այլն), ուսումնասիրելով այդ երկրների հասարակական-քաղաքական կյանքի առանձնահատկությունները։ Առանձնապես ուժեղ տպավորություն է թողել նրա վրա Անգլիայի քաղաքական կարգը։ Հավաքած հարուստ նյութերը և ականատեսի աչքերով քաղած տպավորությունները հնարավորություն տվեցին նրան համեմատելու իր այցելած երկրների հասարակական-քաղաքական կարգերը, իսկ համեմատությունը նպաստում է երևույթների խորն ըմբռնմանը։

Մենտեսքյոն քաջ ծանոթ էր անտիկ պատմությանը՝ հունա-հռոմեական կյանքին։ Ուստի՝ լինելով ըստ ամենայնի կրթված և բազմակողմանիորեն զարգացած մարդ, նա կարող էր իր ապրած ժամանակաշրջանը համեմատել հին աշխարհի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի հետ։ Այդ բոլորը նրա մեջ զարգացրին տարբերելու ունակությունը։

Մոնտեսքյոյի գործունեության ստեղծագործական վերելքը համընկնում էր այն ժամանակաշրջանի հետ, երբ արդեն Ֆրանսիայում խարխլվում էին ֆեոդալիզմի հիմքերը։ Խիստ սրվել էր հակասությունը երկու բևեռների միջև. մի բևեռում՝ պյուղացիությունը ծանրաբեռնված կոռի, հարկերի, տուրքերի, ռազմական պարհակների և եկեղեցական տասանորդի բեռան տակ, խղճուկ գոյություն էր քարշ տալիս։ Մյուս բևեռում՝ աղնվականությունը և թագավորական արքունիքը՝ կե-

ղեքելով ժողովրդական զանգվածներին, վարում էին ճոխ ու շվայտ կյանք։ Կառավարող դասակարգերի պորտաբույծ և այլանդակ կենցաղը անցել էր չափ ու սահման։ Բացարձակ միապետության լուծը դարձել էր անտանելի։ Այդ բանը հասկանում էին նույնիսկ տիրող դասակարգին պատկանող հեռատես մարդիկ։

Մոնտեսքյոն սոցիալական ծագումով արիստոկրատ էր, հարում էր արիստոկրատների լիբերալ թևին և համակրանքով էր վերաբերվում հանրապետական կարգերին։ Նա հասկանում էր, որ Ֆրանսիայում անտեսական հարաբերությունները և քաղաքական կյանքը կարիք ունեն լուրջ փոփոխությունների։ Իր աշխատություններում նա դատապարտում է ֆրանսիական բացարձակ միապետությունը և հռչակում է դեմոկրատիայի հիմնական սկզբունքները՝ խոսքի, մամուլի և ժողովների ազատություն, օրենքի առաջ բոլոր քաղաքացիների հավասարություն, դավանանքի հանդուրժողականություն, սակայն, նա ևս մյուս լուսավորիչների նման կարծում էր, թե հնարավոր է արմատական հեղաշրջում կատարել լուսավորության միջոցով։

Իր ժխտական վերաբերմունքը դեպի Ֆրանսիայի բացարձակ միապետությունը Մոնտեսքյոն խոսքի մեծ ուժով և վարպետությամբ արտահայտել է «Պարսկական նամակներում», որոնք լույս տեսան Ամստերդամում 1721 թ. անստորագիր։ Առաջին հայացքից անմեղ և զվարճալի թվացող այդ կատակնամակները, որ միմյանց գրում են որպես թե Ֆրանսիա եկած պարսիկ-ճանապարհորդներ, իրականում թունոտ, մերկացնող երգիծանք էր, ուղղված կառավարող ազնվականական վերնախավի և մնացած բարձր խավերի բարքերի դեմ։ Նա սուր ծաղրի է ենթարկում հոգևորականության ագիտությունը, ապանիչ պարսավանքի ենթարկում Լյուդովիկոս 14-րդի բացարձակ միապետությունը, որը նա որակում է որպես բանականությանը հակասող կարգ։ «Նամակներում» Մոնտեսքյոն բանականության դատաստանի առջև է կանգնեցնում ողջ միջնադարյան սխոլաստիկան այնուհետև նա իր պայքարի սլաքը ուղղում է Հռոմի պապի դեմ, ապա՝ հիզվիտների դեմ, որոնք «ծղոտի նման այրում են մարդկանց»։ «Նամակները»

ամերի ներգործություն ունեցան Ֆրանսիայում։ Դատապարտելով բացարձակ միապետությունը, Մոնտեսքյոն առանձին ջերմությամբ է խոսում հանրապետական կարգերի առավելությունների մասին, որպես օրինակելի նմուշ կանգ առնելով Հռոմեական վաղ հանրապետության դարաշրջանի վրա։ Իր դրույթը հիմնավորելու նպատակով Մոնտեսքյոն 1734 թվականին լույս ընծայեց «Դատողություններ Հռոմայեցիների մեծության և անկման պատճառների մասին» երկը։ Տարբեր ժողովուրդների պատմության համեմատական ուսումնասիրությունը Մոնտեսքյոյին բերում է այն հետևության, որ հռոմեական պատմության իրադարձությունները արդյունք են քաղաքական զարգացման և շրջապատող աշխարհագրական միջավայրի[4]։

Ըստ Մոնտեսքյոյի վաղ հանրապետության դարաշրջանում գոյություն են ունեցել գույքի հավասար բաշխում, բարքերի պարզության և խելացի օրենքներ, որոնք և պայմանավորել են քաղաքացիական առաքինությունները, որոնցով զինվելով՝ հռոմայեցիները հաղթող դուրս եկան Իտալիայի միավորման պայքարում, անդրծովյան պատերազմների հետևանքով գերիշխեցին ողջ Միջերկրածովյան ավազանում։ Սակայն նվաճողական պատերազմները և դրանց հետևանքով առաջացած գույքային անհավասարությունը, բարքերի անկումը, քաղաքացիական պատերազմները քայքայեցին հանրապետությունը։ Մոնտեսքյոն էլ մյուս լուսավորիչների նման կանգնած է իդեալիստական պատմահայեցողության դիրքերի վրա և պատմության շարժիչ ուժերը համարել է բարքերը, պետական կարգը։ Նա էլ մյուս լուսավորիչների նման չի կարողացել ըմբռնել պատմական պրոցեսի օրինաչափությունները։ Նա Հռոմի պատմության համար օգտվել է Լիվիոսից։ Բայց նա էլ իր ժամանակի ֆրանսիական լուսավորիչ-գրողների նման Լիվիոսից օգտվելիս դեն է նետում միայն գերբնականը, իսկ մնացած բոլոր հարցերում քննադատաբերեն չի մոտեցել Լիվիոսի վկայություններին։ Մոնտեսքյոն Կայսրության

[4] Սոցիոլոգիայում աշխարհագրական տեսության հիմնադիրներից մեկը Մոնտեսքյոն է, որը աշխարհագրական միջավայրը, գլխավորապես կլիման համարել է պետության քաղաքական կարգը որոշող ազդակ։ Աշխարհագրական ուղղությունը ունեցել է շատ հետևորդներ։

դարաշրջանը համարում է քաղաքական և բարոյական անկման դարաշրջան, և գտնում է, որ ռազմական ուժերի գերազույն լարումով միայն Կայսրությանը հաջողվեց մի քանի դարերի ընթացքում կասեցնել բարբարոսների գրոհը։ Մոնտեսքյոն զբաղվել է միայն քաղաքական պատմությամբ, հռոմեացիների սոցիալ-տնտեսական հարաբերությունները, ներքին սոցիալ-դասակարգային հակասությունները, որոնք ծվատում էին հռոմեական հանրապետությունը և պատճառ դարձան հանրապետության անկման, իսկ մի քանի դար անց՝ նաև Արևմտյան Կայսրության անկման,—իսպառ դուրս են մնացել նրա տեսադաշտից։ Բայց այսուհանդերձ մեծ է Մոնտեսքյոյի դերը Հռոմի պատմության ուսումնասիրության գործում. նա առաջինը փորձեց իմաստավորել Հռոմի պատմությունը, ցույց տալ նրա զարգացման օրինաչափությունը։ Նրա փորձը՝ դիտելու հասարակական երևույթները որպես օրինաչափ պրոցես, անկասկած առաջադիմական երևույթ է 18-րդ դարի պատմագրության համար։ Մեծ է Մոնտեսքյոյի նշանակությունը նաև որպես քաղաքական ազատության-ների մարտիկի։

ԷԴՈՒԱՐԴ ԳԻԲԲՈՆ *(1737—1794).*—Անգլիական լուսավորության դարաշրջանի ամենաականավոր պատմաբանը էդուարդ Գիբբոնն է։

Տիլլեմոնի «Կայսրության պատմությունը» և Մոնտեսքյոյի «Դատողությունները» նպաստեցին Էդուարդ Գիբբոնի «Հռոմեական կայսրության անկման և կործանման պատմությունը» խորագիրը կրող աշխատության երևան գալուն։ Գիբբոնի այս գործը, որը բաղկացած է 6 հատորից, համարվում է ամբողջ լուսավորության դարաշրջանի Հռոմի պատմությանը վերաբերող ամենանշանավոր աշխատությունը, որը լույս է տեսել 1776 թվականից մինչև 1780 թվականն ընկած ժամանակաշրջանում և թարգմանվել է եվրոպական համարյա բոլոր լեզուներով[5]։ Գիբբոնի աշխատությունն ընդգրկում է Հռոմեական կայսրության պատմությունը, սկսած Անտոնիններ

[5] Ռուսերեն լեզվով լույս է տեսել 1883—1886 թթ. **Эдуард Гиббон,** История упадка и разрушения Римской империи, перевод В. Н. Чеведомского, М., 1883.

նոսների դարաշրջանի վերջից մինչև Կոստանդնուպոլսի անկումը 1453 թվականին։ Բյուզանդիայի պատմությունը հեղինակը ընկալում է որպես Հռոմեական կայսրության պատմության շարունակություն։ Աշխատության առաջին և երկրորդ հատորներում տրված է Կայսրության պատմությունը՝ սկսած 2-րդ դարից մինչև 5-րդ դարի վերջը։ Հետևյալ հատորներում շարադրանքը հասցրել է մինչև 1453 թվականը։

Գիբբոնը օգտվել է հարուստ աղբյուրներից և ամենից առաջ՝ անտիկ պատմագիրների երկերից։ Նա հաճախ վկայակոչում է հունա-հռոմեական մատենագիրներին՝ Հերոդոտին, Սարաբոնին, Պլինիոս Ավագին, Տակիտոսին, Սվետոնիոսին, Ապպիանոսին, Դիոն Կասիոսին, Պրոկոպիոս Կեսարացուն և ուրիշների։ Այդ բազմահարուստ նյութերի հիման վրա, Գիբբոնը շարադրեց իր ստվարահատոր գործը։ Նա էլ Մոնտեսքյոյի նման մեծ մասամբ անվերապահորեն է ընդունում անտիկ պատմագիրների վկայությունները հանրապետության դարաշրջանի հռոմեացիների առաքինությունների մասին և Մոնտեսքյոյի նման՝ հռոմեացիների բարքերն ու պետական կարգը համարել է պատմության շարժիչ ուժեր։ Այսպես՝ իր աշխատության առաջին գլխում առանց քննադատության կրկնում է անտիկ պատմիչների վկայությունները հանրապետության երանելի վիճակի մասին և բարձր է գնահատում հին հռոմեացիների արժանապատվությունն ու առաքինությունը։ «Հանրապետության ժամանակ, երբ բարքերն ավելի մաքուր էին, զենք վերցնում էր նա,—ասում է Գիբբոնը, հիմնվելով Դիոնիսիոս Հալիկառնասցու և Սալլյուստիոսի վրա,—ում ոդեհշնում էր հայրենիքի հանդեպ տածած սերը և ով որևէ մասնակցություն էր ունենում օրենքների հրատարակման գործում, որ նա պաշտպանում էր հանուն իր սեփական շահի և ըստ պարտաճանաչության զգացման»[6]։

[6] **Эдуард Гиббон,** История упадка и разрушения Римской империи, М., 1883: часть I, глава I, стр. 10—11:

Հանրապետության դարաշրջանում հռոմեական հասարակության մեջ տեղի ունեցած սոցիալ-տնտեսական տեղաշարժերը (արտադրության մարկատիրական եղանակի հետևանքով գյուղացիական մասսաների քայքայումն ու պրոլետարացումը, քաղաքային պլեբսի հուզումները, սարուկների ապստամբությունները, քաղաքացիական պատերազմները) դուրս են մնացել Գիբբոնի տեսադաշտից։

Ի տարբերություն Մոնտեսքյոի, Գիբբոնը Հռոմեական կայսրությունը չի համարել միայն անկման ու կործանման դարաշրջան։ Նա կայսրության դարաշրջանի պատմության մեջ տեսնում է «լուսավոր» մի դրվագ՝ Անտոնիոսների ժամանակաշրջանը, որը նա իր աշխատության երկրորդ գլխում, անվանում է «Հռոմեական ամբակուռ շենք, որ կառուցվել էր և պահպանվում էր բազմազարյան իմաստությամբ»[7]։

Մեղանչելով պատմական իրականության դեմ Գիբբոնը պատշաճ եզրակացություններ չի անում Տակիտոսի վկայություններից պրովինցիաների ծանր վիճակի և նրանց ապըստամբությունների մասին, և իրերի դրությունը պրովինցիաներում պատկերացնում է իդեալական գույներով։ Հռոմի տիրապետության շրջանը ըստ Գիբբոնի մարդկության ամենաբախտավոր շրջանն է, իսկ նրա անկումը՝ ամենամեծ դժբախտությունը։ Նա այնքան է տարված Հռոմեական կայսրության վեհությամբ, որ ուշադրություն չի դարձնում բռնակալական կառավարության, պրոկոնսուլների, պրետորների և լեգատների կամայականությունների, պրովինցիաների սանձարձակ կեղեքումների և հռոմեական բռնագատիչների դեմ աշխատավորության ազատագրական պայքարի վրա։ Գիբբոնը կանգ չի առնում հենց Անտոնիոսների հարստության ամենանշանավոր կայսեր՝ Ադրիանոսի օրոք Հրեաստանում 132—135 թթ. Բար-Կոխբայի առաջնորդությամբ ծավալված մեծ ապստամբության վրա։

Գիբբոնը մինչև իսկ գովաբանում է Անտոնիոսների պրինցիպատի դարաշրջանի կրոնական հանդուրժողականությունը, ասելով, որ «աստվածապաշտության բոլոր բազմազան ձևե-

[7] Эдуард Гиббон, История упадка и разрушения Римской империи, М., ч. I, 1883, глава I, стр. 37.

րը, որ գոյություն ունեին Հռոմեական աշխարհում, ժողովրդի աչքում համարվում էին ճշմարիտ, փիլիսոփաների աչքում՝ կեղծ, իսկ կառավարության աչքում՝ օգտակար»[8]։ Սակայն փաստերը այլ վկայության են տալիս. բավական է վերհիշել Կալիգուլայի (37—41 թթ.) դաժան քաղաքականությունը մեսսիանիզմի նկատմամբ և հրեաների ջարդը Ալեքսանդրիայում, այնուհետև, Ֆլավիոսների և Անտոնիոսների կրոնական անհանդուրժողականությունը, որպեսզի համոզվենք վաղ կայսրության կրոնական քաղաքականության Գիբբոնի ոչ-հիշտ մեկնաբանման մեջ։

Միաժամանակ, զգաստ դիրքերից մոտենալով պրովինցիաների նկատմամբ կայսրության վարած մեծապետական կեղեքչական քաղաքականության հարցին, Գիբբոնը հակասելով իր իսկ դրույթին, արձանագրում է. «Հռոմի կողմն անցած ազատ պետություններն ու քաղաքները պարգևատրվում էին «դաշնակիցների» նոմինալ տիտղոսով, բայց հետո անհետ կերպով ընկնում էին իսկական սարկության մեջ։ Կառավարական իշխանությունը ամենուրեք գտնվում էր բարձրագույն պաշտոնական անձանց ձեռքում, որոնց նշանակում էին սենատն ու կայսրերը, և այդ իշխանությունը բացարձակ էր և առանց վերահսկողության»[9]։ Գիբբոնը, այնուամենայնիվ, նշում է Հռոմեական պետության գիշատիչ արտաքին քաղաքականությունը։ «Պատահում էր, ասում է նա,—որ Հռոմեական կառավարությունը, քողարկվելով երախտագիտության կամ մեծահոգության դիմակի տակ, ժամանակավորապես թողնում էր գերագույն իշխանության սովերը պարտված թագավորների ձեռքում, բայց գահընկեց էր անում նրանց անմիջապես, հենց որ նրանք կատարում էին իրենց վրա դրված խնդիրը՝ հպատակեցված ժողովրդին վարժեցնելու իր վրա դրված լծին»։ Նույն գլխում ամփոփելով պրովինցիաների մասին իր խոսքը, Գիբբոնն ասում է. «Կայսրության պրովինցիաները... չունեին ոչ մի քաղաքական ուժ, ոչ մի սահմանադրական ազատություն։ Ե՛վ էտրուրիայում, և՛ Հու-

[8] Նույն տեղում, էջ 45։

[9] Эдуард Гиббон, История упадка и разрушения Римской империи, перев. В. Н. Неведомского, М., 1883, ч. I, глава II, стр. 45.

նաստանում և Գալլիայում սենատի առաջին հոգսն էր ոչնչացնել այն վտանգավոր կոնֆեդերացիաները, որոնք ընդունակ էին ամբողջ աշխարհին հաղորդել, թե հռոմայեցիներն իրենց ռազմական հաջողությունների համար պարտական են իրենց թշնամիների ներքին երկպառակություններին»[10]։

Կանգ առնելով հռոմեական պրովինցիաների վրա, Դիբբոնն ընդհանուր տեղեկություններ է տալիս նրանց էկոնոմիկայի, ֆինանսների մասին և նորից զովաբանում է կայսրության դարաշրջանում հռոմեական պետության համահարթող քաղաքականությունը պրովինցիաներում. ճնշման միջոցով բազմաթիվ ցեղեր ու ժողովուրդներ՝ «բարբարոսները» միավորվեցին մեկ լեզվի կապերով։ Ներթափանցելով նվաճված ամենահեռավոր շրջանները՝ հռոմայեցիները տարածում էին իրենց լեզուն և բարքերը։ Դիբբոնը բերում է Սենեկայի դիտողությունն այն մասին, թե՝ հռոմայեցին քնակություն է հաստատում ամենուրեք, որտեղ նա կատարում է նվաճում։ Իր աշխատության երկրորդ գլխում նշում է Հռոմի կողմից ճնշման միջոցով ժողովուրդների ձուլման (ասսիմիլյացիայի) քաղաքականությունը. «Շնորհիվ հենց այդպիսի կարգերի՝ հպատակեցված ժողովուրդները աննկատելիորեն ձուլվեցին մի ազգության մեջ՝ հռոմայեցիներ ընդհանուր անվան տակ»։

Դիբբոնը մի քանի էջ է հատկացնում սարկության հարցին։ Նա նշում է, թե «յուրաքանչյուր պրովինցիայի կենտրոնում և յուրաքանչյուր ընտանիքում դեռևս գոյություն ուներ մարդկանց այն դժբախտ դասակարգը, որն իր վրա էր կրում հասարակական կապանքների ողջ ծանրությունը։ Սարուկների դասակարգը մեծ մասամբ կազմված էր բարբարոս ռազմագերիներից, որոնց հազարներով ձեռք էին բերում ռազմադաշտերում, և ապա վաճառում էժան գնով, և որոնք սովոր լինելով անկախության, վառվում էին իրենց կապանքները խորտակելու ցանկությամբ և վրիժառու լինելու անհամբերությամբ։ Այդպիսի ներքին թշնամիների դեմ, (որոնք հաճախ իրենց հուսահատորեն կատաղի ապստամբություններով հանրապետությունը հասցնում էին կործանման եզրին)

[10] Նույն տեղում։

մեր առնված ամենախիստ միջոցները, ըստ երևույթին արդարացվում էին ինքնապաշտպանության գերագույն օրենքով»[11]։ Այսպիսով Դիբբոնը արդարացնում է կեղեքված և տանջահար սարուկների ընդվզումների դեմ կիրառված դաժան միջոցառումները։

Նա արտահայտում էր անգլիական 18-րդ դարի արիստոկրատիայի այն շրջանների հայացքները, որոնք կապված էին առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի հետ։ Այդ հայացքները իրենց արտահայտությունը գտան նաև կառավարման դեմոկրատական եղանակի մասին արած խորհրդածություններում։ «Կառավարման դեմոկրատական եղանակի պայմաններում քաղաքացիները կատարում էին գերագույն իշխանության ֆունկցիաներ, իսկ երբ այդ իշխանությունը ընկրնում է վիթխարի ժողովրդական զանգվածի ձեռքը, որն անընդունակ է հետևելու մի որևէ որոշակի ուղղության, նա սկզբում չարաշահում է այդ իշխանությունը և ապա կորցնում այն»[12]։

Վերստին անդրադառնալով Անտոնինոսների դարաշրջանի կառավարման «իդեալական եղանակին», Դիբբոնն ավարտում է իր դատողությունները հետևյալ խոսքով. «Եթե որևէ մեկի հարցնեն, թե համաշխարհային պատմության ո՞ր շրջանում մարդկային սերնդի վիճակը եղել է ամենաբախտավորը և ամենածաղկունը, նա առանց որևէ տատանման կանվանի այն ժամանակաշրջանը, որն ընդգրկում է Դոմիցիանոսի վախճանից մինչև Կոմմոդոսի գահ բարձրանալը (96-ից 180 թթ.)։ Այդ ժամանակաշրջանում Հռոմեական կայսրությունը իր ողջ վիթխարի տարածությամբ կառավարվում էր բացարձակ իշխանությամբ, որի ղեկավարներն են առաքինությունը և իմաստությունը»[13]։

Վերլուծական-հետազոտական միտքը Դիբբոնին բերում է լուրջ եզրակացության. անկայուն է այն բարեկեցությունը, ասում է նա, որը կախված է միայն մի մարդու բնավորությունից։ Գուցե արդեն մոտենում է այն կործանիչ պահը, երբ

[11] Նույն տեղում, էջ 54։
[12] Նույն տեղում, էջ 44։
[13] Նույն տեղում, էջ 108—109։

որևէ անառակ պատանի և կամ որևէ նախանձախտ բռնապետ կործանման նպատակին կծառայեցնի այն իշխանությունը, որը Անտոնիոսները օգտագործում էին իրենց արտոնություն ժողովրդի։ Սենատի և օրենքների կաշկանդումներն երեսակայական էին, նրանք կարող էին կայսրերի անունները միայն ցուցադրել առավել պայծառ լույսով, բայց չէին կարող կասեցնել նրանց արատավոր հակումները»[14]։

Միահեծան միապետության միակ գործակալը ըստ Գիբբոնի՝ կայսեր անձն է։ Սարկատիրական ծագում ունեցող արիստոկրատիան և հեծյալները, որոնք սկսած Օգոստոսի ժամանակաշրջանից, կազմում էին կայսրության սոցիալական հենարանը թե Իտալիայում և թե պրովինցիաներում, ջնջվել է Գիբբոնի կողմից։ Նրա կարծիքով, պատմության մեջ որոշիչ դեր են խաղում մեծ գործիչները, պատմական անհատները։

Խոսելով Կայսրության անկման պատճառների մասին, Գիբբոնը ընդգծում է քրիստոնեության բացասական դերը։ Այս հարցում էլ նա հավատարիմ է մնացել լուսավորության դարաշրջանի գաղափարախոսությանը։ Քրիստոնեությունն ըստ նրա թուլացրեց հռոմայեցիների հայրենասիրական ոգին, զրկեց նրանց արիությունից, ներշնչեց ամպարհանք դեպի ռազմական գործը, քարոզեց լինել հաստատ, շեղեց իրենց քաղաքացիական պարտականություններից։ Քրիստոնեությունը կայսրությանն զբաղեցրեց հողմոտ անպատուղ վեճերով, փոխանակ ամրացնելու պետության հիմանները։ Քրիստոնեությունը հարստությունները կենտրոնացրեց վանքերում, որտեղ մեկուսանում են սուր շարժուձևից փախած կղերականները։ Դատապարտելով կղերականության, Գիբբոնը պայքարի սլաքն ուղղում է պապականության դեմ, որին նա անվանում է «կեղծիքի և խաբեբայության մեծ ֆարբրիկա»։ Այնուամենայնիվ, միջնադարյան պատմագրությունը խավարում նա ձգտում է գտնել բանականության շողեր. լույսի շողեր էր նա համարում աղանդավորական հատկապես Պավլիկյանությունը, որի վրա նա մանրամասն կանգ է առնում։

[14] Նույն տեղում, էջ 109։

Գիբբոնը Բյուզանդիայի պատմության առաջին ուսումնասիրողներից մեկն էր։ Սակայն լուսավորիչների նման նա էլ Բյուզանդիայի պատմությունը համարում է խավարամոլության մռայլ շրջան, որտեղ գերիշխում են ստորաքարշություն, ենթադասություն, կաշառակերություն։ Գիբբոնը լուսավորիչների մեծ մասի նման խիստ միակողմանի և սխալ գնահատական է տվել Բյուզանդիայի պատմությանը։ Նա չի տեսնում, որ Բյուզանդիան անտիկ մշակույթի պահպանման գործում խիստ մեծ գործ է կատարել։ Բյուզանդիան իր ժամանակին եղել է Արևմտյան Եվրոպայի ամենակուլտուրական երկիրը, որը պատեհչի նման դարեր շարունակ դիմագրավել է ասիական բարբարոսներին։ Գիբբոնը մյուս լուսավորիչների նման չի տեսնում այն խոշոր ներդրումը, որ կատարել է Բյուզանդիան հումանիստների միջոցով անտիկ մշակույթի տարածման գործում։

Այն կտավի վրա Գիբբոնը վարպետորեն ներկայացրել է Հռոմեական կայսրության պատմությունն իր ողջ բազմազանությամբ։ Ուշագրավ են Գիբբոնի վերլուծական միտքը, սուր դիտողականությունը և նուրբ ճաշակը, որով նա մատուցում է բազմահարուստ նյութը։

Այս բոլորը հիմք են ծառայել, որպեսզի նրա գիտական ժառանգությունը բարձր գնահատվի ժամանակակիցների կողմից։

ՆԻԲՈՒՐԸ ԵՎ ՔՆՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ.—Հռոմեական պատմագրության զարգացման հետևյալ փուլը կապված է գերմանական խոշոր գիտնական Բարթոլդ Գեորգ Նիբուրի անվան հետ, որը հանդիսացավ Հռոմեական պատմության քննական տեսության հիմնադիրը։

Նշանավոր արևելագետ ճանապարհորդ Կարստեն Նիբուրի որդին՝ Բարթոլդ Նիբուրը ծնվել է 1776 թ. Կոպենհագենում և դաստիարակվել հոր և նրա մերձավոր բարեկամների բարերար ազդեցությամբ։ Լինելով արտակարգ ընդունակությունների տեր՝ Նիբուրը վաղ հասակից սկսում է մեծ ջանասիրությամբ սովորել հին և նոր լեզուներ և այնուհետև զբաղվում է հին աշխարհի և նոր պատմության, աշխարհագրության, դրականության և մաթեմատիկայի ուսումնասիրությամբ։ Քի-

լում Նիբուրը մտնում է համալսարան և առանձնապես սիրով հետևում է փիլիսոփայության և իրավունքի դասախոսություններին։ Անցնելով աշխատանքի Դանիայում՝ նա վարել է ֆինանսների մինիստրի քարտուղարի և ազգային բանկի դիրեկտորի պաշտոնը։ Այնուհետև Կոպենհագենում եղել է արքունական գրադարանի քարտուղարի պաշտոնում, որն ավելի էր համապատասխանում նրա բնական հակումներին։ Իր կրթությունն ավարտելու նպատակով Նիբուրն ուղևորվում է Անգլիա և Շոտլանդիա։ Հարստացնելով իր գիտելիքները և լայնացնելով քաղաքական մտահորիզոնը, Նիբուրը վերադառնում է Գերմանիա։ Կարճ ժամանակով Բեռլինում աշխատում է ֆինանսների մինիստրությունում և ապա ընդմիշտ հրաժարվում է վարչական աշխատանքից. 1810 թվականից, դասախոսություններ է կարդում Բեռլինի համալսարանում իր նախասիրած առարկայից՝ Հռոմի պատմություն։ Շատ չանցած՝ նա ընտրվում է Գիտությունների Ակադեմիայի անդամ։ Հենց այդ տարիներին նա լույս է ընծայում իր հռչակավոր «Հռոմի պատմության» առաջին և երկրորդ հատորները, արդասիքը իր բազմակողմանի ու խոր գիտական պատրաստության և հասուն հետազոտող մտքի։ Նապոլեոնի ջախջախումից հետո Նիբուրը 1816 թ. պրուսական դեսպան է նշանակվում Հռոմում։ Կլասիկ հնության խանդավառ երկրպագու—պատմաբանը օգտագործեց իր պաշտոնը «հավիտենական քաղաքում» և իր ազատ ողջ ժամանակը տրամադրեց հետազոտելու Վատիկանի ձեռագրերը։ Նիբուրը եղել է նաև Նեապոլում, որտեղ ոչ միայն հիացել է բնության և արվեստի հրաշալիքներով, այլև ամեն օր իր հանգստի ժամերին արքունական գրադարանում զբաղվել է ձեռագրերի ուսումնասիրությամբ։ Այդ գիտահետազոտական աշխատանքի արդյունքը եղավ 1820 թ. Ցիցերոնի և Վիվիոսի ֆրագմենտների հրատարակումը։ Այդ ժամանակաշրջանում գերմաներեն լույս տեսավ «Բեռլինի գիտությունների ակադեմիայի բանբերում» նրա հոդվածը՝ Պետրոնիոսի և Կուրցիոսի ժամանակաշրջանի մասին, իսկ «Հնագիտության ակադեմիայի տեղեկագրում» մի հոդված Նուբիայում հայտնաբերված հունական ձեռագրերի մասին։

Վերադառնալով Բեռլին՝ Նիբուրը հրաժարվում է դիպլոմատիկ դեսպանի իր պաշտոնից և հաստատվում Բոննում։ 1825 թվականից սկսում է դասախոսություններ կարդալ Բոննի համալսարանում՝ Հունաստանի պատմություն՝ սկսած քրոնոլոգի ճակատամարտից, Հռոմի պատմություն հին ազգագրություն և հնագիտություն, նոր և նորագույն պատմություն սկսած ֆրանսիական բուրժուական հեղափոխությունից։ Նիբուրի դասախոսությունները իրենց հարուստ բովանդակությամբ, վերլուծական և քննադատական մտքի թարմությամբ և ուժով կլանում էին ունկնդիրներին և նրանց ոգեշնչում հետագա ուսումնասիրություններին։ Շարունակելով աշխատել Հռոմեական պատմության ուսումնասիրությամբ, Նիբուրը վերամշակեց առաջին երկու հատորները, որ լույս էր ընծայել 12 տարի առաջ, և վերահրատարակեց 1827 թ. առաջին հատորը, իսկ իր մահվանից մի քանի ամիս առաջ՝ 1831 թ. երկրորդ հատորը։ Աշխատությունները ջերմ ընդունելություն գտան Գերմանիայում և արտասահմանում, որպես ինքնատիպ, գիտական-վերլուծական գործեր։ «Հռոմեական պատմության» երրորդ հատորը հրատարակվել է միայն Նիբուրի մահից հետո, 1832 թ.։

Նիբուրի բեղմնավոր գիտական գործունեության արդյունք է նաև բյուզանդական պատմաբանների գործերի հրատարակումը, որը նրա վաղեմի երազանքն էր։

Իր քաղաքական հայացքներով Նիբուրը խիստ չափավոր էր. նա բացասական վերաբերմունք ուներ դեպի պետական բոնի փոփոխությունները, հեղափոխության միջոցով կատարված արմատական հեղաշրջումները։ Պետությունն ըստ Նիբուրի՝ մի կենդանի օրգանիզմ է, որը աստծու կամքով զարգացել է մարդկային բնության ներքին պահանջմունքներից։ Ինչքան քիչ թռիչքներ լինեն ձևերի զարգացման մեջ, որքան համերաշխորեն գործեն օրգանիզմի բոլոր մասերը ընդհանուր խնդրի լուծման ուղղությամբ, այնքան լիակատար և ճշմարիտ հույս կլինի հաջողության համար[15]։ Նիբուրն հակված էր դեպի Անգլիայի չափավոր սահմանադրական կարգե-

[15] **Бартольд Нибур.** Его жизнь и деятельность. Перев. с немецкого Л. О. Вейнберга, М., 1894, стр. 91—92.

րը։ Այդ պատճառով էլ նա ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը ի տարբերություն իր կրտսեր ժամանակակիցների՝ հակակրանքով էր ընկալում։

Իր պատմահայեցողությամբ նա իդեալիստ էր, պատմության մեջ որոշիչ դեր հատկացնելով հասարակության բարքերին, կենցաղին։ «Պրուսիան կարող է գոյություն ունենալ միայն շնորհիվ հոգեկան-բարոյական հիմքերի»։ Ազատությունը միանգամայն անհնարին է, երբ երիտասարդության մեջ չկա պատվի և համեստության զգացում»[16]—գրում էր նա։

Նիբուրի խոշոր ծառայությունը պատմական գիտության՝ անցյալի ուսումնասիրության աղբյուրների քննական մեթոդն է։ Նա քննադատական վերլուծության ենթարկեց Հռոմեական պետության առաջին հարյուրամյակների պատմական ավանդությունը, որը պահպանվել էր Տիտոս Լիվիոսի և Դիոնիսիոս Հալիկառնասցու մոտ։ Մինչև Նիբուրի հետազոտման քննական մեթոդը հռոմեական այդ ավանդությունը միանգամայն արժանահավատ էր համարվում։ Խիստ և անաչառ հետազոտման ենթարկելով ուսումնասիրած աղբյուրները, վերլուծելով վաղ հռոմեական հանրապետության դարաշրջանին վերաբերող տեղեկությունները, Նիբուրը քննադատության էր ենթարկում դրանց հիման վրա արված պատմական եզրակացությունները։ Հիմնվելով անտիկ կյանքի մասին ունեցած իր բազմակողմանի ուսումնասիրությունների վրա, լայնորեն ներգրավելով աղգագրական հարուստ նյութեր և ելնելով իր սեփական քաղաքական փորձից, Նիբուրը կարողացավ ապացուցել, որ վաղ հռոմեական պատմության վերաբերող ավանդության մեջ առասպելականի հետ միահյուսվել է պատմական իրական կորիզը և որ պատմաբանի խնդիրն է զատել արժանահավատն անարժանահավատից, վերականգնել պատմական իրականությունը։ Իր քննական մեթոդի շնորհիվ Նիբուրը կարողացավ ճեղքել Հռոմի ծագման հետ կապված ավանդության մշուշը և ապացուցել, որ Հռոմն առաջացել է մի քանի համայնքների ձուլման (սինոյկիզմ) հետևանքով։ Ապա՝ պլեբեյների ծագման հարցը կապելով Հռոմի առաջացման սինոյկիզմի եղանակի հետ, Նիբուրը առաջինը պատմական գիտության մեջ լուսաբանեց վաղ հռոմեական հասարակության մեջ տոհմական կազմակերպության գոյությունը և պլեբեյների առաջացման պրոբլեմը։ Այդ առնչությամբ Ֆ. Էնգելսը նշում է. «առաջին պատմաբանը, որ գոնե մոտավոր պատկերացում ուներ տոհմի էության մասին, Նիբուրն էր[17]։

Ըստ Նիբուրի տեսության՝ վաղ հռոմեական համայնքների ձուլման հետևանքով ստեղծվել են արհեստական կազմակերպություններ՝ տրիբուսներ և կուրիաներ, որոնք կազմել են տոհմային կազմակերպությունը։

Զարգացնելով վաղ հռոմեական հասարակության կառուցվածքի մասին իր թեզը, Նիբուրը առաջինը ճիշտ մեկնաբանեց պլեբեյների գենեզիսի պրոբլեմը։ Ճիշտ լուսաբանելով հնագույն Հռոմի սոցիալական պատմության մեջ պլեբեյների խիստ հետաքրքրական և մինչ այդ մշուշապատ հարցը, Նիբուրը գտնում է, որ պլեբեյները ծագել են հպատակեցված շրջակա գյուղերի բնակիչներից և զանազան հկվոր տարրերից, որոնք չէին մտնում բուն հռոմեական ժողովրդի կազմի մեջ։

Հռոմեական տոհմերի մեջ ընդգրկված պատրիկներին հակադրվում է հպատակեցված և եկվոր տարրերից բաղկացած այս տոհմազուրկ դասակարգը, պլեբեյները։ Նիբուրի դրույթները՝ Հռոմի ծագման մասին, տոհմական կազմակերպության պլեբեյական դասակարգի գենեզիսի և պատրիկության դեմ նրա հակամարտության մասին խոշոր ներդրում են վաղ հռոմեական հասարակության սոցիալական պատմության մեջ։ Այդ գիտական ընդհանրացումները արդյունք են Նիբուրի կիրառած քննական մեթոդի։ Իր համարձակ քննական տեսությամբ Բարթոլդ Գեորգ Նիբուրը լույս սփռեց հռոմեական վաղ հանրապետության մշուշապատ պատմության վրա։

[16] Նույն տեղում, էջ 94։

[17] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1953, էջ 240—241։

19-րդ դարի 40-ական և 50-ական թվականներին բուռն հետաքրքրություն առաջացավ անտիկ պատմության և գլխավորապես Հռոմեական կայսրության պատմության նկատմամբ։ Այդ բանին խթանեցին Արևմտյան Եվրոպայում, մասնավորապես Ֆրանսիայում և Գերմանիայում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական իրադարձությունները։ Նապոլեոն I Բոնապարտի կողմնակիցները հատուկ ուսումնասիրության առարկա դարձրին Հուլիոս Կեսարի պատմությունը։ Նապոլեոն 1-ը Կեսարին իր նախատիպն էր համարում։ Նա մի փոքր աշխատություն գրեց Կեսարի գալլական պատերազմների մասին, որը կոչվում է «Հուլիոս Կեսարի պատմությունը (նրա պատերազմները)»։ Կեսարի նվաճողական պատերազմները ոգեշնչել են նաև Նապոլեոն 1-ի եղբոր որդուն՝ Նապոլեոն 3-ին, որը մի ընդարձակ աշխատություն նվիրեց Հուլիոս Կեսարի կենսագրությանը։ Կեսարն այս աշխատություններում խիստ գեղազարդված է, ներկայացված է որպես նախախնամության կամքի արտահայտիչ։ Իրենց զավթողական քաղաքականությունը և կայսրության հաստատումը Բոնապարտներն արդարացնում են՝ հիմք ընդունելով Կեսարի նվաճողական պատերազմները և նրա հաստատած քաղաքական կարգը։

Կեսարի դարաշրջանով հրապուրվելը հատուկ էր ոչ միայն Ֆրանսիայի համար։ Գերմանիայում ևս որոշ քաղաքական և գաղափարական կյանքի ամենաակտուալ հարցերն էին ֆեոդալիզմի մնացուկների ոչնչացումը և Գերմանիայի վերամիավորման պրոբլեմը, լիբերալ բուրժուազիայի գաղափարախոսները Կեսարին իդեալականացնում էին, նրա հաստատած քաղաքական կարգը բնորոշում որպես «դեմոկրատական միապետություն» և տարածում այն համոզմունքը, թե միայն «դեմոկրատական միապետությունը» կարող է իրագործել Գերմանիայի վերամիավորման խնդիրը։ Այդ գաղափարը իր ցայտուն արտահայտությունը գտավ Թեոդոր Մոմզենի նշանավոր «Հռոմեական պատմության» մեջ։

ԱՄԵԴԵՅ ԹԻԵՐՐԻ ԵՎ ՉԱՐԼՉ ՄԵՐԻՎԱԼ.—Հռոմեական կայսրության մասին իրենց աշխատություններով ուշագրավ

են 19-րդ դարի պատմաբաններ՝ Ամեդեյ Թիերրին և Չարլզ Մերիվալը։ Ամեդեյ Թիերրին իր "Pe 223 Tableau de l'Empire" աշխատության մեջ հանրապետությունից կայսրության անցումը համարում է դրական երևույթ։ Մեղադրելով Տակիտոսին կողմնապահ, աչառու վերաբերմունքի մեջ դեպի հանրապետությունը, հեղինակը գտնում է, որ նա կարծես թե որոշել է ոչ մի լավ բան չտեսնել կայսրության դարաշրջանի Հռոմի մեջ, բացի բարքերի անկումից և կայսրերի ոճրագործություններից։ Քննադատորեն մոտենալով Հռոմի կայսրության մասին եղած բացասական հայացքներին, Թիերրին դիտում է, որ այդ պատմաբանները կապիտալի բարձունքից են գնահատում հռոմեական պատմությունը և մեծ տարբերություն են դնում հանրապետական Հռոմի և կայսրության միջև, խախտելով պատմության օրգանական կառուցվածքը։ Թիերրին Հռոմի պատմության մեջ սկզբից մինչև վերջը տեսնում է քաղաքական, սոցիալական և գաղափարական միասնության հաստատելու մի անընդհատ պրոցես։ Այնուհետև նա ընդգծում է, որ կայսրության մերձեցումը պրովինցիաներին նպաստեց Հռոմի պետական կառուցվածքում իրավահավասարության և հումանիստական սկզբունքների ներթափանցմանը, մանավանդ, որ մի շարք պրովինցիաներ (Հունաստանը, Արևելքը) իրենց մշակույթով ավելի բարձր էին Հռոմից։ Պրովինցիաներից սերված կայսրերը՝ Տրայանոսը, Մարկոս Ավրելիոսը, Սեպտիմիոս Սևերոսը, Կարակալան, Պոստումը, Պրոբոսը, Դիոկլետիանոսը, Կոստանդինը Հռոմ ներմուծեցին նոր բարքեր, պաշտամունքներ, նոր գաղափարներ, որոնց բախումից հնի հետ առաջացան նոր, ավելի բարձր գաղափարախոսություններ։ Իսկ մյուս կողմից՝ Կլավդիոսների, Ֆլավիոսների, Անտոնինոսների և Սևերոսների ջանքերով տարածվեց բոլոր ազատների վրա հռոմեական քաղաքացու իրավունքը։ Հռոմեական գրականության ականավոր դեմքերը սերված էին պրովինցիաներից. Վիվիոս Անդրոնիկոսը, Էննիասը՝ հույներ էին Հարավային Իտալիայից, Տերենտիոսը՝ Աֆրիկայից։ Լատինական Իտալիան շնորհիվ Մեծ Հունաս-

ատնի ազդեցությանը, ավեց Լուկրեցիոս Կարոսին[18], Յիցերոնին, Սալլյուստիոսին, Վառոնին։ Այսպալպյան Գալլիան՝ Կատուլլին, Վերգիլիոսին, Տիտոս Լիվիոսին։ Իսպանիան՝ Սենեկային, Լուկանին, Մարցիալիսին, Քվինտիլիանոսին, Ափրիկան՝ Ապուլեյոսին, Տերտուլիանոսին։

Թիերրիի կարծիքով կայսրության մերձեցումը պրովինցիաներին նպաստեց հռոմեական օրենսդրության մեջ հումանիստական տարրերի ուժեղացմանը։ Կանայք և երեխաները ազատվում են տղամարդու իշխանությունից և խնամակալությունից. կինը իրավունք ստացավ տնօրինելու իր գույքը։ Բոլոր պաշտամունքներն իրավահավասար ճանաչվեցին, որն իր արտահայտությունը գտավ Պանթեոնի կառուցման մեջ[19]։

Այսպիսով, հռոմեական, հատկապես Կայսրության պատմությունը Թիերրիի մոտ հանդես է գալիս խիստ ներդաշնակ, բարեկազմ ու լուսաշող։ Այստեղ երևան չի եկել ամենաթույլ արտացոլումն անգամ սոցիալական ներհակությունների, դասակարգային պայքարի, պրովինցիաների ազատագրական շարժումների, որոնք ծվատում էին Կայսրությունը ներքուստ։ Բոլոր ստվերոտ կողմերը քողարկված են հռոմեական պետության մի հիմնական ձգտումով. քաղաքակրթություն սերմանել Եվրոպայի լայնածավալ երկրներում։

[18] Մ. թ. ա. 1-ին դարի խոշորագույն հին հռոմեական պոետ-փիլիսոփա։ Հռչակավոր «Իրերի բնության մասին» պոեմում Լուկրեցիոս Կարոսը պաշտպանում է էպիկուրի մատերիալիստական ուսմունքը, գլխավորապես նրա բնափիլիսոփայությունը։ Նա ջատագովում է մարդկային բանականության ուժը, որը թափանցում է տիեզերքի ամենախոր գաղտնիքների մեջ և ազատում մարդուն կրոնական սնահավատություններից։ Լուկրեցիոսը չի անդրադարձել Հռոմի քաղաքական իրադարձություններին, բայց բուռն զայրույթով է խոսում բռնության մասին, բողոքում է հարստության ծաթագին, պերճանքի դեմ։ Կ. Մարքսը բարձր է գնահատել Լուկրեցիոսին։ Լ. Կարուսը աշխատության 5-րդ գլխում տալիս է նախնադարյան հասարակության զարգացման ուրվագիծը և փորձում է պարբերացնել նախ. պատմությունը ըստ դարաշրջանների։ 1-ին աստիճանը համարել է որսորդությունը, 2-րդը՝ անասնապահությունը, 3-րդը՝ երկրագործությունը։ Նախնադարյան հասարակության զարգացման հարցում ևս տեղ է գտել հասարակության զարգացման մատերիալիստական ըմբռնումը։

[19] **Амедей Тьерри,** Tableau de l'Empire, Университетские известия, Киев, 1869, ст. 59.

Վերոհիշյալ մեթոդոլոգիական թերությամբ հանդերձ Թիերրիի աշխատությունն ունի մի մեծ առավելություն. հեղինակը Հռոմի պատմությունն ընկալում է իր բնականոն զարգացման մեջ և Կայսրությունը համարում է հանրապետության օրգանական շարունակությունը, որպես Հռոմի պատմության ավելի բարձր փուլ։

Թիերրիի դրույթը Կայսրության մասին ավելի է զարգացնում Ջարլզ Մերիվալը իր «Հռոմեական պատմությունը Կայսրության շրջանում» աշխատության մեջ։ Այսպես՝ խոսելով Լուկանի «Փարսալիա» պոեմի մասին, Մերիվալը այն մեկնաբանում է որպես պամֆլետ սենատի օգտին և ոչ թե ժողովրդական ազատության։ Լուկանին, ըստ Մերիվալի՝ ոգեշնչել են ոչ թե ժողովրդական ժողովն ու տրիբունները, այլ սենատը և կոնսուլները[20]։ Լուկանի գովերգած անցյալը տիրող դասակարգերի կառավարությունն էր, որը ազատորեն օգտվում էր իր նվաճումների պտուղներից։ Մերիվալը սկեպտիկորեն է վերաբերվում թե՛ Սենեկային և թե՛ Լուկանին, որոնք չնայած իրենց տաղանդին, պաշտպանում էին անարդար գործ՝ Հռոմի կողմից աշխարհի ճնշման և հարստահարման գործը։ Մերիվալը դրվատում է Կայսրության պատմությունը որպես կոսմոպոլիտ պետության, որտեղ հումանիստական սկզբունքներն ավելի լայն ասպարեզ են գտել և որտեղ բոլոր ազատները քաղաքացիական ազատություն են ստացել։ Ընդհանրացնելով իր դրույթը՝ նա հանգում է այն եզրակացությանը, որ սկսած Օգոստոսից՝ զրականությունն էլ անհամեմատ հարստանում է ավելի հասուն մտքերով և վեհ զգացմունքներով։

Ընդունելով հանդերձ, որ Մերիվալը և Թիերրին տեղին քննադատության են ենթարկել Հռոմեական հանրապետությունը դեղազարդելու փորձերը, այնուամենայնիվ ընկել են

[20] Լուկանը Ներոնի ժամանակաշրջանի պոետներից էր, Սենեկայի եղբոր որդին։ 65 թ. (մ. թ. ա.) մասնակցեց Ներոնի դեմ Պիզոնի կազմակերպած դավադրությանը և դավադրության ձախողումից հետո հարկադրված եղավ ինքնասպանություն գործել։ Նրա «Փարսալիա» պոեմից երևում է, որ Լուկանի համակրանքը սենատորական օլոգիխոն շրջանների կողմն է։ Նա դասարին ներկայացրել է որպես արյունարբու բռնապետ։

մի այլ ծայրահեղության մեջ, նրանք գերագնահատել և մի տեսակ վերդասակարգային են համարել Հռոմեական կայսրությունը։ Գեղազարդելով Կայսրությունը, նրանք անտեսում են, որ Կայսրությունն էլ հանրապետության նման հանդիսանում էր սարկատիրական վերնախավի դասակարգային օրգան։

ԹԵՈԴՈՐ ՄՈՄՋԵՆ (1817—1903).—Անտիկ և հատկապես Հռոմի պատմության ականավոր մասնագետ Թեոդոր Մոմզենը ծնվել է Սիլեզիայում, պաստորի ընտանիքում։ Ավարտել է Քիլի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ 1844—47 թթ. եղել է Ֆրանսիայում, գործուղվել Իտալիա, լատինական արձանագրություններն ուսումնասիրելու նպատակով։ 1848 թ. հեղափոխության ժամանակ գտնվում էր Շլեզվիգում, որտեղ խմբագրում էր ժամանակավոր կառավարության լրագիրը։ Հեղափոխությունից հետո Լայպցիգի համալսարանում վարում էր հռոմեական իրավունքի ամբիոնը, բայց քաղաքական շարժմանը մասնակցելու համար ռեակցիոն իշխանության կողմից Գերմանիայից վտարվեց։ Նա մեկնեց Շվեյցարիա, որտեղ Հռոմի պատմություն էր դասավանդում Ցյուրիխի համալսարանում։ Մոմզենը վերադառնալով Գերմանիա, 1854 թ. բնակություն է հաստատում Բրեսլավում, որի համալսարանում դասավանդում է Հռոմի պատմություն։ 1858 թ. հրավիրվում է Բեռլինի համալսարան, որտեղ աշխատում է որպես Հռոմի պատմության ամբիոնի վարիչ մինչև իր մահը՝ մինչև 1903 թվականի նոյեմբերի 1-ը։ Նա ընտրվել է Բեռլինի Գիտությունների ակադեմիայի անդամ, 1902 թվականին արժանացել է Նոբելյան մրցանակի։

Մոմզենի բազմակողմանի հարուստ գիտելիքների դրսևորման համար Բեռլինում լայն ասպարեզ է բացվում։ Նրա գիտական փայլուն տաղանդը չսահմանափակվեց սոսկ համալսարանական դասախոսություններով։ Այն դուրս հորդեց համալսարանի շրջանակներից։ Նա կազմակերպեց գիտական սեմինարներ, որոնց մասնակցում էին Եվրոպայի զանազան երկրներից Գերմանիա ուսանելու եկած շնորհալի երիտասարդ գիտնականներ, այդ թվում նաև ռուս նշանավոր պատմաբան Պ. Գ. Վինոգրադովը (1854—1925)։ Մոմզենը լույս ընծայեց 1513

պիտական աշխատություններ և հոդվածներ, որոնք ուղենիշ հանդիսացան անտիկ պատմության զանազան դիսցիպլինների համար։ Նա առաջին գիտնականներից էր, որ հասկացավ դրամների և պապիրուսների նշանակությունը, որպես պատմության կարևոր աղբյուրների։ Նա մասնակցեց պապիրուսաբանական և դրամագիտական հանդեսների հրատարակությանը։ Մոմզենը իրականացրեց սկզբնաղբյուրների օրինակելի հրատարակություններ՝ հարուստ ծանոթագրություններով, օրինակ, Օգոստոսի քաղաքական կտակը (Res gestae divi Augusti Թեոդոսիոսի կոդեքսը, «Դիգեստները» (հռոմեական իրավագետների աշխատություններից բանաքաղված հատվածների ժողովածուներ)։

Առանձնապես նշանակալի և կարևոր է Թ. Մոմզենի նախաձեռնությամբ Բեռլինի գիտությունների ակադեմիայի ձեռնարկած լատինական վիմագիր արձանագրությունների բազմահատոր ժողովածուն, որը լույս տեսավ 1858—1872 թթ.։ Արձանագրությունները լույս են սփռում Հռոմի պետական կառավարման, զինված ուժերի կազմակերպման, բարձրագույն և ստորին մագիստրատուրաների և բնակչության վիճակի վրա,—այսինքն՝ այն բոլոր կողմերի, որ աչքաթող են արվել հին պատմիչների երկերում։ Վիմագիր արձանագրությունների շնորհիվ մենք ծանոթանում ենք Հռոմեական պետության ներքին կյանքին և մշակույթին։ Ժողովածուի առաջին հատորը ընդգրկում է բոլոր հնագույն արձանագրությունները մինչև Կեսարի դիկտատուրան, այդտեղ մտնում են տոմարների և կոնսուլների ցուցակներից հատվածներ։ Մնացած հատորներում զետեղված արձանագրությունները բաշխված են ըստ պրովինցիաների կամ մարզերի։

Թ. Մոմզենի բեղմնավոր գրչին է պատկանում «Հռոմեական պետական իրավունքը» (1871—1887 թթ.), որտեղ տրված է հռոմեական և նրա ենթակա պրովինցիաների պետական հաստատությունների (մագիստրատուրաների, կոմիցիաներ, սենատ, մունիցիպալ խորհուրդներ) և կայսրության իրավական հիմքերի տեսությունը։

Սակայն Թ. Մոմզենի գիտական հարուստ ժառանգության թագն ու պսակը նրա «Հռոմեական պատմությունն» է, որի

1-ին 3 հատորները լույս տեսան երեք տարվա ընթացքում՝ 1854—1856 թթ.[21]։ Այդ հատորներում ուսումնասիրության գլխավոր առարկան հանրապետության պատմությունն է՝ ընդհուպ մինչև Թապսոսի ճակատամարտը՝ 46 թ. (մ. թ. ա.)։

Մոմզենի գիրքն ունեցավ բացառիկ հաջողություն. հեղինակը միատեսակ ուշադրությամբ շարադրում է Հռոմի թե՛ ներքին և թե՛ արտաքին պատմությունը, ընդգրկում հռոմեական հասարակության սոցիալ-տնտեսական և կուլտուր-կենցաղային կյանքը, ըստ էության՝ Հռոմի ամբողջ պատմությունը, համարյա մինչև հանրապետության դարաշրջանի վերջը։ Պատկերավոր, գրավիչ ոճով գրված այդ գործը կարծես կերտված է մեկ գարկով և ընթերցողին պատճառում է գիտական և գեղարվեստական մեծ հաճույք։ Մոմզենի «Հռոմեական պատմությունը» ներկայումս էլ պահպանել է իր նշանակությունը և հաղիսանում է հռոմեական հանրապետության չգերազանցված ուսումնասիրություն։ Մոմզենը «Հռոմեական պատմության» մեջ զարգացրեց «դեմոկրատական միապետության» գաղափարը, որի մարմնավորումը նա տեսնում էր Հուլիոս Կեսարի դիկտատուրայի մեջ։ Իր աշխատության 3-րդ հատորի 11-րդ գլուխը՝ Կեսարին նվիրված մի բոցաշունչ ներբող է։ Բայց վաղ կայսրության պատմության փաստերը թույլ չտվեցին նրան զարգացնելու «դեմոկրատական միապետության» իր գրույթը, որովհետև ակնհայտ էր, որ Օգոստոսի ժամանակ դեմոկրատիան անկում էր ապրում, միապետությունը վերածվում էր բռնապետության և ուժեղ իշխանությունը գարձել էր կոպիտ կամայականությունների ասպարեզ։ Իր ապրած ժամանակաշրջանի Գերմանիայի սոցիալ-քաղաքական իրականությունն էլ հիասթափեցրեց Մոմզենին. Գերմանիայի վերամիավորման պրոցեսը Պրուսիայի հեգեմոնիայի տակ, գերմանական կայսրության առաջին կանցլերի՝ Բիսմարկի ներքին քաղաքականությունը, շատ հեռու էին «դեմոկրատական միապետության» այն իդեալից, որ փայփայում էր Մոմզենը։ Անտարակույս, քաղաքական հիասթափությունը պատճառ եղավ, որ Թեոդոր Մոմզենը չգրեց իր աշխատության չորրորդ հատորը՝ կայսրության պատմությունը։ 3-րդ հատորի հրատարակությունից 30 տարի անց միայն նա լույս ընծայեց 5-րդ հատորը։ Այդ առիթով հինգերորդ հատորի նախաբանում նա հետևյալ բացատրությունն է տալիս. «Ես հաճախ եմ լսում ցանկություններն այն մասին, որպեսզի շարունակեմ իմ «Հռոմի պատմությունը»։ Դա միանգամայն զուգադիպում է իմ ցանկությանը, թեպետ և դժվար է 30 տարուց հետո նորից բռնել այն թելը, որը ես ստիպված էի բաց թողնել։ Այն, որ նոր շարադրանքը չի լինելու անմիջականորեն հին շարունակությունը, մեծ նշանակություն չունի։ Չէ՞ որ 4-րդ հատորն էլ առանց հինգերորդի կլիներ նույնպիսի ֆրագմենտ, ինչպես որ հինգերորդը հիմա կլինի առանց չորրորդի»։ Եվ ապա տալիս է հետևյալ բացատրությունը «Հանրապետական ներքի պայքարը Կեսարի հիմնած միապետության դեմ և վերջինիս վերջնական հաստատումը... այնքան լավ է նկարագրված անտիկ աղբյուրներում, որ այդ պրոցեսի ամեն մի շարադրանք հանգում է հիմնականում դրանց վերապատմանը»[22]։ Այս բացատրությունը թույլ փորձ է քողարկելու հոգեկան այն փլուզումը, որ նա ապրեց՝ հիասթափվելով Գերմանիայում քաղաքական կյանքի ոչ իրադարձություններից։

Մինչդեռ «Հռոմի պատմության» առաջին երեք հատորներում վառ ու կենդանի դրվագներով տրված է հանրապետության պատմության հանրամատչելի շարադրանքը, 5-րդ հատորում Մոմզենը ընթերցողին հաղորդակից է դարձնում իր կատարած աղբյուրագիտական մանրազնին աշխատանքին, վկայակոչում իր ժամանակակից պատմաբաններին, մեջբերումներ կատարում նրանցից և քննական տեսության ինքնատիպ եղանակով, բազմակողմանի մշակման է ենթարկում պրովինցիաների պատմությունը։

Մոմզենից առաջ լույս չէր տեսել որևէ աշխատություն, որտեղ պրովինցիաների պատմությունը մեկնաբանվեր, որպես հռոմեական պատմության մի անխզելի մասը, պրովինցիաների պատմությունը չէր ուսումնասիրվել։ Գիտակցելով

[21] 1914 թ. լույս տեսավ «Հռոմեական պատմության» 10-րդ հրատարակությունը։

[22] Теодор Моммзен, История Рима, т. V, М., 1949, стр. 15.

իր ձեռնարկած վիթխարի գործի ողջ լրջությունն ու պատասխանատվությունը, Մոմզենը «Հռոմեական պատմության» 5-րդ հատորի առաջաբանում գրում է. «Որքան ես գիտեմ, ընթերցողները, որոնց համար գրված է այս աշխատությունը, ոչ մի տեղ չեն գտնի բավականաչափ հակիրճ և մատչելի ձևով Կայսրության առանձին մասերի պատմությունը, սկսած Կեսարից մինչև Դիոկլետիանոսն ընդգրկված ժամանակաշրջանում, որին նվիրված է այս հատորը»[23]։

Կայսրության դարաշրջանում Հռոմեական լայնածավալ պետության մեջ ընդգրկված համարյա բոլոր ցեղերն ու ժողովուրդները իրենց ազգագրական, մշակութային-կրոնական և կենցաղային առանձնահատկություններով տեղ են գտել այս արժեքավոր շարադրանքում։ Սկսած Տիբերիոսի օրոք ոսմանականացած Անդալուզիայից[24], Կեսարի միջոցով նվաճված Գալլիայից, «Հոմերոսյան ռազմակառքերով» մարտնչող Բրիտանիայից[25] մինչև Ինդոսի շրջանի հեռավոր Բակտրիան,—ապա՝ պանհելենիզմի կենտրոնի վերածված գեղահրաշ Հունաստանից մինչև եվրոպական սևամորթների հովվական ժողովուրդները իրենց խիզախ Կանդակ թագուհու սրխրանքներով[26],—այս բոլորը հանդես են գալիս Մոմզենի աշխատության մեջ ո՛չ թե որպես աֆրիկյան էկզոտիկայի կամ հունական նրբագեղ արվեստի և կամ՝ գերմանա-գալլական պարզունակ ցեղերի գեղարվեստական նկարագրություն, այլ որպես մանրազնին գիտահետազոտական ուսումնասիրություն՝ կատարված վավերագրական նյութերի հիման վրա։

Մոմզենը կարողացավ պրինցիպատի ներքին պատմության մեջ բացահայտել մի քանի դրական կողմեր, այն է Օգոստոսի և մանավանդ Տիբերիոսի հմուտ քաղաքականության շնորհիվ ստեղծված համեմատաբար խաղաղ վիճակը և դրա հետ կապված նպաստավոր շրջադարձը պրովինցիաների էկոնոմիկայում և մշակույթի բնագավառում ինչպես և կայսերական սալտուս-

[23] **Теодор Моммзен**, История Рима, т. V, Провинции от Цезаря до Диоклетиана, М., 1949, 15

[24] Նույն տեղում, գլուխ II, էջ 77—78։

[25] Նույն տեղում, գլուխ V, էջ 157։

[26] Նույն տեղում, գլուխ XII, էջ 526—527։

ների ճոխ տարածումը Հռոմեական լայնածավալ տերության ծայրամասերում։ Ի դեպ՝ Մոմզենը պրինցիպատը մեկնաբանում է որպես երկիշխանություն (դիարխիա) սենատի և պրինցեպսի միջև։ Մինչդեռ սովետական պատմաբանները (Ն. Ա. Մաշկինը և ուրիշներ) հիմնվելով պրինցիպատի սոցիալական էության վրա, այն բնորոշում են որպես միապետության յուրահատուկ ձև, որի ժամանակ ձևականորեն պահպանվել էին հիմնական հանրապետական հաստատությունները (սենատը, ժողովրդական ժողովը, մագիստրատուրաները), բայց իշխանությունը պատկանում էր պրինցեպսին՝ առաջին սենատորին և պետության մեջ առաջին մարդուն։

Բարձր գնահատելով Թ. Մոմզենի «Հռոմեական պատմության» մանավանդ 5-րդ հատորի պատմագիտական արժեքը, մենք չենք կարող աչք փակել այդ աշխատության մի շարք թերությունների վրա։ Այդ թերությունները հիմնականում բխում են հակագիտական իդեալիստական պատմահայեցողությունից, ըստ որի մեծ անհատն է հանդիսանում պատմության շարժիչ ուժը։ Մոմզենը կարծում է, որ Հանրապետությունը իր գոյության վերջին շրջանում անկարող եղավ իրագործելու Հռոմի առաջ դրված խնդիրները։ Հռոմի փրկիչը՝ ըստ Մոմզենի, Կեսարն էր, որը նպատակ էր դրել բարձրացնելու Հռոմեական ազգը և խոր անկում ապրող հելլենական ազգը։ «Հռոմեական պատմության» 5-րդ հատորում խոսելով Հանրապետության վերջում Կորնթոսի վերականգնման մասին, Մոմզենն ասում է. «Դա հանդիսացավ բոլոր հռոմայեցիներից և բոլոր հունասերներից մեծագույնի՝ դիկտատոր Կեսարի գործը, որը վերականգնեց Կորնթոսը՝ Հելլադայի այդ ջահը, Հռոմեական քաղաքացիների ինքնուրույն համայնքի ձևով, «Հուլիոսյան փառքի» ձևով[27]։

Մոմզենի պատմահայեցողության թույլ կողմերից է Հռոմի պատմության արդիականացումը. նա իր ժամանակի երևույթների որոշ գծեր փոխադրում է անտիկ աշխարհը։ Իր ժամանակի քաղաքական տեսանկյունով մեկնաբանելով Հռոմի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, նա Հին Հռոմում

[27] **Теодор Моммзен**, История Рима, т. V, М., 1949, стр. 242.

տեսնում է կապիտալիզմ, ֆաբրիկաներ, պրոլետարիատ, կապիտալիստական հարաբերություններ։ Կ. Մարքսը գրում է. «Պարոն Մոմզենն իր Հռոմեական պատմության մեջ խոսում է կապիտալի և կապիտալիստների իշխանության մասին, որովհետև ոչ մի զաղափար չունի արդի իմաստով կապիտալի մասին»[28]։ Կորցնելով պատմական հեռանկարը՝ Մոմզենը բուրժուական հետազոտողներից շատերի նման ձգտում էր արդիականացնել անցյալը, հիմնավորելու համար նորագույն ժամանակաշրջանի բուրժուազիայի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը։ Պատմական սխալ կոնցեպցիայի հետևանքով Մոմզենն իր աշխատության մեջ պատշաճ տեղ չի հատկացրել դասակարգային պայքարին։ Ճիշտ է, որպես ականավոր հետազոտող՝ նա ընդգծում է սորուկների աշխատանքի դերը անտիկ Հռոմեական տնտեսության մեջ և դրանից հետևող գյուղացիության պրոլետարացման պրոցեսը, բայց ելնելով բուրժուական զաղափարախոսության դիրքերից, նա որպես ուժի քաղաքականության երկրպագու խոնարհվում է ուժեղ պետական իշխանության առաջ։ Հռոմեական անցյալում նրա քաղաքական իդեալը Հուլիոս Կեսարն էր, իսկ իր ապրած ժամանակաշրջանում՝ Բիսմարկը։ Ելնելով իր քաղաքական դիրքերից՝ նա բացասական վերաբերմունք ունի դեպի պրովինցիաների աշխատավորության հուզումները և ազատագրական պայքարը։ «Հռոմեական պատմության» 5-րդ հատորի 12-րդ գլխում խոսելով Եգիպտոսում հռոմայեցիների կիրառած շահագործման անխիղճ արիստոկրատական քաղաքականության մասին[29], և նկարագրելով բուկոլոնների[30] ապրա-

[28] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, 1936, էջ 294։

[29] Արիստոկրատը Ալեքսանդր Մակեդոնացուն դասախոսելիս հռոմեացի խորհուրդներն էր տվել. հելլենների համար լինել իշխող, իսկ բարբարոսների նկատմամբ՝ տեր։ Առաջինների մասին հոգալ, որպես բարեկամների, վերջիններից օգտվել ինչպես բույսերից ու կենդանիներից։

[30] Բուկոլոնների ապստամբությունը Հռոմեական կայսրության կեղեքման դեմ Եգիպտոսում աշխատավորության ուժեղ ապստամբություն էր, որը բռնկվել էր 174—175 թթ. Մարկոս Ավրելիոսի իշխանության օրոք։ Դելտայի ճահճուտներից ապստամբությունը տարածվեց ողջ Սորին Եգիպտոսում։ Նրանք հարկերից, պարտականություններից և շահագործումից գյուղացիները և բանտարկները փախչում էին դժվարամատչելի դելտայան ճահիճները՝ Բուկոլիա,

տամբությունը, սքողում է կայսերական Հռոմի դեմ Եգիպտոսում ծագած այդ ուժեղ ապստամբության քաղաքական բնույթը և բուկոլոնների շարժումը մեկնաբանում է կրոնական շարժառիթներով։

Մոմզենը նույնպիսի հակաժողովրդական դիրքերից է մեկնաբանում Ալեքսանդրիայի սորերին խավերի՝ բնիկների փոդոցային հուզումները։ Նա կեղեքված ու հոգատանջ եգիպտացիներին «չարաճճիներ ու դաժան» է անվանում, իսկ նրանց շարժումները՝ «վատաբարո ու թեթևամիտ սրիկաների գործ, որը միայն անհարմարություն է պատճառում, բայց որևէ լուրջ վտանգ չունի»[31]։

Քննադատորեն վերաբերվելով Թ. Մոմզենի պատմահայեցողությանը, մենք, այնուամենայնիվ, անժխտելի ենք համարում նրա խոշոր դերը Հռոմի պատմության ուսումնասիրության գործում։

ԱՐԵՎՄՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Մոմզենի աշխատությամբ սկիզբ դրվեց Հռոմի պատմության արդիականացմանը, որը 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարում լայն չափերի հասավ բուրժուական ռեակցիոն պատմագրության մեջ։ Այդ ուղղության դեմ 19-րդ դարի երկրորդ կեսին հանդես եկավ ֆրանսիական պատմաբան Ֆյուստել դը Կուլանժը (1830—1889)։ Իր ինքնատիպ աշխատությամբ, որը կրում է «Անտիկ աշխարհի քաղաքացիական համայնքը» խորագիրը, Ֆյուստել դը Կուլանժը պնդում էր, որ հին ժողովուրդների մասին ճշմարտությունն իմանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նրանց հասարակական և քաղա-

սրից և ստացան իրենց անունը։ Քուրմ Իսիդորի գլխավորությամբ բուկոլոնները չարդեցին հռոմեական լեգեոններին և մոտեցան Ալեքսանդրիային։ Բուկոլոնների ապստամբությունը ճնշվեց Սիրիայի փոխարքա Ավիդիոս Կասսիոսի միջոցով, որը օգտագործեց ապստամբների համաբարում եղած երկպառակություններ։

[31] **Теодор Моммзен,** История Рима, том. 5, глава 12, М., 1949, стр. 517—518.

քական ուրույն կյանքը, կենցաղն ու սովորությունները, նրանց մտածելակերպը, որոնք իրենց նմանը չունեն նորագույն ժամանակներում և չեն ունենա ապագայում[32]։

Արևմտաեվրոպական պատմագրությունը 19-րդ դարի վերջերից սկսում է զբաղվել անտիկ աշխարհի տնտեսական և սոցիալական պրոբլեմներով։ Ի տարբերություն նախորդ պատմաբանների, որոնք առավելապես ուսումնասիրում էին Հռոմի քաղաքական պատմությունը, այժմ պատշաճ ուշադրություն են դարձնում Հռոմի էկոնոմիկայի և սոցիալական կյանքի երևույթների վրա։ Այդ բեկումը արդյունք է ուսումնասիրվող նյութերի հարստացման և հետազոտական մեթոդների կատարելագործման։ Հրատարակված են լատինական արձանագրությունների բազմահատոր ժողովածուներ, որոնց գլուխ գործոցը համարվում է Թ. Մոմզենի ղեկավարությամբ Բեռլինի գիտությունների ակադեմիայի հրատարակած „Corpus Inscriptionum latinarum“-ը (Դիվան լատինական արձանագրությունների), զարկ է տրվում հնագիտությանը, պապիրուսաբանությանը և ազգագրությանը։ Եվ, որ խիստ կարևոր է նշել, 19-րդ դարի երկրորդ կեսին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հանճարեղ աշխատությունները իսկական հեղաշրջում կատարեցին անտիկ աշխարհի, ինչպես և ամբողջ պատմական գիտության մեջ։ Մարքսիզմի հիմնադիրները առաջինը բացահայտեցին հին հունա-հռոմեական արտադրության սոցիալ-տնտեսական եղանակը, որը պայմանավորում էր անտիկ հռոմեական, ինչպես և հունական հասարակության և նրա ողջ մշակույթի սոցիալական բնույթը[33]։

Մարքսիզմը իր ուսումնասիրության մեթոդոլոգիայով, անկասկած, որոշ ազդեցություն գործեց բուրժուական պատմաբանների վրա։ Բուրժուական պատմաբանների մի մասը ստիպված էր ընդունել էկոնոմիկայի վճռական ազդեցությունը հասարակական-քաղաքական կյանքում։ Այսպես, օրինակ,

[32] Տե՛ս «Ուրվագծեր Հին Հունաստանի պատմագրության», 97—99 էջերը, որ նվիրված են Ֆյուստել դը Կուլանժին։

[33] Տե՛ս նույն աշխատության էջ 129—135, «Մարքս-Լենինյան ուսմունքը որպես շրջադարձային էտապ անտիկ պատմության գիտական ուսումնասիրության մեջ» գլուխը։

գերմանական տնտեսագետներ Ռոդբերտուսը և Կառլ Բյուխերը (1847—1930 թթ.)։ Իր «Ժողովրդական տնտեսության ծագումը» աշխատության մեջ մանրազնին ուսումնասիրել է անտիկ տնտեսությունը և եկել է այն հետևության, որ անտիկ տնտեսությունը օյկոսային (տնային) էր։ Պատշաճ տեղ հատկացնելով անտիկ տնտեսության հարցերին, այնուամենայնիվ Բյուխերը սխալվում էր տնտեսական կյանքի հիմքը համարելով ո՛չ թե արտադրական հարաբերությունները, այլ փոխանակությունը։

Բուրժուական պատմագրության մեջ Բյուխերի տեսությունը քննադատելիս պատմաբաններից ոմանք, օրինակ, Էդուարդ Մայերը, ընթացան անտիկ պատմության արդիականացման և տիկլայնության հակագիտական տեսության ուղիով։

Անհրաժեշտ է թեկուզ երկու խոսքով կանգ առնել Նիբուրի դպրոցի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Կառլ Նիչի վրա։

ՆԻՉԸ (1812—1880) գերմանացի պատմաբան էր, Քիլի (1848 թվի), Քյոնիգսբերգի (1862 թվից) և Բեռլինի (1872 թվից) համալսարանների դասախոս։ Հռոմեական պատմությանը նվիրած իր գիտահետազոտական աշխատանքներում Նիչը հետևելով Նիբուրի հետազոտական մեթոդին, շարունակում է նրա ուսումնասիրությունը վաղ հռոմեական պատմության աղբյուրների քննական վերլուծության գծով։ Այդ աշխատանքի արդյունքը հանդիսացավ նրա երկասիրությունը հռոմեական տարեգրության մասին (1873), որտեղ շարադրված են Մոմզենին հակադիր հայացքներ։ Ի տարբերություն Մոմզենի, Նիչը մեծ ուշադրություն է նվիրում տնտեսական պատմությանը, այն սերտորեն կապելով Հռոմի սոցիալական պատմության հետ։ Նա բացառիկ մեծ դեր է հատկացնում հռոմեական գյուղացիությանը։ Նրա ուշադրության կենտրոնում է Հռոմեական հանրապետության դարաշրջանի քաղաքական պայքարը և Գրակքոսների ագրարային ռեֆորմը։ Նրա մահից հետո հրատարակարկվել են նաև նրա դասախոսությունները՝ «Հռոմեական հանրապետության պատմությունը»։ Բ. Նիբուրի ասելով, Նիչը թարմ հոսանք մտցրեց հռոմեական պատմագրության մեջ, նա կյանքի կոչեց նոր, բեղմնավոր

պաղափարներ[34]։ Այսուհանդերձ Նիչն էլ Մոմզենի նման արդիականացնում էր Հռոմեական հանրապետության տնտեսական կյանքը։

ԷԴՈՒԱՐԴ ՄԱՅԵՐ (1855—1930).—Անտիկ աշխարհի արդիականացումը սկզբունքի աստիճանի է բարձրացված գերմանական նշանավոր պատմաբան Էդուարդ Մայերի աշխատություններում։ Հին աշխարհի պատմության պրոֆեսոր Լայպցիգում (1884 թվից), Բրեսլավլում (1855 թ.), Հալլեում (1899), Բեռլինում (1902—1923 թթ.), Էդուարդ Մայերը տիրապետելով հարուստ աղբյուրագիտական նյութերին, գրեց Հին Արևելքի, Հունաստանի և Հռոմի պատմության մասին։ Իր հիմնական հիմնահատորանոց աշխատության՝ «Հին (աշխարհի) պատմության» մեջ երկրորդ հատորից մինչև հինգերորդը ներառյալ՝ Մայերը ընդգրկում է Հռոմի և Իտալիայի պատմությունը՝ հասցնելով մինչև 4-րդ դարի (մ. թ. ա.) առաջին տասնամյակները[35]։

80-ական և 90-ական թվականներին մոդեռնիզմը լայն տարածում գտավ հատկապես գերմանական պատմագրության մեջ։ Ժխտելով առաջադիմական զարգացման գաղափարը, իմպերիալիզմի դարաշրջանի ռեակցիոն բուրժուական գիտությունը պրոպագանդում է կապիտալիստական կարգերի հավիտենականության գաղափարը։ Այս հակագիտական պատմահայեցողությունը ամենից շատ հատկանշական է գերմանական պատմաբան Թոբեոա Պոլմանի համար (1852—1914)[36]։

ԷՏՏՈՐԵ ՊԱԻԻ (1856—1939)—Իմպերիալիզմի դարաշրջանի բուրժուական պատմագրության հատկանշական գծերից է սկեպտիցիզմը, որը տանում է դեպի գերքննադատություն։ Այդ առանձնահատկությունը առավել հստակորեն երևան եկավ իտալացի պատմաբան Պաիսի աշխատություններում։

[34] Б. Низе, Очерк Римской истории и источниковедения, С.—П., 1908, стр. 6.

[35] Կաղ. Բյուխների և է. Մայերի մասին տե՛ս «Ուրվագծեր Հին Հունաստանի պատմագրության», էջ 103, 104, 105։

[36] Թ. Պոլմանի մասին ավելի մանրամասն տե՛ս «Ուրվագծերի» 1-ին մասում, էջ 103—111։

19-րդ դարի վերջերից Իտալիայում Հռոմի պատմության ուսումնասիրության ուղղությամբ առաջ է գալիս բուռն հետաքրքրություն։ Այդ երևույթը հետևանք էր Իտալիայում ծայր առած հնագիտական խոշոր պեղումների, որ խթանեցին գիտահետազոտական աշխատանքներին։ Պալերմոյի (1886—89) Պիզայի (1889—99), Նեապոլի (1899—1904), Հռոմի (1905—31) համալսարանների անտիկ պատմության պրոֆեսոր Էտտորե Պաիսը 90-ական թվականների վերջերին հանդես եկավ մի ստվար աշխատությամբ, որը կոչվում է «Հռոմի պատմության առաջին հինգ դարերի քննական տեսություն»։ Գիրքը ընդգրկում է Հռոմի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև Պունիկյան պատերազմների վերջն ընկած ժամանակաշրջանը։ Ընթանալով Բոֆորի և Նիբուրի նախապատված ուղիով՝ Պաիսը քննության է ենթարկում հռոմեական հնագույն պատմության աղբյուրները։ Սակայն, ի տարբերություն Նիբուրից, որը ոչ միայն «կործանում» էր հին ավանդույթը, այլև կարողանում էր վեր հանել առասպելախառն պատմական տրույցների մեջ պարփակված իրական կորիզը,—Պաիսը հիմքից ի վեր հերքելով ավանդությունները, ոչ մի իրական հատիկ չտեսավ նրանց մեջ։ Պետք է անընդունելի համարել Պաիսի ծայրահեղ սուբյեկտիվիզմը, գերքննադատությունը և տարօրինակ ձգտումը սեփական նախագծումների օգնությամբ նորից կառուցել պատմությունը։ Փոփանակ հետազոտողի զգուշավորությամբ Հռոմի հնագույն պատմությունն ուսումնասիրելիս արժանահավատը զատել անարժանահավատ առասպելներից՝ Պաիսը տուրք տալով սկեպտիցիզմին՝ խոպան ձգտում է Տասներկու տախտակների օրենսդրության պատմականությունը։ Ըստ նրա չհիմնավորված ենթադրության՝ Տասներկու տախտակների օրենքները հորինվել են Գնեյոս Ֆլավիոսի (4-րդ դարի վերջը մ. թ. ա.) հրապարակած դատական ֆորմուլաների օրինակով։ Ըստ նրա՝ հնագույն հռոմեական պատմության մեջ հանդես եկող անձնավորությունները իրական չեն, այլ մտացածին։ Միայն Պյուռհոսյան ժամանակից սկսած կարելի է խոսել Հռոմի ստույգ պատմության մասին,—եզրափակում է նա։

Գերքննադատության մեթոդը, անտիկ պատմության ար-

դիականացումը հատուկ չեն միայն էտտորե Պաիսին։ Այն բնորոշ են 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի բուրժուական պատմագրության համար։ Իհարկե, անժխտելի է, որ բուրժուական պատմագրությունն իր ծաղկման շրջանում ստեղծել է նախադրյալներ անտիկ պատմության գիտական ուսումնասիրության համար. պատմական պրոցեսի զարգացման գաղափար, պատմական քննադատության մեթոդներ, անտիկ պատմության առանձին պրոբլեմների հետազոտում։ Մեծ է պրոգրեսիվ գիտնականների դերը նաև պատմական օժանդակ դիսցիպլինների՝ հնագիտության, ազգագրության, արձանագրագիտության, պապիրուսաբանության և դրամագիտության ստեղծման ու զարգացման ասպարեզում։ Գիտությունը նոր նյութերով հարստացնելու, հետազոտական եղանակները կատարելագործելու ուղղությամբ մեծ է պրոգրեսիվ բուրժուական պատմաբանների դերը։ Սակայն ամենապրոգրեսիվ բուրժուական պատմագիտական միտքը իր ծաղկման ամենափայլուն շրջանում անգամ, սիստեմի բերելով հավաքած բազմահարուստ նյութերը, լուսաբանելով պատմական պրոցեսի առանձին կողմերը, կատարելով մի շարք գիտական ընդհանրացումներ, այնուամենայնիվ չկարողացավ բացահայտել անտիկ աշխարհի զարգացման օրինաչափությունը։ Այդ բանում խոչընդոտը բուրժուական պատմագրության երկու արատներն են՝ իդեալիստական աշխարհայացքը և հին աշխարհի պատմության արդիականացումը։

ԳՈՒԼԵԼՄՈ ՖԵՌԵՐՈ (1871—1942).—Հռոմի պատմության արդիականացման առավել բնորոշ և ուշագրավ օրինակ է 19-րդ դարի վերջի իտալական պատմաբան Գ. Ֆեռերոյի «Հռոմի մեծությունը և անկումը» աշխատությունը (5 հատոր), որ լույս է տեսել 1901—1907 թթ.։ Ֆեռերոյի աշխատությունը իտալերենից թարգմանվել և մի քանի հրատարակությամբ լույս է տեսել ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն և ռուսերեն։

Հեղինակը իր գրքի առաջին իտալական հրատարակության առաջաբանում գրում է. «Գիրքն ընդգրկում է պատմության մեջ ամենանշանավոր հասարակություններից մեկի զարգացման ողջ ընթացքը՝ սկսած նրա ծննդից մինչև մահը՝ սկսած այն հեռավոր առավոտից, երբ հողագործների և հովիվների փոքրիկ կլանը կարատեց Պալատինի բլրի անտառները, որպեսզի զոհասեղաններ կառուցի իր աստվածությունների համար՝ մինչև այն ողբերգական ժամը, երբ հունա-հռոմեական քաղաքականության արևը լուսավորեց ամայացված դաշտերում և լքված քաղաքներում լատինական եվրոպայի անտուն, տգետ և կոպիտ ժողովուրդներին»[37]։

Ֆեռերոյի այս խոսքը բնորոշ է նրա աշխատության հիմնական դրույթի համար, ըստ որի՝ Հռոմը Գալլիայում և Արևելքում իրագործել է իր պատմական մեծ առաքելությունը, դառնալով միջնորդ «կուլտուրական Արևելքի և բարբարոս Եվրոպայի» միջև։ Ելնելով այս սխալ դրույթից հեղինակը արդարացնում է Հռոմի նվաճողական պատերազմները Արևելքում և Գալլիայում, նա Արևելքի դաժան նվաճողին՝ Լուկուլլոսին անվանում է հանճար»[38], որը «լինելով գաղութային իմպերատորներից առաջինը, կատարեց պատմական մեծ առաքելություն, ստեղծեց նոր իմպերիալիզմ»։ «Մեծ իմպերիալիստը»՝ Լիցինիոս Լուկուլլոսը ներխուժելով Պոնտոս[39]՝ դաժան հաշվեհարդար է տեսնում Պոնտոսի խաղաղ բնակչության հետ։ Հեղինակը մանրամասն նկարագրում է հռոմեական զինվորների ավազակային թալանը, ավերածությունները ու սպանությունները, որ գործեց Լուկուլլոսի զորաբանակը Արևելքում՝ Պոնտոսում, Սիրիայում և Հայաստանում։

Ֆեռերոն հանրապետության դարաշրջանի պատմության զարգացումը մեկնաբանում է սոցիալ-տնտեսական միևնույն ֆակտորների ներգործությամբ, որոնք այնքան մեծ դեր են խաղում նորագույն պատմության մեջ։ Իր համեմատություններով և զուգահեռներով հեղինակը չափազանց հեռանում է պատմական ճշմարտությունից, գիտությունը զոհաբերելով բաղաքական տենդենցին։ Ծայրահեղ արդիականացման բազ-

[37] Г. Ферреро, Величие и падение Рима, т. I, М., 1915, Предисловие автора к первому итальянскому изданию.

[38] Г. Ферреро, Величие падение Рима, т I, М., 1915, гл., 18, стр. 330.

[39] Նույն տեղում, գլ. VIII, էջ 154։

մաթիվ օրինակներ կան Ֆեռերոյի աշխատության մեջ, որոնք ղեկավարեն նսեմացնում են այդ գործի գիտական արժանիքները։ Այսպես, օրինակ, երկրորդ գլխի՝ «Նոր կապիտալիստական բուրժուազիան» հատվածում, խոսելով 2-րդ դարում (մ. թ. ա.) Իտալիայի տնտեսական աճի, ստրուկների վիճակի թվի, ստրկավաճառքի շուկայի և հարստությունների կուտակման մասին, գրում է. «Տոհմական արիստոկրատիայի կողքին երևան եկավ նոր, միլիոնատեր կապիտալիստների բուրժուազիան, որոնք ցենզորների կողմից դրանցված էին, հեծյալների ցենտուրիաների մեջ, և ապա հարստացել էին ստրկավաճառքի ճանապարհով, ծովային առևտրի, հարկերի, պետական հողերի և հանքերի կապալի միջոցով»[40]։ Նույն գլխի հատվածներից մեկը Ֆեռերոն վերնագրել է. «Հռոմեական իմպերիալիզմի սկիզբը», որտեղ ասված է. «Միջերկրական ծովի վրա ձեռք բերված ռազմական գերիշխանությունը ծնեց այն, ինչ մենք հոժար կամքով կանվանեինք իսկական հռոմեական իմպերիալիզմ»[41]։ Երրորդ գլխում, կանգ առնելով իտալյան հասարակության վրա, նա նշում է իտալյան հողագործության ճգնաժամը և ապա՝ խոսում է իտալյան բուրժուազիայի մասին, նկատի ունենալով «նախկին միջին դասակարգերի մեջ առաջ եկած սոցիալական այն շերտը, որը դեն նետելով արիստոկրատիայի դարավոր լուծը, ձգտում էր իր հզորությունը տարածել Իտալիայի և ամբողջ աշխարհի վրա»[42]։

Հռոմի պատմության ծայրահեղ արդիականացման, հռոմեական ստրկատիրական հասարակության մեջ իմպերիալիստական նորագույն դարաշրջանի բնորոշ սոցիալ-տնտեսական և քաղաքական երևույթներ տեսնելու փորձերը ի վերջո Ֆեռերոյին հանգեցրին մի անհեթեթ զուգահեռի՝ Լիցինիոս Լուկուլլոսի և Նապոլեոն I-ի միջև։ Խոսելով Լուկուլլոսի գործունեության պատմական նշանակության մասին, Ֆեռերոն նշում է. «Նրա դերը հռոմեական պատմության մեջ նույնանում է Սվրոպայի պատմության մեջ, Նապոլեոնի խաղացած դերին,

[40] Նույն տեղում, գլ. II, էջ 33։

[41] Նույն տեղում, էջ 43։

[42] Նույն տեղում, գլ. III, էջ 65։

այնպես որ Լուկուլլոսին կարելի է անվանել հռոմեական հանրապետության վերջին դարի Նապոլեոն»[43]։

Ամենաթուլուկ պատմական ակնարկն անգամ բավական է համոզվելու համար, թե ուր կարող է տանել պատմականության սկզբունքի բացակայությունը։ Նապոլեոն I-ը հենվելով 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի Ֆրանսիայի պրոգրեսիվ դասակարգի՝ բարձրացող բուրժուազիայի ազդեցիկ շրջանների վրա, կատարեց պետական հեղաշրջում՝ ամրապնդելու բուրժուական կարգերը և իր իշխանությունն օգտագործեց բուրժուազիայի և սեփականատեր-գյուղացիների շահերի և բուրժուական պետության ամրապնդման համար։ Նրա արտաքին քաղաքականությունն ուղղված էր ամրապնդելու և պաշտպանելու բուրժուական հեղափոխության տնտեսական հիմնական նվաճումները՝ արդյունաբերության և առևտրի զարգացումը։

Իսկ Լուկուլլոսը մինչև վերջը կառչած մնաց իր դարն ապրած ստրկատիրական արիստոկրատիային։ Լինելով պատմականորեն բոլորովին տարբեր սոցիալ-տնտեսական հասարակարգերի գործիչներ, նրանք տարբերվում էին նաև իրենց քաղաքական կողմնորոշմամբ։ Նապոլեոնը բարձրացող, իր ժամանակի պրոգրեսիվ դասակարգի տաղանդավոր գործիչ էր, որը հայացքն ուղղել էր դեպի նոր հասարակարգի ամրապնդումը։ Իսկ Լուկուլլոսը, հետադիմական սենատորական արիստոկրատիայի հավատարիմ գործիչը, զուրկ լինելով պատմական հեռանկարի զգացումից, ձգտում էր ետ դարձնել պատմության անիվը։ Ահա թե ինչ է ասում Ֆեռերոն Լուկուլլոսի մասին. «Իր հանճարի լարումով այդ տոհմիկ արիստոկրատը, Ռուսիլիոս Ռուֆոսի[44] աշակերտը, Սուլլայի նվիրված և անշահախնդիր բարեկամը, կարող էր թոթափել ավանդույթի և կաստայական ոգու ստրկության ծանր լուծը, գտնելով նոր իմպերիալիզմի ստեղծող, բայց նա զինվորների նկատմամբ ու-

[43] Ферреро, Величие и падение Рима, т. I, М., 1915, гл. XI стр. 204.

[44] Պուբլիոս Ռուտիլիոս Ռուֆոսը՝ կոնսուլ 105 թ. (մ. թ. ա.) լեգատ Ասիա պրովինցիայում, հայտնի էր իր անկաշառ ազնվությամբ և հեծյալ-գապալառուների դեմ մղած պայքարով։

բավարի պարտականությունների մասին իր ունեցած հասկացություններով մնաց որպես հին լավ ժամանակների անդրդվելի արիստոկրատ[45]։

Ֆեռերոն որոշ չափով կրել է անտեսական մատերիալիզմի ազդեցությունը։ Նա տեսնում է Հռոմի քաղաքացիական պատերազմների սոցիալ-անտեսական արմատները, նկարագրում է խոշոր հողատիրության աճը, գյուղացիության պրոլետարացումը, բարձր ստրկատիրական դասի անկումը։

Իրեն հատուկ ջերմ շնչով և վառ պատկերներով հեղինակը ներկայացրել է Գրակքոսների բարեփոխությունների նախօրեի հուզումները, տատանումները։ «Ժամանակակիցները իրադարձությունների մասին հաճախ դատում են ըստ դրանց նախնական արդյունքների,— ասում է Ֆեռերոն։ Նրանք միշտ վախենում են, որ քաղաքակրթության փոփոխման ընթացքում տեղի կունենա վերջնական կործանում։ Այդ փոփոխությունը հիշեցնում է ամառը ծայրագույն հյուսիսում, անսովոր երկար օր, երկար մթնշաղ, ամեն բանի լիակատար անհետացում կարճ գիշերվա խավարում, իսկ հետո՝ նորից արշալույս, որը արթնացնում է աշխարհը։ Բայց, երբ մարդը տեսնում է քաղաքակրթության լիակատար պայծառ լուսո ցոլքում մթնշաղի դանդաղ առաջանալը, վախենում է, թե չլինի լույսը մարի ընդմիշտ և անհանգստությամբ ետ է նայում դեպի մայր մտնող արևը»[46]։ Ֆեռերոն անդրադառնում է տվյալ ժամանակաշրջանի արիստոկրատիայի հեռատես մարդկանց՝ Սցիպիոն Էմիլիանոսի, Տիբերիոս և Գայոս Գրակքոսների և ուրիշների նախազգումներին, որոնք տեսնելով, թե ինչպես կազմալուծվում է բանակը, աճում է աշխատավորության աղքատացումն ու քայքայումը և ահավոր ամպի նման բարձրանում է Հռոմի վրա «պատմության մեծագույն սարսափը՝ քաղաքացիական պատերազմը»՝ հարուստների և աղքատների միջև,— անհրաժեշտ էին համարում վերականգնել հասարակական հավանակորությունը աղքատների նկատմամբ, որը հռոմեական պետությունը կիրառում էր իր հին լավագույն

[45] Г. Ферреро, Величие и падение Рима, М., 1915, гл. XI стр. 205.

[46] Նույն տեղում, գլ. II, էջ 46։

ժամանակներում, այսինքն՝ հողերի բաժանում, պարարքերի վերացում և գաղութների կազմակերպում։

Խոսելով պատմական գործչի դերի մասին, Ֆեռերոն որպես օրինակ է բերում Պոլիբիոսի աշակերտ Սցիպիոն Էմիլիանոսին, որն իր ժամանակի հռոմեական խոշոր քաղաքական և ռազմական գործիչ էր և հունական փայլուն կրթության տեր անձնավորություն։ «Նա բոլորից ավելի լավ էր լսում հեռվից հասնող ջրվեժի շառաչյունը, դեպի որը սլանում էր ժամանակի հեղեղատը,— գրում է հեղինակը։ Բայց նա սարսափելի հստակությամբ տեսնում էր նմանապես, որ անկարելի է ետ դարձնել պատմության հոսանքը և նրա հակառակ վազքը»[47]։

Այստեղ երևան է գալիս Ֆեռերոյի սխալ տեսակետը անհատի և հասարակության փոխհարաբերության հարցի մասին։ Նա գտնում է, որ անհատը չի կարող դիմագրել իրերի հակառակ ընթացքին։ Այդ եզրակացությունը հակասական է, որովհետև Ֆեռերոն կարում է անհատին իր ծնող սոցիալ-պատմական հենարանից և չի ըմբռնում մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունը։ Պատմական զարգացումը նա ընկալում է որպես տարերային պրոցես, երևույթների «հակառակ վազք», իսկ անհատը ըստ նրա հանդիսանում է կույր գործիք պատմության տարերային զարգացման մեջ։ Ճիշտ է՝ զինհատակի է Ֆեռերոյի հռոմեական հասարակության սոցիալ-անտեսական բարդ իրադարձությունների (2-րդ դար մ. թ. ա.) հաջող վերլուծությունը և մանավանդ պատմական պրոցեսի վերընթաց զարգացման անխուսափելիության մասին նրա դրույթը։ Բայց որպես Իտալիայի 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի մանրբուրժուական գաղափարախոս՝ Ֆեռերոն չի կարողացել հասկանալ հանրապետության դարաշրջանի հռոմեական հասարակության պատմական զարգացման օրինաչափությունը և կանգնած է հասարակական զարգացման տարերայնության դիրքերի վրա։ Պատմական իրադարձությունները ըստ նրա՝ կապված են միմյանց հետ, բայց զարգանում են նրանց մասնա-

[47] Նույն տեղում, գլ. II, էջ 47։

կիցների կամքից անկախ։ Ելնելով մանրբուրժուական դասակարգային հատուկ իդեալիստական աշխարհայացքի տեսանկյունից՝ Ֆեռերոն պատմական պրոցեսում վճռական տեղ է տալիս ճակատագրին։ Յուրատեսակ ֆատալիզմը և տարերայնության առջև խոնարհվելը նրա պատմահայեցողության բնորոշ հատկանիշներն են, որոնք ցայտուն կերպով հանդես են գալիս պատմական անհատների գործունեության մասին խոսելիս։ Այսպես, օրինակ, աշխատության 18-րդ գլխի վերջում Ֆեռերոն ունի մի այսպիսի հատված. «Ճակատագիրը և մարդկային մեծությունը» խորագրով։ Խոսելով Գայոս Հուլիոս Կեսարի ուղևորության մասին Ֆլամինիոսի Հանոպարհով դեպի Գալլիա, Ֆեռերոն կատարում է հետևյալ ընդհանրացումը. «Եվ այժմ ճակատագիրը տանում է նրան՝ Հռոմեական հանրապետության չորրորդ Գայոսին՝ Ֆլամինիոսյան այն Հանոպարհով, որը սկսել էր Գայոս Ֆլամինիոսը և որով շարունակել էին ընթանալ Գայոս Գրակքոսը և Գայոս Մարիոսը։ Սակայն Գալլիա ուղևորվելիս Գայոս Կեսարի միակ նպատակն էր՝ հաջող հաղթանակներով վերստին նվաճել բարձր դասակարգերի զարմանքն ու հիացմունքը, որը խլել էր նրանից ճակատագրական հանգամանքների շղթան։ Կյանքի օրենքն այդ ժամանակ նույնն էր, ինչ որ բոլոր ժամանակներում, և այդ ժամանակաշրջանի մեծ մարդիկ նույնքան տգետ էին, ինչպես և մյուս ժամանակների մեծ մարդիկ, պատմական գործում, որի անգիտակից գործիքները և զոհերն էին միաժամանակ։ Նրանք, ինչպես և մյուս բոլոր մարդկային արարածները, խաղալիք էին այն բանի, որը մենք կարող ենք անվանել պատմության ճակատագիր և որը հանդիսանում է սոսկ դեպքերի զուգադիպում, չնախատեսված սրընթացության և թաքնված ուժերի պայքարն։ ... «Եվ ահավոր ճակատագիրը դրանց բոլորի համար պատրաստում էր ողբերգական անակնկալներ», եզրափակում է նա իր խորհրդածությունը[48]։ Պատմական գործիչներն անզոր են ճակատագրի կանխորոշումների առաջ. հասարակության զարգացումն ընթանում է տարերայնորեն։

[48] Г. Ферреро, Величие и падение Рима, т. I, М., 1915, гл. XVIII, стр. 329.

Կանգ առնելով 2-րդ և 1-ին դարերի (մ. թ. ա.) հանրապետության սոցիալ-տնտեսական հարաբերությունների վրա՝ Ֆեռերոն պատշաճ տեղ է տալիս ստրուկների ապստամբություններին Հռոմում։ 4-րդ գլխում խոսելով երկրորդ դարի վերջում (մ. թ. ա.) հռոմեական հանրապետության տնտեսական կյանքի մասին, նշում է, որ «Հռոմն ի վիճակի չէր ճնշելու ստրուկների հաճախակի ապստամբությունները, որ բռնկվում էին շարունակ Սիցիլիայում և Կամպանիայում»[49]։ Եվ այնուհետև բավականին հանգամանորեն շարադրում է Սպարտակի ապստամբության ծագումը, ընթացքը, մասսայական բնույթը և այն սարսափը, որ ապրում էր սենատը և ստրկատիրական վերնախավը։ Թվում էր, թե Իտալիային սպառնում էր ստրուկների ընդհանուր ապստամբություն[50]։ «Սպարտակը,— գրում է Ֆեռերոն,— պարտության մատնելով հռոմեական զորամասերին, հաղթականորեն շարժվում էր թերակղզու մի ծայրից մյուսը։ Բարձրագույն դասակարգերը և հարուստ բուրժուազիան դողում էին իրենց խազդի այգիների և ձիթենիների համար, ստրուկների հավատարմության համար»[51]։ Ուշագրավ է Ֆեռերոյի Սպարտակին տված բարձր գնահատականը. «Սպարտակը հանճարեղ մարդ էր, նա հրաշքներ էր գործում։ Բայց նրա խաժամուժ բանակը չէր կարող մինչև վերջ դիմադրել. տարաձայնությունները, դասալքությունը օգնության եկան Կրասոսին, որը վերջապես կարողացավ շահել հակատամարտը, որտեղ և սպանվեց Սպարտակը»[52]։ Գնահատելի է Ֆեռերոյի համակրանքը դեպի ստրուկները և ստրկատիրական վերնախավին ուղղած պարսավանքը։ Նա ասում է. «Վերնախավը ինչպես միշտ՝ անողոք էր խռովարարների նկատմամբ։ Այս անգամ միջին խավերն էլ, որ բոլոր այլ դեպքերում երևան էին բերում մարդկային զգացմունքներ, այժմ ստրուկներին տիրանալով դարձել էին դաժան»[53]։

Ֆեռերոյի «Հռոմի մեծությունը և անկումը» աշխատու-

[49] Նույն տեղում, էջ 76։
[50] Նույն տեղում, էջ 148։
[51] Նույն տեղում, էջ 156։
[52] Նույն տեղում, էջ 159։
[53] Նույն տեղում, էջ 159։

թյան մեջ չհիմնավորված սուբյեկտիվ շատ դատողություններ կան։ Բնորոշ է այդ տեսակետից Հռոմի մղած արևելյան պատերազմների նկարագրությունը։ Ֆեռերոն արդարացնում է հռոմեական զիշատիչ պատերազմներն Արևելքում, փառաբանում Լիցինիոս Լուկուլլոսին, որը գերազանցորեն իրագործեց հռոմեական հանրապետության նվաճողական քաղաքականությունն Արևելքում։ Պատահական չէ, որ Ֆեռերոն Հռոմի արևելյան, մասնավորապես հայկական, պատերազմի պատմության համար օգտվում է Պլուտարքոսի «Զուգահեռներից», որտեղ Լուկուլլոսին նվիրված հատվածը յուրատեսակ ներբող է՝ ուղղված Լուկուլլոսին։ Առանց համեմատելու Պլուտարքոսի տվյալները Սալյուստիոսի և Ապպիանոսի վկայությունների հետ, Ֆեռերոն անվերապահորեն հիմնվում է Պլուտարքոսի հաղորդումների վրա և աղավաղված կերպով ներկայացնում է հայ-հռոմեական պատերազմը և Տիգրանակերտի ճակատամարտը 69 թ. (մ. թ. ա.)։ Այսպիսի անարժանահավատ աղբյուրից է հիմնականում օգտվել Ֆեռերոն։ «Շարժելով հայերի վրա իր փոքրիկ բանակը, ասում է Ֆեռերոն, ինչպես շների ոհմակը՝ ոչխարների վիթխարի հոտի վրա, Լուկուլլոսը փախուստի մատնեց հայկական բանակին, ինքը՝ թագավորը փրկվեց միայն փոքրաթիվ թիկնապահներով։ Ապավենելով Տիգրանից, Լուկուլլոսը շարունակեց Տիգրանակերտի պաշարումը, որը և շուտով գրավեց»[54]։

Ֆեռերոն խիստ պարզեցրել է Տիգրանակերտի պաշարման և գրավման պատմությունը, արձանագրելով, որ «Լուկուլլոսն ազատվելով Տիգրանից, պաշարում է Տիգրանակերտը, որը և անհապաղ գրավում է»։ Մինչդեռ Ապպիանոսի վկայությամբ Լուկուլլոսը Տիգրանին խաբելու համար նրա դեմ ճակատի կողմից ուղարկում է իր արագաշարժ հեծելազորը, իսկ ինքը ռազմադաշտ չհասած՝ անցնում է Թշնամու թիկունքը և հարձակվում է հայկական զրաստազումակի վրա իր ամբողջ հետևազորով[55]։ Հռոմեական մյուս աղբյուրները լռում են Լուկուլլոսի այս խորամանկ հնարքի մասին, որովհետև նրա այդ գրոհը հայկական զրաստազումակի վրա չէր կարող համարվել

[54] **Г. Ферреро,** Величие и падение Рима, т. I, М., 1915. гл. X, стр. 182—183.

[55] **Аппиан,** Римская история, Митридатовые войны, 83, 84.

բաջարի և առանձնապես պատվաբեր մի գործ։ Այս ոչ լիարժեր մարտի մասին նշում է նաև Սալլյուստիոսը[56]։

Նույնպիսի անհավատալի թիվ է տալիս Պլուտարքոսը Տիգրանակերտի հակատամարտում երկու կողմերի վիրավորների և զոհվածների մասին։ Ըստ նրա հայերից սպանվել էին 100 հազար մարդ, իսկ հռոմայեցիներից՝ վիրավորվել էին 100 մարդ և սպանվել միայն 5 մարդ։ Պլուտարքոսն իր սատհող տեղեկությունը հավանաբար, քաղել է Լուկուլլոսի պաշտոնական անպարծ տեղեկագրից, որ նա ներկայացրել էր սենատին։

Այնուամենայնիվ, Ֆեռերոյի «Հռոմի մեծությունը և անկումը» աշխատությունը իր լայն դիապազոնով, հարուստ նյութերով, հռոմեական կյանքի պատկերավոր վառ նկարագրություններով, պատմական իրադարձությունների ինքնատիպ բացատրություններով ուշագրավ աշխատություն է։ Հեղինակի հակագիտական դրույթներին խնարկե, պետք է մոտենալ քննադատորեն։

* * *

20-րդ դարի առաջին տասնամյակում անտիկ պատմության ուսումնասիրությունը արևմտաեվրոպական երկրներում վայրէջք է ապրում։ Սկսած 1918 թվականից պակասում է դիտական աշխատությունների թիվը։ Կրճատվում են հնագիտական պեղումները։ Ճիշտ է պատերազմի ընթացքում հարբատացած ԱՄՆ-ը եապատերազմյան շրջանում կազմակերպում է մի շարք խոշոր պեղումներ, սակայն պատերազմից խիստ տուժած արևմտաեվրոպական երկրները մանավանդ Գերմանիան և Ֆրանսիան, համարյա ընդհատեցին խոշոր հնագիտական պեղումները։ Անտիկ պատմագիտության զարգացման վրա բացասաբար անդրադարձավ նաև պապիրուսների հրատարակման աշխատանքների թուլացումը։

Պետք է ընդգծել, որ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո բուրժուական պատմագրության մեջ խորանում են ռեակցիոն հայացքները և մինչև իսկ մի շարք բուրժուական պատմաբանների աշխատություններ կրում են

[56] **Саллюстий,** Истории, IV, Война Армянская, 69, § 11.

քաղաքական հակահեղափոխական պամֆլետի բնույթ։ Նախորդ համառոտ ակնարկը ցույց տվեց, որ հին պատմության նյութերի օգտագործումը քաղաքական նպատակներով արևմտաեվրոպական պատմագրության մեջ տեղ էր գտել նաև նախապատերազմյան շրջանում։ Սակայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո այդ գիծը առանձնապես ցայտուն դրսևորվեց մի շարք գիտնականների մոտ, երբեմն միահյուսվելով ռասայական ախորհուրդ տեսության հետ։

Ռասայական տեսությունը պատմագրության մեջ սկիզբ առավ 19-րդ դարի վերջում՝ գերմանական պատմաբան Օտտո Ֆոն Զեյեկի «Անտիկ աշխարհի անկման պատմության» մեջ (1895) և այնուհետև փարթամորեն ծաղկեց եռապատերազմյան ժամանակաշրջանում անտիկ աշխարհի պատմությունն ուսումնասիրող ֆաշիստական պատմաբանների աշխատություններում։ Զեյեկը անտիկ աշխարհի կործանման գլխավոր պատճառը համարում է «լավագույնների» ոչնչացումը։ Նա փորձում է ապացուցել, որ Հռոմի քաղաքացիական և արտաքին պատերազմներում բնաջնջվեց կառավարող վերնախավը, այսինքն հին առհմիկ արիստոկրատիան՝ «լավագույնները» ոչնչացան, իսկ «ամբոխը», «խաժամուժը» պահպանվեց, բայց մնաց առանց վերնախավի ղեկավարության։ Դրա հետևանքով անտիկ մշակույթը փոշիացավ, դեհկացավ, և անտիկ հասարակությունը անկում ապրեց։

Եռապատերազմյան շրջանում, երբ Գերմանիայում ֆաշիստներն անցան իշխանության գլուխ, նրանց գաղափարախոսները հին աշխարհի պատմությունն ի սպաս դրեցին նացիզմի պրոպագանդային։ Հռոմեական մշակույթը՝ ըստ նրանց, «բարձր», «արիական» ռասայի ստեղծագործության արդյունք է։ Իսկ երբ հռոմայեցիները խառնվեցին այլ ժողովուրդների հետ, կորցրին իրենց «բարձր» ռասայի մաքրությունը, թուլացան, վերածվեցին «ոչ լիարժեք» ռասայի և նվաճվեցին գերմանացիների կողմից։ Հռոմի նվաճվելը «գարշյուն» գերմանացիների կողմից ֆաշիստական պատմաբանները դիտում են որպես Արևմտյան Եվրոպայի վերանորոգում։ Նույնպիսի պատմական վերանորոգչական առա-

քելություն է կատարելու «բարձր», «գարշյուն» գերմանական ռասան 20-րդ դարում Արևմտյան Եվրոպայում ֆաշիստական տերապետության հետևանքով,—բարբաջում էին ֆաշիստական գաղափարախոսները։

Հռոմի պատմությունը կեղծում են նաև անգլիական, ամերիկյան և ֆրանսիական մի շարք գիտնականներ, որոնք փորձում են իրենց իմպերիալիստական պետությունների գավթողական քաղաքականությունը հիմնավորել հռոմեական պատմությունից քաղած օրինակներով։

20-րդ դարի արևմտաեվրոպական պատմագրության համար բնորոշ է ինքնատիպ, ընդհանրացնող աշխատությունների նվազելը։ Սկսած 20-րդ դարի կեսերից հրապարակ են գալիս կոլեկտիվ բազմահատոր աշխատություններ։ Այդպիսին է նշանավոր «Քեմբրիջի պատմությունը», որը հրատարակվել է Քեմբրիջում անգլիացի մի խումբ գիտնականների կողմից։ Գործը նվիրված է հին աշխարհի պատմությանը (Հին Արևելք, Հունաստան և Հռոմը ներառյալ)։ Հռոմի պատմությունը այստեղ շարադրված է 7-րդ հատորից՝ հելլենիզմի պատմության հետ։ Իսկ զուտ Հռոմին նվիրված են 9-րդ հատորից մինչև 12-րդ հատորը։ Աշխատության մեջ կան հաջողված մենագրություններ (օրինակ՝ պրովինցիաներին վերաբերող հոդվածները), նորահայտ նյութերի հիման վրա կազմված բիբլիոգրաֆիական տեղեկությունները, քարտեզները, իլյուստրացիաները։ Սակայն «Քեմբրիջի հին պատմությունն» էլ տրվել ժամանակաշրջանում հրատարակվող այլ կոլեկտիվ աշխատությունների նման միասնական պլանից զուրկ հարուստ նյութերի յուրատեսակ ամփոփում է։ Այդ կոլեկտիվ հրատարակություններում թերևս կա մի ընդհանուր հատկանիշ, բոլորն էլ առաջադում են բուրժուական պատմագրությանը հատուկ արատով. սոցիալ-տնտեսական հարցերում մնում են կառչած մոդեռնիզմից և մեկնաբանումների մեջ կանգնած են իդեալիզմի դիրքերում։ Նույնպիսի թերություններ ունի նաև Գուստավ Գլոտցի խմբագրությամբ Ֆրանսիայում հրատարակված «Ընդհանուր պատմությունը»։ Թեև Հռոմի պատմությունն այստեղ համեմատաբար լրիվ է շարադրված, սակայն այս ստվարահատոր ժողովածուի մեջ ևս տարբեր մեթոդներով

գրված և գաղափարապես իրար հետ չկապվող աշխատությունների «սիմֆոնիան» խիստ անհերդաշնակ է հնչում։ Այսպես՝ առաջին հատորը գրել է իտալացի պատմաբան Պաիսը, որը Հռոմի վաղ հանրապետության պատմությունը շարադրելիս հանդես է բերում արտակարգ գերքննադատություն։ Նույնպիսի հակագիտական դիրքերից է շարադրել Հռոմեական հանրապետության պատմությունը Ֆրանսիայի պատմաբան Կարկոպինոն։

ԼԵՈՆ ՕՄՈ.—Վաղ կայսրության պատմությունը շարադրել է ֆրանսիական պատմաբան Լեոն Օմոն։ Նա իր «Le Haut Empire» աշխատությունը գրել է 1933 թ., որը 3-րդ հատորն է կազմում Գուստավ Գլոտցի խոշոր կոլեկտիվ աշխատության՝ «ընդհանուր պատմության»։ Օմոն ճիշտ է բնորոշել պրինցիպատը, այն համարելով միապետություն՝ հանրապետության քողի տակ։ Հեղինակը իր դրույթն ապացուցելու համար լայնորեն և ուշիմ օգտվել է սկզբնաղբյուրներից, ըստ որում աղբյուրներից օգտվում է քննադատորեն։ Այսպես. խոսելով Տիբերիոսի պրինցիպատի մասին, Օմոն մի շարք փաստարկումներով ապացուցում է, որ Դիոն Կասիոսը, Տակիտոսը և Սվետոնիոսը միտումնավոր կերպով, կարծես ի հաճույս իրենց՝ գույները խտացնում են[58]։ Ընդհանրապես՝ նրա քննական մեթոդը գնահատելի է և մոտեցումը՝ համեմատաբար անաչառ։

Սակայն որպես լիբերալ բուրժուազիայի գաղափարախոս, նա չի կարողացել ներկայացնել պրինցիպատը Հռոմի պատմության բնական զարգացման մեջ։ Նրա տեսադաշտից դուրս են մնացել դասակարգային հարաբերությունները և պայքարը, ներդասակարգային հակասությունները և ներդասակարգային պայքարը։ Նա պրինցիպատի պատմության մեջ սահմանափակվել է պրինցեպսի և սենատի շրջանակներով։ Կայսեր և սենատի փոխհարաբերությունը նրա աշխատության մեջ իրավաբանորեն է միայն լուսաբանված։ Բուրժուական շատ պատմաբանների նման Օմոն էլ խիստ պարզեցրել է իրերի վիճակը. պատմական թատերաբեմում գործում են միայն կայսրը, սենատը, արիստոկրատիայի ականավոր դեմքե-

[58] L. Homo, Le Haute Empire, Paris, 1933, էջ 191, 202—204։

րը։ Իսկ ժողովուրդը, բանակը, ներկայացված են անդեմ, որպես գորշ զանգված, որը միանգամայն դուրս է քաղաքականությունից։ Օմոյի աշխատության մեջ չի արտացոլվել նաև պրովինցիաների պատմությունը։

Այնուամենայնիվ, որոշ արժեք է ներկայացնում Օմոյի փորձը, պատմական հարուստ նյութերի հիման վրա, թոթափելու անտիկ պատմագիրների աշխատություններում գերիշխող կարծիքը պրինցիպատի և, մասնավորապես՝ Տիբերիոսի պրինցիպատի մասին և ինքնուրույն, համեմատաբար անաչառ տեսակետով վերլուծելու Հռոմի պատմության բեկման պարաշրջանի բարդ և հետաքրքրական դրվագը։

20-րդ դարի առաջին կեսին բավականին հոդվածներ են լույս տեսել հանրապետությունից կայսրության անցնելու հարցի մասին։

Ամերիկյան հետազոտող Համմոնդը պրինցիպատը դիտում է որպես հանրապետություն։ Նա փորձում է ապացուցել, որ հակառակ կայսեր և սենատի միջև եղած հակասության, պրինցիպատի ժամանակ գերագույն իշխանությունը պատկանում էր սենատին։ Կայսրը հանդես էր գալիս որպես սենատի ծառան։ Սենատը անձնավորում էր Հռոմեական ժողովրդին։ Հետևաբար, ըստ Համմոնդի Օգոստոսի ժամանակաշրջանում ոչ մի բեկում տեղի չի ունեցել։ Նրա հաստատած քաղաքական կարգը ո՛չ միապետություն էր (ինչպես գտնում են շատ ուսումնասիրողներ ո՛չ դիարխիա (երկիշխանություն), (ինչպես պրինցիպատը մեկնաբանում է Մոմզենը) այլ հանրապետություն։ Օգոստոսը վերականգնեց հանրապետությունը։ Ապացուցելու համար իր այս դրույթը, Համմոնդը թվում է Օգոստոսի լիազորությունները, որոնք արտակարգ բնույթ էին կրում և որոնց նախադեպերը նա տեսնում է Լուկուլլոսի, Պոմպեյոսի և Կեսարի մոտ (օրինակ՝ իմպերատոր)։ Համմոնդը անվերապահորեն ընդունում է Օգոստոսի հայտարարությունը իր «Քաղաքական կտակում» թե՝ «6-րդ և 7-րդ կոնսուլության ժամանակ, այն բանից հետո, երբ ես վերջացրի բաղաբացիական պատերազմները, ես բարձրագույն լիազորություններով օժտված իմ իշխանությունը հանձնեցի սենատին և հռոմեական ժողովրդի տնօրինությանը»։ Օգոստոսի

բոլոր տիտղոսները Համմոնդը համարում է հանրապետական բնույթի։ Ինչ խոսք, որ Համմոնդի այս դրույթը միանգամայն անընդունելի է. նա հարցին մոտենում է ձևականորեն, ազգամիննաբանական տեսակետից։ Նա կտրում է իր պրինցիպատը սոցիալական բովանդակությունից, պատմական ռեալ միջավայրից անկախ և կանգ է առնում սոցիալ-քաղաքական երևույթի կոնստիտուցիոն կողմի վրա միայն։

Տրամագծորեն հակառակ մեկնաբանում է տալիս պրինցիպատին Ժ. Գաժեն իր հոդվածում, որ նվիրված է Կարկոպինոյի «Հռոմի հանրապետությանը»[59], նա ձևակերպում է այն պրոբլեմները, որ վերջին տարիներին առաջացել էին հանրապետության վերջի և կայսրության սկզբի պատմության ուսումնասիրության առնչությամբ։ Նա անհրաժեշտ է համարում նախ և առաջ ցույց տալ, որ թեպետ Օգոստոսի մի քանի լիազորությունները պահպանել են հանրապետական անունները, բայց արդեն այլ բովանդակություն են ստացել։ Նա իր միտքը հիմնավորելու համար բերում է 1927 թվականին Կիրենայի շուկայի հրապարակում հայտնագործված մարմարյա կոթողը, որի վրա հունարեն գրված են Օգոստոսի հինգ էդիկտները։ Վաղ կայսրության՝ պրինցիպատի պատմության համար խիստ կարևոր նշանակություն ունեցող այս աղբյուրը նոր լույս է սփռում Օգոստոսի՝ պրովինցիաներում ունեցած լիազորությունների վրա։ Թեպետ Կիրենաիկան Կրետեի հետ կազմում էր սենատական պրովինցիա, բայց այս կոթողում Օգոստոսն է էդիկտ ուղարկում պրոկոնսուլին և դիմում նրան հրամայական եղանակով և նույնիսկ զգուշացնում է «հրամայում եմ» բառը։ Ուրեմն պրոկոնսուլը հանդիսանում է սոսկ ադմինիստրատոր անձ և կայսրին է պատկանում պրովինցիաներում բնակվող հռոմեական քաղաքացիների նկատմամբ գերագույն իշխանությունը։ Այս մասին վկայում է երկրորդ էդիկտը, որտեղ խոսվում է այն մասին, որ շրջայցակատ Հռոմ ուղարկված հռոմեական քաղաքացիներին Օգոստոսն անպարտ է ճանաչել։ Թեպետ նա ընդգծում է պրոկոնսուլի հարկ եղած զգուշությունը և պատշաճ հեռատեսությունը, բայց

[59] Histoire ge'ne'rale publie'e sous la direction de Gustave Glotz, tome III:

ձանոթանալով գործի էությանը, գալիս է այն եզրակացության, որ այն, ինչ ասել են պրովինցիաներում վերոհիշյալ բաղաքացիների մասին, հերյուրանք է և ցուցմունքները՝ կեղծ։ Ուստի և Օգոստոսը ազատ է արձակում նրանց։

Այս էդիկտում երևան է գալիս պրովինցիայի լիիշխան տերը, որը լրիվ գիտակցում է իր լիազորությունները և իր կամքը թելադրում թե՛ պրոկոնսուլին և թե՛ պրովինցիայի բնակիչներին։

Հինգերորդ էդիկտում կա մի ուշագրավ արտահայտություն. «որպեսզի պարզ լինի, թե ինչպիսի հոգատարության ենք ցուցաբերում՝ ես և սենատը»։ Այս արտահայտությունից դժվար չէ կռահել, որ Օգոստոսը իրեն ոչ միայն հավասար է դասում սենատին, այլև կարծես վեր է դասում, հիշատակելով նախ՝ իր և ապա՝ սենատի մասին։

Այս նորահայտ աղբյուրի հիման վրա Գաժեն համոզիչ կերպով եզրակացնում է, որ Օգոստոսն անսահմանափակ իշխանություն ուներ նույնիսկ այն պրովինցիաներում, որ 27 թ. (մ. թ. ա.) կատարված բաժանման հիման վրա հատկացված էին սենատին։

Գաժեն իր այս դրույթը հիմնավորում է Օգոստոսի քաղաքական կտակի» („Res gestae divi Augusti") նոր տարբերակի, այսպես կոչված Monumentum Antiochenum (Անտիոքի արձանագրության) հիման վրա, որը հնարավորություն տվեց հաստատելու, որ թեպետ Օգոստոսն օգտվում էր նույնպիսի իշխանությունից, ինչ որ մյուս մագիստրատները, բայց նրանցից ավելի բարձր էր կանգնած, որովհետև նրա իշխանությունը հիմնված էր auctoritas-ի վրա, այսինքն՝ հատուկ ազդեցության վրա, որով իր ասելով՝ նա գերազանցում էր մյուս մագիստրատներից։

Ավարտելով աղբյուրների վրա կատարած իր հաջող հետազոտական աշխատանքը, Գաժեն հանգում է այն եզրակացության, որ ոչ մի հիմք չկա Կեսարի իշխանությունը հակադրելու Օգոստոսի իշխանությանը, ինչպես անում է Թ. Մոմզենը։ Կեսարի միապետական գաղափարները կենսագործվում են Օգոստոսի միջոցով, ճիշտ է՝ մեղմացրած ձևով։

Գաժեի այս մեկնաբանումը համոզիչ է, հիմնավորված

աղբյուրների տվյալներով։ Գաժեն պայքարում է այն պատմագիրների դեմ, որոնք պրինցիպատը բնորոշելիս տալիս են միայն նրա կոնստիտուցիոն կողմը։ Բայց իր մեկնաբանման էլ լիակատար չէ, քանի որ Գաժեն բավարարվել է միայն պրոբլեմի գաղափարական բացատրությամբ և անտեսել սոցիալական կողմը։ Անհրաժեշտ էր պրինցիպատը համակողմանի և լիակատար մեկնաբանելու համար վեր հանել հռոմեական հասարակության ներքին հակասությունները, դասակարգային ուժերի փոխհարաբերությունը ու պայքարը, սարկատիրական սիստեմի սոցիալ-տնտեսական ճգնաժամը։

ՀՌՈՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

(19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին)

19-րդ դարի առաջին կեսին Ռուսաստանում շարունակվում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և ֆեոդալա-ճորտատիրական սիստեմի ճգնաժամի խորացումը։ Այս պրոցեսները եղրափակվեցին ճորտատիրական իրավունքի վերացումով 1861 թ. և կապիտալիստական հասարակարգի հաղթանակով։ Վերոհիշյալ փոփոխությունների հետևանքով Ռուսաստանի սոցիալ-տնտեսական տեղաշարժերը ծնունդ տվեցին նոր, բուրժուական տարրերին, որոնց դերը հետզհետե սկսեց ուժեղանալ հասարակական կյանքում և գաղափարախոսության մեջ։ Տեղի է ունենում գիտական կյանքի և մասնավորապես՝ պատմական գիտության աշխուժացում, որպես արդասիք երկրի հասարակական-քաղաքական կյանքի կենսական պահանջմունքների։ Անցյալի բազմակողմանի ուսումնասիրության խորացումը հանգեց պատմական դիսցիպլինների ձևավորման, որոնց ուսումնասիրության առարկան հանդիսացան հասարակության պատմության զանազան բնագավառները՝ տնտեսության, իրավունքի, լեզվի, գրականության պատմությունը։ Առաջ են գալիս նաև օժանդակ պատմական դիսցիպլիններ՝ հնագիտություն, աղբագրություն, աղբյուրագիտություն, ծագումնաբանություն (գենեալոգիա), պալեոգրաֆիա, պատմական աշխարհագրություն։

Տ. Ն. ԳՐԱՆՈՎՍԿԻ (1813—1855).—Գրանովսկու դիատ-մանկավարժական գործունեության հակաճորտատիրական տենդենցները մերձեցնում էին նրան հեղափոխական-դեմոկրատների հայացքներին, բայց պատմա-փիլիսոփայական և հասարակական-քաղաքական շատ հարցերում նրանց մեջ կային լուրջ տարաձայնություններ։ Մինչդեռ հեղափոխական-դեմոկրատները իրենց պատմահայեցողության մի շարք հարցերում հակված էին մատերիալիստական և դիալեկտիկական տեսակետներին, Գրանովսկին հավատարիմ մնաց լուսավորիչների իդեալիստական աշխարհայացքին և բանականությունը, լուսավորությունը համարում էր կանխորոշիչ ազդակներ մարդկային հասարակության պրոգրեսիվ զարգացման մեջ։

Գրանովսկին զբաղվում էր Հռոմի պատմության կարևորագույն պրոբլեմով՝ կայսրության ներքին ճգնաժամի հարցով, որը նա կապում է ժողովրդական մասսաների վիճակի վատթարացման և ժողովրդական ապստամբությունների հետ։ Ուշագրավ է, որ Գրանովսկին բավականին հանգամանորեն բնութագրում է սարկատիրությունը Հին Հռոմում և նշում սարկության կործանարար ազդեցությունը մանր քաղաքային արհեստավորների և ազատ գյուղացիության դրության վրա։

Այնուամենայնիվ, հասարակական կարգը խաղաղ ճանապարհով բարեփոխելու տեսակետը կարմիր թելով անցնում է նրա պատմահայեցողության մեջ։ Գրանովսկին դեմ է հեղափոխական ընդվզումներին, ժողովրդական մասսաների գինված ապստամբություններին. նա համոզված է, որ խաղաղ բարեփոխությունների ճանապարհը հասարակության պրոգրեսիվ զարգացման միակ ճշմարիտ ուղին է։ Այդ առնչությամբ բնորոշ է Գրանովսկու զնահատականը ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության իրադարձություններին։ Նա դատապարտում է յակոբենների գործունեությունը և բացասում հեղափոխական մահափորձի պատմական անհրաժեշտությունը։ Նա իդեալականացնում է ժիրոնդիստների կուսակցությունը և նրանց ծրագիրը։

Գրանովսկուն և նրա աշակերտներին հաջողվեց ստեղծել ընդհանուր պատմության ռուսական դպրոցը։ Մոսկվայի համալսարանում իր ոգեշունչ դասախոսություններով, առաջադիմական գաղափարներով և անտիկ աշխարհի պատմության վերաբերյալ հարուստ և բազմակողմանի գիտելիքներով, Գրանովսկին սկիզբ դրեց Հռոմեական կայսրության դարաշրջանի սիստեմատիկ ուսումնասիրությանը ռուս պատմաբանների կողմից։ Գրանովսկու դասախոսությունները չեմ հավատում էին ներշնչում դեպի լուսավոր ապագան։ Նրան լսելու էին գալիս բացի ուսանողներից դիտության և լուսավորության ծարավի շատ ազատ ունկնդիրներ։ Գրանովսկու ամբիոնից հնչում էր նրա բոցաշունչ բողոքը դեպի բռնությունը և չեմ խոսքը բոլոր դարերի հարատահարվածների նկատմամբ։

Անտիկ աշխարհի, մասնավորապես Հռոմեական պատմության յուրահատուկ երևույթները հասկանալի դարձնելու համար Գրանովսկին զուգահեռներ էր անցկացնում հին պատմության և արդիականության միջև, անխուսափելիորեն ընկնելով մոդեռնիզմի մեջ։ Նա պատշաճ ուշադրություն չի դարձրել սոցիալական հարցերին, իդեալականացրել է պատմական դործիչներին, օրինակ՝ Հուլիոս Կեսարին։ Մնալով իդեալիստական աշխարհայացքի դիրքերում՝ Գրանովսկին, այնուամենայնիվ, առաջ քաշեց հասարակության կյանքի վրա բնական պայմանների ազդեցության հարցը։ «Հին գերմանների տոհմական կենցաղի մասին» աշխատության մեջ Գրանովսկին բանավեճի է մտնում գերմանական շովինիստական պատմաբանների հետ։ Վերլուծելով հին գերմանական համայնքը, նա ընդգծում էր զանազան ցեղերի զարգացման ընդհանուր բնույթը։ Չերնիշևսկին բարձր էր գնահատում Գրանովսկուն, որպես ինքնատիպ գիտնականի։ Գերցենը նշում էր, որ Գրանովսկու ամբիոնն իր ժամանակին վերածվել էր «հասարակական բողոքի տրիբունայի»։

Ակադեմիկոս Ռ. Յուր. Վիպպերը *(1859—1954)* նախասովետական ռուսական պատմագրության ականավոր դեմքերից է։ Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, անտիկ պատմության, ինչպես և ընդհանուր պատմության հմուտ մասնագետ՝ Վիպպերը կարողացել է համալսարանական դասախոսու-

թյունները դուրս բերել գիտահետազոտական բեղմնավոր աշխատանքին։ Նա ունի ավելի քան 300 աշխատություններ, այդ թվում նաև մի շարք դասագրքեր։ Վիպպերի գլխավոր աշխատությունը վերաբերում է հռոմեական հանրապետության վերջին դարերի և կայսրության առաջին տասնամյակների պատմությանը և կրում է «Հռոմեական իմպերիայի պատմության ուրվագծերը» *(I հրատ.—1908 թ., 2-րդ հրատ.—1923 թ.)* խորագիրը։ Աշխատության առաջաբանում Վիպպերը պարզաբանում է, որ «իմպերիա» ասելով նա հասկանում է ո՛չ թե քաղաքական կարդ, ո՛չ թե կայսերական ռեժիմ, այլ Հռոմի և Իտալիայի աշխարհակալական ընդարձակումը, հռոմեական կապիտալի և հռոմեական վենքի առաջխաղացումը։ Նա իր առաջ խնդիր է դնում՝ պարզել, թե ինչպիսի սոցիալ-տնտեսական շարժառիթներից ծնունդ առավ հռոմեական «իմպերիալիզմը»։

Ապրելով 1905 թ. հեղափոխության և նրան հաջորդած ռեակցիայի տարիներին, Վիպպերն իր աշխատության մեջ արտահայտել է բողոք ռեակցիոն գաղափարների դեմ և ջերմ համակրանք՝ դեմոկրատական սկզբունքների նկատմամբ։ Ուշ հանրապետության և վաղ կայսրության պատմությունը շարադրելիս նա լուրջ ուշադրություն է դարձրել հռոմեական հասարակության տնտեսական և սոցիալական հարաբերությունների վրա, դասակարգային պայքարի դրսևորումների վրա, իր մեթոդոլոգիայով մոտենալով պատմական մատերիալիզմի պիրքերին։ Նա հռոմեական և իտալական հասարակության բնականոն զարգացման տեսանկյունից է մեկնաբանել Կայսրությունը և քննադատելով Թ. Մոմզենի «դեմոկրատական միապետության» դրույթը, եկել է այն հետևության, որ Կայսրությունը շատ հեռու է եղել դեմոկրատական խնդիրներից։ Սակայն որպես մանրբուրժուական գաղափարախոս՝ Վիպպերը հետևողական չէ իր աշխարհայացքում. նա դպլիորեն տուրք է տալիս էկլեկտիզմին։

Վիպպերը վերլուծում է հանրապետության և վաղ կայսրության պատմության աղբյուրները՝ Պոլիբիոսի, Ապպիանոսի, Դիոն Կասիոսի երկերը և Անկիրայի արձանագրությունը։ Ընդունելով, որ Պոլիբիոսի նկարագրած հռոմեական հանրա-

պետության կարգը ունի առանձին արժեքավոր կողմեր, Վիպպերն այնուամենայնիվ նշում է, որ «ամբողջությամբ վերցրած՝ այդ նկարագրությունը փոխանակ բացատրելու, ծիածանի փայլով ծածկում է հիմնական փաստերը, կարծես թե ինչ-որ հանճար-նկարիչ և կամ Աստվածն—ինքն այստեղ կերտել է հանրապետության տարրերից արվեստի կատարյալ ստեղծագործություն, որի մեջ չի կարելի ոչ մի բան ո՛չ պակասեցնել և ո՛չ ավելացնել։ Բարձրաստիճան պաշտոնյաները, սենատը և ժողովուրդը՝ դրանք բոլորն էլ կենդանի մարդիկ չեն, որ պայքարում են հանուն իրենց հակադիր շահերի, այլ գերագույն սկզբունքներին հնազանդ տարերք»։ Իր այս ճշմարիտ դիտողություններից հետո հեղինակը մի դիպուկ հարց է տալիս. «Եթե 2-րդ դարի 40-ական թվականներին Հռոմում գոյություն ուներ ուժերի այդքան զարմանալի հավասարակշռություն և հասարակական խավերի միջև համերաշխություն, ապա ինչպե՞ս բացատրել, որ հաջորդ տասնամյակում՝ 30-ական թվականներին բացահայտվում է սուր երկպառակություն Գրակքոսների օրինագծերի առթիվ, ընդ որում հետագայում այդ պառակտումը ոչ միայն չի վերանում, այլ ընդունում է լայն չափեր, հռոմեական ճգնաժամից վերածվելով համաիտալական ճգնաժամի, սոցիալական պայքարում կործանվում է և այն կարգ ու կանոնը, որը ըստ երևույթին ստեղծվել էր այդքան վարպետորեն և հաստատուն։ Հավանաբար ստեղծելով իր իդիլիան՝ Պոլիբիոսը բոլորովին չէր նկատել հռոմեական հասարակության մեջ եղած շահերի հակադրությունը։ Նա տարվել էր գաղափարախոսությամբ և մոռացության էր տվել, որ պետությունը աստվածների պարգև չէ, այլ հասարակական բարդ հարաբերությունների համակցություն»[60]։

Այնուհետև Վիպպերը կանգ է առնում Պունիկյան և անդրծովյան պատերազմներից հետո գյուղացիության և ամենից առաջ՝ դաշնակիցների հողազրկման վրա, նոբիլների և հեծյալների կողմից պետական հողերի գրավման և էժան բանվո-

[60] Р. Ю. Виппер, Очерки истории Римской империи, М., 1908 стр. 5.

րական ձեռքերի՝ հողազրկված գյուղացիների և ստրուկների հոծ մասսաների աշխատանքի օգտագործման վրա։ Այդ մասին Վիպպերը գրում է. «Իտալիայում սկիզբ են առնում գույքային նոր հարաբերություններ։ Անդրծովյան նվաճումներից ձեռք բերված կապիտալն ուղղվում է իտալյան հողերի վրա և սկսում կլանել հողաբաժիններն ու գյուղերը»[61]։ Այդ առնչությամբ հետաքրքիր է Վիպպերի քննադատական մոտեցումը Հին Հռոմի պատմության արդիականացնողների նկատմամբ, որոնք համեմատություններ են անում II—I դարերի Հռոմի և XVIII—XIX դարերի Եվրոպայի միջև և դիմում են ծայրահեղության, օրինակ՝ Թ. Մոմզենը, որը ինչպես ասում է Վիպպերը, Իտալիան պատկերացնում է ժամանակակից գյուղական Եվրոպայի նման[62]։

Վիպպերը պատմության արդիականացնողներին հակադրում է իտալական պատմաբան և տնտեսագետ Սալվիոլիին, որը իր «Կապիտալիզմն անտիկ աշխարհում» (1929 թ.) գրքի առաջին հրատարակության մեջ նշում էր, որ հիմքեր չկան անտիկ տնտեսության մեջ տեսնելու նույն գծերը,—ինչ-որ հատուկ են նորագույն կապիտալիզմին։ Վիպպերը համամիտ է Սալվիոլիի տեսակետին։ Սալվիոլին ասում է, որ կապիտալը Հռոմում ներդրվում էր միայն անարտադրող ճյուղերի մեջ այսինքն՝ կապալի և վաշխառության մեջ, որ այն չընդգրկվեց արդյունաբերության մեջ և գյուղական մարզերում։ Արհեստը մնում էր որպես տեղական նեղ արտադրություն։ Իրավացի համարելով Սալվիոլիի դրույթները Վիպպերը նշում է, որ Սալվիոլին էլ իր կողմից ընկել է մի ուրիշ ծայրահեղության մեջ. ըստ Վիպպերի՝ «կապիտալիստական արտադրությունը Հռոմում, անկասկած, քիչ է ընդգրկել արդյունաբերությունը, բայց ուժեղ չափով արտահայտվել է գյուղատնտեսության մեջ»[63]։ Այստեղ էլ, ինչպես և աշխատության շատ հատվածներում, Վիպպերն այնուամենայնիվ, չկարողացավ խուսափել բուրժուական պատմագրության մեջ գերիշխող արդիականացման դրույթներից, թեպետ չհասավ արևմտաեվրոպա-

[61] Նույն տեղում, էջ 27։
[62] Նույն տեղում, էջ 31։
[63] Նույն տեղում, էջ 33։

կան պատմաբաններին հատուկ ծայրահեղություններին։ Ընդհակառակն, նա ուշիմ և զգաստ դիրքերից՝ սուր քննադատության է ենթարկում Ռ. Պյոլմանի «Անտիկ սոցիալիզմի և կոմունիզմի պատմությունը» աշխատության հիմնական սոցիալ-քաղաքական տենդենցը։ Այդ մասին Վիպպերը գրում է. «Պյոլմանն անպայման ուզում է Հռոմում գտնել ժամանակակից սոցիալիզմին նմանվող որևէ բան, դասակարգային պայքարի մարքսիստական ֆորմուլաներ, կոմունիստական նախագծումներ, քաղաքականության մեջ սոցիալական ուտոպիաների մեծ ազդեցություն և այլն։ Այդ որոնումները հանգում են արտառոց չափազանցությունների...»։ Նրան թվում է, անտարակույս, որ հզոր սոցիալիստականի կուսակցությունը հուսահատության հասնելով, ձեռնամուխ է լինում կործանելու կապիտալիստական հիմունքներով կառուցված կարգը»[64]։

Ճիշտ քննադատելով Պյոլմանին՝ Վիպպերը ինքն էլ ընկնում է մանրբուրժուական մտավորականության հատուկ զաղափարական տատանումների մեջ՝ Հին Հռոմում գտնում է կապիտալիզմ, իմպերիալիզմ, ֆինանսական կապիտալ և իմպերիալիստական զաղութարարություն։ Այսպես՝ չափազանցնելով հռոմեական առևտրական կապիտալի ուժն ու նշանակությունը, Վիպպերը նշում է. «Օտարերկրյա տերությունների ֆինանսական շահագործման մեջ մասնակցություն ուներ հռոմեական քաղաքացիների զանգվածը»... «Հռոմեական կապիտալիստները ամուր հաստատվել էին կենտրոնում և տեղերում՝ զաղութային տերություններում»[65]։ Աշխատության 2-րդ գլխում խոսելով 146 թվականից սկսած Հռոմի նոր նվաճումների մասին՝ այսինքն՝ Կարթագենի, Մակեդոնիայի, Կորնթոսի, Աքայայի նվաճման մասին, ասում է. «Կարելի է այդ 30-ամյակի նվաճումները համարել հռոմեական իմպերիայի սկիզբը, այսինքն՝ ընդարձակ զաղութային տերության սկիզբը, որը ծառայում էր Հռոմի և Իտալիայի շահերին»[66]։

40—50-ական թվականներից Վիպպերը զբաղվում է վաղ

[64] Նույն տեղում, գլ. IV, էջ 174։

[65] Նույն տեղում, էջ 129։

[66] Նույն տեղում, գլ. II, էջ 38։

քրիստոնեության հիմնական պրոբլեմներով։ Այդ թեմային վերաբերող նրա 1918 թ. լույս տեսած վաղ աշխատությունը քննադատվել է Վ. Ի. Լենինի կողմից[67]։ Հետագա ուսումնասիրություններում Վիպպերը աշխատել է վերանայել իր պատմական դրույթները քրիստոնեության վերաբերյալ։ Նրա այդ նոր աշխատությունները արժեքավոր ներդրում են աթեիստական պրոպագանդայի գործում՝ մարքսիզմ-լենինիզմի դիրքերից։

Այնուամենայնիվ Վիպպերը անտիկ աշխարհի ֆորմացիայի կարևոր մեթոդոլոգիական հարցում կառչած մնաց մոդեռնիզմի արատավոր դիրքերին։

ՌՈՍՏՈՎՑԵՎ Մ. Ի. (1870—1952).—Ռուսական պատմագրության մեջ պատմության արդիականացման ամենացայտուն օրինակներից է Պետերբուրգի համալսարանի նախկին պրոֆեսոր Մ. Ի. Ռոստովցևը, որը 1918 թ. էմիգրացիայի մեկնեց արտասահման։ Սկսած 1925 թվականից՝ Ռոստովցևը եղել է ԱՄՆ-ի Իելի համալսարանի պրոֆեսոր և հարել է բուրժուական պատմագրության առավել ռեակցիոն, մարքսիզմին բացահայտ թշնամի ուղղությանը, որը իր կնիքը դրեց նրա աշխատությունների վրա։ Ռոստովցևը բազմակողմանի կրթություն և զարգացման մեր պատմաբան է, հնագետ և անտիկ պատմության հմուտ մասնագետ։ 1926 թ. անգլերեն լույս տեսավ նրա «Հռոմեական կայսրության սոցիալ-տնտեսական պատմությունը», որը թարգմանվել է գերմաներեն և իտալերեն։ Նա 2-րդ—3-րդ դարերի կայսրության տնտեսությունը և սոցիալական հարաբերությունները շարադրում է անտիկ պատմության արդիականացման ասպեկտով։ Ըստ նրա՝ Հուլիոս-Կլավդիոսների հարստության կայսրերը հենվում էին իտալական քաղաքային բուրժուազիայի վրա, իսկ Անտոնինոսների հարստության կայսրերը՝ պրովինցիական քաղաքների բուրժուազիայի վրա։ Քաղաքներում հարուստների և աղքատների միջև շարունակ պայքար է տեղի ունենում, որը 3-րդ դարում վերածվում է ստորին խավերի զինված հեղափոխության։

[67] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 204—205։

Ռոստովցևը աշխատում է ցույց տալ, որ իբր «զինված պրոլետարների և գյուղացիների» հեղափոխությունը կործանեց Հռոմեական կայսրությունը և անտիկ մշակույթը։ Նշրագացությունը պարզ է առանց մեկնաբանությունների. Ռոստովցևի «Հռոմեական կայսրության սոցիալ-տնտեսական պատմությունը» մեղանչում է գիտության դեմ՝ տառապելով պատմության արդիականացման հիվանդությամբ։

«Հռոմեական կայսրության ծնունդը» խորագրով իր մյուս աշխատության առաջաբանում Ռոստովցևը նշում է, որ իր այդ ուրվագիծը արգասիք է Հռոմի կայսրության պատմության հարուստ և խիստ հետաքրքրական՝ գլխավորապես գրական աղբյուրների համառ և երկարատև ուսումնասիրության։

«Ես հեռու եմ համեմատություններ անելուց,—հայտարարում է Ռոստովցևը,—և չեմ կարծում, որ քաղաքացիական պատերազմների պատմությունը Հռոմում կարող է որևէ մեկին խելքը բերել և որևէ մեկի վրա ազդել։ Բայց կարծում եմ, որ յուրաքանչյուր կրթված մարդու համար հետաքրքիր է, պետք է, և հոգեբանորեն կարևոր՝ ապրելով ներկան, խորանալ նաև անցյալի մեջ և փորձել այն։ Անցյալը քաղաքական դեղատոմսեր չի տալիս, բայց ներկան գիտակցաբար է ապրում նա, ով սովորել է հասկանալ անցյալը. իմ աշխատությունը հիմնված է աղբյուրների վրա։ Արդյոք շա՞տ օտար մտքեր կան իմ գրքում, թող դատի ընթերցողը։ Իմ պատմահայեցողությունը մտածված է իմ կողմից մինչև վերջը»[68]։ Ինքնավստահ և փոքր ինչ բարձրամտորեն գրված սույն տողերի հեղինակը, անշուշտ, լավ գիտե, որ սկսած անտիկ պատմագիրներից ընդհուպ մինչև նորագույն ժամանակաշրջանի պատմաբաններից շատերը հավաստիացրել են, որ գրելու են անաչառ և առանց «անցյալի քաղաքական դեղատոմսերի»։ Հեղինակը նույնիսկ հերքում է անալոգիաները իր աշխատության մեջ, ասելով, որ՝ ինքը հեռու է անալոգիաներ անցկացնելուց։ Սակայն թերթելով նրա աշխատությունը՝ արդեն 8—9-րդ էջերում հանդիպում ենք անտիկ պատմության արդիականացման դրույթների. «Ամենուրեք անտիկ աշխարհում

[68] **М. И. Ростовцев,** Рождение Римской империи, Петроград, 1918, Предисловие.

կապիտալիստական կարգը տանում էր դեպի խոշոր հողատիրության ստեղծում, որ բոլոր իրեն մատչելի միջոցներով դուրս էր մղում մանր տնտեսությունը և կամ ձգտում էր այդ վերջինը դցել տնտեսական կախման մեջ»[69]։

Ռոստովցևը անտիկ աշխարհում տեսնում է կապիտալիստական կարգ, որը քայքայում է մանրգյուղացիական տնտեսությունները։ Էլ ինչպե՞ս կարելի է որակել այս դրույթը, եթե ոչ անտիկ պատմության արդիականացում։ Ռոստովցևը չի տեսնում, կամ ավելի ճիշտ՝ չի ուզում տեսնել Հռոմեական էկոնոմիկայի սարկաստիրական բնույթը, անտիկ արտադրության սարկաստիրական եղանակը, որը անխուսափելիորեն քայքայում էր մանր ազատ արտադրողներին։ Քաղաքային վերնախավը նա անվանում է «մունիցիպիական բուրժուազիա», ի հակադրություն «քաղաքացիական, պրոլետարական բանակի» որը «խառնվում է սենատի և ժողովրդի միջև տեղի ունեցած պայքարին, որպես «պրոլետարական զորք» և որի առկայությունը ավյալ պահին վերջնականապես վճռում էր այս կամ այն քաղաքական և տնտեսական հարցերը»[70]։ Մինչդեռ աղբյուրների վկայությունները և Հռոմի քաղաքացիական պատմության ընթացքը համոզիչ կերպով ապացուցում են, որ Մարիոսի ռազմական ռեֆորմի հետևանքով ստեղծված պրոֆեսիոնալ բանակը հենարան էր թե՛ հանրապետության վերջին դարաշրջանում միանձնյա իշխանության ձգտող զորավարների ձեռքում և թե՛ կայսրերի ձեռքում։ Ֆ. Էնգելսն այդ մասին ասում է. «Զորքը նոր կառավարության[71] նյութական հիմքն էր, որ շատ ավելի լանդսկնեխտների բանակի էր նման, քան հին գյուղացիական աշխարհազորին։ Իսկ նրա բարոյական հենարանն այն ընդհանուր համոզումն էր, որ եթե ոչ այս կամ այն կայսրը, ապա ռազմական գերիշխանությունը անխուսափելի անհրաժեշտություն է»[72]։

[69] **М. И. Ростовцев,** Рождение империи, Птгр., 1918, гл. I, стр, 8—9.

[70] Նույն տեղում, գլ. I, էջ 21։

[71] Խոսքը Օգոստոսի պրինցիպատի մասին է։

[72] **М. И. Ростовцев,** Рождение Римской империи, П-град, 1918, стр. 72.

Հետևապես, եթե հռոմեական զորքը ռազմական գերիշխանության վրա հիմնված զորավարների միանձնյա իշխանության և ապա՝ կայսրության նյութական հենարանն էր, ապա էլ ինչ խոսք կարող է լինել հռոմեական պրոլետարիատի բանակի մասին, որ իբրև թե «հեղափոխական» պայքար էր մղում թե՛ սենատի և թե՛ մունիցիպիական «բուրժուազիայի» դեմ։

Ռոստովցևը «Հռոմեական կայսրության ծնունդը» աշխատության մեջ խնդիր է դրել պարզաբանելու, թե հանրապետության վերջին դարաշրջանում ծավալված քաղաքացիական պատերազմները ինչ նշանակություն ունեցան անտիկ աշխարհի հետագա պատմության համար։ Ըստ որում Ռոստովցևը դաշնակիցների մեծ պատերազմը համարում է առաջին քաղաքացիական պատերազմն Իտալիայում։

Պատմագիտական կուռ մտածելակերպը և բազմահարուստ աղբյուրներից օգտվելու լայն հնարավորությունը օգնել են հեղինակին բանալու ավյալ բարդ և կնճռոտ ժամանակաշրջանի դեպքերի խճճված հանգույցը և գտնելու նրանց ներքին կապն ու պայմանավորվածությունը։ Նա հաջող վերլուծությունների միջոցով կարողանում է ցույց տալ այն կապը, որ կար Միհրդատ 6-րդ Եվպատորի ռանդգությունների և դաշնակիցների պատերազմների միջև, համոզիչ մեկնաբանություններով բացահայտում է Արևելյան պատերազմի անխուսափելիությունը, միաժամանակ վերլուծում է Հռոմում սենատի, հռոմեական քաղաքացիների և զորքի միջև հասարակական-քաղաքական փոխհարաբերությունները[73]։

Ընդհանրապես շարադրանքը խիստ հակիրճ է, ոճը՝ պարզ ու կենդանի։ Հեղինակը կարճ խոսքով՝ հարուստ բովանդակություն հաղորդելու մեծ վարպետ է։ Տոնը մի փոքր ուսուցողական, մենատորական է։ Քաղաքացիական պատերազմների պատմության, ինչպես առհասարակ իր շարադրանքի ողջ ընթացքում նա չի հիշատակում օգտագործած աղբյուրները։ Միայն երկու տեղ բերում է Ապպիանոսի վկայությունը, առանց նշելու հատվածը, էջը։ Եվ ամեն անգամ ընդգծում է, որ Ապպիանոսը «այստեղ էլ տալիս է կարճ, լավագույն և ուժեղ բնութագրությունը այն ամենի, ինչ կատարվում էր Իտալիայում»[74]։

Ռոստովցևը գերագնահատում է անհատի դերը պատմության մեջ. նրա մեթոդոլոգիական թերություններից մեկն է դա։ Այսպես. խոսելով Սուլլայի ռազմական դիկտատուրայի մասին, նա կանգ է առնում, ըստ իր տեսակետի, կարևոր մի հարցի վրա, թե «արդյոք Սուլլան ձգտո՞ւմ էր բարեփոխելու պետական կարգը, որպեսզի ամրացնի իր իշխանությունը, թե՞ ձգտում էր իշխանության, որպեսզի անցկացնի իր ռեֆորմը։ Այդպիսի անհատական հոգեբանության հարցերը, որքան էլ դրանք կարևոր լինեն, իմ կարծիքով գիտականորեն և մեթոդոլոգիական տեսակետից անլուծելի են»[75]։ Այս հարցադրումը սխալ է. Սուլլան մեկուսացված գործիչ չէր. կապրված չէր իր սոցիալ-դասակարգային խավից. նա արտահայտում էր սենատորական արիստոկրատիայի ձգտումներն ու շահերը։ Հեղինակն աշխատում է քաղաքացիական պատերազմը դիտել երկու կուսակցությունների՝ օպտիմատների և պոպուլյարների միջև տեղի ունեցող պայքարից անկախ և միաժամանակ չի տեսնում ուժեղ իշխանության անհրաժեշտությունը սոցիալ-քաղաքական ճգնաժամ ապրող հանրապետության համար։ Նա խիստ գերագնահատում է նաև Կեսարի դերը, գրելով, որ նրա դեմ անզոր դուրս եկավ սենատն անդամ, որը «թեև իր բացառիկ հեղինակությամբ վերականգնեց զորքը, իր կողմը գրավեց դաշնակիցներին և վաստակավորներին, այնուամենայնիվ պարտվեց, որովհետև չկարողացավ ամբողջ երկիրը համախմբել Կեսարի հանճարի դեմ»[76]։

Հեղինակը բացառիկ ջերմությամբ է ներկայացնում Մարկոս Տուլլիոս Ցիցերոնին, իր ասելով՝ «Հռոմը կործանումից փրկողին» նրան անվանելով «հեղափոխական դարաշրջանի լավագույն արարածներից մեկը, լատինական գեղարվեստական արձակի ստեղծողը, Հռոմի մեծագույն կուլտուրական գործիչը։ Քաղաքականության մեջ նա դեկավարվում էր մեկ

[73] Նույն տեղում, էջ 29—30։

[74] Նույն տեղում, էջ 42։

[75] Նույն տեղում, էջ 43։

[76] Նույն տեղում, էջ 71։

հիմնական նպատակով՝ Հռոմի բարօրությամբ»։ Իր ներքողը նա ավարտում է հետևյալ գովքով. «Անմիջականությունը, երբեմն նույնիսկ վախկոտությունը, իր անձնական շահերն ապահովելու ձգտումը, որոնց մեջ նրան մեղադրում էին իր ժամանակակիցները և մեր ժամանակի գիտնականները, չեն կարող մեզնից թաքցնել ճշմարիտ հայրենասերի իսկական դեմքը, որի գլխավոր թերությունն այն էր, որ նա տիպիկ մտավորական էր, անտիկ մարդասիրության իսկական ներկայացուցիչը»[77]։ Ակամայից հարց է ծագում. իսկ ինչպե՞ս պատահեց, որ այդ մեծ մարդասերը առանց դատաքննության, ինքնակամ 63 թ. (մ. թ. ա.) բանտում իր ներկայությամբ խեղդամահ անել տվեց մի շարք կատիլինականների։ Իր քաղաքական հայացքներով խիստ հեղհեղուկ, Ցիցերոնը մերթ անցնում էր պրոպլյարների (դեմոկրատական) կուսակցության կողմը, մերթ օպտիմատների (արիստոկրատական)։ 60-ական թվականներին իրականացան նրա վաղեմի բաղձանքները՝ 64 թ. (մ. թ. ա.) նա ընտրվեց կոնսուլ։ Ստանալով այդ բարձրագույն պետական մագիստրատուրան, նա մոլեգնորեն աշխատում էր պայքարել դեմոկրատական կուսակցության դեմ։ Խստորեն դիմադրում էր ժողովրդական տրիբուն Պուբլիոս Սերվիլիոս Ռուլլոսի հողային ռեֆորմի օրինագծի դեմ։

Ռոստովցևը բացասական վերաբերմունք ունի դեպի ըստրուկների ապստամբությունները, «որոնք հանդես էին գալիս ըստ նրա՝ հեղափոխության դրոշի տակ, որը հնարավորություն էր տալիս նրանց հեղաշրջումների ժամանակ մասնության ճանապարհով ազատություն և նյութական ապահովություն ստանալ»[78]։ Հեղինակը ստրուկների դասակարգային պայքարի ազատագրական ազնիվ նպատակները ննջգափոխել է մասնությունների միջոցով նյութական ապահովություն և ազատություն ստանալու ձգտումով։

Նա չոր, արձանագրական ոճով, խիստ համառոտ խոսում է Սպարտակի ապստամբության մասին. «Բուն Իտալիայում,— ասում է հեղինակը.—Հռոմը ստիպված էր համառ և անարդ

[77] Նույն տեղում, էջ 54։

[78] Նույն տեղում, էջ 47։

պայքարի մեջ մանել ապստամբած ստրուկների դեմ, որոնք լուրջ վնասներ հասցրին Իտալիայի գյուղատնտեսությանը»։

Կարելի է միայն ցավել, որ պատմագիտական կուռ մտքի և հասուն մտահանգումների տեր պատմաբանը այդպես զիջում է լուրջ գաղափարախոսի իր դիրքերը, երբ հարկ է լինում անդրադառնալ ստրուկների դասակարգային պայքարի ամենահոյակապ արտահայտության՝ Սպարտակի առաջնորդությամբ ստրուկների ապստամբության վրա։

Ռոստովցևը կանգ է առնում նաև քաղաքացիական պատերազմներից հետո ստեղծված հռոմեական պետական կարգի վրա։ «Կեսարը ժամանակ չունեցավ ստեղծելու պետական նոր կարգ,— ասում է հեղինակը,—ինչպես այդ կատարեց նրա կողմից որդեգրված Օկտավիանոսը։ Պետականության նոր ձևերը նա ստեղծում էր ընդմիջումներով, մի պատերազմից մյուսն ընկած կարճատև դադարի ժամանակաշրջանում։ Նրա կառույցն անավարտ մնաց և պլանը պարզ չէր իր մանրամասներով»[79]։

Այնուամենայնիվ, պետական կարգի ուրվագիծը պարզ էր. ձևականորեն Հռոմի սահմանադրությունը չէր փոխվել. պահպանվել էին ժողովրդական ժողովը, սենատը, մագիստրատուրաները, բայց ներքին բովանդակությունը արմատապես փոխվել էր։ Կառավարման վերոհիշյալ մարմինների գլխին բարձրանում էր մեկի միանձնյա իշխանությունը, որը ըստ Ռոստովցևի, ավելի մոտ էր կանգնած հունական տիրանիային։ Նոր պետական կարգը իր հիմնական մասով բռնապետություն էր, ասում է հեղինակը։ Ռոստովցևը սխալվում է վաղ կայսրությունը կամ պրինցիպատը անվանելով տիրանիա։ Օգոստոսի ստեղծած կարգը կայուն դուրս եկավ, որովհետև բացի այլ պատճառներից դեր խաղաց նաև նրա զգույշ տակտիկան։ Նա ոչ միայն պահպանեց հանրապետական օրգանները, այլև միանձնյա միապետի իր ֆունկցիաները կենսագործում էր մեծ զգուշավորությամբ, հաճախ հաշվի նստելով սենատի հետ։ Ուստի խոսք լինել չէր կարող բռնապետության (տիրանիա) մասին։

[79] М. И. Ростовцев, „Рождение Римской империи", Птгр., 1918, стр. 72.

Ըստ էության տիրապետելով անտիկ պատմության բազմահարուստ նյութերին և օգտվելով բազմակողմանի աղբյուրներից, Մ. Ի. Ռոստովցևն ընթացավ Հռոմի պատմության արդիականացման ուղիով։ Ուստի նրա աշխատություններից պետք է օգտվել մեծ վերապահությամբ։

* * *

Հռոմի պատմության արտասահմանյան հայ ուսումնասիրողների մեջ յուրահատուկ տեղ են գրավում Մխիթարյանները։

ԱՆՏՈՆ ԳԱՐԱԳԱՇՅԱՆ (1818—1903).—Մխիթարյան միաբանության պատմաբաններն իրենց հայագիտական աշխատություններում բավական տեղ են հատկացրել Հռոմի պատմության ուսումնասիրությանը։ Այդ գիտնականներից նշանավոր է Անտոն Գարագաշյանը, որ ուշագրավ դեմք է 19-րդ դարի երկրորդ կեսի հայ առաջադեմ մտածողների շարքում։

Ա. Գարագաշյանը ծնվել է Պոլսում 1818 թ., ուսանել է Վիեննայի Մխիթարյանների վարժարանում։ Տիրապետելով կլասիկ և արևմտաեվրոպական մի շարք լեզուների՝ Գարագաշյանը անհագորեն կարդում է 19-րդ դարի պրոգրեսիվ բնագետների և փիլիսոփաների երկերը, հանդես է գալիս 80-ական թվականներին իր առաջադիմական աշխատություններով և բնության երևույթների մեկնաբանման հարցով վերջնականապես կանգնում է մատերիալիզմի դիրքերում։

Ա. Գարագաշյանի բեղմնավոր գրչի արգասիք են բազմաթիվ գիտամանկավարժական ուսումնասիրություններ, դասագրքեր, ձեռնարկներ, հրապարակախոսական հոդվածներ։ Սակայն նրա ծանրակշիռ գործը «Քննական պատմության հայոց» քառահատոր աշխատությունն է, որը լույս է տեսել 1895 թ. Թիֆլիսում։ Ինչպես նախորդ, այնպես էլ մանավանդ այս նշանավոր աշխատության բնորոշ կողմը երևույթների և պատմական իրադարձությունների հետազոտման քննական եղանակն է։ Պատահական չէ, որ Գարագաշյանը համարվում է հայ քննադատական պատմագրության հիմնադիրը։

Նրա այդ աշխատությունը գրված է անտիկ պատմագիրների (Սալլյուստիոսի, Տարաբոնի, Տակիտոսի, Սվետոնիոսի, Հովսեպոս Ֆլավիոսի, Հուստինոսի) հայ պատմաբանների (Խորենացու, Ագաթանգեղոսի, Փավստոս Բյուզանդի, Եղիշեի, Փարպեցու), ինչպես նաև արևելյան աղբյուրների հիման վրա։ Հեղինակը չրբաժան գիծ է անցկացնում Հռոմի ստույգ պատմության և առասպելների միջև, օրինակ՝ նա շրջանցում է Հռոմի վաղ հանրապետության պատմության առասպելական դրվագները, ի հայտ բերելով հետազոտման քննական եղանակ։ «Թողլով սկզբան պատմությունը, որ կիսով չափ առասպելական է՝ առնունք համառօտիւ հաջորդ վեցհարյուրամյա ժամանակի պատմութիւն, որ լի է ներքին և արտաքին կռիւներով»[80]։

Ա. Գարագաշյանը ճիշտ դատողություն ունի նաև հռոմեական հասարակության դասակարգային կառուցվածքի մասին. «Հռոմի ժողովուրդն ի սկզբանե անտի կը բաժանուեր երկու, ազնուական կամ պատրիկ և ռամիկ»[81]։ Իհարկե, չի կարելի համաձայնել հեղինակի հետ, երբ նա վաղ հանրապետության դարաշրջանի պլեբեյներին (ռամիկ) դասում է հռոմեական ժողովրդի կազմի մեջ։

Գնահատելի է նաև, որ Ա. Գարագաշյանը թեպետ խիստ համառոտ, կարողացել է վեր հանել վաղ հանրապետության դարաշրջանում արիստոկրատիայի և «ռամիկների» միջև ուղած սոցիալական հակասությունը, այդ հակասության սրրման հետևանքով ծագած պատրիկների և պլեբեյների միջև դասակարգային պայքարը և այդ պայքարում պլեբեյների ձեռք բերած նվաճումները[82]։

Անշուշտ, աշխատության դրական կողմերից է նաև, որ հեղինակը թեպետ խիստ հակիրճ, այնուամենայնիվ կանգ է առնում մ. թ. ա. 2-րդ դարի վերջերին գյուղացիության քայքայման և Գրակքոս եղբայրների ագրարային ռեֆորմների վրա։ Գրակքոսները՝ «ժողովրդի բարեկամներ» են,—ասում է հեղինակը,—որոնք «Ջանացին չափ դնել հարստության և

[80] Ա. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, մասն Ա, գլ. Ե։

[81] Նույն տեղում։

[82] Ա. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, մասն Բ, գլ. Գ, § 2։

բռնության այն ազնվականաց, բայց հալածվեցան չարաչար և սպանվեցան»: Սակայն այս կարևոր պատմական իրադարձության մասին շարադրանքը չի հիմնավորված հռոմեական հանրապետության վերջին տասնամյակներում կարևոր սոցիալ-տնտեսական և քաղաքական դրդապատճառներով:

Հեղինակը վաղ հանրապետության դարաշրջանում ծագած պլեբեյների և պատրիկների միջև դասակարգային պայքարը չի կարողացել տարբերել ուշ հանրապետության ժամանակաշրջանում Մարիոսի և Սուլլայի գլխավորած ներդասակարգային պայքարից. «Մարոս ոամկին և Սուդդա ազնուականաց կողմանե՝ ելան ոսոխ իրարու և թափեցին շատ անմեղ արյուն»[83]: Այնինչ Մարիուսը գլխավորում էր սարկատիրական վերնախավի դրամատիրական և ծառայող հատվածի՝ հեծյալների պայքարը ընդդեմ հողատիրական արիստոկրատիայի, որի առաջնորդը Սուլլան էր: Հետևապես նրանք միևնույն սարկատիրական վերնախավի երկու տարբեր հատվածների միջև ներդասակարգային պայքարի առաջնորդներն էին:

Ա. Գարագաշյանի, ինչպես և լիբերալ բուրժուական պատմաբաններից շատերի թերություններից է հռոմեական և ընդհանրապես անտիկ հասարակության կացութաձևի կարևոր մեթոդոլոգիական հարցի սխալ մեկնաբանումը: Հեղինակը անտեսում է արտադրության սարկատիրական եղանակը Հին Հռոմում, հռոմեական հասարակության հիմնական հակամարտ դասակարգերի՝ սարուկների և սարկատերերի հակասությունը և դասակարգային պայքարը նրանց միջև: Սպարտակի առաջնորդությամբ սարուկների ապստամբությունը հեղինակը հիշատակում է միայն երկու տողով՝ Պոմպեոսի մղած պատերազմների առնչությամբ: «Պոմպեոս եղած էր գործակից Կրասոսի... ի պատերազմին գերյաց Իտալիա առ Սպարտակոսիվ (73—71)»[84]: Ա. Գարագաշյանի ուշադրությունից վրիպել են անտիկ պատմաբանների՝ Սալլյուստիոսի, Ապպիանոսի, Պլուտարքոսի, Եվտրոպիոսի վկայությունները սարուկների հզոր և ծավալուն ապստամբության և Սպարտակի ազնիվ ու վսեմ կերպարի մասին: Նույնը կարելի է ասել

[83] Նույն տեղում:

[84] Նույն տեղում, Գլուխ Թ, § 5:

նաև սարուկների այլ ապստամբությունների վերաբերյալ: Օրինակ՝ Պերգամոնում 133 թ. (մ. թ. ա.) Արիստոնիկի առաջնորդությամբ սարուկների ապստամբության մասին Ա. Գարագաշյանը գրում է. «Պերգամոնի թագավորությունն սկսավ 283-ին նախքան զՔր և 129-ին անցավ Հռոմեացւոց՝ մահուամբ վերջին թագաւորին Պերգամոնի, Արիստոնիկեայ, որ իրրև ապստամբ սպանավ ի Հռոմ»[85]: Այնինչ Արիստոնիկը գլխավորել էր Պերգամոնում և Փոքր Ասիայում ծավալված սարուկների ազատագրական մեծ պայքարը (132—130 թթ. մ. թ. ա.):

Վերոհիշյալ և նմանօրինակ թերությունը բխում է Ա. Գարագաշյանի պատմահայեցողության սխալ մեթոդոլոգիայից: Հաղթահարելով իդեալիզմը բնության երևույթների բացատրության բնագավառում և կանգ առնելով մատերիալիզմի դիրքերում, հեղինակը չկարողացավ մատերիալիստական տեսանկյունից մոտենալ նաև սոցիալ-պատմական երևույթներին, ուստի՝ անտիկ հասարակության զարգացման օրինաչափությունները անհասկանալի մնացին նրա համար:

Այնուամենայնիվ, վերոհիշյալ թերություններով հանդերձ՝ Ա. Գարագաշյանի անուրանալի արժանիքներից է նրա ղգաստ, ռեալ մոտեցումը պատմական երևույթներին, քննական մեթոդը և առաջադիմական գաղափարների դնահատումը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՈՒՐՅԱՆ (ծնվ. 1880) Ծնվել է Մարաշում: Պատանի հասակից ուղարկվել է Վենետիկի ս. Ղազար վանքը, որտեղ ստացել է կրթություն, դարձել հոգևորական: 1903 թ. մեկնել է Գերմանիա, ստացել բարձրագույն կրթություն: Պատմաբանասիրական հոդվածներով աշխատակցել է «Բազմավեպին»: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին պաշտոնավարել է Կ. Պոլսի Կաղը գյուղի թաղամասի Մխիթարյան վարժարանում: Պատերազմից հետո անցել է Հարավային Ամերիկա, հաստատվել Գորտոպա քաղաքում, շարունակելով զբաղվել գիտական աշխատանքով[86]: Նրա գի-

[85] Նույն տեղում, մասն Բ, գլ. Ը, § 2:

[86] Գ. Ալանիանյան, Կենսագրական բառարան, հ. Ա, գտնվում է ձեռագիր վիճակում:

տահետազոտական աշխատություններից են «Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Հռովմա 190-էն Ն. Ք. մինչև 428 Հ. Ք.» (Վենետիկ—ս. Ղազար, 1912), «Հայաստան-արիական նախադիրք Առաջավոր Ասիա» (Սոֆիա, 1942)։

Հ. Ասատուրյանի գլխավոր աշխատությունը՝ «Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Հռովմա» (կամ կրճատ «Հայաստան և Հռոմ») մենագրությունն է, նվիրված հայոց պատմության ամենակարևոր և ամենաբարդ դրվագներից մեկին՝ հայ-հռոմեական հարաբերությունների մոտ վեցդարյա պատմությանը (2-րդ մ. թ. ա. մինչև 5-րդ դարը մ. թ.)։

Հեղինակի «երկու խոսքում» արդեն զգացվում է պատասխանատվության մեծ զգացումը, որով Ասատուրյանը մոտեցել է իր նպատակադրած խնդրի իրագործմանը։ Նա ուսումնասիրել է հունա-հռոմեական գրեթե բոլոր մատենագիրների երկերը, հատուկ ուշադրություն դարձրել արձանագրությունների և դրամագիտական նյութի վրա։ Քննության է առել նաև հայոց պատմության աղբյուրները իրենց բնագրով և աշխատել «մինչև հիմա եղածներեն տարբեր արդյունքներու հասնել»։ Գնահատելի է սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությունը և դատողությունների մեջ ինքնատիպ լինելու նրա ձգտումը։ Այնուամենայնիվ նա հայտարարում է, որ հեռու է կատարյալ գործ ներկայացնելու հավակնությունից։

Գիտական ուրույն հետաքրքրություն է ներկայացնում Ասատուրյանի ակնարկը աղբյուրների և գրականության մասին։ Թեպետ աշխատության սկզբում նա սոսկ թվարկում է աղբյուրները և օգտագործված պատմագիտական գրականությունը, բայց հարուստ ծանոթագրություններում և գրքի հավելվածներում հեղինակը երևան է բերում գիտական հետազոտման քննական եղանակ, որը բարձրացնում է մենագրության արժեքը։ Այսպես, օրինակ, աշխատության վերջում կցված Հավելված Բ-ում խոսելով Պլուտարքոսի կողմնակալ

մատենագման մասին դեպի իր բնութագրած պատմական անձերը, օրինակ, Լուկուլլոսը, նշում է, որ թեպետ Պլուտարքոսը վկայակոչում է Սալլյուստիոսին, Կոռնելիոս Նեպոտին և Լիվիոսին, բայց համեմատելով վերջին երեք սկզբնաղբյուրների տվյալները Պլուտարքոսի կողմից Լուկուլլոսի տրված բնութագրման հետ, հեղինակը գալիս է այն եզրակացության, որ Պլուտարքոսը ամենից շատ օգտվել է սենատին ուղղված Լուկուլոսի զեկուցագրերից, որտեղ խիստ գեղազարդված է Լուկուլլոսի գործունեությունն Արևելքում և աղավաղված պատմական իրականությունը։

Հավելված Դ-ում Ասատուրյանը խոսում է Կորբուլոնի «Հիշատակարանի» մասին, որը վերաբերում է նրա արևելյան արշավանքին։ Հեղինակը նշում է, որ հայ-պարթևական հարաբերությունների պատմության մեր գլխավոր աղբյուրները Տակիտոսը և Դիոն Կասիոսն են, որոնք իրենց նյութերը քաղել են Կորբուլոնի զեկուցագրերից և «Հիշատակարանից»։ Նկատի ունենալով, ուշադիր քննելով նրանց վկայությունները, Ասատուրյանը իրավամբ եզրակացնում է, որ Դիոն Կասիոսի մոտ Կորբուլոնի խոշոր ազդեցությունը ակնհայտ է, զեկուցագրի հետքերը նույնությամբ պահպանված են, քան Տակիտոսի մոտ, «վասնզի սա իր աղբյուրը քննութենե մը կանցնե, մինչդեռ Դիոն պարզությամբ անոր կրհետևի»... «Դիոնի քով ավելի շատ մնացած են Կորբուլոնի նկատմամբ գովեստներ, կայսրը շողոքորթող բացատրություններ և սաստիկ շեշտված է Պարթևաց թագավորին վախը Կորբուլոնեն..., իսկ «Տակիտոսը չափազանց հայտնի սուտերը լռելով մեկդի թողած է»[87]։

Ապա Ասատուրյանը նույն քննադատական եղանակով հերքում է նաև Տակիտոսի («Հռոմեական մեծագույն պատմիչի») տեղեկությունը այն մասին, թե 59 թ. Տիգրանակերտի բնակիչները Արտաշատու լուրեն սարսափած՝ իրենց քաղաքին դռները անոր առջև բացին և ոսկեղեն պսակ մը անոր ընդառաջ ղրկեցին»։ Ուշիմ հետազոտելով հայ-հռոմեական հարաբերությունների այս կարևոր իրադարձությունը, Ասատուրյանը բերում է այդ մասին «դեպքերուն ժամանակակից և շատ վըստահելի պատմիչ Փրոնտինոսի վկայությունը, թե Կորբուլոնը

[87] Ասատուրյան, Հայաստան և Հռոմ, Հավելված Դ, էջ 344—345։

ստիպված եղավ Տիգրանակերտը պաշարել և Հայք համառաբար պաշարման տոկացին»[88]։ Մանրազնին ուսումնասիրելով Կորբուլոնի արևելյան արշավանքը, հեղինակը հանգում է համոզիչ եզրակացության, թե Կորբուլոնի բովանդակ զինվորական գործունեությունը «կկայանա արշավանքե մը, զոր բարեկամ լեգեոններով և այնքան դաշնակիցներով միասին ըրավ ընդդեմ առանձին մնացած Հայաստանի»։ Ապա բերում է Կորբուլոնի արշավանքի մասին Գուտշմիդի տեսակետը (որը լիովին համընկնում է հեղինակի կարծիքին) այն մասին, թե՝ Կորբուլոնի այնքան հանդիսավոր կերպով հռչակված դյուցազնությանց չափը փոքրագունի մը կը ձուլվի»[89]։

Հայ-հռոմեական հարաբերություններին վերաբերող պատմական իրադարձությունների վերաբերյալ տվյալների արժանահավատությունը բացահայտելու համար Աստուրյանը վկայակոչում է Հուստինոսին, Ստրաբոնին, Ապպիանոսին, Դիոդոր Սիցիլիացուն, Պրուտարքոսին, Խորենացուն, Փարպեցուն և ուրիշներին, թե բուն շարադրանքում և թե ծանոթագրություններում։ Միաժամանակ հեղինակը բերում է արևմտաեվրոպական պատմաբանների աշխատություններից քաղվածքներ, որտեղ Հռոմի պատմության ականավոր մասնագետներ՝ Գուտշմիդը, Մոմզենը, Դեսսաուն, Ռեյնաքը, Մարկվարտը և ուրիշներ արտահայտել են իրենց տեսակետները հայ-հռոմեական հարաբերությունների վերաբերյալ։

Հեղինակը աշխատության Ա. մասում առանձին ջերմությամբ է կանգ առնում Արտաշիսյան հարստության թագավորների՝ հատկապես Տիգրան Մեծի գործունեության վրա։ Հիմնվելով աղբյուրների՝ Հուստինոսի, Ապպիանոսի, Պլուտարքոսի և ուրիշների վրա, Աստուրյանը բերում է Ապպիանոսի և Հուստինոսի իրար հակասող վարկածները Տիգրանի արևմտյան նվաճումների մասին, և կարողանում է ճիշտ կողմնորոշվել այդ կնճռոտ հարցերում, երևան բերելով մտքի ճկունություն և կուռ տրամաբանություն։ Նա ասում է. «Հուստինոսը կըսե բացահայտ կերպով, թե ասորիները ղՏիգրան

[88] Նույն տեղում, էջ 346։
[89] Նույն տեղում, էջ 347։

կանչեցին, իսկ Ապպիանոսը նույնպես բացահայտ կերպով կհաստատե, թե Տիգրան զանոնք նվաճեց... Երկուքն էլ կրնան իրավունք ունենալ, վասնզի Տիգրան մեկ կուսակցությենն կանչվեցավ, իսկ մյուսը՝ զենքով հպատակեցուց»[90]։ Ռեալ դիրքերից քննելով փաստերը, Աստուրյանը ցույց է տալիս, որ վերջին Սելևկյանների ժամանակ Ասորիների թագավորության թուլությունից օգտվում է տեղական ուժեղ կուսակցությունը և դիմում է Տիգրանի օգնությանը։ Տիգրանը նվաճում է Փյունիկեն, Դամասկոսը, Անտիոքը, թափանցում է Միջագետք, նվաճում է «ռազմագիտական հույժ կարևոր հենակետ Մծբինը»։ Հրեաստանից և Կապադովկիայից բնակիչներ տեղափոխում Տիգրանակերտ և շրջակայքը, արաբական ցեղերին նվաճելով՝ նրանց բնակեցնում Եդեսիայի և Խառանի միջև։ «Տիգրան կգտնվեր հիմա իր զորության գագաթնակետին վրա... սակայն դժբախտաբար իր դյուցազնություններն ու հաջողությունը այնքան պատմողներ ունեցած չեն, ինչպես իրեն ձախողությունները»[91]։

Անդրադառնալով Հռոմի դեմ Տիգրան-Միհրդատյան պատերազմի պատմությանը, հեղինակը չի բավարարվում սոսկ շարադրելով այն, այլ խորամուխ լինելով պատմական իրադարձությունների մեջ, քննում է ըստ էության պատերազմի պատճառներն ու շարժառիթները և եզրակացնում, որ «պատերազմի դիտավորություն կամ մանավանդ փափագ ուներ Լուկուլլոս»[92]։ Ապա զարգացնելով մտքերը, հեղինակը հանդում է հետևյալ համոզիչ եզրակացության. Տիգրանն անշուշտ, հաշվի առնելով Միհրդատի պարտությունները լինելով սրտեն ատրեց և լրջախոհ մարդ, չէր սկսի պատերազմը Հռոմի դեմ, չնայած իր հզոր ռազմական ուժերին։

Մենագրության 51-րդ էջի երրորդ ծանոթագրության մեջ Աստուրյանը հիմնվելով Մեմնոնի վկայությունների վրա և խորամուխ լինելով իրադարձությունների մեջ, համոզիչ փաստարկումներով ապացուցում է, որ Տիգրանը լիովին իրավունք էր հակառակորդի առաջխաղացմանը, եփրատն անցնելու մա-

[90] Նույն տեղում, էջ 34, ծանոթագրություն։
[91] Նույն տեղում, էջ 41։
[92] Նույն տեղում, էջ 47։

սին և նախօրոք հաղթահարելով մեծ դժվարություններ՝ Մարասատենից, Վրասատենից և Միջագետքի անապատներից բազմաթիվ զորամասեր էր հավաքել-բերել Հայաստան, Հռոմայեցիների դեմ պատերազմելու համար։

Փաստերը ռեալ, օբյեկտիվորեն լուսաբանելու հեղինակի ձգտումը դառնում է ակնհայտ, երբ Աստուրյանը անաչառ հետազոտողի տեսանկյունից է գնահատում Լուկուլլոսի տակտիկական առավելությունները՝ խուսափել բացահայտ մարտերից։

Խոսելով Արտավազդ Բ-ի օրոք հայ-հռոմեական հարաբերությունների մասին, հեղինակը ցույց է տալիս, որ այդ ժամանակ Արևելքի միջազգային կյանքում առաջանում է ուժերի նոր հարաբերակցություն։ Քանի դեռ կար Պոնտոսի թագավորությունը, քանի դեռ Ասորիքում և մասամբ Միջագետքում գոյություն ունեին Սելևկյանները և Առաջավոր Ասիայում՝ մանր անկախ թագավորություններ,—պարթևների առաջխաղացման առաջ «արգելափակոցներ» կային, և «Հայաստանը միշտ զորավոր էր և կրնար քաղաքականության մը հետևիլ»։ Շարունակելով իր միջազգային քաղաքական դրության ակնարկը, Աստուրյանը իր վերլուծությունը ավարտում է հետևյալ փաստարկումով. «իսկ Արտավազդա գահ ելած ժամանակ... քաղաքական նոր աշխարհագրություն ձևացած էր. Հայաստան իր շուրջը կտեսներ միայն երկու մեծ պետություններ՝ Հռոմայեցիները և Պարթևները»... «Հիմա Հայաստանը երկու հսկաների մեջ փոքր տղու կնմանի. իր քաղաքականությունը կամ Հռոմեն և կամ Տիգրոնեն կախված է, և երբեմն՝ երկուքեն միանգամայն։ Հայաստանը ստեպ հիւրոքի լծակի դերը կխաղա երկու պետությանց մեջ, և իր հակումն այս կամ այն կողմ՝ պատերազմներու մեջ հաճախ վճռական է»[93]։

Հեղինակը պատշաճ գնահատական է տալիս Արտավազդ Բ-ի վարած արտաքին ճկուն և խելացի քաղաքականությանը. Արտավազդը զգույշ դիրք բռնեց Անտոնիոսի արշավանքի ժամանակ. նա չէր ցանկանում» իր վնասովը հռոմայեցոց հաճույքի համար պարթևաց հետ թշնամանալ»... «Անիկա կմտածեր նաև, որ հռոմեական լեգեոններու չնջումնեն վերջ ամենեն ավելի իր երկիրն ենթակա պիտի ըլլար Պարթևաց հարձակումներուն, և հռոմայեցիներուն շատ հոգը պիտի չըլլար զայն պաշտպանելու»[94]։

Փավստոս Բյուզանդի, ինչպես նաև Ամմիանոսի և Զոսիմոսի տվյալների հիման վրա Աստուրյանը շարադրում է հայ-հռոմեական քաղաքական հարաբերությունները Արշակ Բ-ի և Կոստանդիոս կայսեր ժամանակաշրջանում, Հուլիանոս կայսրի արևելյան անհաջող արշավանքը և սպանվելը, և նրա հաջորդ Հովիանոսի ամբարիշտ վարմունքը (Ամմիանոս) Հայաստանի նկատմամբ։ Իր քաղաքական համառոտ ակնարկը Աստուրյանը վերջացնում է հռոմեական կայսրերի երկդիմի քաղաքականության շարադրանքով։ Վաղեսը ստիպված էր հրաժարվել Հայաստանի վրա ունեցած Հռոմի գերիշխանությունից, որովհետև բարբարոսների անընդմեջ հարձակումներից Հռոմն այնքան էր թուլացել, որ արդեն ի վիճակի չէր նույնիսկ իր նախկին սահմանները պահպանել։ Թեոդոսը շարունակեց զիջման քաղաքականությունը, ընդունելով իր նախորդների կողմից սկսված Հայաստանի բաժանման քաղաքականությունը և ավարտելով այն։

Ցավոք, Աստուրյանի վերլուծական շնորհալի աշխատության շրջանակներից դուրս են մնացել թե՛ Հայաստանի և թե՛ Հռոմի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, բուն աշխատավոր ժողովուրդը, նրա կյանքն ու կենցաղը, աշխատանքն ու պայքարը, նրա վերաբերմունքը իրենց երկրի՝ Հայաստանի և Հռոմի ղեկավարների վարած քաղաքականությունը։ Ինչ խոսք՝ հայոց թագավորները և նախարարները չէին կարողանա ազատագրական պայքար մղել թե՛ հռոմեական կայսրների և թե՛ պարսից արքաների նվաճողական քաղաքականության դեմ, եթե զորավիզ չունենային հայ ժողովրդին։

Հ. Աստուրյանը իր մենագրության մեջ պատշաճ տեղ է հատկացրել հայ մշակույթին։ Այսպես, 97-րդ էջում նա հա-

[93] Աստուրյան, Հայաստան և Հռոմ, էջ 98—99։

[94] Նույն տեղում, էջ 113։

կիրճ պատմում է, որ Տիգրան Մեծի ժամանակաշրջանում հայոց արքունիքը դարձել էր հունական մշակույթի կենտրոն, հույն փիլիսոփաների, դրամատուրգների, բանաստեղծների գործունեության ասպարեզ, որտեղ և իր դաստիարակությունն է ստացել Տիգրան Բ-ի որդին՝ Արտավազդ Բ-ն։ «Այդ ժամանակ հայոց բարձր դասակարգերու մեջ ճաշակ մը կար, զոր նաև Արտաշատու և Տիգրանակերտի մեջ կատարված թատերախաղությունները կհաստատեն»[95]։ Աստուրյանը նշում է նաև 4-րդ դարի վերջում և 5-րդ դարի առաջին կեսին հայ մշակույթի խոշոր նվաճումները «խաղաղասեր Վռամ շապուհ արքայի» և շնորհալի Սահակ Կաթողիկոսի օրոք։ Այդ ժամանակ «Ս. Մեսրոպը՝ գիտուն վարդապետը, Հայոց գրերը գտավ և Ս. Սահակա գործակցությամբ, որ շատ կարող և ազդեցիկ կաթողիկոս մ'էր, Հայոց մատենագրությունը և Հայոց լեզուն իր գագաթնակետն հասավ։ Ամեն կողմ դպրոցներ բացվեցան և ամենեն ավելի տաղանդավոր աշակերտներ արքունի ծախսով Աթենք, Բյուզանդիոն, Անտիոք, Եդեսիա և Ալեքսանդրիա ղրկեցան»[96]։

Հ. Աստուրյանի աշխատությունը զգալի ավանդ է պատմագրության մեջ և աննախադեպ երևույթ, որպես հայ-հռոմեական հարաբերությունների բարդ պրոբլեմը անտիկ և հայ աղբյուրների միջոցով լուսաբանող արժեքավոր մենագրություն։

ՀԻՆ ՀՌՈՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Սովետական պատմաբանները զինված մարքս-լենինյան մեթոդոլոգիայով՝ քննադատորեն վերամշակեցին Հռոմի, ինչպես և անտիկ աշխարհի պատմությունը։ Պատմական մատերիալիզմի լույսի տակ սովետական գիտնականներն աշխատում են ստեղծագործորեն վերանայել Հին Հռոմի պատմության արմատական պրոբլեմները։ Անհաշտ պայքար մղելով ռեակցիոն բուրժուական պատմագրության դրույթների՝ պատմության արդիականացման, ռասսայական տեսության, ցիկլիզմի դեմ, սովետական պատմաբանները սկզբնաղբյուրների

[95] Հ. Աստուրյան, Հայաստան և Հռոմ, էջ 27։

[96] Նույն տեղում, էջ 321—322։

հիման վրա բացահայտեցին հին հունա-հռոմեական հասարակությունների ստրկատիրական բնույթը՝ արտադրության ստրկատիրական եղանակը։

Բուրժուական ռեակցիոն գիտնականները հատուկ ուսումնասիրության առարկա են դարձրել հռոմեական «աշխարհակալական» տերության պատմությունը, նրա վիթխարի նվաճողական արտաքին քաղաքականությունը և ստրուկների ու շարքային ազատների նկատմամբ կիրառած անողոք շահագործման միջոցները, որպեսզի այն թեորիական հիմք ծառայեցնեն իրենց իմպերիալիստական պետությունների արտաքին ագրեսիվ և ներքին շահագործողական քաղաքականության համար։

Սովետական պատմաբաններն ուղենիշ ունենալով անտիկ հասարակության մասին մարքսիզմ-լենինիզմի կլասիկների ուսմունքները, առաջին անգամ պատմագրության մեջ լուսաբանեցին Հին Հռոմի պատմությունը, որպես ստրկատիրական դասակարգի բարձրագույն զրվագի պատմություն, որը յուրահատուկ է անտիկ աշխարհին։

Հռոմի պատմության մարքսիստական ուսումնասիրության գործում խիստ գնահատելի է Սերգեյ Իվանովիչ Կովալյովի ներդրումը սովետական պատմագրության մեջ։

Ս. Ի. Կովալյովը (1885—1960) հանդես եկավ սովետական կարգերի հաստատման առաջին իսկ տարիներին՝ բուրժուական իդեալիստական պատմահայեցողության մարքսիստական քննադատությամբ։ Սկսած 1924 թվականից մինչև 1956 թվականը նա եղել է Լենինգրադի համալսարանի պրոֆեսոր և գլխավորել իր կողմից կազմակերպված Հին Հունաստանի և Հռոմի պատմության ամբիոնը։ 1936 թ. լույս տեսան Կովալյովի կազմած առաջին մարքսիստական դասագրքերը՝ «Անտիկ հասարակության պատմությունը», հ. I, «Հունաստան» հ. II, «Հելլենիզմ «Հռոմ»։ 1948 թ. լույս տեսավ նրա դասախոսությունների դասընթացը՝ «Հռոմի պատմությունը»։ Սկզբնաղբյուրների հիման վրա Կովալյովի այդ ձեռնարկը հանդիսանում է մարքս-լենինյան մեթոդոլոգիայով լուսաբանված հռոմեական պատմության մի փայլուն նմուշ։ Աշխատությունը գրված է պատկերավոր ոճով և արտացոլում է հե-

դինակի խոր գիտելիքները, ճկուն գիտահետազոտական միտքը և սկզբունքայնությունը։ Գիրքը մեծ հռչակ ունեցավ և բարձրը գնահատականի արժանացավ մեր երկրում և արտասահմանում։ Իտալիայում Կովալյովի աշխատությունը հրատարակվեց երկու անգամ՝ 1953 և 1955 թթ.։ Կովալյովի գրչին են պատկանում անտիկ պատմության առավել ակտուալ հարցերին նվիրված աշխատություններ, առանձնապես սորուկների դասակարգային պայքարին, սորուկների ապստամբություններին, մի բնագավառ, որը մինչ այդ դեռևս մասնագիտորեն չէր հետազոտված պատմագրության մեջ։ 1934 թ. ակադեմիկոս Ս. Ա. Ժեբելյովի հետ միասին Կովալյովը գրեց «Սորուկների մեծ ապստամբությունները Հռոմում II—I դարերում (մ. թ. ա.)»։

Եռապատերազմյան տարիներին Ս. Ի. Կովալյովի գիտահետազոտական աշխատանքների առանցքը դարձավ Հին Հռոմի պատմությունը։ Նա գրեց Հռոմի պատմության կարևորագույն պրոբլեմներին նվիրված մի շարք աշխատություններ, ինչպես օրինակ՝ Հռոմի պատմության պարբերացումը, պատրիկների և պլեբեյների ծագման հարցը, հանրապետության ճգնաժամը, սորկատիրական հասարակարգի կործանման պրոբլեմը, քրիստոնեության ծագման և դասակարգային էության հարցը։

ՍԵՐԳԵՅ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ ԺԵԲԵԼՅՈՎԸ *(1867—1941)* Ս. Ի. Կովալյովի հետ միասին եղել է Հռոմի պատմության սովետական պատմագրության խոշորագույն ներկայացուցիչներից։ 1904 թվականից Ժեբելյովը աշխատել է Պետերբուրգի, ապա Լենինգրադի համալսարանում որպես հին աշխարհի պատմության պրոֆեսոր։ 90-ական թվականների սկզբից նա հանդես է եկել որպես անտիկ պատմության, արձանագրագիտության, հնագիտության և կլասիկ բանասիրության հմուտ մասնագետ՝ երկար տարիներ ղեկավարել է անտիկ մշակույթի և պատմության գծով տարվող գիտահետազոտական աշխատանքները։ Ակադեմիկոս Ս. Ա. Ժեբելյովը հեղինակ է մոտ 300 աշխատությունների։ Նա միաժամանակ թարգմանել է Արիստոտելի, Պլատոնի և Ապպիանոսի աշխատությունները։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Ժեբելյովի ուսումնասիրության առարկան դառնում է Հյուսիսային Մերձսևծովյան երկրների անտիկ պատմության հետ կապված պրոբլեմները։ Նա հանդես է գալիս մի շարք մենագրություններով, նվիրված Բոսպորյան պետության սոցիալ-անտեսական և քաղաքական պատմությանը։ 1930 թ. նա լույս է ընծայում «Բոսպորի պետության առաջացումը», 1934 թ., «Բոսպորի պետության անտեսական զարգացման հիմնական գծերը», ապա՝ «Բոսպորյան ակնարկները» և ուրիշ մենագրություններ, որտեղ վեր է հանել Բոսպորյան պետության սոցիալ-քաղաքական էությունը և յուրահատուկ գծերը։

Ուշագրավ է 1922—23 թթ. Ժեբելյովի գրած «Հին Հռոմ» աշխատությունը, որը թեպետ ծավալով փոքր, բայց բովանդակությամբ հարուստ, գիտական բարձր արժեք ներկայացնող գործ է և կարող է հավասարապես օգտակար լինել թե՛ Հռոմի մասնագետ դասախոսի և ուսումնասիրողի և թե՛ ուսանողի համար։ Աշխատությունը բաղկացած է երկու պրակից՝ առաջինը կոչվում է «Հին Հռոմ», երկրորդը՝ «Հռոմեական կայսրություն», և ընդգրկում է Հռոմեական կայսրության պատմությունը մինչև Դիոկլետիանոս կայսեր ռեֆորմները և Կոստանդնուպոլսի հիմնադրումը։ Այս պրակները Ժեբելյովի Պետրոգրադի համալսարանում կարդացած դասախոսություններն են։ Համալսարանական դասընթացը շարադրելիս հեղինակը նպատակ է հետապնդել ոչ միայն ուսանողներին սովորեցնել դիտություն, այլև մատնել «նրանց պատմական գիտության ուսումնասիրության մեջ»[97]։ Իր պրակներում Ժեբելյովը բուն պատմական նյութը շարադրելուց առաջ տվել է Հռոմի պատմական աղբյուրները, անտիկ պատմագրության բնորոշ գծերը և յուրաքանչյուր պրակի վերջում նաև համառոտ պատմագրական ակնարկ։

«Հին Հռոմ» աշխատության երկրորդ պրակում Ժեբելյովը յուրօրինակ մեկնաբանում է տալիս պրիցիպատին։ Բուն նյութին անցնելուց առաջ հեղինակը բերում է պրինցիպատի պատմության աղբյուրների հակիրճ տեսություն։ Նորը

[97] С. А. Жебелёв, Римская империя, Птргр., 1923, стр. 4.

հաշակով և գիտական ճիշտ մեթոդով նա կարողանում է կողմնորոշվել հին գրավոր արբյուրների մեջ։ Ջափանիշ ունենալով այն հանգամանքը, թե այս կամ այն աղբյուրի հեղինակը ինչպիսի նյութերից է օգտվել, Ժեբելյովն ըստ այնմ էլ արժեքավորում է տվյալ աղբյուրը և որոշում նրանից օգտվելու եղանակը։

Պրինցիպատի վաղ դարաշրջանի համար նա կարևոր աղբյուր է համարում Տակիտոսին։ Բացի հին պատմական երկերից նա մատնանշում է նաև բազմապիսի վավերագրական նյութեր, վիմական արձանագրություններ, որոնց «թագուհին» նա համարում է Անկիրայի արձանագրությունը (Res gestae divi Augusti), ապա՝ կայսրների ռազմական հրամանագրերը՝ ուղղված վետերաններին, էդիկտները, օրենքները, ճառերը, գեղարվեստական երկերը, հնագիտական նյութերը։ Ժեբելյովն իրավացիորեն նախընտրությունը տալիս է վավերագրական նյութերին, որոնք թեպետ չոր են և անդեմ, բայց վստահելի են և զերծ սուբյեկտիվ գունավորումից։ Պատմական երկերը զերազանցորեն վերաբերում են բուն Հռոմի պատմությանը և այն էլ մեծ մասամբ միայն քաղաքական իրադարձություններին,—այնինչ վիմական արձանագրությունները լույս են սփռում նաև պրովինցիաների պատմության վրա, վեր հանելով տնտեսության պատմության հետ առնչվող բազմաթիվ հարցեր։

Աղբյուրագիտական այս խիստ արժեքավոր ներածականից հետո Ժեբելյովն անցնում է Օգոստոսի ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրադարձությունների վերլուծմանը։ Պրինցիպատի բնորոշման հարցում նա չի համաձայնում ոչ Թ. Մոմզենի հետ, որը պրինցիպատը դիարխիա (երկիշխանություն) է համարել, ոչ էդվ. Մայերի հետ, որը պրինցիպատն ըստ էության հանրապետություն է համարել և ոչ էլ Ռ. Պյոլմանի հետ, որը հակված է պրինցիպատը միապետություն համարելու։ Ժեբելյովը գտնում է, որ պրինցիպատը յուրատեսակ կոմպրոմիս է այս երեք պետական ձևերի՝ դիարխիայի, հանրապետության և միապետության միջև[98]։

[98] С. А. Жебелёв, Римская империя, Пград., 1923, стр. 48.

Եթե ըստ Ժեբելյովի Մոմզենը ֆորմալ, իրավաբանական տեսակետից է մոտեցել հարցին և իրականում երկիշխանության չկար, քանի որ սենատի իրավասությունը նույնիսկ մոտավորապես էլ հավասար չէր պրինցեպսի իրավասությանը, էլ ի՞նչ կոմպրոմիս կարող էր լինել գոյություն չունեցող պետական ձևի հետ։ Ճիշտ չէ նաև հանրապետության և միապետության միջև հավասարության նշան դնելը։ Սենեկայի դիպուկ բնորոշմամբ՝ պրինցիպատը «միապետություն էր հանրապետության զգեստով»։ Այդ նոր կարգը (ձևով հանրապետական, էությամբ՝ միապետական) միակ ելքն էր, որին հանդեց ստրկատիրական արիստոկրատիան՝ ճնշելու համար ստրուկների և աշխատավորական զանգվածների ապստամբությունները Իտալիայում և պրովինցիաներում և ժամանակավորապես փրկելու ստրկատիրական Հռոմը։

Խոսելով պրինցիպատի պատմական արմատների մասին, Ժեբելյովն ընդգծում է, որ այդ նոր ձևը նախապատրաստվել էր գլխավորապես Հռոմի արտաքին քաղաքականությամբ՝ սկսած Պունիկյան 2-րդ պատերազմից և ներքին ճգնաժամով։ Սակայն, ներքին ճգնաժամի մասին խոսելիս հեղինակը անորոշ ձևով միայն ակնարկում էր հեղափոխական դեմոկրատական հոսանքների մասին[99]։ Ոչ մի խոսք ստրուկների դասակարգային պայքարի մասին, լեգեոնների հեղափոխական ընդվզումների մասին, որոնց մեջ էր այդ դարաշրջանում ելք որոնում ժողովրդի սոցիալական բողոքը։ Ժեբելյովը լռությամբ է անցնում նաև պրովինցիաներում աշխատավորների ազատագրական պայքարի վրայով։

Ժեբելյովը Օգոստոսի դարաշրջանը կայսրության «բախտավոր ժամանակաշրջանն» է համարում[100]։ Այս որակումը մի փոքր տարօրինակ է հնչում Ժեբելյովի մոտ, որը այդքան բազմազան աղբյուրներից քննադատորեն է քաղել իր պատմական նյութերը։ Նա այս խնդրում գեղազարդել է իրականությունը և թեպետ ինքը հանձնարարում է խուսափել դոգմատիկ դրույթներից, բայց այս հարցում կորցնում է իր ո-

[99] С. А. Жебелёв, Римская империя, Пград., 1923, стр. 48—49.

[100] Տե՛ս նույն տեղում, էջ 49։

քի տակի պատմական իրականության հողը։ Այս կապակցությամբ հասկանալի է դառնում նրա վրդովմունքը «լատինական փոքրիկ Ակվինում քաղաքից սերված» Յուվենալիսի դեմ, որը «հանդգնել է» Տակիտոսի կողմից լուսավոր նրանգներով պատկերված Ներվայի և Տրայանոսի ժամանակաշրջանը թերագնահատել։ Տակիտոսի համաձայն Ներվայի և Տրայանոսի ժամանակ հռոմեական կյանքում տեղի էր ունեցել քաղաքական և բարոյական «վերելք»,—ըստ Ժեբելյովի՝ Յուվենալիսը չի նկատում այդ «վերածնությունը», այլ նկարագրում է ներկան բացառապես տխուր անցյալի օրինակների հիման վրա»։ «...Յուվենալիսի համար, որը ծագել է լատինական Ակվինում փոքր քաղաքից և մոտիկից ծանոթ է միայն մանր պրովինցիական քաղաքի կյանքին, Հռոմը ներկայանում է որպես մի ինչ-որ Սոդոմ-Գոմոր...»։ «Չի կարելի նրա երկերի ամբողջ բովանդակությունն ընդունել որպես ճշմարտություն, այլ պետք է խիստ քննադատությամբ վերաբերվել դրանց»[101],— նշում է հեղինակը։ Նույնպիսի վերաբերմունք է ցուցաբերում հեղինակը դեպի Մարցիալիսի երկերը։ Ժեբելյովը պարզեցնում է կայսրության դարաշրջանի հռոմեական կյանքը և իր նախասիրած քննադատության մեթոդը չի կիրառում Տակիտոսի վկայությունների նկատմամբ։ Նա, անշուշտ, մոռացության է տվել, որ անտիկ պատմաբանները լինելով մեծ մասամբ սարկատիրական վերնախավի գաղափարախոսներ, անուշադրության են մատնել հռոմեական պլեբսի կյանքն ու պայքարը, և մենք սուկ կցկտուր տեղեկություններ ունենք այդ մասին։ Ժեբելյովը Անտոնինոսների դարաշրջանի կայսրության պատմության համար հիմք է ընդունում Տակիտոսի վկայությունները. սակայն անուշադրության է մատնել, որ Տակիտոսը արիստոկրատական տեսանկյունից է շարադրել իր երկերը և արքունիքի, կայսրների ու սենատի պատմությունը մեզ հրամցրել է որպես հռոմեական ժողովրդի պատմություն։ Մինչդեռ հռոմեական հասարակության գերակշռող մասը կազմում էր Իտալիայի և պրովինցիաների գյուղի և քաղաքի պլեբսը, որը սարկատիրության յուրահատուկ պայմաններում հողային արիստոկրատիայի և հեծյալների հարստահարությունների հետևանքով արագորեն քայքայվում էր։ Գյուղում դրա մի մասը վերածվում էր կոլոնների, իսկ մյուսը՝ պատահական վաստակ գտնելու հույսով ուղևորվում էր քաղաքները՝ միանալու լյումպեն-պրոլետարների ապազգայնացված զանգվածին։ Հռոմեական պլեբսի կյանքն ու պայքարը իրենց աղոտ արտացոլումն են գտել առաջին դարի (մ. թ.) բանաստեղծ-էպիգրաֆիստ Մարցիալիսի և երգիծաբան Յուվենալիսի երկասիրություններում։ Ուստի խիստ գնահատելի են նրանց երկերը, որոնց շնորհիվ մենք գոնե մոտավոր գաղափար ենք կազմում հռոմեական կայսրության հարյուր հազարավոր շարքային աշխատավորների շահագործման և կենցաղային ծանր պայմանների մասին։ Ինչ խոսք, Ժեբելյովը ըստ արժանվույն չի գնահատել նրանց երկերի պատմական նշանակությունը։

Ակադեմիկոս Ս. Ա. Ժեբելյովը իր բեղմնավոր գործունեությամբ կարողացել է գիտնականի անժխտելի արժանիքները զուգակցել սովետական քաղաքացու բարձր հատկանիշներին։ 1941 թ. Հայրենական պատերազմի ահավոր տարիներին Լենինգրադի պաշարման ժամանակ Ժեբելյովը մնաց քաղաքում և մինչև իր կյանքի վերջին օրը գլխավորեց Սովետական Միության Գիտությունների Ակադեմիայի քաղաքում մնացած հաստատությունները։

Անտիկ պատմության գծով սովետական պատմագրության մեջ իր ուրույն տեղն է գրավում Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր **Ալեքսանդր Վասիլևիչ Միշուլինը** *(1901—1948)*։ Նա իր դոկտորական դիսերտացիան նվիրեց յուրօրինակ հետաքրքրություն ներկայացնող մի թեմայի՝ «Անտիկ ժամանակաշրջանի Իսպանիայի պատմությանը»։ 40-ական թվականներին Միշուլինը ղեկավարել է ՍՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի հին պատմության բաժինը, 1938—1948 թթ. եղել է „Вестник древней истории“ հանդեսի խմբագիրը, 1946—1948 թթ.՝ Հասարակական գիտությունների ակադեմիայի նախագահը։ Նա միջնակարգ դպրոցի համար Հռոմի պատմությանը նվիրված առաջին սովետական դասագրքի հեղինակն է։ 1936 թվականին լույս տեսավ պրոֆեսոր Ա. Վ.

[101] С. А. Жебелёв, Римская империя, Пград, 1923, стр. 35.

Միշուլինի ընդարձակ մենագրությունը՝ «Սպարտակի ապստամբությունը», որտեղ հեղինակը առաջին անգամ պատմագրության մեջ՝ սկզբնաղբյուրների հիման վրա, ուսումնասիրել է ստրուկների հզոր շարժումը Հռոմում՝ Սպարտակի առաջնորդությամբ։ Միշուլինը հետազոտել է և ինքնուրույնաբար լուծել Սպարտակի ապստամբության հետ կապված մի շարք պրոբլեմներ, որ վերաբերում են ապստամբության ժամանակագրությանը, նրա ընթացքին և պարտության պատճառներին, ըստ որում նա Սպարտակի ապստամբությունը քննության է առնում Հռոմում ստրուկների այլ ապստամբությունների հետ սերտորեն առնչված։

Հին պատմության գծով իր բեղմնավոր գործունեությամբ աչքի է ընկել սովետական պատմաբան, պրոֆեսոր Վլադիմիր Սեռգեևիչ Սեռգեևը (1883—1941)։ 1934 թվականից մինչև իր կյանքի վերջը աշխատելով Մոսկվայի համալսարանում որպես հին պատմության ամբիոնի վարիչ, Սերգեևը միաժամանակ դասախոսել է այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում և աշխատել ՍՍՀՄ ակադեմիայի պատմության ինստիտուտում։ Նա հայտնի էր ոչ միայն որպես տաղանդավոր դասախոս, այլև որպես հին պատմության հմուտ մասնագետ, որն իր գիտական աշխատություններով, դասագրքերով և ձեռնարկներով նպաստել է անտիկ պատմության մարքս-լենինյան մշակմանը։ Առավել հռչակ ստացավ նրա «Հին Հռոմի պատմության ուրվագծերը» աշխատությունը, որը լույս տեսավ 1938 թվականին։ Գիրքը բաղկացած է երկու հատորից. առաջին հատորը կոչվում է Հանրապետություն, երկրորդը՝ Կայսրություն։ Աշխատությունը մարքսիստական մեթոդոլոգիայով գրված ռուսերեն առաջին գիտական ուսումնասիրությունն է, որը կենդանի և մատչելի լեզվով ընթերցող լայն հասարակայնությանը ծանոթացնում է Հին Հռոմի ամբողջ պատմությանը, ընդհուպ մինչև Արևմտյան Հռոմեական կայսրության անկումը։ Գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում Վ. Ս. Սերգեևի «Դիվանագիտության պատմության» 1-ին հատորի (1941 թ.) համար գրած բաժինը, որտեղ հեղինակը պարզում է հռոմեական նուրբ դիվա-

նագիտությունը և նշում, դիվանագիտության վճռական դերը Հռոմեական տերության ստեղծման գործում։

Մեծ է Հին աշխարհի, մասնավորապես Հռոմի պատմության ուսումնասիրության բնագավառում սովետական ականավոր պատմաբան Նիկոլայ Ալեքսանդրովիչ Մաշկինի (1900—1950) ներդրումը։ 1942 թվականից՝ Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, 1943 թվականից՝ նույն համալսարանում Հին աշխարհի պատմության ամբիոնի վարիչ՝ Ն. Ա. Մաշկինը կարողացել է դասախոսական աշխատանքը սերտորեն զուգակցել գիտահետազոտական ուսումնասիրություններին և երիտասարդ կադրեր աճեցնելու շնորհակալ աշխատանքին։ 1947 թ. Ն. Ա. Մաշկինը լույս ընծայեց «Հին Հռոմի պատմություն» դասագիրքը, որը վերահրատարակվել է բարեփոխություններով 1949 թ. և 1956 թ.։ Դասագիրքը թարգմանվել է մի շարք լեզուներով, այդ թվում նաև հայերեն։

1949 թ. լույս տեսավ Ն. Ա. Մաշկինի «Օգոստոսի պրինցիպատը» մենագրությունը, որը թարգմանվել է հունգարերեն, իտալերեն, գերմաներեն, և ռումիներեն։ Տաղանդավոր պատմաբանի այդ աշխատությունը ջերմ ընդունելություն գտավ մասնագետների և ընթերցող հասարակության կողմից։ 1950 թ. այն արժանացավ պետական մրցանակի։ Այդ աշխատության մեջ Մաշկինը սկզբնաղբյուրների մանրազնին քննական վերլուծության հիման վրա, մարքսիստական պատմահայեցողության լույսի տակ ցույց է տվել հանրապետությունից կայսրությանն անցնելու օրինաչափությունը։ Համոզիչ փաստարկումներով հեղինակն ապացուցել է, որ այդ կարևոր բեկումը Հին Հռոմի պատմության մեջ կատարվել է ո՛չ թե որպես մարդկային բնությանը հատուկ ընդհանուր թերությունների հետևանք, բարքերի անկման հետևանք (Սալլյուստիոս, Տակիտոս, Վելլեյոս Պատերկուլոս, Յուվենալիս, Ֆլորուս և այլն) և կամ, որպես հետևանք Օգոստոսի կամքի, այլ հանդիսացել է Հռոմեական ստրկատիրական հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման անխուսափելի հետևանք։ Առաջին անգամ պատմագրության մեջ Մաշկինը բացահայտում է պրինցիպատի գենեզիսը և նրա սոցիալական էությունը։ Կանգ առնելով հանրապետու-

թյան վերջում առաջացած սոցիալ-տնտեսական ճգնաժամի վրա, սարուկների և քնակչության ստորին խավերի մեջ ընդգրկված բազմահազար մասսաների անընդմեջ ընդվզումների վրա, հեղինակը ցույց է տվել, որ տնտեսական և սոցիալական ներքին սուր հակասությունները հանգեցրին քաղաքական ճգնաժամի և որ սարկատիրական կարգերը փրկելու ժամանակավոր ելքը սարկատիրական ռազմական դիկտատուրան էր, այսինքն՝ պրինցիպատը։ Իր օգտագործած բազմազան հարուստ նյութերի բազմակողմանի վերլուծությամբ, սրևմտաեվրոպական բուրժուական պատմաբանների հետ իր արդյունավետ համագործակցությամբ, գիտահետազոտական մտքի կուռ ընդհանրացումներով հեղինակը կարողացել է փայլուն կերպով լուծել հռոմեական պատմության բարդ ու կնճռոտ պրոբլեմը՝ Օգոստոսի պրինցիպատը։

Ն. Ա. Մաշկինի գրչին են պատկանում նաև հռոմեական պրովինցիաներին, նախ և առաջ՝ Աֆրիկա պրովինցիային նվիրված ուսումնասիրությունները։ Գիտական ուրույն հետազոտություն են ներկայացնում ագռնիստիկների, մեսսիանիզմի պրոբլեմներին նվիրված հոդվածները, հռոմեական քաղաքականության պատմությանը նվիրված ուսումնասիրությունը և Հին Հռոմի պատմությանը նվիրված ուրիշ գիտական հետազոտություններ։

Ա. Բ. ՌԱՆՈՎԻՉԸ *(1885—1948)* սովետական նշանավոր պատմաբան է, որ իր ուսումնասիրության առարկա է դարձրել անտիկ պատմության համեմատաբար քիչ հետազոտված հարցերը. օրինակ՝ «Հելլենիզմը և նրա պատմական դերը» *(1950 թ.)*[102], «Քրիստոնեության անտիկ քննադատները» *(1935 թ.)*։

Մարքսիստական գրականության մեջ առաջին անգամ Ռանովիչը թարգմանեց և մարքսիստորեն մեկնաբանեց վաղ քրիստոնեության կարևորագույն աղբյուրները, և լույս ընծայեց աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեցող իր աշխատությունը, որը կրում է «Վաղ քրիստոնեության պատմության սկզբնաղբյուրները»[103] խորագիրը։ Գիտական մեծ հետաքրքրություն և բարձր արժեք է ներկայացնում Ռանովիչի «Հռոմեական կայսրության արևելյան պրովինցիաները 1-ին—3-րդ դարերում» *(1949 թ.)* աշխատությունը։ Հիմնվելով նորահայտ արձանագրագիտական, հնագիտական և դրամագիտական նյութերի վրա, Ռանովիչը հետազոտում է Հռոմի արևելյան պրովինցիաներում կատարված փոփոխությունները, առանձնապես սոցիալ-տնտեսական կարգը, ազգարային հարաբերությունները և մշակույթը։ Իր բարձր գիտական արժանիքների համար աշխատությունն արժանացել է պետական մրցանակի։ Ռանովիչի գրչին է պատկանում նաև «Սոցիալական հեղափոխությունը Հրեաստանում 66—73 թթ.»[104] աշխատությունը։

Հռոմի պատմության նեղ մասնագիտական հարցերը, որ բավարար չափով չեն լուսաբանված պատմագրության մեջ, հատուկ ուսումնասիրության առարկա են դարձել սովետական պատմաբանների կողմից։ Այսպես՝ հանրապետության վերջի և կայսրության սկզբի դարաշրջանի իտալյան գյուղատնտեսության պատմությունը՝ կապված սարուկների շարժման հետևանքների հետ, ուսումնասիրել է Մ. Ե. Սերգեյենկոն։ Նույն հեղինակի ուսումնասիրությունը Հին Իտալիայի գյուղատնտեսության վերաբերյալ («Вестник древней истории» հանդեսում *1953, № 3*) նույնպես Հին Հռոմի պատմության քիչ ուսումնասիրված պրոբլեմներից է, ինչպես նաև «Պոմպեյը» աշխատությունը։

Կարևոր գիտական նշանակություն ունի հռոմեական լայնածավալ տերության կենտրոնում և պրովինցիաներում շահագործվող բնակչության ապստամբությունների պատմությունը, որը համարյա չի մշակվել բուրժուական պատմաբանների աշխատություններում։ Սովետական պատմաբանները *(Ն. Ա. Մաշկին, Ե. Ա. Շաֆերմաև, Ա. Դ. Դմիտրև և ուրիշ.)* կարողացել են ցույց տալ, որ տեղական բնակչության դիմադրությունը և պայքարը հռոմեական կեղեքման ու շահագործման դեմ չէր ընդհատվել նույնիսկ Անտոնինոսների

[102] *Տե՛ս սույն աշխատության 1-ին պրակի էջ 143—144։*

[103] А. Б. Ранович, Первоисточники раннего христианства, М., 1933.

[104] „Вестник древней истории“, М., 1937, № 1.

այսպես կոչված «բախտավոր» ժամանակաշրջանում։ Ս. Ի. Պրոտասովան ուսումնասիրել է Գրակքոսների ժամանակաշրջանի ազատագրական պայքարի գաղափարախոսությունը։ Մի շարք ուսումնասիրություններ են նվիրված Հռոմի և Բոսպորի թագավորության միջև եղած փոխհարաբերություններին. այդ հարցին են նվիրված Դ. Պ. Կալիստովի և Վ. Ֆ. Գայդուկևիչի աշխատությունները։ Վ. Ն. Դյակովը հատուկ ուսումնասիրություն է նվիրել Տավրիկյան շրջանում հռոմայեցիների հաստատման մասին։ Ա. Ի. Բոլտունովան իր հետազոտությունները նվիրել է հռոմեական դարաշրջանում կովկասյան և անդրկովկասյան շրջանների ուսումնասիրությանը։

Ս. Լ. Ութչենկոն անտիկ պատմագրության սովետական հեղինակավոր մասնագետներից է։ Նրա գիտական հետազոտության գլխավոր առարկան Հռոմի պատմության մեծ բեկման դարվազն է՝ հանրապետությունից կայսրությանը անցման դարաշրջանի պատմությունը։ Առանձնապես հիշատակելի է Ս. Լ. Ութչենկոյի «Հռոմեական հանրապետության ճգնաժամը և անկումը» աշխատությունը[105], որտեղ հեղինակը բազմակողմանիորեն վերլուծում է հռոմեական հասարակության սոցիալ-քաղաքական մեծ տեղաշարժերը հանրապետության մայրամուտին և կայսրության նախօրեին։ Առաջնորդվելով Կ. Մարքսի դրույթներով և հիմնվելով անտիկ աղբյուրների (Պլատոնի, Արիստոտելի, Ցիցերոնի (վկայությունների վրա, հեղինակը ուսումնասիրում է անտիկ պոլիսի պրոբլեմը, այն մեկնաբանելով որպես ոչ միայն քաղաքական վերնաշենք, ոչ միայն որպես քաղաք-պետություն, այլև որպես մարդկանց ընդհանրություն, որը ստեղծում է նյութական բարիքներ։ Ուստի պոլիս հասկացության, ինչպես նաև Հռոմեական պոլիսի ըմբռնման մեջ Ս. Լ. Ութչենկոյի ասելով պետք է նկատի ունենալ նրա նյութական հիմքը, նրա տնտեսական բազիսը, որի վրա ծագել է և հիմնված է այդ վերնաշենքը[106]։

Պատահական չէ, որ Ս. Լ. Ութչենկոն իր ուսումնասիրության մեջ բացառիկ տեղ է տալիս պոլիսին»։ «Պոլիսի» պրոբ-

[104] տե՛ս С. Л. Утченко, Кризис и падение Римской республики, М., 1965.

[106] Նույն տեղում, էջ 7։

լեմը վճռական նշանակություն ունի անտիկ սարկատիրական, հատկապես Հռոմեական հասարակության հիմնական օրինաչափությունները ճիշտ հասկանալու համար։ Դա բխում է նրանից, որ պոլիսը հանդիսանում էր անտիկ հասարակության տնտեսական, քաղաքական և գաղափարական կեցության ձևը՝ նրա զարգացման որոշ աստիճանում։ Կ. Մարքսը իր «Կապիտալիստական արտադրության նախորդող ձևերը» աշխատության մեջ բացառիկ տեղ է տալիս «պոլիսին» անտիկ հասարակության մեջ։ Մարքսն ասում է. «Կլասիկ հնության պատմությունը՝ դա քաղաքների պատմություն է, բայց հողային սեփականության և հողագործության վրա հիմնված քաղաքների պատմություն»[107]։ Ուրեմն Մարքսը ընդգծում է, որ պոլիսը միայն քաղաքական ձև չէ, այլ նաև տնտեսական։

Այս առնչությամբ Ութչենկոն շոշափում է նաև անտիկ սեփականության հարցը, հիմք ընդունելով Մարքսի հայտնի դրույթն այն մասին, թե «սեփականության անտիկ եղանակը՝ դա պետության ակտիվ քաղաքացիների համատեղ մասնավոր սեփականություն է»[108]։

Աշխատության մեջ ուրույն դիտական հետաքրքրություն է ներկայացնում հանրապետությունից կայսրությանը անցնելու պրոբլեմի լուսաբանումը։ Ս. Լ. Ութչենկոն նախ և առաջ համառոտակի կանգ է առնում «սոցիալական հեղափոխություն» հասկացության մեկնության վրա։ Հիմք ընդունելով Մարքսի դրույթը «սոցիալական հեղափոխությունների դարաշրջանի» մասին, նա գալիս է այն եզրակացության, որ նոր արտադրողական ուժերի և հին արտադրահարաբերությունների միջև եղած կոնֆլիկտը չի լուծվում մի ակտով, միանգամից, այլ մի շարք սոցիալական հեղաշրջումների հետևանքով, որոնք նախապատրաստում են այդ հեղափոխությունը։ Հեղինակը բերում է օրինակներ պատմության տարբեր շրջաններից։ «Մի շարք հեղափոխություններ իմպերիալիզմի դարաշրջանում թևակոտ լուծում էին բուրժուական հեղափոխության խնդիրները,— ասում է նա,— բայց որովհետև այդ հեղափոխություն-

[107] Կ. Մարքս, Կապիտալիստական արտադրությանը նախորդող ձևերը, Երևան, 1941, էջ 7։

[108] Նույն տեղում, էջ 7։

ներում որպես հեգեմոն դասակարգ հանդես էր գալիս արդեն ո՛չ թե բուրժուազիան, այլ պրոլետարիատը, դրանք նախապատրաստություններ էին սոցիալիստական հեղափոխության»[109]։

Անդրադառնալով 1-ին (մ. թ. ա.) դարի երկրորդ կեսին Հռոմում ծավալված քաղաքացիական պատերազմի և հանրապետությունից Կայսրության անցման պատմությանը, Ուտչենկոն գտնում է, որ սոցիալական հեղափոխություն հասկացությունը պետք է կիրառել ոչ թե այդ ժամանակաշրջանի քաղաքացիական պատերազմների վերաբերյալ, որոնց հետևանքով ստեղծվեց կայսրության քաղաքական ռեժիմը, այլ Հռոմեական հանրապետության ավելի վաղ իրադարձությունների նկատմամբ, այսինքն՝ սկսած Գրակքոսների շարժումից ընդհուպ մինչև դաշնակցային պատերազմը։ Իր ինքնատիպ ընդհանրացումը հեղինակն ավարտում է հետևյալ բառերով. «Դա հեղափոխություն էր ուղղված Հռոմ—պոլիսի դեմ, նրա (այսինքն՝ հին-հռոմեական) արիստոկրատիայի դեմ, խոշոր հողատիրության դեմ, կամ այլ խոսքով ասած՝ իտալյան գյուղացիության պայքարն էր հանուն հողի և քաղաքական իրավունքների[110]։ Ըստ որում՝ դաշնակիցների պատերազմը հեղինակը համարում է այդ հեղափոխության բարձրագույն փուլը, որը կործանիչ հարված հասցրեց Հռոմ-պոլիսին, խարխլելով պոլիսային սիստեմը։

Հեղինակը ինքնատիպ դատողություններ է անում նաև գյուղացիական—ագրարային շարժումների և ստրուկների ապստամբությունների հարաբերակցության հարցի վերաբերյալ։ Հայտնի է, որ սկսած Գրակքոսների շարժումից տեղի էին ունենում ստրուկների անընդմեջ ապստամբություններ, ընդհուպ մինչև «ստրկական պատերազմը» Սպարտակի առաջնորդությամբ։ Այդ առնչությամբ հեղինակը հակադրվելով «ստրուկների հեղափոխության» մասին նախկինում ընդունված դրույթին՝ առաջ է քաշում իր նոր տեսակետն այն մասին, թե սովետական պատմագրության մեջ գերագնահատվել է ստրուկների ինքնուրույն դերը հռոմեական ստրկատիրական հասարակության հեղափոխական պայքարում[111]։

Ուշչենկոն քննադատորեն է մոտենում սովետական գիտնականներից ոմանց (Ա. Վ. Միշուլինի, Ս. Ի. Կովալյովի) դրույթներին, թե իտալյան գյուղացիների ապստամբության մեջ ստրուկները եղել են հեղափոխության յուրատեսակ հեգեմոն դերում, իսկ գյուղացիները այդ պայքարում հանդես են եկել որպես ստորադրյալ հոսանք։ Ուշչենկոն նշում է, որ ստրկատիրական հասարակության պայմաններում ստրուկների և ազատ գյուղացիների մեջ չէր կարող ոչ մի դաշինք կայանալ, այնքան մեծ էր անդունդը նրանց միջև, միաժամանակ հեղինակը ընդգծում է, որ այնուամենայնիվ «ոչ մի կերպ չի կարելի նսեմացնել ստրուկների դասակարգային պայքարի պատմական նշանակությունը»[112]։

Ուրույն հետաքրքրություն է ներկայացնում այն բնորոշումը, որ հեղինակը տալիս է Կեսարի և Օգոստոսի վարչակարգերին։ Նշելով, որ Կեսարի քաղաքական գործունեության լիակատար գնահատականը հնարավոր է Օգոստոսի սահմանած պետական կարգի համեմատության միջոցով միայն, ընդգծում է, որ Կեսարի ստեղծած վարչակարգը առանձին, երբեմն շատ տաղանդավոր միջոցառումների հանրագումար էր, բայց բնավ ո՛չ սիստեմ և նույնիսկ՝ ոչ ռեժիմ։ Մինչդեռ Օգոստոսի ռեժիմը բացահայտ պետական սիստեմ էր, որը համընդհանուր պաշտոնական ճանաչում գտավ բոլորի կողմից։ Նրանց վարչակարգերը ծնունդ են ո՛չ թե վերոհիշյալ պատմական խոշոր անհատների գործունեության, այլ որոշ կոնկրետ պատմական իրադրության և սոցիալ-քաղաքական պայքարի։ Վերհանելով Օգոստոսի վարչակարգի՝ պրինցիպատի սոցիալ-քաղաքական հիմքերը՝ կայսրության բյուրոկրատական ապարատը, բանակը, սենատորական խավը, Ուշչենկոն ընդգծում է, որ այդ վարչակարգի ներքին բովանդակությունը չէր համապատասխանում նրա անվանը, որ պրինցիպատը պատմության հայտնի քաղաքական երկերեսանիության վրա հիմ-

[109] С. Л. Утченко, Кризис и падение Римской республики, М., 1965, стр. 26.

[110] Նույն տեղում, էջ 29։

[111] Նույն տեղում, էջ 30։

[112] Նույն տեղում, էջ 31։

նրված վարչակարգի առաջին օրինակն էր։ «Դա պետական սիստեմ էր, որը միանգամայն գիտակցորեն և ցինիկաբար պաշտոնական պրոպագանդայի կողմից ներկայացված էր ոչ այնպիսին, որպիսին այն հանդիսանում էր իրականում»[113]։

Ս. Լ. Ուտչենկոն վերջերս լույս ընծայեց «Հին Հռոմ. դեպքեր, մարդիկ, գաղափարներ» խորագրով[114] մի աշխատություն, նվիրված 1-ին դարի (մ. թ. ա.) հռոմեական հասարակության հետաքրքրական իրադարձությունների լուսաբանմանը, առավել նշանավոր գործիչների բնութագրմանը և այդ դարաշրջանին յուրահատուկ գաղափարների և ուսմունքների մեկնաբանմանը։ Հեղինակի նպատակն է ցույց տալ հանրապետության անկման և կայսրության առաջացման դարաշրջանի սոցիալական, քաղաքական և մշակութային մթնոլորտը[115]։

Սովետական նորագույն պատմական գրականությունը 60-ական թվականներին հարստացավ ևս մի նշանավոր աշխատությամբ՝ Ս. Գ. Բոկշչանինի «Պարթևաստանը և Հռոմը» ծավալուն մենագրությամբ[116]։ Դա սովետական անտիկ պատմագրության մեջ առաջին փորձն է՝ մարքս-լենինյան մեթոդոլոգիայի հիման վրա ուսումնասիրելու անտիկ դարաշրջանի երկու հզոր մրցակիցների՝ Պարթևաստանի և Հռոմեական տերության փոխհարաբերությունների հարցը, կամ՝ ինչպես երբեմն ասում են, «Հին աշխարհի արևելյան հարցը»։ Ս. Գ. Բոկշչանինը իր առջև դրված բարդ խնդիրը փորձում է լուծել միջերկրածովյան աշխարհի և Առաջավոր Ասիայի պետությունների միջազգային կյանքում գոյություն ունեցող քաղաքական հավասարակշռության պատմական ֆոնի վրա։ Բոկշչանինը հնացած է համարում այն դրույթը, թե վերոհիշյալ պետությունները ապրել են մեկուսացված և փակ քաղաքական զարգացման պրոցես։ Ժամանակակից գիտության տվյալների և մանավանդ Մերձավոր Արևելքում և Միջին Ասիայում հնագիտական պեղումների հետևանքով կատարված մեծ հայտնագործությունների տվյալների հիման վրա հեղինակը ցույց է տալիս, որ մ. թ. ա. 1-ին հազարամյակի երկրորդ կեսին Միջերկրածովյան առանձին երկրների միջև ստեղծվում են տնտեսական կապեր, ստեղծվում են առանձին կայուն քաղաքական «բլոկներ», որի հետևանքով ըստ Բոկշչանինի՝ առաջանում է քաղաքական հավասարակշռության սիստեմ։

Գրքի առաջին մասում հեղինակը ծանոթացնում է Պարթևաստանի և պարթևա-հռոմեական հարաբերությունների պատմության աղբյուրներին։ Բոկշչանինը բացի անտիկ բազմաթիվ աղբյուրներից, օգտվել է նաև ասորական ժամանակագրություններից, հայոց պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից», արաբական, պարսկական և այլ աղբյուրներից։ Ի տարբերություն պատմագրության մեջ իշխող տրադիցիոն տեսակետին, ըստ որի պարթևա-հռոմեական հարաբերությունների ուսումնասիրության մեջ ելակետը և հետազոտման գլխավոր առարկան Հռոմն է, Հռոմի պատմությունը,—Բոկշչանինը Պարթևաստանի և Հռոմի պատմական զարգացումը, նրանց փոխհարաբերությունները ուսումնասիրել է զուգահեռաբար, սինխրոնիկ մեթոդով, որը ավելի մատչելի է դարձնում պատմական բարդ նյութերը և հեշտացնում դրանց յուրացումը։

Հեղինակը ընդգծում է Արևելքում հույն-մակեդոնական նվաճումների նաև բացասական կողմերը։ Ասիական ցեղերի ազատագրական պայքարը այդ նվաճումների դեմ հեղինակի կողմից դիտվում է որպես առաջադիմական երևույթ Առաջավոր Ասիայի հասարակական հարաբերությունների զարգացման գործում[117]։

[113] Նույն տեղում, էջ 268։

[114] С. Л. Утченко, Древний Рим, События, люди, идеи, М. 1969.

[115] Նույն տեղում, էջ 4։

[116] А. Г. Бокшанин, Парфия и Рим, ч. I, Москва, 1960, ч. II, 1966.

[117] Ակադ. Ս. Տ. Երեմյանը Ասիայի ժողովուրդների՝ հունա-մակեդոնական նվաճողների դեմ մղած պայքարը առաջադիմական է համարել Ա. Գ. Բոկշչանինի գործը լույս տեսնելուց մեկ տասնամյակ առաջ։ (Տե՛ս նրա „Опыт периодизации“ հոդվածը „Вопросы истории“ հանդեսի 1951 թ. № 7-ում)։

Աշխատության առաջին մասում հեղինակը շարադրում է նաև Արևելքի ժողովուրդների ազատագրական պայքարը, սարուկների նորանոր ապստամբությունները, փոքր-ասիական բնակչության ստորին խավերի հուզումները, որոնք վերածվեցին մեծ ապստամբության Արիստոնիկոսի առաջնորդությամբ (130—129 թթ. մ. թ. ա.), ինչպես նաև Անտիոքոս 7-րդի ծանր պարտությունը Պարթևաստանի թագավոր Հրահատ երկրորդից և մահը,—այս բոլորը հանգեցրին Փոքր Ասիայում և Սիրիայում հելլենիստական սիստեմի փլուզման։ Հեղինակը այնուհետև ներկայացնում է Հռոմեական հանրապետությունը որպես հելլենիստական ստրկատերերի տիրող վերնախավի միակ հենարանը, որը հաճախ հանդես էր եկել հունական ստրկատերերի դասակարգային շահերի պաշտպանության դերում՝ սարուկների և ազատ չքավորության շարժումները ճնշելիս։ Իսկ Պարթևաստանը, ընդհակառակն, այդ ժամանակ հանդես է գալիս որպես արևելյան Միջերկրածովյան երկրների բոլոր հակահռոմեական տարրերի կենտրոն[118]։ Այդ հիման վրա էլ հետագայում խախտվում է քաղաքական հավասարակշռությունը Միջերկրածովյան ավազանում և Մերձավոր Արևելքում նախապատրաստվում է երկու մեծ տերությունների՝ Պարթևաստանի և Հռոմի բախումը։

Աշխատության 2-րդ մասում հեղինակը զուգահեռաբար պատմում է Պարթևաստանի և Հռոմի հզորացման և քաղաքական ազդեցության շրջանների ընդլայնման, նրանց հարաբերությունների մեջ սուր ճգնաժամի, Միհրդատ 6-րդ Եվպատորի և Տիգրան 2-րդի կողմից Սելևկյանների և Հռոմի դեմ մղած կռիվների մասին։ Հակառակ Հուստինիանոսի պարզ վկայության, թե Տիգրան 2-րդի կողմից Ասորիքի, Պաղեստինի, Փյունիկեի և մանավանդ Անտիոքի գրավման ժամանակ բնակչության հելլենացված մասը ձգտում էր հպատակվել որևէ հելլենացված թագավորի և այդ ճանապարհով խուսափել հռոմեական նվաճողների ներխուժման հետ կապված սարսափներից[119], հեղինակը պնդում է, թե Տիգրան Մեծի կողմից

[118] Նույն տեղում, էջ 249—250։

[119] А. Г. Бокщанин, Парфия и Рим, ч. II, М., 1966, стр. 31.

նվաճված երկրների բնակիչները «չէին կարող չատել իրենց ստրկացնողին և նրա ժողովրդին, որոնք սպասում էին հարմար առիթի, որպեսզի սկսեն ապստամբությունը»։ Անհասկանալի է նաև Բոկշչանինի ոչ անաչառ վերաբերմունքը դեպի Տիգրան Մեծը, նրա ներքին և արտաքին քաղաքականությունը։ Արևմտաեվրոպական մի քանի պատմաբանների նման հեղինակն էլ Տիգրանին և նրա պատմությունը ներկայացնում է որպես հավելուկ Միհրդատ 6-ի պատմության և ոչ թե հզոր հելլենացված պետության հմուտ տիրակալի, որի հետ հաշվի էր նստում Հռոմը։

Պարթևաստանի և Հռոմի պայքարը հանուն հեգեմոնիայի Արևմտյան Միջերկրածովյան ավազանում (1-ին դարի երկրորդ կեսին մ. թ. ա., աշխատության հանգուցային հատվածն է։ Հեղինակը համոզիչ ընդհանրացումով է սկսում քաղաքական իրադարձություններով հարուստ այս հատվածը. «Քանի դեռ ստրկատերերի երկու խմբերի՝ Հռոմի և Պարթևաստանի միջև գտնվում էին Միհրդատ 6-րդ Պոնտացու և Հայոց Տիգրան 2-րդի ժամանակավորապես հզորացած թագավորությունները, Պարթևաստանը և Հռոմը ընդհանուր սահմաններ ունեին, բայց 60-ական թվականների վերջում այդ հզոր կառավարողներից մեկի կործանումից հետո (64 թ. մ. թ. ա.) և Փնեյոս Պոմպեոսի միջոցով երկրորդի լիակատար պարտությունից հետո (65 թ. մ. թ. ա.) արևելյան Միջերկրածովյան ավազանում քաղաքական իրադրությունը արմատապես փոխվեց»[120]։

Ասորիքի նվաճումով հռոմայեցիները դարձան Սելևկյանների քաղաքական հաջորդները և Հայաստանը դարձնելով իրենց ռազմական հենակետը, շոշափուկներ տարածեցին դեպի Արևելք։ Տիգրանի անձնատուր լինելուց հետո պարթևները դարձան Հռոմի միակ հզոր հակառակորդը և իրենց շուրջը համախմբեցին Հռոմից դժգոհ բոլոր տարրերին։ Ռազմական բախումն անխուսափելի էր։ Խոսելով Կրասոսի արևելյան արշավանքի մասին, Բոկշչանինը կանգ է առնում ոչ միայն արշավանքի ռազմական կողմի վրա, այլև հռոմեական հասա-

[120] Նույն տեղում, էջ 30։

րակության տարբեր խավերի վերաբերմունքի՝ այդ արշավանքի նկատմամբ (54—53 թթ. մ. թ. ա.)։ Ուշադրավ է հեղինակի բազմակողմանի վերլուծությունը, որ նա տալիս է Կրասոսի ռազմական արշավանքին, «Կրասոսի ռազմական բախտախնդրությունը մտավախություն և դժգոհություն էր առաջացրել ո՛չ միայն արիստոկրատիայի շրջանում, այլև հռոմեական հասարակության լայն շերտերի մեջ. ո՛չ միայն նոբիլիտետում, այլև պլեբսի շրջանում»։ Հեղինակը ցույց է տալիս ո՛չ միայն Կրասոսի բանակի պարտության պատճառները, այլև պարտության ռազմա-քաղաքական և հոգեբանական հետևանքները։ «Կրասոսի պարտությունը ունեցավ խոշոր ռազմա-քաղաքական և հոգեբանական հետևանքներ»,—ասում է Բոկշչանինը։ Հռոմեական զորքերի անպարտելիության լուսապսակը արևելյան Միջերկրածովյան երկրների բնակչության աչքերում վճռականորեն խամրեց... Կրասոսի արշավանքի ազետալի վախճանից հետո բնակչության բոլոր օպոզիցիոն խմբակցությունների մեջ հույս ծագեց տապալելու ատելի սոցիալական կարգերը»[121]։

Բոկշչանինը նշում է, որ քաղաքացիական պատերազմը Իտալիայում 49—48 թթ. (մ. թ. ա.) սասանեց Հռոմի քաղաքական դիրքերը Արևելքում։ Նույն ժամանակաշրջանում նախանձելի չէր նաև Պարթևաստանի ներքին խառը վիճակը։ Ա-հա թե ինչու երկու ախոյանները սկսած 50 թ. վերջերից և հետագա տարիներին դադարեցրին ակտիվ ռազմական գործողությունները, առանց որևէ համաձայնության կնքելու։

Օգտագործելով Հովսեպոս Փլավիոսի, Ապպիանոսի, Ստրաբոնի, Ցիցերոնի տվյալները՝ հեղինակը ցույց է տալիս Կեսարի մահից հետո Արևելքում ռազմական և դիվանագիտական պայքարի դրվագները և նշում է, որ այդ պայքարը հանգեց քաղաքական triumvirատի սիստեմի վերջնական ամրապնդմանը։

Նույնպիսի բարեխղճությամբ և աղբյուրներից օգտվելու նույն քննական մեթոդով Բոկշչանինը շարադրել է Մարկոս Անտոնիոսի պարթևական արշավանքը, որը քիչ է լուսաբանված սովետական պատմական գրականության մեջ։

[121] Նույն տեղում, էջ 59։

Ա. Գ. Բոկշչանինը «Պարթևաստանը և Հռոմը» աշխատության մեջ խոսում է նաև պարթևական պետության սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման մասին (1—3-րդ գլ., մ. թ.)։ Հեղինակը ցույց է տալիս հողագործության, արհեստների և առևտրի զարգացումը Արշակունիների հարստության ժամանակաշրջանում։ Առանձնապես նա կանգ է առնում տնտեսապես զարգացած մարզերի՝ Միջագետքի, Մարաստանի և արևմտյան շրջանների վրա, ցույց է տալիս թագավորական հողերի մշակումը համայնքներում մրավորված հողագործների և հողին ամրացված ստրուկների միջոցով։ Ուշադրավ է հեղինակի կողմից նշված ստրուկների շահագործման յուրահատուկ եղանակը Միջագետքում։ Խոսելով քաղաքներում արհեստների, առևտրի, վաշխառության զարգացման, Պարթևաստանի վրայով դեպի Հայաստան, Չինաստան տանող միջազգային քարավանային ճանապարհների, այդ թվում նաև «մետաքսի ճանապարհի» մասին, Բոկշչանինը հանրագումարի է բերում Պարթևական տերության տնտեսական կյանքի տվյալները և գալիս է այն եզրակացության, որ Պարթևաստանը տնտեսական տեսակետից ոչ միայն չէր զիջում Միջերկրածովյան երկրներին, այլև տնտեսավարության հզորացման տեսակետից նույնիսկ առաջ էր անցել Միջերկրածովյան ավելի առաջավոր երկրներից։

Աշխատության երկրորդ բաժնում որոշակի տեղ է հատկացված Հայաստանի համար մղված Պարթևա-Հռոմեական պայքարին։ Հիմնվելով Հովսեպոս Փլավիոսի, Սվետոնիոսի, Դիոն Կասիոսի և Մովսես Խորենացու վկայությունների վրա, Բոկշչանինը ցույց է տալիս, որ Հռանդեայի 63 թ. պայմանագրի կնքումից հետո խաղաղությունը երկարատև չեղավ և Պարթևա-Հռոմեական ընդհարման առաջին լուրջ պատրվակը հանդիսացավ Վրրկանա (Կասպից) ծովի ափերով հռոմեական զորքերի առաջխաղացման փորձը։ Այդ խիստ դժվար արշավանքի նպատակն էր Հռոմեական տերության հակողության տակ դնել նշանավոր «մետաքսի ճանապարհի» երկու ճյուղերից մեկը, որը անցնում էր Կասպից (Վրկանա) ծովի ափերով և միացնում էր հարավ-արևմտյան Ասիայի և Միջերկրածովյան ավազանի երկրները չինական Խան դինաստիայի

կայսրության հետ։ Հռոմեական արշավանքում հռոմեական բանակի ավանգարդային մասը 12-րդ լեգիոնն էր։ Արդյոք հաջողվե՞ց հռոմեական բանակին ամբանալ ռազմա-առևտրական այդ կարևոր հենակետում,—այդ մասին լռում են անտիկ աղբյուրները բացի Սվետոնիոսից, որը հաղորդում է սարմատների կողմից 12-րդ լեգիոնի ոչնչացման մասին։ Միայն Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ պատմում է Ֆլավիոս Դոմիտիանոսի օրոք հռոմեական զորքերի Հայաստանի վրա կատարած անհաջող արշավանքի մասին։ Բոկշչանինը նշում է, որ հայագետ Լ. Ս. Խաչիկյանը կռահում է, որ վերջերս Բեյուկ-դաշում հայտնաբերված արձանագրությունը վերաբերում է այդ իրադարձությանը և վստահություն է ներշնչում պատմահայր Մովսես Խորենացու հաղորդման մասին[122]։ Հավանաբար, այդ դեպքերի մասին է հիշատակում Սվետոնիոսը։ Վերոհիշյալ արշավանքը դեպի Վրկանա ծովի ափերը, որ տեղի ունեցավ Դոմիտիանոսի կառավարման վերջին տարիներին, խիստ սրեց պարթևա-հռոմեական հարաբերությունները։ Եվ Տրայանոսի օրոք (98—117 թթ). հռոմեական պետությունը օգտվելով Պարթևաստանում ծավալված երկպառակություններից և գահակալական կռիվներից, արևելյան մեծ ռազմական արշավանք կազմակերպեց Պարթևաստանի դեմ Տրայանոս կայսեր ղեկավարությամբ։ Հեղինակը լինելով ռազմական գործի գիտակ, մեծ հմտությամբ նկարագրում է Տրայանոսի նախապատրաստական ռազմական աշխատանքները և մանրամասնությամբ շարադրում է հռոմայեցիների արևելյան արշավանքը և նոր պրովինցիաների (Հայաստան, Ասորեստան, Միջագետք) ստեղծումը Արևելքում[123]։ Բոկշչանինը կենդանի և վառ նկարագրում է Տրայանոսի նվաճումների դեմ Արևելքում ծագած ժողովրդական հուժկու հակահռոմեական պայքարը, որը գլխավորեց պարթև Արշակունիների պետությունը։ Ջուր անցավ Տրայանոսի փորձը՝ կիրառելու հռոմեական նախասիրած «բաժանիր և տիրիր» քաղաքականությունը։ Տրայանոսը հարկադրված էր նահանջի հրաման տալ, և 117 թ. գարնանը, հռոմեացիներին աստիճանաբար

[122] А. Г. Бокщанин, Парфия и Рим, ч. II, МГУ, 1966, стр. 222.
[123] Տե՛ս նույն տեղում, էջ 239—243։

մաքրեցին Միջագետքը։ Տրայանոսի հռչակավոր արևելյան արշավանքը, որը կորզեց նյութական վիթխարի միջոցներ և մարդկային մեծ զոհեր, աղետալի վախճան ունեցավ։

Բոկշչանինին հաջողվում է կոնկրետ նյութերի հիման վրա պարզ ու համոզիչ շարադրել հռոմեական կայսրության իրերի ծանր վիճակը և հիշյա մեկնաբանել Ադրիանոսի քաղաքական վարքագիծն Արևելքում, նա պարթևներին զիջեց իր նախորդի նվաճումները։ Դրանով ժամանակավորապես վերականգնվեց քաղաքական հավասարակշռությունն Արևելքում մինչև 2-րդ դարի վերջը (մ. թ.)։ Հեղինակին հաջողվում է դրսևորել սոցիալական բախումների կապը արտաքին քաղաքականության հետ։ Այդ կապը Բոկշչանինը ցայտուն կերպով բացահայտում է հրեական ապստամբությունների օրինակով, որոնք հարկադրեցին Ադրիանոսին հրաժարվել հռոմեական նվաճումների մեծ մասից Արևելքում։

Բոկշչանինը քննադատորեն է մոտենում 19—20-րդ դարերի պատմաբանների հայացքներին, որոնք թերագնահատում են հրեական ապստամբությունների նշանակությունը և գալիս է այն եզրակացության, որ հրեական ապստամբությունները՝ թե՛ Պաղեստինում և թե՛ սփյուռքում (դիասպորա) ունեցել են պատմական մեծ նշանակություն։

Գրքի 2-րդ բաժնում խոսվում է նաև պարթևա-հռոմեական հարաբերությունների մասին 2-րդ դարում և 3-րդ դարի սկզբին, երբ Արշակունիների միապետությունը տեղի է տալիս Սասանյանների հարստության։ Հեղինակը հատուկ ուշադրություն է նվիրում Հրեաստանի սոցիալ-քաղաքական իրադարձություններին, առանձնապես՝ Բար-Կոխբայի ապստամբությանը (132—135 թթ.)։ Թեպետ նշում է, որ աղբյուրների ներկա վիճակը հնարավորություն չի տալիս սպառիչ կերպով նկարագրելու և վերլուծելու հրեական ապստամբությունը, սակայն հիմնվելով Թալմուդի տվյալների, Դիոն Կասիոսի ու Եվսեբիոսի վկայությունների վրա, հեղինակը ցույց է տալիս ապստամբության մեծ թափը, լայն ծավալը Հրեաստանում նույնիսկ հեռավոր պրովինցիաներում։

Վերջին ռազմական բախումը Պարթևաստանի և Հռոմի միջև տեղի ունեցավ 198 թ.։ Ջնայած Սեպտիմիոս Սևերոսի

փայլուն հաղթանակին, մինչև իսկ Տիբղոնի գրավմանը ու կողոպտմանը,—Ս. Սեվերոսը նկատի ունենալով ստեղծված բարդ պայմանները, հրեական նոր ապստամբությունը, նվաճված ժողովուրդների բուռն ատելությունը և հաճախակի հուզումները, նպատակահարմար գտավ հաշտության պայմանադիր կնքել Պարթևաստանի հետ, ըստ որի՝ Հյուսիսային Միջագետքն անցավ Հռոմին, երկու պետությունների միջև սահման հանդիսացավ Եփրատը, իսկ Պարթևաստանը փոխհատուցման կարգով ստացավ Հայաստանի արևելյան մասը։ Այսպես ավարտվեց վերջին ռազմական բախումը Պարթևաստանի և Հռոմի միջև. ոչ մեկը վճռական հաջողություն չունեցավ, թեպետ երկուսն էլ ունեցան ծանր նյութական և մարդկային կորուստներ։

Գիտական լուրջ արժեք են ներկայացնում աշխատության եզրափակիչ մասում հեղինակի ընդհանրացումները։ Համեմատելով Սասանյանների իրանական տերության և Հռոմեական կայսրության սոցիալ-տնտեսական հարաբերությունները, հեղինակը նշում է, որ Սասանյանների տերության արտաքուստ հնացած հասարակական ձևերի շրջանակներում աստիճանաբար առաջանում էին իր ժամանակի համար պրոգրեսիվ, ճորտատիրական-ֆեոդալական հարաբերություններ,—դրան հակառակ՝ Հռոմեական ստրկատիրական կայսրության մեջ տնտեսական և սոցիալական հակասությունների սրման հետևանքով ստեղծվում էր փակուղի հասարակական որևէ զարգացման համար[124]։

Ուշագրավ է Ա. Գ. Բոկշչանինի գիտական ընդհանրացումը Հռոմեական տերության պատմական դերի մասին։ Քննադատության ենթարկելով հնացած դրույթն այն մասին, թե համաշխարհային տնտեսական և սոցիալ-պատմական զարգացման կենտրոնը եղել է միայն Միջերկրածովյան ավազանը, հեղինակը հիմնվելով սովետական և Արևմուտքի պրոգրեսիվ պատմաբանների և հնագետների նվաճումների վրա, խնդիր է դնում միանգամայն իրավահավասար եզանակով

[124] **А. Г. Бокщанин,** Парфия и Рим, ч. II, стр. 297.

քննության առնել պատմական զարգացման ընթացքը թե՛ Միջերկրածովյան երկրներում և թե՛ առաջավոր Արևելքում։

Հռոմը կլանելով Միջերկրականի ավազանում եղած բոլոր ստրկատիրական պետությունները, երկակի դեր է խաղացել։ Հռոմեական նվաճումը արևմուտքում եվրոպայի և հյուսիսային Աֆրիկայի տոհմա-ցեղային կացութաձևի պայմաններում ապրող ժողովուրդներին բերեց ավելի զարգացած հասարակական հարաբերություններ, նպաստելով նրանց սոցիալ-տնտեսական զարգացմանը,—իսկ արևելքում հռոմեական նվաճումները երկար ժամանակով խափանեցին հելլենիզմի դարաշրջանում ձևավորված ստրկատիրական հարաբերությունների զարգացումը։ Ուստի Հռոմն արևելյան Միջերկրածովյան երկրներում խիստ պահպանողական դեր է խաղացել, կասեցնելով պատմական զարգացման պրոցեսը։

Ա. Գ. Բոկշչանինի ինքնատիպ մենագրությունը ոչ միայն առաջին սովետական աշխատությունն է՝ նվիրված պարթևա-հռոմեական հարաբերություններին, այլև մարքսիստական մեթոդոլոգիայի հիման վրա գրված՝ գիտական բարձրարժեք գործ է, որն իր մի շարք կարևոր պրոբլեմներով, հետևողական քննադատական-հետազոտական եղանակով և ինքնատիպ արժեքավոր դրույթներով հարստացնում է սովետական պատմագրությունը։

* * *

Ներկայումս հիմք կա ասելու, որ արևմտաեվրոպական պատմագրության մեջ հանդես են գալիս պրոգրեսիվ հոսանքներ։ Մի շարք գիտնականներ Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և այլ երկրներում ձգտում են թոթափել բուրժուական պատմագրության արատները՝ անտիկ պատմության արդիականացումը, ռասայական մարդատյաց թեորիան, դերբննադատությունը, ցիկլայնությունը և լուսաբանել անտիկ պատմությունը մարքսիստական ուսմունքի տեսանկյունից։ Թեպետ նրանց աշխատությունների ոչ բոլոր դրույթներն են ընդունելի, բայց էական նշանակություն ունի պատմաբաննե-

ըի որոշակի փորձը՝ կանգնելու մարքսիստական պատմահայեցողության դիրքերի վրա։

Առանձնապես հիշատակելի է ժողովրդական դեմոկրատիայի երկրներում հին աշխարհի պատմության բնագավառում կատարած նշանակալի աշխատանքը։ Մեծ աշխատանք է ծավալվում նրանց կողմից հռոմեական դարաշրջանում Բալկանյան և Դանուբյան երկրների պատմության, ինչպես նաև բուն Հռոմի պատմության գծով, օրինակ՝ Քր. Դանովը (Բուլղարիա) իր ուսումնասիրության առարկան է դարձրել Թրակիայի էկոնոմիկան հռոմեական դարաշրջանում, Յո. Պեչիրկան (Չեխոսլովակիա) զբաղվում է անտիկ սոցկատիրության պրոբլեմներով։ Զ. Մադին (Հունգարիա) հետազոտում է Մերձպոնտոսյան կելտերի հարցը։ Բ. Գերովը (Բուլղարիա) զբաղվում է Օգոստոսի կայսրության ժամանակաշրջանում հռոմեական բանակում սորուկների ընդգրկման հարցով։ Մարոտին (Հունգարիա) ուսումնասիրում է սորուկների շարժումները երկրորդ եռապետության դարաշրջանում։ Փ. Պեդլը (ԳԴՀ) հետազոտում է նոբիլիտետի և պլեբսի միջև տեղի ունեցող պայքարը ըստ Սալլյուստիոսի «Պատմություններ» աշխատության։ Ի. Խանը (Հունգարիա ուսումնասիրում է Ապպիանոսի տեսությունը Հռոմեական հասարակության ներքին պայքարի մասին։ Յա. Խարմատուն հետազոտում է Պոսիդոնիոսի պատմության փիլիսոփայությունը և հռոմեական սոցկատիրական հասարակության ճգնաժամը[125]։

Վերոհիշյալ գիտնականների ուսումնասիրությունները մեծ մասամբ կատարվում են մարքսիստական պատմահայեցողության դիրքերից և շոշափելի ներդրում են հռոմեական պատմության ուսումնասիրման բնագավառում։

Սովետական պատմագրության մեջ խիստ նշանակալի է ակադեմիկոս Հ. Հ. Մանանդյանի (1873—1952) ներդրումը։ Մանանդյանի բեղմնավոր գրչին են պատկանում հին և միջնադարյան Հայաստանի քաղաքական, տնտեսական և սոցիալական պատմության, քաղաքների և առևտրի, պատմական աշխարհագրության, սակավ ուսումնասիրված հարցերը։ Եվ որ կարևոր է նշել, Մանանդյանի ուսումնասիրությունները դուրս են գալիս հայ ժողովրդի պատմության շրջանակներից, առընչվելով անտիկ, մասնավորապես Հռոմի պատմությանը։

Հ. Մանանդյանը իր գիտահետազոտական աշխատանքն սկսել է դեռևս 20-րդ դարի սկզբին՝ նախասովետական շրջանում, բայց ավագ սերնդի շատ հայագետ-պատմաբանների նման միայն Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո նա կարողացավ երևան բերել իր փայլուն գիտահետազոտական տաղանդը հայագիտության բնագավառում։ Լիովին տիրապետելով հունա-հռոմեական աղբյուրներին և դրանցից օգտվելու քննական-հետազոտական մեթոդին, ինչպես նաև անտիկ, Արևելքի և Անդրկովկասի ժողովուրդների պատմությանը, Մանանդյանը իր բազմաթիվ աշխատություններում ուսումնասիրել է սակավ լուսաբանված շատ հարցեր։ 1943 թ. լույս տեսավ նրա «Հին Հայաստանի պատմության համառոտ տեսությունը» ռուսերեն, որտեղ սկզբնաղբյուրների հիման վրա համառոտ ձևով շարադրված է հայ ժողովրդի պատմությունը՝ սկսած հին ժամանակներից մինչև 16-րդ դարը՝ անտիկ և Արևելքի ժողովուրդների պատմության առնչությամբ։

1940 թ. լույս տեսավ ակադեմիկոս Հ. Մանանդյանի «Տիգրան երկրորդը և Հռոմը» մենագրությունը, որը խիստ կարևոր ներդրում է սովետական պատմագրության մեջ։ Հեղինակը իր առջև խնդիր է դրել «նոր քննության ու վերագնահատման ենթարկելու բոլոր կարևորագույն սկզբնաղբյուրները»[126], «...պարզելու ու լուսաբանելու համար Տիգրան Բ-ի ու նրա դարաշրջանի պատմությունը ավելի հշգրիտ ու ավելի հիմնավոր կերպով, քան այդ արված է նախկին աշխատություններում»[127]։ «Հիմնվելով պատմական աղբյուրների քննադատական վերլուծության վրա՝ Մանանդյանը բազմակողմանիորեն քննության է առել այն հարաբերությունները, որ ստեղծվել էին Հայաստանում և նրա հարևան մարզերում 1 դ. (մ. թ. ա.),—ասում է սովետական պատմաբան, պրոֆեսոր Ն. Ա.

[125] Նյութերը վերցված են 1964 թ. ապրիլի 9—14-ը Լենինգրադում կայացված միջազգային կոնֆերանսից, որը նվիրված էր անտիկ պատմության պրոբլեմներին։

[126] Հ. Մանանդյան, Տիգրան երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 8։

[127] Նույն տեղում, էջ 9։

Մաշկինը,— և ուսումնասիրել է Հայաստանի բարձրացման և հռոմեական իմպերիալիզմի դեմ նրա մղած պայքարի պատմությունը»[128]։ Չեզոք, անաչառ աղբյուրների տվյալների հիման վրա Մանանդյանը հերքում է պատմագրության մեջ մինչև 20-րդ դարի 40-ական թվականները գերիշխող Թ. Մոմզենի, Ֆեռերոյի և Ռեյնաքի տեսությունն այն մասին, թե Արևելքի նվաճումը Հռոմի կողմից իբրև թե բարերար ազդեցություն է գործել այդ երկրների տնտեսական կյանքի վրա։ Հռոմի ներթափանցումը Արևելք վերոհիշյալ պատմաբանների կողմից մեկնաբանվել է որպես հունա-հռոմեական մշակույթի տարածման կարևորագույն միջոց։

Մանանդյանը իրեն հատուկ աղբյուրների խորազնին վերլուծությամբ, տարբեր վկայությունների համեմատությամբ և չեզոք աղբյուրների օգնությամբ հանգում է այն եզրակացության, որ «Լուկուլլոսը իր հետ բերեց ավերածություններ, թալան, կողոպուտ, տնտեսական ու կուլտուրական հետադիմություն, անհաշիվ հարստությունների և անթիվ ստրուկների փոխադրում Արևելքից Արևմուտք[129]։

Ակադ. Մանանդյանը բացահայտում է հռոմեական տերության նենգ ու խարդախ քաղաքականությունն Արևելքում, «անշահասեր բարեկամի» դիմակի տակ Փոքրասիական հելլենիստական պետությունների՝ այդ թվում նաև Պոնտոսի և Հայաստանի դեմ գործադրած խարդավանքները։ Նա նշում է, որ արևմտաեվրոպական գիտնականների՝ Մոմզենի, Ռեյնաքի և Ֆեռերոյի երկերում Տիգրան Երկրորդի պատմությունը քննարկված է իբրև մի միջադեպ ու հավելուկ Հռոմի կամ Պոնտոսի պատմության։ Այդ բացատրվում է նրանով, որ վերոհիշյալ պատմաբաններն անվերապահորեն օգտվել են հռոմեական ներբողական գրականությունից, որը լռության էր մատնում Հռոմին աննպաստ փաստերը։ Մանանդյանը այդ առթիվ վկայակոչում է հրեական «Հռչակավոր մատենագիր Հովսեպոս Փլաբիոսին, որն իր «Հրեական պատերազմի» պատմության առաջաբանում ընդգծել է, որ նույնիսկ հռոմեական ականատես հեղինակները մեծ չափով աղավաղել են փաստերը, պատ-

[128] Ն. Ա. Մաշկին, Հին Հռոմի պատմություն, Երևան, 1951 թ., էջ 103։

[129] Հ. Մանանդյան, Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 15։

մական հշմարտությունը, կամ ներբողներ են գրել՝ ի հաճույս Հռոմի և չարախոսություններ՝ նրա թշնամիների մասին։

Մանանդյանը նշում է, որ Տիգրան-Միհրդատյան դարաշրջանում կար նաև հակահռոմեական պատմագրություն։ Սարաբոնը, Պլուտարքոսը և այլ հին աղբյուրներ հիշատակում են Տիգրան Երկրորդի մասին Հռոմեատյաց Մետրոդորոս Սկեպսացու ընդարձակ պատմությունը, որը համարվել է փայլուն և տաղանդավոր աշխատություն։ Հիշատակվում են նաև Հերակլիդեսի, Տևկրոսի, Ապոլլոնիդեսի, Դիոփանեսի և ուրիշ աշխատությունները, որոնք եթե պահպանված լինեին, Տիգրան—Միհրդատյան դարաշրջանի պատմությունն, անշուշտ, բոլորովին այլ լուսաբանություն կստանար։

Մանանդյանը սկզբնաղբյուրների համեմատական վերլուծության միջոցով առաջին անգամ պատմագրության մեջ հաղթիչ կերպով ապացուցել է, որ «Հանրապետական Հռոմի դորավարների ավազակային կողոպտման ու շահագործման նպատակով մղված պատերազմներն ուղղված էին ոչ թե բարբարոս միացյալ Արևելքի, այլ երկու կիրթ ու առաջադեմ միապետների դեմ, որոնք թե իրենց երկրներում և թե ամբողջ Մերձավոր Արևելքում աշխատում էին զարկ տալ հելլենիստական քաղաքային կենցաղի ու մշակույթի, առևտրի ու արդյունաբերության նոր բարգավաճման ու բուռն զարգացման»[130]։

Հ. Մանանդյանի հռոմեական հանրապետության արևելյան կործանիչ պատերազմներից տված նոր մեկնաբանումը դիտական նոր հայտնագործում էր, ուղղված բուրժուական պատմագիտության մեջ գերիշխող ռեակցիոն կոնցեպցիայի դեմ։ Մանանդյանը իր մենագրության մեջ Տիգրան Երկրորդի պատմությունը դիտել է ոչ թե իբրև հավելուկ Պոնտոսի պատմության, այլ որպես հայոց պատմության բաղկացուցիչ մասը։

Արդի սովետահայ պատմաբանների ավագ և կրտսեր սերունդը իր հայագիտական աշխատություններում ղեկավարվել է հետևողականորեն հռոմեական պատմության պրոբլեմներին։

Ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը «Հայ ժողովրդի պատմու-

[130] Հ. Մանանդյան, Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 11։

թյան» բազմահատորյակի առաջին հատորում սկզբնաղբյուրների հիման վրա լուսաբանել է հայ-հռոմեական հարաբերությունները առաջին և երկրորդ դարերում[131]։ Նույն հատորում Ս. Երեմյանն ուսումնասիրել է հայ-հռոմեական պատմության համար ուրույն գիտական հետաքրքրություն ներկայացնող «Հայաստանը ըստ Պլինիոս Ավագի և Պտղոմեոսի» պրոբլեմը»։ Հեղինակը կազմել է համապատասխան քարտեզներ ըստ Սարաբոնի, Պլինիոսի և Պտղոմեոսի[132]։ Ս. Երեմյանի գրչին է պատկանում «ԽՍՀՄ 3-րդ—9-րդ դդ. պատմության ուրվագծերում» հայ-հռոմեական հարաբերություններին նվիրված բաժինը, որտեղ Հայաստանը ներկայացված է հռոմեա-պարթևական հակամարտության ոլորտում[133]։ Վաստակաշատ գիտնականը հատուկ ուսումնասիրություն է նվիրել նաև Հին Հայաստանի քաղաքների և քաղաքային կյանքի զարգացմանը հռոմեական դարաշրջանում[134]։ Ավագ սերնդի հայագետներից շնորհակալ աշխատանք է կատարել Հ. Ժամկոչյանը։ Նրա գրչին են պատկանում մի շարք մասնագիտական աշխատություններ, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի հրատարակչությամբ լույս տեսած «Հայ ժողովրդի պատմության» Ա հատորը[135]։

Հունա-հռոմեական և հայ աղբյուրների հիման վրա գրված այդ աշխատությունը վաղուց դուրս է եկել դասագրքի շրջանակներից և ջերմ ընդունելություն է գտել ուսանողության և ընթերցասեր հասարակայնության կողմից։

Երիտասարդ հայագետներից հայ-հռոմեական հարաբերությունների պատմության գծով շնորհակալ աշխատանք է կատարում Գագիկ Խ. Սարգսյանը։ Սկզբնաղբյուրների հիման վրա ուսումնասիրելով Հին Հայաստանի քաղաքաշինությունը, հեղինակը լուսաբանել է Տիգրան Մեծի օրոք օտարերկրացիների ներգաղթի պրոբլեմը[136]։ Այդ առնչությամբ հեղինակը հետազոտում է Հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը, կապելով այն Հին Հայաստանի քաղաքային համայնքների պատմության հետ[137]։ Գ. Սարգսյանը իր ուսումնասիրության առարկան է դարձրել նաև անտիկ պատմության բարդ և քիչ հետազոտված բնագավառը՝ հելլենիզմը, մասնավորապես հայ-հռոմեական հարաբերությունները հելլենիզմի դարաշրջանում (մ. թ. ա.)[138]։

Գիտական ուրույն հետաքրքրություն է ներկայացնում Ա. Նահապետ Փերիխանյանի հետազոտման պրոբլեմը իր «Տաճարային միավորումը Փոքր Ասիայում և Հայաստանում» մենագրության մեջ։ Աշխատությունը լույս է տեսել Մոսկվայում 1959 թ.[139]։

Հայագիտական լուրջ արժեք է ներկայացնում Ս. Դրքասարյանի հոդվածը, որը կրում է «Տիգրան Երկրորդին վերաբերող մի կարևոր ուղղում» խորագիրը։ Հեղինակը կարողացել է Հովսեպպոս Ֆլավիոսի և Մովսես Խորենացու զուգահեռ վկայությունների հիման վրա հերքել Պլուտարքոսի կողմից աղավաղված Հին Հայաստանի պատմության կարևոր իրադարձություններից մեկը՝ Տիգրանակերտի գրավումը Լուկուլլոսի կողմից վերականգնելով իրերի ռեալ պատկերը[140]։

---

131 Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, բաժին 6, Հայաստանը հռոմեա-պարթևական հակամարտության ոլորտում։ Հայկ. ԳԱ, Երևան, 1971։

132 Նույն տեղում։

133 Очерки истории СССР III—IX вв., М., АН СССР, 1958.

134 **С. Т. Еремян,** Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, 1953, № 1.

135 Հ. Ժամկոչյան, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1965։

136 **Г. Саркисян,** Градостроительство при Тигране 2 и вопрос переселения чужестранцев, Известия АН Армянской ССР, Ереван, 1956.

137 **Г. Х. Саркисян,** Тигранакерт, из истории городских общин древней Армении, М., 1960.

138 Գ. Սարգսյան, Հայ-հռոմեական հարաբերությունները հելլենիստական դարաշրջանում (2—1 դդ.), Հայ ժողովրդի պատմության Հայկ. ԳԱ, բազմահատորյակ հ. 1, Երևան, բաժին V, 1971։

139 **А. Периханян,** Храмовое объеденение Малой Азии и Армении, М., 1959.

140 Ս. Դրբասարյան, Տիգրան Բ-ին վերաբերող մի կարևոր ուղղում, ՀՍՍՀ ԳԱ, Պատմա-բանասիրական հանդես, 1967, № 4։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններ

Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, *Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Երևան, 1968։*

К. Маркс и **Ф. Энгельс**, Немецкая идеология, М., 1956.

Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, *Հատընտիր նամակներ, երևան, հ. 1, 1936։*

Կ. Մարքս, *Կապիտալ, հ. 1, երևան, 1954։*

Կ. Մարքս, *Կապիտալիստական արտադրությանը նախորդող ձևերը, երևան, 1941։*

Կ. Մարքս, *Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, երևան, 1948։*

Ֆ. Էնգելս, *Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, երևան, 1953։*

Ֆ. Էնգելս, *Անտի-Դյուրինգ, երևան, 1952։*

Ֆ. Էնգելս, *Բնության դիալեկտիկա, երևան, 1936։*

Վ. Ի. Լենին, *երկեր, հ. 29, հրատ. 4, երևան, 1951։*

Ф. Энгельс, Бурно Бауэр и первоначальное христианство, **К. Маркс, Ф. Энгельс**, Соч., изд. 2-е, М., 1961.

Ф. Энгельс, К истории раннего христианства, К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 16, ч. 2, М.-Л., 1936.

К. Маркс, Ф. Энгельс, Соч., изд. 2-е, М., 1963, т. 30.

К. Маркс, Письмо в редакцию «Отечественных записок», **К. Маркс, Ф. Энгельс**, Соч., т. 15, М., 1933.

Ф. Энгельс, К истории древних германцев, К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 16, ч. I, М.-Л., 1937.

Աղբյուրներ, հունա-հռոմեական հղիճակներ

Аммиан Марцеллин, История, перев. Ю. Кулаковского и А. Сонни, выпуск 1—3, Киев, 1906—1908.

Аппиан, Гражданские войны, Л., 1935.

Аппиан, Римская история, перев. С. П. Кондратьева, «Вестник древней истории», 1939, № 2; 1946, № 4. Приложение.

Веллей Патеркул, Римская история, I, см. «Древние германцы», Сборник документов.

Дион Кассий, Речь Мецената (в приложении к книге: Черноусов Е. А., Очерки истории Римской империи), Харьков, 1911.

Иосиф Флавий, Иудейская война, перев. Я. Четке, СПб, 1900.

Ливий Тит, История народа римского (Сочинение Тита Ливия Падуанского), перевод А. Клеванова, М., 1876.

Полибий, Всеобщая история, т. 1—2, перев. Ф. Мищенко, М., 1895.

Плутарх, Сравнительные жизнеописания, издание подготовил С. П. Маркиш, в 3-х томах, М., 1961—1963.

Саллюстий Крисп Гай, Заговор Катилины; Югуртинская война, перевод Н. Б. Гольденвейзера, М., 1916.

Светоний Гай Транквилл, Жизнь двенадцати цезарей, перевод с греческого под ред. С. А. Жебелёва и О. О. Крюгера.

Страбон, **География**, в семнадцати книгах, перевод Ф. Мищенко, М., 1964.

Тацит, Корнелий, Летопись, перев. А. Кронеберга, ч. I — II, СПб., 1850.

Тацит Корнелий, Соч., перев. В. И. Модестова, СПб., 1886.

Цезарь Гай Юлий, Записки Юлия Цезаря и его продолжателей; О Галльской войне, О гражданской войне, Об Александрийской войне, об Африканской войне, перев. и комментарии М. М. Покровского, изд. 2-ое, М., 1962.

Цицерон, Марк Туллий, а) Речи в двух томах, б) Письма, т. I; Издание подготовили В. Д. Гореншгейн и М. Е. Грабарь-Пассек, М., 1962.

Ювенал, Сатиры, М.-Л., 1937.

Марциал Валерий, Избранные эпиграммы, М., 1937.

Տեղեկատու հրատարակություններ

Большая советская энциклопедия, изд. 2-е, М., систематически с 1949 по 1958 гг., Статьи по истории древнего Рима.

Историческая энциклопедия, М., 1961—1968 гг.

Реальный словарь классических древностей по Любкеру, СПб., 1835

Պարբերականներ

«Вестник древней истории», 1937, № 1; 1938—1940, № 1—4; 1941, № 1 и систематически с 1946 г.

«Журнал министерства народного просвещения», 1884—1917.

Ուսումնասիրություններ

Всемирная история, т. I, М., 1955, т. II, М., 1956.

Жебелёв С. А., Древний Рим, ч. 1—2, Пгрд, 1922—1923.

Нетушил И. В., Обзор Римской империи, изд. 1-е, Харьков, 1912.

Низе Б., Очерк римской истории и источниковедения, СПб., 1910.

Эдуард Гиббон, История упадка и разрушения Римской империи, М., 1883—1886.
Грановский Т. Н., Римская империя при первых императорах, т. I, М., 1892.
Виппер Р. Ю., Очерки истории Римской империи, М., 1908.
Ферреро Г., Величие и падение Рима, перев. А. А. Захарова, I—V, М., 1915—1923.
М. И. Ростовцев, Рождение Римской империи, Птгр., 1918.
О. В. Кудрявцев, Источники К. Тацита и Диона Кассия по истории похода Корбулона в Армению, ВДИ, 1954, № 2.
О. В. Кудрявцев, Восточная политика Римской империи, ВДИ, 1948, № 2.
Теодор Моммзен, История Рима, М., т. I, 1936; т. V, 1949.
Фюстель де Куланж, Гражданская община античного мира, М., 1867; Древняя гражданская община, 1903.
Э. Мейер, Экономическое развитие древнего мира, Л., 1923.
Э. Мейер, Рабство в древности, Птгр., 1923.
Р. Пельман, История античного социализма и коммунизма, СПб., 1910.
Л. Фридлендер, Картины из бытовой истории Рима, т. I, СПб., 1914.
М. Драгоманов, Император Тиберий, «Варш, универс. изв.», 1864, 1—2.
М. Драгоманов, Вопрос о всемирно-историческом значении Римской империи и Тацит, ч. I, Киев, 1869.
С. И. Ковалев, История античного общества, Л., 1936.
В. С. Сергеев, Очерки по истории древнего Рима, М., 1938.
В. С. Сергеев, Принципат Тиберия, ВДИ, 1940, № 2.
Я. А. Манандян, Цель и направление подготовлявшегося Нероном кавказского похода, ВДИ, 1943, № 3.
Я. А. Манандян, Круговой путь Помпея в Закавказье, ВДИ, 1939, № 4.
Я. А. Манандян, Маршруты Понтийского похода Помпея и путь отступления Митридата в Колхиду, ВДИ, 1940, № 3—4.
Я. А. Манандян, Тигран второй и Рим, в новом освещении по первоисточникам, Ереван, 1943.
Հ. Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան, հ. Ա.—1945, հ. Բ. 1957, հ. Գ. 1952։*
Հ. Հ. Մանանդյան, *Տիգրան Բ-ը և Հռոմը, Երևան, 1940։*
Н. А. Машкин, История древнего Рима, М., 1956.
Н. А. Машкин, Принципат Августа, М.-Л., 1949.
Н. А. Машкин, Движение агонистиков, «Историк-марксист», 1935, № 1.
А. В. Мишулин, Спартаковское восстание, М., 1936.

А. В. Мишулин, Спартак, М., 1947.
С. И. Протасова, Борьба общественных идеалов в Риме в эпоху Гракхов, М., 1923.
А. Д. Дмитрев, Буколы, ВДИ, 1946, № 4.
Л. Б. Ранович, Первоисточники раннего христианства, М., 1933.
Л. Б. Ранович, Восточные провинции Римской империи, М.-Л., 1949.
Л. Г. Бокщанин, Парфия и Рим, ч. I, М., 1960.
Л. Г. Бокщанин, Парфия и Рим, ч. II, М., 1966.
С. Л. Утченко, Кризис и падение Римской республики, М., 1965.
С. Л. Утченко, Древний Рим, События, люди, идеи, М., 1969.
С. Т. Еремян, Очерки истории СССР, III—IX вв., М., АН СССР, 1958.
С. Т. Еремян, Развитие городов и городской жизни в древней Армении, 1935, № 1.
Ս. Տ. Երեմյան, *Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, բաժին 6, Հայկական ԳՄ, Երևան, 1971։*
Ս. Տ. Երեմյան, *Հայաստանը ըստ Մարաբոնի, Պլինիոս Ավագի և Պտղոմեոսի։ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Հայկական ԳՄ, Երևան, 1971 թ.։*
С. Т. Еремян, Опыт периодизации истории Армении эпохи феодализма, «вопросы истории», 1951, № 7.
Հ. Ժամկոչյան, *Հայ ժողովրդի պատմություն, հ. Ա, 1963։*
Г. Х. Саркисян, Тигранакерт. Из истории городских общин древней Армении, М., 1960.
Г. Х. Саркисян, Градостроительство при Тигране II и вопрос переселения чужестранцев, Известия АН Арм. ССР, Ереван, 1956.
Խ. Ե. Սարգսյան, *Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակի հ. 1, բաժին V, Հայ-հռոմեական հարաբերությունները հելլենիստական դարաշրջանում (2—1 դդ.), Հայկ. ԳԱ Երևան, 1971 թ.։*
А. Периханян, Храмовое объединение Малой Азии и Армении, М., 1959.
Ս. Գրիգորյան, *Տիգրան Բ-ին վերաբերող մի կարևոր ուղղում, Հայկ. ԳՄ, Պատմաբանասիրական հանդես, 1967, № 4։*
Մ. Գարագաշյան, *Քննական պատմության հայոց, մասն Ա. Բ., Թիֆլիս 1895*
Հ. Աճառյան, *Վերաբերություններ ընդմիջ Հայաստանի և Հռոմա 190-ին ս. ք. մինչև 428 հ. ք., Վենետիկ, 1912։*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ագաթանգեղոս *225*
Ագրիկոլա *75, 76, 82*
Ագրիպպա *87, 89, 134*
Ադրիանոս *69, 104, 107, 115, 132, 168, 257*
Ալեքսանդր Մակեդոնացի *120, 132*
Ալեքսանդր Սևերոս *132*
Ամիանոս Մարկելինոս *3, 27, 135—150, 153—155, 233*
Ամֆիկրատես Աբեճացի *93*
Անաստասիոս, *կայսր*, *157*
Անահխմանդր *149*
Անտիոքոս *23, 33, 252*
Անտոնիոս Մ. *94, 189, 125, 128, 129, 143, 232, 254*
Ապպիանոս *33, 42, 112—119, 121—132, 167, 202, 213, 220, 226, 230, 231, 236, 254, 260*
Ապոլոնիդես *92, 263*
Ապրի Մ. *73*
Ապուլեոս 180
Ասինիոս Պոլլիոն *118*
Աստուրյան Հ. *227—234*
Ավիդիոս Կասիոս *189*
Ավրելիոս Մարկոս *57, 179*
Աորիանոս Ֆ. *132*
Արիստոնիկ *227, 252*
Արիստոտել *20, 22, 236, 246*
Արշակ Բ *151—153, 233*
Արտաշես Բ *93*
Արտավազդ Բ *93, 94, 232, 234*
Արտապատ *131*
Աստիկոս Տ. Պ. *35, 36*

Բար-Կոխբա *168, 257*
Բաուեր Բ. *25, 68*
Բիսմարկ *188*
Բյուխեր Կ. *191*
Բոլտունովա Ա. Ի. *246*
Բոկշչանին Ա. Գ. *250—253, 255, 258, 259*
Բոկխոս *54*
Բոֆոր Լ. *158, 161, 193*
Բրուտոս *35, 64, 121, 126, 127, 129, 130*

Գաժե Ժ. *208, 209, 210*
Գալլոս Ազինիոս *88*
Գայդուկովիչ Վ. Ֆ. *246*
Գայոս Գրակխոս *198, 200*
Գարագաշյան Ա. *224—227*
Գերով Բ. *260*
Գերմանիկոս *66*
Գերցեն *212*
Գիբբոն Ե. *166—173*
Գիեմպսալ *55*
Գլոտց Գ. *205*
Գնեոս Նևիոս *7, 8*
Գնեոս Ֆլավիոս *133*
Գրանովսկի Տ. Ն. *211, 212*
Գրեյաշարյան *265*
Գուաշմիդտ *230*
Գևորգ, *եպիսկոպոս*, *142*

Դանով Ք. *260*
Դեմոսթենես *59*
Դեսսաու *230*
Դիդոնա *8*
Դիդորոս Սիցիլիացի *9, 142, 230*
Դիոն Կասիոս *42, 132—135, 167, 206, 213, 229, 255, 257*
Դիոն Խրիսոստոմոս *(Ոսկեբերան) 101, 102*
Դիոնիսոս Հալիկառնասցի *9, 13, 167, 176*
Դիոկլետիանոս *179, 186, 237*
Դիոփանտես *92, 263*
Դմիտրիև Ա. Դ. *245*
Դյակով Վ. Ն. *246*
Դոլաբելա Կ. *26*
Դոմիցիանոս *74, 75, 82, 104, 107, 171, 256,*
Դրակոնիոս *142*

Եղիշե *225*
Եվսեբիոս Կեսարացի *257*
Եվտրոպիոս *60, 226*
Երեմյան Ս. Տ. *251, 263, 264*

Զենկ Օտտո *204*
Զենոն *57*
Զոնարաս *133*

Էնգելս Ֆ. *68, 77, 79, 82, 95, 108, 113, 114, 177, 219*
Էննես *8, 60, 133, 179*
Էննիոս Ք. *8*
Էպիկտետ *57*

Թեոդոս *233*
Թեոդոսիոս *183*
Թիերրի Ա. *178—181*
Թուկիդիդես *15—17, 22, 27, 60, 133*

Ժամկոչյան Հ. *264*
Ժերելյով *236—238, 241*

Իսիդոր, *բուրմ*, *189*

Լենին Վ. Ի. *77, 217*
Լեոնտաս *137*
Լեպիդաս *42*
Լիվիոս Անդրոնիկոս *179*
Լիվիոս Տիտոս *16, 59—65, 67, 118, 133, 165, 174, 176, 180, 229*
Լուկան *180, 181*
Լուկրեցիոս Կարոս *180*
Լուկուլլոս *45, 92, 93, 96, 123, 195, 197, 202, 207, 229, 262*
Լուցիոս Հեմինա *11*
Լուցիոս Կալպ. Պիզոն *11*

Խան Ի. *260*
Խաչիկյան Լ. Ս. *256*
Խարմատու Յա. *260*

Կագուլլոս *180*
Կալիգուլա *78, 90, 105, 107, 169*
Կանդակա *186*
Կալիստով Դ. Պ. *246*
Կամիլիոս *61*
Կատոն Ավագ *10, 11, 12, 14*
Կատոն Կրտսեր *49*
Կասիոս *64, 121, 126, 127, 129 130,*
Կարակալա *132, 179*
Կատիլինա *26, 34, 40, 42, 46, 48, 50, 52*
Կարկոպինո *208*
Կեսար Գայոս Հուլիոս *22—31, 38, 40, 41, 48, 49, 55, 104, 118—121, 128, 130, 131, 147, 178, 183, 186, 187, 200, 209, 212, 221, 223*
Կլավդիոս Հուլիոս *78, 87, 108*
Կլավդիոս Քվադրիգարիոս *13*
Կլոդիոս Պ. *36*
Կլուենցոս Ավլոս *34*
Կլուվերֆ *157*
Կվինկցիոս *34*
Կոմմոդոս *132, 171*
Կոստանդին *141, 179*
Կոստանդիոս *138, 144, 150, 151, 233*
Կովալյով Ս. Ի. *235, 236, 249*
Կորբուլոն *87, 95—100, 105, 229, 230*
Կորիոլան *9*

Կառնելիոս Նեպոտ 229
Կրասոս Լ. 123, 124, 201
Կրասոս Մ. 92, 109, 226
Կրյուսոս 44
Կրոնեբերգ Ա. 64, 78
Կուլակովսկի Յու. 137
Կուրախիոս Տիտոս 85
Կուրցիոս 174

Համոնդ 207, 208
Հաննիբալ 18
Հերակլիդես 92, 263
Հերկուլես 84
Հերոդոտ 167
Հիրտիոս 23, 31
Հոմերոս 8, 160
Հովհաննես 147, 233
Հովսեպոս Փլարիոս 254, 262
Հռեմոս 7, 8
Հռեմուլոս 7, 9, 160
Հռոլիաննոս 136, 138—148, 150, 233
Հուստինոս 225, 230
Հուստինիանոս 252

Ղազար Փարպեցի 225, 230

Մակրոս Լիցինիոս 13, 43, 44
Մայեր Էդ. 191, 192, 238
Մանանդյան Հ. 92, 97, 151, 155, 260, 261, 263
Մանիլոս 52
Մաշկին Ն. Ա. 6, 160, 161, 187, 243, 244, 245, 262
Մարիոս Գայոս 24—26, 28, 32, 54, 58, 83, 119, 200, 219, 226
Մարկվարտ 230
Մարցիալիս 69, 180, 240, 241
Մարկս Կ. 25, 68, 77, 79, 95, 113, 160, 188, 190, 246, 247
Մաուերն Կուրիատ 74, 260
Մաուսուե 260
Մախմիմոս Քվինտոս 56
Մեզարատ, Հայ իշխան, 131
Մեկենաս 134
Մեմնոն 231
Մեսալլա Վ. 74
Մետելլոս Քվինտոս 54, 58
Մետրոդորոս 32, 263
Մերիվալ Չ. 178, 179, 181
Միլոն 39
Միհրդատ VI 36, 37, 42, 45, 46, 123, 220, 252, 253
Միշուլին Ա. Վ. 241, 242, 249
Միշչենկո Ֆ. 17
Միցիպսա 58
Մոլոն Ապոլլինոս 26, 33
Մոմզեն Թ. 16, 178, 182—190, 192, 207, 209, 213, 215, 238, 239, 262
Մոնտեսքյո Շ. 162—168
Մովսես Խորենացի 225, 230, 251, 255, 256
Մուզոնիան 137

Յուգուրթա 40, 53—54, 57
Յուվենալիս 69, 70, 240, 241, 243

Նապոլեոն I 178, 196, 197
Նապոլեոն II 174
Նապոլեոն III 178
Ներոն 79, 77, 78, 90, 95, 98, 99, 101, 105, 108, 110
Ներվա 70, 74, 78, 80, 107, 136, 240
Նիբուր Բ. 160, 173—177, 191, 193
Նիբուր Կ. 173, 191
Նիգեր 15, 35, 67
Նիչ Կ. 191, 192
Նևեդոմսկի Վ. 169

Շապուհ Բ. 144, 146, 147, 150, 152—154
Շլոսեր 113
Շտաերման Ե. Ա. 245

Ջերնիշևսկի Ն. Գ. 212

Պախ Է. 192—194, 206
Պատերկուլոս Վ. 64—67, 243
Պելիա Ք. Ա. 37
Պեչիրկա Յու. 260
Պետ Գ. 260
Պետուս 99, 100, 110
Պետրոնիոս 174
Պերցենիոս 84
Պիսդարիա 52
Պլատոն 141, 236, 246
Պլուտարքոս 25, 27, 33, 34, 42, 45, 92, 162, 202, 203, 226, 228—230, 263
Պիկոտոր Ֆուրիա 8, 9, 10
Պլինիոս Ավագ 69, 76, 87, 95, 96, 167, 264
Պլինիոս Կրտսեր 72, 73, 77, 102, 103, 104
Պլոտին 141
Պոլման Ռ. 192, 216, 239
Պոմպոնիոս 59
Պոլիբիոս 9, 14, 16, 18, 20—22, 59, 60, 116—118, 133, 199, 213, 214
Պոմպեոս Գնեոս 24, 25, 30, 33, 36, 37, 39, 42, 46, 96, 110, 111, 118, 119, 123, 126, 149, 207, 226, 253
Պոմպեոս Սեքստոս 68
Պոսիդոնիոս 57, 59, 260
Պոստում 179
Պոպոմեոս Կ. 264
Պրոբուս 179
Պրոկոպիոս Կեսարացի 167
Պրոսպեր 137
Պրոտասովա 246
Պուբլիոս Վալերիոս 122

Ռաեովիչ Ա. Բ. 244, 245
Ռենյամ 230, 262
Ռոբերտուս 191
Ռոստովցև Մ. Ի. 217—224
Ռոսցիաս, դերասան, 32
Ռոսցիոս Սեքստոս 32
Ռուտիլ Ֆարիոս 87
Ռուֆուս Ռոստիլիոս 54, 197
Ռուֆուս Կլավիոս 87, 96
Ռուլլոս Պ. Ս. 222

Սաբինիոս 39
Սալուստիոս Գ. Կ. 3, 38—43, 46—58, 63, 167, 180, 203, 225, 226, 229, 243, 260
Սալվիոլի 215
Սատուռնինոս 82
Սարգսյան Գ. 264, 265
Սերգեև Վ. Ս. 242
Սերգիենկո 245
Սեկունդոս 73
Սենեկա 57, 170, 180, 181, 235
Սերվիոս Տուլիոս 9, 13
Սեպտիցիոս Կլար 104
Սերտիոս Քվինտոս 33
Սեպտիմիոս Սևերոս 133, 179, 257, 258
Սիգոնիոս 157
Սիգենա Լուցիոս 54
Սկավրոս Էմիլիոս 54
Սոննի Ա. 137
Սպարտակ 33, 44, 51, 113, 122, 123, 124, 201, 222, 223, 226, 242, 248
Սահփաճյան Գ. 28
Ստրաբոն 59, 92, 167, 225, 230, 254, 263, 264
Սցիպիոն Աֆրիկացի 15, 18
Սցիպիոն Էմիլիանոս 10, 15, 198, 199
Սցիպիոն Մետելոս 7
Սցիպիոն Պաբլիոս Կ. 18, 19, 56
Սուլլա 13, 24, 25, 27, 33, 52, 54, 119, 129, 197, 221, 226

Վալենս 136
Վաղարշ I 95, 96, 99, 100
Վաղես 233
Վալերիոս Անտիաս 13
Վառոն 180
Վատրինիոս Գլաբրոս 122

Վարոս Քվինտիլոս 67
Վատինիոս Պուբլիոս 27
Վեռես 33
Վեսպասիանոս 31, 73, 74, 87, 109, 143
Վերգիլիոս 180
Վիպպեր 158—161, 182, 212—217
Վոլֆ Ֆ. 160

Տակիտոս 3, 16, 27, 55, 64, 67, 68, 70, 73, 76, 77, 79, 80—101, 105, 110, 112, 133, 135, 136, 137, 140, 167, 168, 179, 225, 229, 238, 240, 243
Տարվինիոս Պոոոզ 9
Տերենտիոս 154, 179
Տերտուլիանոս 180
Տիբերիոս Դրակոս 122, 124, 125, 130, 198
Տիբերիոս, կայսր, 37, 65, 66, 70, 71, 78, 87, 90, 93, 106, 107, 109, 110, 186, 206, 207
Տիգրան Բ 36, 37, 45, 46, 92, 93, 109, 202, 230, 231, 234, 252, 253, 261, 263
Տիգրան Գ 93
Տիլեմոն 157, 158, 166
Տիտոս, կայսր, 74, 143
Տրայանոս 69, 70, 74, 78, 101, 102, 107, 117, 138, 143, 149, 179, 240, 256, 257
Տրդատ 36, 101, 110, 152
Տևկրոս 92, 263

Յիցերոն 23, 28, 30, 31, 32, 34, 46, 50, 51, 53, 59, 104, 129, 174, 180, 221, 222, 254

Ուշենկո Ս. Լ. 246, 250
Ուրզիցինոս 135, 145

Փավստոս Բուզանդ 155, 225, 233
Փերխանյան Ա. 265
Փրոնտինոս 229

Քսիֆիլինոս 133
Քվինտոս, Յիցերոնի եղբայրը, 32, 35
Քվինտիլիանոս 31, 73, 180

Օգոստոս 24, 25, 39, 59, 60, 64, 71, 74, 78—80, 88, 93, 94, 106, 108, 115, 116, 125, 133—135, 172, 180, 183, 184, 186, 207, 209, 238, 244, 249, 260
Օկտավիանոս, տե՛ս Օգոստոս
Օլիմպիա 151
Օմո Լ. 206, 207
Օրեստիլլա Ավրելիա 51
Օրոզիոս 60

Ֆարմակուսա 26
Ֆեռերո Գ. 194—196, 198—203, 262
Ֆիլիպ 42, 43
Ֆլամինիոս 18, 220
Ֆլավիոս 225
Ֆլորուս 243
Ֆլոր 60
Ֆյուսեել դը Կուլանժ 189, 190
Ֆոյերբախ Լ. 114

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Արտրգետ Կ. 145
Ագաբանա 153
Արեեմ 33, 57, 234
Ալեքսանդրիա 30, 93, 109, 115, 142, 149, 169, 189, 234
Ալիա գ. 61
Ակադեմիա, պուրակ Աթենքում, 144
Ակցիում 131, 128
Ամիդ 145
Ամինաեռն 39
ԱՄՆ 217
Ամասեռդամ 164
Անթալպյան Գալլիա 27, 180
Անգլիա 163, 174, 175, 259
Անղալուզիա 186
Անդրալպյան Գալլիա 27
Անդրկովկաս 261
Անկիրա 213, 238
Անտիոք 135, 136, 145, 209, 231, 234
Ապենինյան թ-զի 5
Ապենիններ 61
Առաջավոր Ասիա 228, 251
Ասիա 36, 37, 74
Ասկալոն 149
Աստեռստան 149, 256
Աստիք 100, 232, 252
Ավստրիա 163
Արարիա 149
Արախոսիա 149
Արկադիա 15
Արպինի 32
Արսանիա (Արածանի) 100
Արտաշատ 92, 97, 98, 153, 229, 234
Արևմտյան Եվրոպա 178
Ամայա 216
Ամվիում 240
Աֆրիկա 23, 30, 32, 39, 53, 55, 103, 119, 132, 179, 180, 244, 259

Բազել 157
Բակարիա 186
Բեզարգեն 152
Բելգիա 29
Բեռլին 174, 182, 183, 190—192
Բերիա (Բելգրուի) 148
Բյուզանդիա 103, 167, 173, 234
Բյութանիա 102, 132, 149
Բոնն 175
Բոսպորյան պետություն 237, 246
Բոստրա 149
Բորդո 163
Բրեսլավ 182, 192
Բրիտանիա 27, 29, 55, 75, 76, 186
Բրունգիս 85, 123
Բրուտիում 123
Բուլղարիա 260

Գազա 149
Գալլիա 27—29, 31, 32, 55, 84, 85, 109, 120, 121, 136, 138, 143, 152, 170, 186, 195, 200
Գեդրոսիա 149
Գերազ 149
Գերմանիա 55, 66, 67, 75, 76, 99, 138, 163, 174, 175, 178, 182, 184, 185, 203, 227

Դամասկոս 9, 148, 231

Դանիա 174
Դանուբ 77
Դիոճարիում 30

Եգիպտոս 115, 119, 149, 188, 189
Եդեսիա 231, 234
Եվրոպա 163, 180, 195, 215, 259
Երուսաղեմ 149
Երևան 6, 97, 108, 160, 264
Եփրատ 100, 146, 231

Էգեյան ծով 26
Էմիսիա 148
Էտրուրիա 52, 61, 169

Թապսոս 39, 184
Թիֆլիս 224
Թրակիա 85, 260

Իլ 217
Իլիրիա 27, 30
Իլիրիկ 28
Ինգերամնա 72
Ինդոս 186
Իսավրիա 148
Իսպանիա 23, 33, 109, 119, 180, 241
Իտալիա 78, 28, 33, 41, 51, 59, 69, 72, 79, 81, 85, 101, 110, 125, 199, 132, 165, 172, 179, 182, 192, 193, 196, 201, 215, 216, 220, 221, 223, 236, 239, 245, 254, 259

Լայպցիգ 182, 192
Լենինգրադ, *տե՛ս* Պետերբուրգ
Լեյդեն 157
Լիբանան 148

Խառան 231
Խելիոկոմ 152

Ծովիմ 36, 100, 145

Կադ 227
Կալաբրիա 8
Կամպանիա 7, 65, 221
Կանդե 9, 15, 139
Կապադովկիա 36, 231
Կապուա 65
Կապրեե (*Կապրի կ-վի*) 109, 110
Կավդիում 129
Կարթագեն 6, 8, 10, 15, 16, 66, 117, 216
Կեսարիա 149
Կիլիկիա 148, 150
Կիտոռն 57
Կիրենա 208
Կիրենաիկա 115, 208
Կիև 137
Կվիրինալ 39
Կոմմագենե 148
Կոպենհագեն 173, 174
Կոստանդնուպոլիս 167, 227
Կորդուբ 152
Կորնթոս 133, 187, 216

Հալե 192
Հայաստան 3, 35, 36, 45, 90—101, 109, 111, 112, 132, 137, 144, 150, 154, 195, 228, 230, 232, 255, 256, 258, 260—262, 264, 265
Հարավային Ամերիկա 227
Հիերապոլիս 148
Հնդկաստան 149
Հոլլանդիա 163
Հոնիական ծով 120
Հռոդեա 100
Հռեոս 27, 77, 84, 144
Հոոդոս 26, 33
Հռոմ, 3—17, 21, 24, 29, 33, 37, 39, 40, 46, 47, 51—53, 56, 59, 61, 65, 66, 70, 73, 81, 85, 90—94, 98, 100, 105, 108, 110, 111, 113, 115—117, 119, 127, 129, 132, 133, 136, 137, 148, 151, 156, 157, 160, 162, 164, 166, 169, 170, 174, 176, 179, 181, 182, 184, 189—192, 195, 198, 201, 202, 204, 206, 211, 213, 215, 216, 219, 221—226, 231, 234, 237, 241—243, 245, 250, 255, 258, 260, 263
Հրեաստան 168, 231, 257
Հունաստան 5, 14, 16, 22, 33, 138, 156, 170, 175, 179, 186, 187, 192, 205, 235, 236
Հունգարիա 260

Մակեդոնիա 149, 216
Մարաշ 227
Մարաստան 152, 232, 255
Մեգալոպոլիս 15
Մեդիոլան, *տե՛ս* Միլան
Մելիտինե 100
Մեռածովր Ասեղէ 52, 250, 252
Միլան 140
Միներվայի տաճար 144
Միջագետք 137, 144, 231, 232, 255—257
Միջերկրածովյան ավազան 5, 7
Միջին Ասիա 250
Միջին Իտալիա 61
Մյոզիա 109
Մծբին 147, 231
Մոկի 152
Մոսկվա 213, 241, 243, 250, 265
Մուտինա 23

Նեապոլ 158, 174, 193
Նիկեա 132
Նիկոմեդիա 132, 149
Նուրիա 174
Նումիդիա 39, 53—55, 58, 85, 117

Շվեյցարիա 182
Շլեզվիգ 182
Շոտլանդիա 174

Չեխոսլովակիա 260
Չինաստան 255

Պալատին բլուր 195
Պալերմո 193
Պաղեստին 149, 252, 257
Պաննոնիա 84
Պատավ (*Պադուա*) 59
Պարթևաստան *տե՛ս* Պարսկաստան
Պարսկաստան 145, 149, 151, 152, 250
Պելեպոնես 16
Պետրոգրադ, *տե՛ս* Պետերբուրգ
Պետերբուրգ 217, 236
Պերգամ 227
Պերուզիա 130, 128
Պիզա 193
Պիցին 123
Պոնտոս 36, 149, 195, 232, 262
Պոլիս, *տե՛ս* Կոստանդնուպոլիս
Պռուսիա 102, 184
Ռուսաստան 210

Սամոսատ 148
Սելևկիա 148
Սերապիսի տաճար 149
Սիլեզիա 182
Սինգարա 147, 152
Սիրիա 67, 109, 148, 189, 195, 252
Սիցիլիա 32, 33, 122, 201
Ս. Դազար 227
Սոֆիա 229

Վատիկան 174
Վեզուվ 72
Վեյ 61
Վենետիկ 227, 228
Վոլգա, *ամրոց*, 97
Վրաստան 232

Տավրիկյան շրջան 246
Տարսոս 148
Տիբեր 61
Տիբուր 39
Տիգրոն 146, 232, 258
Տիգրանակերտ 45, 92, 93, 202, 203,

229, 230, 234, 265
Տիգրիս 147, 152
Տիվոլի 39
Տյուրոս 148
Տուսկուլ 10
Տևտեբուրգյան անտառ 72, 94
Ցյուրիխ 182

Ումբրիա 72
Ուտրեխտ 161

Փարիզ 161
Փարսալոս 118, 130
Փյունիկիա 148, 231, 252
Փոր Ասիա 149, 227, 265

Քեմբիջ 205
Քերոնե 175
Քիլ 173, 182, 191
Քյոնիգսբերգ 191

Օյկումենա 16, 20

Ֆիլադելֆիա 149
Ֆիլիպե 126, 129
Ֆրանսիա 163, 164, 178, 182, 197, 203, 259

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Առաջին մաս

Պատմագրությունը Հին Հռոմում 5
Ավագ տարեգրողներ 5
Կրտսեր տարեգրողներ 12
Հռոմեական պատմագիրներ 14
Ուշ Հանրապետության դարաշրջանի պատմագիրներ . . . 14
Վաղ կայսրության դարաշրջանի պատմագիրներ 59
Ուշ կայսրության դարաշրջանի պատմագրությունը 135

Երկրորդ մաս

Հռոմի պատմության ուսումնասիրությունը Վերածնության և Լուսավորության դարաշրջանում 156
18-րդ դարի պատմագրությունը 158
Արևմտաեվրոպական պատմագրությունը 19-րդ դարի կեսերին . 178
Արևմտաեվրոպական պատմագրությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին 189
Հռոմի պատմության ուսումնասիրության ռուսական դպրոցը (19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին) 210
Հին Հռոմի պատմության ուսումնասիրության սովետական դպրոցը . 234
Օգտագործված գրականության ցանկ 266
Անձնանունների ցանկ 270
Տեղանունների ցանկ 275

ԵԿԴԻՆԵ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ
Մ Ի Ր Զ Ա Խ Ա Ն Յ Ա Ն

ՈՒՐՎԱԳԾԵՐ
ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ
(Ուսումնա-օժանդակ ձեռնարկ)

Հրատարակության է ներկայացրել ընդհանուր պատմության ամբիո

Խմբագիր՝ Հ. Մ. Բարթիկյան
Հրատ. խմբագիր՝ Խ. Զ. Ամիրջանյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Ս. Հովասափյան
Վերատեսող սրբագրիչներ՝ Ս. Է. Մկրտչյան
Զ. Հ. Մկրտչյան

ՎՖ 07145 Պատվեր 976 Տպաքանակ 5000

Հանձնված է արտադրության 6/VII 1971 թ.։
Ստորագրված է տպագրության 13/XII 1971 թ.։
Թուղթ՝ 84×108¹/₃₂։ Տպագր. 17,5=14,3 պայմ. մամուլ։
Հաշվ.-հրատ. 12,85։ Գինը՝ 60 կոպ.։
Երևանի համալսարանի հրատարակչություն։
Երևան, Աբովյան փող. № 52։

Երևանի համալսարանի տպարան։ Երևան, Աբովյան փող. № 52։

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
15	19 վ.	անբարեհոսություն	անբարեհոսությունն
15	2 ն.	պատմությանը։	պատմությանը,
102	6 վ.	Պլինիոս կրասերը Սվետոնիոսը	Պլինիոս կրասերը, Սվետոնիոսը
102	11 ն.	„Տասներկու կեսարների կենսագրությունները“։	„Տասներկու կեսարների կենսագրություններում“։
133	19 վ.	21 դարերի	2-րդ—1 դարերի
179	2 վ.	„Pe 223 Pableau de l'Empire“	„Pableau de l'Empire“
179	11 վ.	կապիտալի	կապիտալի
192	14 վ.	Հռոմի և Իտալիայի պատմությունը, հասցնելով մինչև 4-րդ դարի (մ. թ. ա.) առաջին տասնամյակները։	Հին արևելքի և անտիկ[1]աշխարհի պատմությունը, հասցնելով մինչև 4-րդ դարը մ. թ. ա.։
208	4 վ.	իր պրինցիպատը	պրինցիպատը իր
219	2 ն.	[72] М. И. Ростовцев,	[72] Ф. Энгельс, Бруно Бауэр и первоначальное христианство, Маркс и Энгельс, т. XV, М., 1961, изд. 2, стр. 362—369.
220	1 ն.	[73] Նաւյն տեղում	[73] М. И. Ростовцев, Рождение Римской империи, П-град, 1918, стр. 29-30.
224	8. ն	պատմության	պատմությունն
227	13 ն.	հարցությունն	հարցությունն
252	9 ն.	Հուստինիանոսի	Հուստինիանոսի
266	16 վ.	Бурно	Бруно
269	3 ն.	պատմության	պատմությունն